

ՆՈՐ ԵՐԶԱՆ

IV ՑԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱՔԻՐ

№ 8

ՕՓՈՍՏՈՍ

1904



ԳՐԱԿԱՆ

Արագածիսի Ա. Բովաթեյանի

Կիլիկիայի փող., № 21.

Одъединенная Ар. Купечества, Нас. у.к., № 21.

1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

	Երբ.
1. ՀԵԾԵԾԱՆՔՆԵՐԸ, Ա. Անտրոնեանի	5
2. ԱՅՍՊԻՍԻ ԴԱՌՆ... ստան. Աւ. Իսախանեանի	13
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԴԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, Ժերուկի	14
4. ՊԱՏԸ, Լ. Անդրեւի, Թարգմ. Ա. Արթուրեանի	39
5. ԴԵՐՎԻՇՆԵՐԸ, Ե. Փրանգեանի	48
6. ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, Մետերլինկի, Թարգմ. ***-ի	53
7. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ. — Մի եռան- դոտ վրացի-կանովիկ քանանայ: — Իշխան Ի. Հաւանա- մէն իրքիւ բանաստեղծ: — Վրացերէն ընդարձակ բառա- րանի գործը, Տ. Փիրումեանի	60
8. ԸՆԿԵՐՆԵՐԸ, Սալմանի	67
9. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒՎԸ, Տիգրանի	74
10. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ. — Բարիկան արծաղանդներ, Հ. Ալիանաքի	82
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — 1) Հիւր- շմանի՝ «Հին հայկական տեղերի տնտեսները». — Պ. : 2) «Աստիկ». — Ա. Ա. : 3) Գոկո. Ֆրանց Շաֆֆեր՝ «Վիլկիլիա». — Լ. Ա. : 4) Սիմ. Բարիկան՝ «Բանա- ստեղծութիւններ». — Կ. Հ. : 5) Խ. Բարադեան՝ «Բա- նաստեղծութիւններ». — Ա. Հ. : 6) «Շրիկ». — Ա. Ա. : 7) X. A. Вермишев: «Материалы для грузинско- армянских отношений». — Ա. Ա. :	90
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԴՐՔԵՐ.	115
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ. — Բիւլղարիայի զարգացումը XIX դարում, Ս. Բալադեանի	116
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Մեր մամուլի շարժումն մի խոչ- ընդոտ եւս: — Պատասխին հաղորդակցութիւններէից զուրկ փայերը: — Ազատ ժամերի բուրժուական դարձադրութիւն: — Վրականութիւնը ընտանեկան կեանքում, Լ. Ս. . Թագաժառանգի ծնունդը: — Բարձրագոյն մանկիֆեաներ եւ հրու- մաններ: — Վիճակադրական դասընթացներ: — Վանտնց բժշկական ինստ. ձեւափոխութիւնը: — Մամուլի վերա- րկեսալ կարգադրութիւններ:	126
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ռուս-ձապոնական պատերազ- մը: — Թիւրքիա, Հ. Ս.	142

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVI տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՄԱՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1904



Թ Ի Շ Ի Ս

Տպարան Ա. Բուժաթիւարժի, Նիկ. № 21.

Скоронечатня Ар. Кутателадзе, Ник. ул., № 21.

1904

Дозволено цензурою. Тифлисъ, 24 августа 1904 года

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

	Երև.
1. ՀԵԾԵԾԱՆՔՆԵՐԸ, Ա. Ահարոնեանի	5
2. ԱՅՍՊԻՍԻ ԴԱՌՆ... ոտան. Ա. Իսահակեանի	13
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, Ժեռուկի.	14
4. ՊԱՏԸ, Լ. Անդրէեւի, Թարգմ. Ա. Աթայեանի	39
5. ԴԷՐՎԻՇՆԵՐԸ, Ե. Փրանգեանի	48
6. ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, Մետերլինկի, Թարգմ. ***-ի	53
7. ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Մի եռանդոտ վրացի-կաթոլիկ քահանայ։—Իշխան Ի. Հաւճաւաձէն իրրեւ բանաստեղծ։—Վրացերէն ընդարձակ բառարանի զործր, Տ. Փիլրումեանի	60
8. ԸՆԿԵՐՆԵՐԸ, Սալմանի	67
9. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒԼԸ, Տիգրանի	74
10. ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բարիզեան արձագանգներ, Հ. Ալիանարի	82
11. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Հիւր-շմանի՝ «Հին հայկական տեղերի անունները».—Դ. : 2) «Ոստիկ».—Ա. Ա. : 3) Դոկտ. Ֆրանց Շաֆեր՝ «Վիլիկիա».—Լ. Ք. : 4) Սիմ. Բարիեան՝ «Բանաստեղծութիւններ».—Կ. Հ. : 5) Խ. Բաբայեան՝ «Բանաստեղծութիւններ».—Ա. Հ. : 6) «Շրեդ».—Ա. Ա. : 7) X. A. Вермишевъ : «Материалы для грузино-армянскихъ отношеній».—Ա. Ա. :	90
12. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ.	115
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բիւրոգիայի վարդապետ XIX դարում, Ս. Բալաղեանի	116
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մեր մամուլի զարգացման մի խոչընդոտ եւս։—Պոստային հաղորդակցութիւններից զուրկ վայրեր։—Ազատ ժամերի բուրժուական զործադրութիւն։—Իրականութիւնը քնտանեկան կեանքում, Հ. Ս.	
Թագաժառանգի ծնունդը։—Բարձրագոյն մանկիւնատներ եւ հրամաններ։—Վիճակադրական զարնթացներ։—Վանանց բժշկական ինստ. ձեւափոխութիւնը։—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ։	126
15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուս-հայոնական պատերազմը։—Թիւրքիա, Հ. Ս.	142

	Երե-
16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	150
17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ	155
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	156
19. ՅԱԽԵԼՈՒՍԾ. Զէյմն Մորիէր՝ «ՀԱՋԻ ԲԱՐԱՅԻ ԱՐ- ԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ. Կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան. 161—192	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարհ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՛ բնագիրը:
2. Չընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացուած են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուում են անվճարելի:
4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկին նամակագրուշմ կամ պոստային բւանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 20-ից ուշ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՀԵԾԵԾԱՆՔՆԵՐԸ

Նա անցնում էր փողոցով յամրօրէն ու լուռ՝ այն յուզարկաւորի հանդիսաւորութեամբ, որ մեն-մենակ տանում է իր մեռելը թաղելու:

Եւ այն մեռելը նա կրում էր իր հոգում. երեւի հոգիների մեռելը աւելի ծանր է և ճնշող, քան այն, որ մարդիկ տեսնում են, որովհետեւ նա այնպէս էր քայլում, ասես իր հետ քաշ էր տալիս մի ահագին բեռ, որի տակ իր ոսկորներն էին ճարճատում:

Զգում էր իր ցաւի բեռն արդեօք, չգիտեմ, բայց կապարային գէմքի վրա ոչ մի միտք, ոչ մի յոյզ. ամեն ինչ այնտեղ սառած էր ու քարացած, որպէս մի մեռած մօրթակի վրայ՝ ուր կենդանի անցեալը վկայող հետքերըն իսկ սոսկալի են իրանց մահաշունչ ցրտութիւնով:

Վայելուչ, մաքուր փողոցի մէջ նա մի գարշելի բիծ էր իր նորկալի արտաքինով: Կեանքի գարշանքն էր այն, որ սողում էր մի անդիտակից ըմբոստութեամբ հեգնելով այն ամենը, ինչ գծրախա չէ. անդգայ հեգնութիւն, որից մարդ գող է զգում:

Նրան ասացին, որ յետ դառնայ, նա շատ էր աղտեղի. պատառոտած զգեստների ծլանքներից կաթկըթում էր գարշահոտ ցաւը և թւում էր, թէ նրա կոխած տեղը գետինը վառւում է: Եւ նրա փոյթը չէր, նա շարունակում էր քաշ տալ իր հետ կեղտի և գարշահոտութեան այդ բեռը:

— Ո՞ւր ես գնում, յետ դարձիր:

Եւ նա յետ դարձաւ դէպի հակառակ կողմը, կրկին

քայլում էր նոյն հանդիսաւորութեամբ, նոյնպէս յամբօ-
րէն, անարտունջ. նա կարծես ասում էր.

«Ձէք թողնում այս կողմում, այդ միւսնոյն է, իմ
մեռելը կարող եմ ուրիշ կողմը թաղել». գոնէ ինձ թու-
աց, թէ նա այդպէս է ասում:

Նա քայլեց, քայլեց... հար էր գնում, և ինչո՞ւ:
Անշուշտ նա չէր մտածում, թէ հար է գնում և ինչո՞ւ:
Երբ ոտքերի տակ կարծր գետին կայ և քայլեր անել
հնարաւոր է, ի՞նչ պէտք է մտածել, թէ ո՞ւր գնալ և
ինչո՞ւ: Նրանք երբէք չեն մտածում, թէ հար են գնում
և ինչո՞ւ: Աշխարհը լայն է, քայլի, քայլի, մինչև որ
էլ չքայլես: Եւ թող քո տեղ քեզ նմանները քայլեն՝
միլիոններ են այդպէս դալիս և անցնում:

Մարդկային ցանկութիւնները յաճախ անբացատրե-
լի են ու այլանդակ, նրանք երբեմն ծագում են առ-
նում մի աղբիւրից, որի ակունքը անյայտ է նոյնիսկ
տիրոջը: Ես ցանկացայ նայել մուրացիկի աչքերին: Նայել
խորը, այնքան խորը, ուր նրա խղճուկ, գտնատ հոգին
է պլպլում, ինչպէս աւերակ տաճարի մութ կամարների
տակ մուսացուած պլպլացող մի կանթեղ:

— Է՛յ, Է՛յ, բարեկամ:

Նա ցնցեց իր ազտոտ ծլանքները ու կանգնեց.
նրանք միշտ կանգնում են, ով և պահանջելու լինի,
ասես ամեն մարդ կարող է նրանց ճակատագիրը լինել,
ամեն ձայն բազդի անդառնալի վճիռ:

Եւ նա կանգնեց, դէմքը դարձեալ կապարային
էր ու անյոյզ: Ապակու պէս պալած աչքերը ինձ վրայ
ուղղեց և ես հաւատացած եմ, որ նա ինձ չէր տես-
նում: Նրա հայեացքին ներկայացաւ երևի մի մշուշա-
պատ պատկեր, մէկն այն բիւրաւոր անօդուտ պատ-
կերներից, որոնցից նա այնքան տեսել էր իր ցաւոտ
կեանքի ճանապարհին, և որոնք բոլորն էլ իրար այն-
պէս նման էին:

Ես մօտեցայ, նա անշարժ էր իր տեղում և իր ծը-
լանքների դարչահոտութիւնն էր տարածում իր շուրջը:

Ձեռքս մեղմիւ դրեցի նրա ուսին, չոր, վտիտ ուս, ես զգում էի մատներիս տակ նրա ոսկորները, ես շարժեցի, շօշափեցի և նրանք խշխշացին ցաւով: Ես դէմքս մօտեցրի նրա դէմքին և չար, անկարեկից հայեացքս յառեցի նրա բիբերին: Եւ նայեցի երկար, յամառ կերպով, կորած որսը պրպտող շան վտանգաւոր հայեացքով, այնպէս՝ ինչպէս փողոցի անցորդները սիրում են ներս նայել այն ցածրիկ լուսամուտներից խղճուկ տների ներսը, ուր կեանքի ցաւն է գալարւում առանց քօղի, անպատկառ, հեղինոյ ու ահաւոր:

Եւ ես նայեցի նրա աչքերին, փորձեցի իջնել խորը, խորը, այն լուռ մթութեան մէջ, ուր հեծեծում է մի կենդանի ցաւ՝ փակուած գազանի պէս չանդռելով իր բանտի պատերը: Ես հաճոյքով էի փնդրում այդ գազանը, կ'ուղէի լսել նրա յուսահատ ձայնը, նրա խեղտուող հեծկտանքները, կամ կատաղի մռնչիւնը: Նայեցի խոր ու յամառ, բայց թափառականը ոչինչ չունէր իր աչքերում, ոչինչ իր հոգում:

Նա այնքան դժբախտ էր և այնպէս գարշելի. զգեստների կեղտոտ ծլանքներից ցաւն էր կաթկաթում, և ես հաւատացած էի, թէ նրա հոգում էլ, ինչպէս աղքատ անակում մի մութ ցաւ է գալարւում թունաւոր ու սպառնալի վիշապի նման: Նայեցի և այդ բոլորի տեղ գտայ խաւար ու քար լռութիւն, ապրած յոյզեր կային, որոնք իրար գալարուած օձերի պէս կեանքի բեռի տակ քարացել էին ու սառել:

Ես նայեցի, և նրա հոգին փոթորիկ չունէր, նա անյոյզ էր ու մեռած, ինչպէս այն լճերը, որոնց ջրերի գառնութեան մէջ ոչ մի կենդանի չի ապրում, չի շարժում, չի յուզում մթին խորքերը, որոնց ափերին ոչինչ չի բուսնում: Այնտեղ հանգչում է միշտ հին օրերի մի տառապանք:

Նա հնազանդ էր իր ճակատագրին. նրա հոգում իշխում էր անսահման հնազանդութեան զաղրելի մահը. և դա ինձ զայրացնում էր, նրան ցաւեցնելու, դժբախտ

դարձներու համար ես պատրաստ էի տտամներով կծել իր կեղտոտ դորշ մսերը, որոնք երևում էին ցնցոտիների տակից ինչպէս հողի տակ վատ ծածկած աղբալիցյա: Անդիտակից ու ապուշ հողիները հիւանդ աշխարհի թիկունքին ամենածանր բեռն են: Բայց հաւատացած չէի, թէ նա ցաւ կը զգար իմ տտամներից. նրա հողին մեռած էր:

Եւ այդ զարհուրելի մահուան պատմութիւնն ինձ համար մութ մնաց: Աւերակ բերդը կամ տաճարը, որոնց քարերը կամաց-կամաց թափուում են, մինչդեռ կանգուն են պարիսպները, միշտ անյոյզ աչքերով են տեսնում, թէ ինչպէս իրանք մեռնում են մաս-մաս: Աւերածի, մահուան անուրջները նրանց օրօրում են և բոց հողմերը լիզում են նրանց լերկ ճակատները, կեանքը խուսափում է ամեն օր, և իրանք չեն կարող սասել, թէ ինչո՞ւ են այդպէս, ինչո՞ւ են մեռնում և երբ կը մեռնեն իսպառ: Թափառակտնը մի աւերակ չէնք էր, որ չգիտէր, թէ իր հետ ինչ էր կատարուել, երբ և ինչո՞ւ:

Մենք լուռ էինք. ես նկատեցի, որ նրա կոպերը դողդողացին, չրթունքները քաշքշուեցին ջղաձգօրէն: Մի թէ խօսել էր ուզում, այդ անկարելի է:

—Էյ...

Շրթունքները վերստին հանդստացան և բիբերը բար կարեցին:

—Էյ, դու ի՞նչ ես:

Նա յետ տարաւ կեղտոտ չրթունքները և տտամները բացեց:

Ա՛հ, թշուառական, նա ժպտում էր:

—Դու ի՞նչ ես, ասում եմ:

—Ողորմութիւն արեք:

—Ողորմութիւն... ահա թէ ինչո՞ւ է ժպտում, նրանք բոլորը ժպտում են կշտանալու համար:

—Քաղցած եմ...

—Յիմար... քաղցած ես, յիմար, յիմար, քաղցած ու յիմար, երկնքի երկիւս շնորհը մխանդամից:

Նա կրկին բացեց ատամները վատ բերանից գար-
շահոտութիւն տարածելով և ծիծաղեց հեգնող, զգուե-
լի ծիծաղով:

— Ի՞նչ ես ծիծաղում, յիմար.

— Քաղցած եմ...

Եւ նա փախաւ միջանի անգամ յետոյետ նայելով:
Ես կանգնած նայում էի նրա յետեւից, տեսնում էի նը-
րա նիհար, երկար պարանոցը, յիմար գլուխը, ողորմե-
լի մէջքը, որի վրայ էլ նստել չէր կարելի այն աս-
տիճան ոսկրոտ էր: Եւ նա քայլում էր անխորհուրդ ու
յիմար, առանց իմանալու թէ ո՞ւր, մինչև որ մէկը նրան
կ'ասէր՝ «յետ դարձիր», և նա յետ կը դառնար նոյնպէս
անխորհուրդ, նոյնպէս յիմար դէպի մի այլ կողմ:

Եւ այսպէս անվերջ, մինչև շանսատակ լինէր մի
պատի տակ:

Անշուշտ նա շուտով ինձ կը մոռանար, ինչպէս բո-
լոր նրանց, որոնց երբեւիցէ տեսել էր իր պաղած աչ-
քերի մշտական մշուշի միջից: Ես կանգնեցրի նրան նա-
յեցի աչքերին և ոչինչ չտեսայ: Հոգում ցաւ չունէր
մարդը, քայլում էր ժամանակից ու տարածութիւնից
դուրս ինքն իր համար, միշտ քաղցած, բայց անզգայ:
Ես կանգնեցրի նրան և ոչինչ չտուի, նրա չորացած ու
միշտ պարզուած ձեռքը ինձ զգուեցնում էր և զայրա-
յրնում, կանգնեցրի հէնց այնպէս, գիտէի որ կը կանգնի:
Եւ փախաւ...

Այդ փախուստն ինձ աւելի զայրեցրեց. մարդ է և
փախչում է չգիտես ինչից, փախչում է, գուցէ, որովհե-
տեւ քաղցած է... քաղցածները մի՞թէ փախչում են:

Ես հասայ և բռնեցի նրան.

— Ինչո՞ւ ես փախչում:

— Վախում եմ, նա կրկին ժպտաց:

— Ումի՞ց, ինձնից:

— Ամենքից, ամեն ինչից երկնքից, երկրից, քարից,
պատից, շէնքերից, դռներից, փակ դռներից, վախում

եմ և քաղցած եմ, օ, ես միշտ քաղցած եմ, միշտ էլ վախում եմ:

Նա դարձեալ ժպտաց:

— Դու քաղցած ես և վախում ես... ես բռնեցի նրա ձեռքը, փիխ մէջ զգում էի նրա վտիտ մատները, չոր ու սառն ինչպէս բրոնզից ձուլած: Բռնեցի և քաշ տուի յետևիցս: Նա քայլեց իմ յետևից հնազանդ կենդանու պէս:

Նա քաղցած էր և վախում էր:

Մենք երկար քայլում էինք և քաղցն ու վախը սողում էին մեր յետևից լուսթեամբ, ինձ թւում էր, թէ ես լսում եմ նրանց մեղմ ոտնաձայնը, նրանց փսփսոցը:

Մի մութ նկուղում մենք նստեցինք քաղցը, վախը ես ու նա: Ես հաց տուի նրան, աչքերի մէջ զարմանք փայլեց, նա չուած նայում էր ինձ, չրթունքները կրկին ձգձգուեցին, մի բան էր ուզում ասել, երևի կատարւում էր նրա կեանքի ներդաշնութիւնը խախտող մի անսպասելի բան:

— Սո՛ւս և կեր:

Եւ նա սկսեց ուտել նախ անհամարձակ, ապա կատաղաբար: Ես նայում էի նրա ոսկրոտ, դուրս ցցուած ծնօտի շարժումներին, նրա ցնցուող ականջներին, այդ բոլոր խղճուկ մարմինն, որի իւրաքանչիւր թեղը կարծես դոհանում էր, երբ կոկորդից ներս էր ընկնում մի պատառ: Երկար ժամանակ ես ուշադրութեամբ դիտում էի նրա ծնօտի անճոռնի շարժումները, նրա վտիտ պարանոցը, որ ամեն անգամ ձգւում, երկարում էր, երբ նա կուլ էր տալիս ծամուած պատառը, նրա չոր մաւները, որոնք հացը բռնելիս, կաշում էին ինչպէս ճիրաններ այլ ևս երբէք բաց չթողնելու համար:

Եւ որքան շատ կերաւ նա, նրա քաղցը մի լափող, ոջնչացնող հրէշ էր:

Երեկոյ էր, նկուղն աւելի և աւելի մթնում էր, և խաւարի մէջ կամաց-կամաց լուծւում էր մուրացիկի գէմքը, ես հազիւ էի տեսնում նրա ցնցոտիների մութ:

ղանգուածը, որ ծրագրուում էր որպէս մի գորշ աղբա-
կոյտ: Լուռ էինք. միայն լսուում էր նրա բերանի
չփչփոցը, յետոյ խաւար անկիւնում սկսեց ճռռացնել մի
ճպուռ, միակերպ տալտկալի: Դրան առաջ լսուեց մի
կենդանու փնչփնչոցը. դա մի ծեր, բրդաթող և քաղցած
շուն էր, որին երևի գրաւել էր հացի հոտը: Նա կանգ
առաւ շէմքի առաջ և նայում էր ներս: Ես կիսախաւա-
րի միջից տեսնում էի նրա աչքերի փայլը. նա նայում
էր ագահութեամբ գէպի այն կողմը, ուր իր պէս մի
քաղցած կշտանում էր:

Ճպուռը ճռճռում էր, մուրացիկը չրփացներով կուլ
էր տալիս, իսկ քաղցած շունը փնչացնում էր և ցաւա-
գինօրէն հետում դրան առաջ առանց սիրտ անելու
ներս ընկնել:

Եւ ես մտածում էի և իմ մտքերն անսիրտ էին:

Ես մտածում էի, թէ ինչպէս դուրս քաշեմ այս
մուրացիկի հոգուց իր անխորհուրդ, յրկուած, կոկուած
տառապանքը, թունաւոր փշեր անկեմ վրան և կրկին
դնեմ կրծքի տակ: Յետոյ նա կ'ոռնար, կը մռնչէր
ցաւից, թունաւոր փշերը կը ծակծկէին:

Եւ լաւ կը լինէր...

Ճպուռը ճռճռացնում էր, քաղցած շունը հետում ու
փնչացնում, իսկ մուրացիկը հանդարտուեց, նրա ծնօտը
էլ չէր շարժուում, բերանը չէր չրփացնում, պարանոցը
չէր ձգւում:

— Կշտացա՞ր:

— Ես էլ քաղցած չեմ:

— Յիմա՞ր...

— Ինչո՞ւ ես յիմար ասում:

— Քեզպէս կերակրում են շներին, հասկանո՞ւմ ես,
այ նրան, որ դրան մօտ փնչացնում է և որին դու ոչինչ
չտուիր:

— Ես... ախր ես էլ մարդ եմ: Ես սկսեցի ծիծա-
ղել, բարձրաձայն վիրաւորական բրբիջով: Իմ ձայնից
ճպուռը լռեց, շունը կամացուկ քաշուեց:

—Դու ել մարդ ես... հա, հա, հա...

Նա երկար, երկար ծիծաղում էի այս մարդու վերայ, որ միշտ քաղցած է և միշտ վախում է:

—Հա, ես ել մարդ եմ... ի՞նչ անենք որ այսպէս... ինչո՞ւ մի շան պէս... խօս ես մենակ չեմ... մենք այնքան շատ ենք... հաց տուիր, ինչո՞ւ ես ասում շուն...

Նա լռեցի. լսում էի. նրա կոկորդից բառերը դուրս էին գալիս ընդհատ-ընդհատ, խռպոտ մռնչիւններով, յետոյ նա կարծես սկսեց հեկեկալ, նրա հոգում բնած վիշտը զարթնեց և գազանի պէս շանգոռում էր կուրծքը:

Նա ոտքի կանգնեց ես էլ հետևեցի նրան, մենք դուրս եկանք նկուղից: Խաւարի մէջ ես լսում է նրա մեղմ հեծկտանքները, որոնցից ցնցւում էր նրա մարմինը, նա առաջ շարժուեց, քաղցած շունը այնտեղ էր, կամացուկ քայլեց նրա յետևից: Նա յանկարծ լըռեց յետ դարձաւ և ձեռքի ահագին մահակով կատաղաբար հարուածեց կենդանուն. շունը կաղկանձեց և տեղն ուտեղը պառկած մնաց:

—Հանգստացիր, այդպէս լաւ է քեզ համար:

Նա դարձեալ առաջ շարժուեց, նեղ դաշարուն ու խաւար փողոցների մէջ նա մոմուում էր, հեծկտում ու հեկեկում: Նա քայլում էի յետևից և հաճոյքով ականջ էի դնում իմ նմանի տառապանքի ճիչերին:

Այն կոկուած, յղկուած ցաւը, որ նրա հոգու մէջ կծիկ-կծիկ պառկած էր սառած օձի պէս, ձգձգւում, զարթնում էր:

Դուրսը խաւար էր. անասուղ երկինքը սև ամպերով կախուել էր վար, երկրի վրայ և փսփսում էր կաուրների հետ, և մարդը քայլում էր ու հեծկտում:

Նա դժբախտ էր և ես գոհ էի. ցաւի եղբայրներ էինք:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

*
* *

Այսպիսի դառն, դաժան օրերում,
Երբ գաղափարի, ոգու անունով
Ձաղրելի մարդիկ հանգէս են ելնում
Եւ իրենց գծում, ցած հաշիւներով
Խաբում են թշուառ ամբոխին, խաբում,
Ե՛ւ խիղճ ու ամօթ, թուշը անձնուէր,
Ե՛ւ սրբազան վիշտ, այրող արցունքներ՝
Բոլորը ծաղրած, ոտի տակ տուած,
Ստոր դաճաճն է լիրբ յաղթանակում,—
Իմ մարուը ոգի, տառապած ոգի,
Մի յուսահատուի, երբէք մի լքի.
Աղնիւ, սուրբ գործը չի մեռնում երբէք.
Ճշմարիտն է ուժ, անկեղծն է հզօր,
Եւ ժողովրդի ցաւերի համար
Տոչորուն ոգին ամբոխից մի օր
Կը դնահատուի, դիտեմ, անպատճառ.
Եւ նենգաւորի ճակատը լկտի
Թուքը կ'ընդունէ նշաւակութեան:
...Գնահ, իմ ոգի, սլացիր անշեղ
Սուրբ ճշմարտութեան ուղին վեհութեան.
Սրով հրեղէն և խօսքով ահեղ
Ջախիր, ջախջախիր խոչընդոտներին.
Եւ մի կարեկցիր, և մի յետ նայիր.—
Դո՛ւ հաւատում ես ոգուն և լոյսին,
Դո՛ւ հաւատում ես և՛ ճշմարտութեան,
Ե՛ւ զեղեցկութեան վեհ յաղթանակին.
Արչաւէ, թուիր առանջ, անյողդողդ,
Եւ թո՛ղ քայլերդ, թուիչքդ դառնան
Անսայթմը ու կո՛ւռ երկրում և երկնում.
Սլացիր, հասիր կատարելութեան,
Եւ մեռիր Աստուծո՛ւքերի վերան...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ*)

XV

Վ ա ց ֆ ա դ ա ֆ ր

Վանեցիների զբաղումը. վաճառականութիւնը. վանի տեղը առևտրական տե-
սակէտից. անյարմար հանգամանքներ. հաղորդակցութեան ձևն և ճանապարհ-
ները. արտահանութիւնն և ներածութիւնը. նիւթերը. ներքին քաղաքներն և
արտասահմանը. ներածութեան վիճակացոյցը. առևտրի ներքին վիճակը. կա-
սեցնող պատճառները. 1876 և 1896 թուերի ազդեցութիւնը առևտրի վրայ.
Նշանաւոր վաճառատները. ասնաֆական կեանքը. խանութների վարձը:—Վա-
նի լճակը: Պոստ-հեռագրատունը. յարաբերութիւնը. պայմանները:

Վանեցիների զբաղումներն են վաճառականութիւն, գա-
նազան արհեստներ, այգեգործութիւն:

Ընթերցողը անշուշտ կը համաձայնուի ինձ հետ ասելու, որ
աշխարհիս որևէ անկիւնում, ուր հայ տարրը ոտք է դրել, այն-
տեղ վաճառականութիւնը կամ առևտուրը հետզհետէ իր նախ-
կին վիճակից բարձրացել է: Այդ երևոյթը իբրև ընդհանուր
իրողութիւն մինք կարող ենք տեսնել թէ անցեալում և թէ
ներկայում, թէ զաղթավայրերում և թէ մայր-հայրենիքում.
արդարև թիւրքահայերը, որոնք դարերից ի վեր ապրում են
իրանց ներկայ բնակավայրում, որքան հանգամանքները ներել
են, մղումն են տուած թէ ներքին և թէ արտաքին վաճառակա-
նութեան: Վանեցիներն էլ որոշ դեր և բաժին ունին այս ճիւ-
ղի մէջ, թէև եթէ համեմատելու լինենք նրանց վաճառականու-
թիւնը Թիւրքիայի ոչ թէ եւրոպական, այլ նոյնիսկ ասիական
նահանգների կամ քաղաքների հետ, պիտի տեսնենք, որ ամե-
նայետին տեղն է բռնում. դրա պատճառը ոչ թէ ժողովրդի
անընդունակութիւնն է, այլ Վանի աշխարհագրական դիրքը,
բնական յարմարութիւնները և շրջապատող հանգամանքները:
Բացէք օսմանեան պետութեան աշխարհացոյց քարտէզը, գտէք

*) Տես «Ծորճ», № 7.

այնտեղ ասիական նահանգների շատ թէ քիչ նշանաւոր քաղաքները—Չմիւռնիա, Տրապիզոն, Բրուսա, Գոնեա, Քասթէմունի, Էնկիւրիւ, Սվազ, Ատանա, Խարբերդ, Հալէք, Այնթաք, Բաղդատ, Շամ, Բէյրութ, կամ վերջապէս բոլոր իսկ Վանի դրացի քաղաքները—Մուսուլ, Դիարբէքիր, Կարին և Բիթլիզ, և այդ քաղաքների աշխարհագրական-առևտրական դիրքը, հաղորդակցութեան ճանապարհները, բնական յարմարութիւնները—բերքերը և արտադրութիւնները համեմատեցէք Վանի հետ։ Համեմատութիւնը ցոյց կը տայ, որ Վանը յիշեալ քաղաքներից որեւէ մէկից որեւէ առաւելութիւնն չունենալով հանգերձ ընդհակառակն շրջապատուած է ամենամանապատ հանգամանքներով և պայմաններով։ Աշխարհագրական տեսակէտից ընկած է ամենամայրամար տեղում—Թիւրքիայի ամենահեռաւոր սահմանաձայրում, պարսկական սահմանագլխի վրայ, հեռու առևտրական կենտրոններից և հաղորդակցութեան ճանապարհներից, այնինչ յիշեալ քաղաքներից իւրաքանչիւրը կամ նաւահանգիստ է, կամ երկաթուղու գծով միացած է ուրիշ առևտրական կենտրոնների հետ, կամ վաճառականական գծերի վրայ է գտնուում, կամ բնական հարստութիւններ ունի. իսկ Վանը ոչ մէկն ունի և ոչ միւսը, նոյնիսկ բնական հարստութիւններից էլ զուրկ է. արդէն տեսանք որ ունի միայն կարևոր չափով արօտավայրեր անասնապահութեան համար։

Վանն առևտրական հաղորդակցութեան ճանապարհներ ունի դէպի իր սահմանակից նահանգների այս ու այն քաղաքները—դէպի Բիթլիս, Մուշ, Սղերդ, Մուսուլ, Դիարբէքիր, Բայազէտ, Կարին, ինչպէս նաև Կարինի գծով դէպի Տրապիզոն, Կ. Պոլիս և այստեղից կարող է յարաբերել աշխարհիս ամեն մի անկիւնի հետ. բայց բոլորովին դանդաղ և նահապետական են հաղորդակցութեան միջոցները։ Ապրանքների փոխադրութիւնը թէ դէպի շրջակայ նահանգները և թէ մինչև Տրապիզոն կատարուում է ձիերի և սայլերի միջոցով. Տրապիզոնից ուղարկելիք ապրանքը Վան հասնում է ամառուայ ընթացքում 40—50 օրում, իսկ ձմեռուայ մէջ մինչև 3—4 ամսում. եթէ համեմատենք միմիանց հետ Վան—Տրապիզոն և Բագու—Թիֆլիս գծերի տարածութիւնը, պիտի գտնենք, որ առաջինը երկրորդից դեռ կարճ է, մինչ Բագուեցի վաճառականը 20 ժամում կարող է ստանալ իր յանձնարարած ապրանքը Թիթլիզից, իսկ վանեցին ամեն մի ժամի փոխարէն 2—4—5 օր պէտք է սպասի միևնոյն ապրանքը Տրապիզոնից ստանալու համար։ Ահա այս մէկ օրինակը կարծեմ բաւական է համոզելու համար, թէ այս պայմաններում վաճառականութեամբ զբաղուող մի քաղաք չի

կարող զգալի առաջադիմութիւններ անել տարէցտարի: Վանն առևտրական հաղորդակցութիւն ունի Պարսկաստանի հետ, բայց Վանից խոյ կամ Սալմաստ ապրանք փոխադրւում է 8—15 օրում: ձմեռուայ ընթացքում ճանապարհների խանգարումով զրեթէ երթեկութիւնը բոլորովին ընդհատւում է: Պարսկաստանի հետ հաղորդակցութիւնը կատարւում է էջերով: ամբողջ տարուայ ընթացքում հազիւ թէ 10—15 անգամ Ատրպատականից կարաւան գայ Վան և դառնայ, եթէ միւս կողմից էլ սահմանագլխի քրդերը արգելք չլինեն: Չնայած որ Վանը զրեթէ սահմանակից է Կովկասին, կարելի է Բայազէտի վրայով մէկ շաբաթուայ ընթացքում կարաւանի ձիերի դանդաղ քայլերով Իզդիրից Վան ապրանք հասցնել. և երբեմն-երբեմն այսպիսի փորձեր եղել են, բայց և այնպէս մինչև այսօր չկայ որևէ կանոնաւոր հաղորդակցութիւն Վան—Երևան գծով, երբեմն-երբեմն խօսք է շրջում Վանի առևտրականների շրջաններում այս գծի մասին, իբրև թէ ճանապարհ պիտի բացուի, բայց ի մեծ ցաւ վանեցիների՝ իրականութիւնից դեռ հեռու է երևում այդ գաղափարը, չնայած որ այդ գիծը խիստ մեծ յեղաշրջում առաջ կը բերի Վանի և ամբողջ Եփրատի հովտի վաճառականութեան մէջ, Վանը և Վանից էլ աւելի ոռոսական վաճառականները բաւական կարևոր շահի աղբիւրներ կ'ունենան: Քանի որ չկայ այդ գծով հաղորդակցութեան ճանապարհ Վանի և Երևանի միջև, ոռոսական ապրանքները Բաթումից շատ աննպաստ պայմաններով են փոխադրւում Վան:

Վանն իր առևտրական յարաբերութիւնը դրսի հետ կատարում է հետեւեալ գծերով: Եւրոպայի և Ամերիկայի հետ անուղղակի յարաբերութիւնը՝ Պոլսի միջոցով, ուղղակի յարաբերութիւնը՝ Մարսէյլ—Տրապիզոն ծովագծով, Ռուսաստանի հետ ուղղակի յարաբերութիւն Բաթում—Տրապիզոն ծովագծով, Պարսկաստանի հետ ուղղակի՝ Վան—Սալմաստ գծով: Բացի սրանցից Վանն առևտրական հաղորդակցութիւն ունի թիւրքական ներքին քաղաքների հետ, որոնցից ամենակարևորներն են Կարին, Հալէբ, Այնթաբ, Դիարբէքիր, Բիթլիզ ևայլն:

Վանը վաճառականական նիւթեր թէ արտահանում է և թէ ներածում է: Բայց արտածութիւնից անհամեմատ աւելի մեծ տեղ է բռնում ներածութիւնը: Վան ներածւում են ամեն տեսակ նիւթեղէններ—հագնելիք, ուտելիք, վառելանիւթ, ըմպելիք, շինուածանիւթեր, կահկարասիներ, արդուզարդի պարագաներ ևայլն ևայլն: Վանն էլ եւրոպացի, ամերիկացի գործարանատէրերի քսակի մէջ գցում է իր լուման: Ստանում է եւրոպական զրեթէ բոլոր երկրներից, ինչպէս նաև Ամերիկայից,

Պարսկաստանից և ուրիշ տեղերից վաճառանիւթեր: Թուել այստեղ միառմի թէ այս և թէ այն երկրներից ինչ ապրանքներ է ստանում Վան՝ շատ դժուար է, այսքանն ասենք միայն, ինչ երկրի ապրանքներն են աւելի մեծ քանակութեամբ մըտնում են Պոլիս, նոյն երկրի նոյն ապրանքները աւելի մեծ քանակութեամբ մտնում են Վան: Այս հաշուով եւրոպական երկրներից աւստրիական, գերմանական, ֆրանսիական, անգլիական ապրանքներ աւելի մուտք ունեն Վան: Ռուսաստանից ստացւում է քարիւղ (նաւթ), բրինձ, երբեմն-երբեմն մանուֆակտուրային ապրանքներ, հեշտահո և այլ ռուսական ապրանքներ, մանաւանդ չիթ. ռուսական ապրանքները շատ յարգի են Վանում, բայց ափսոս որ ներածումը շատ քիչ է լինում, եղածն էլ պատահաբար:

Պարսկաստանից ստացւում է բամբակ, բրինձ, փշատ, շալ, պաղլեղ, մետաքսեղէններ, չամիչ, բանջարեղէնների սերմեր ևայլն: Պարսկական ապրանքների ներմուծումը հետզհետէ նուազում է հակառակ Վանի վաճառականների ցանկութեան. վերջերս էլ գրեթէ բոլորովին ընդհատուեց բամբակի ներածումը, որ պարսկական ապրանքների մէջ ամենամեծ տեղն է բռնում: Որքան կանոնաւորուի ռուս-պարսկական առևտրի Ատրպատական—Երևանի գիծը, այնքան կը դադարի պարսկական ապրանքների մուտքը դէպի Վան, որ միասակար է Վանի առևտրական հրապարակի համար:

Եւրոպական կամ ամերիկական ապրանքները գլխաւորաբար Պոլսից են ուղարկւում Վան, այսինքն Վանի վաճառականները իրանց յանձնարարութիւնները ոչ թէ ուղղակի գործարանատէրերին են անում, այլ Պոլսի վաճառատներին: Ուղղակի եւրոպական գործարաններին արուած յանձնարարութիւնները շատ չնչին տեղ են բռնում: Ուղղակի յանձնարարուած ապրանքները առանց Պոլիս հանդիպելու Տրապիզոնի գծով Վանն են մտնում: Անգլիական ապրանքների մի կարևոր մասը Հալէբի գծով է մտնում Վան:

Բացի եւրոպական, ամերիկական և պարսկական ապրանքներից Վանն ստանում է թիւրքական ապրանքներ թէ Պոլսից և թէ ներքին քաղաքներից: Այս կարգի քաղաքներից ամենակարևորն են՝ Հալէբ, Այնթաբ, Դիարբէքիր, Էրզրում, Խարբերդ, Բիթլիզ, Սղերդ ևայլն ևայլն:

Այնթաբից ստացւում է մանուսա, մետաքսէ գործուածքներ ևայլն:

Հալէբից—միւսնոյն նիւթեղէնները և սապոն:

Դիարբէքիւրից—բամբակ, բրինձ, մետաքսէ չարսաւ, ապարօշ կայլն:

Էրզրումից—քաթան, կաշուեղէն գործուածքներ, երշիկ, ապուխտ կայլն:

Խարբերդից—բամբակ կայլն:

Թոկաթից—եազմա (կանանց գլխի քօղ) կայլն:

Բիթլիզից—չամիչ, ռուբ (դօշաբ, բէքմէզ), մեղր կայլն:

Սղերդից—կաշի, չամիչ, բրդից պատրաստուած հագուստեղէններ (քազախի, շալվար) կայլն:

Ուրիշ մի քանի քաղաքներից էլ ստացուում են զանազան ապրանքներ, որոնք չափազանց աննշան առող են բռնում:

Վանը ներածուող ապրանքների փոխարէն արտահանում է նահանգի զանազան մասերը հետեւեալ վաճառանիւթերը—ոչխար, այծ, եզ, կով, մորթեղէններ, բուրդ, իւղ, ծիրանի կուտ, մեղրամոմ, գխտոր, սխտոր, աղիք, ձուկ, կապերտ, ընկոյզի փայտ (քիւթիւկ), Շատախի շալ և աբա, բորակ կայլն:

Պոլիս ուղարկւում են Պոլսում և երոպական զանազան երկրների քաղաքներում ծախելու համար բուրդ, գետժ (այծի բուրդ), իւղ, ոչխարի աղիք, շալ, աբա, արծաթեայ զարդեր, մանաւանդ ծխատուփ: Ուղղակի Եւրոպա ուղարկուելիք վաճառանիւթերը ուղարկւում են մինչև Տրապիզոն, այնտեղ ծախւում են կամ այնտեղից փոխադրւում են Մարսէյլ: Այս կարգի ապրանքներն են ոչխարի և այծի մորթ, ընկոյզի փայտ, բուրդ կայլն:

Ռուսաստան ուղարկելու համար Կարնի մէջ ծախւում է թիւյալաթի—այսինքն աղուէսի, գայլի, կուղի ջրշան մորթիներ:

Բայազէտի վրայով Ռուսաստան է ուղարկւում Վանի տառեխ ձուկը, իսկ Վան—Սալմաստ գծով Պարսկաստան է ուղարկւում Վանի տառեխը, բորակ, գխտոր, չորթան, սխտոր կայլն:

Իսկ թիւրքական նահանգների քաղաքներից—բացի վերը յիշուածներից, այսինքն Պոլսից, Տրապիզոնից և Կարնից—Հալէբ, Դիարբէքիւր, Սղերդ, Բիթլիզ և այլ քաղաքներ ստանում են Վանից նոյնպէս կաշի, մեղր, ձուկ, իւղ, արծաթեայ զարդեր, բորակ, սխտոր, բուրդ, գետժ, կտաւատի ձէթ կայլն: Այս բոլոր արտահանուող նիւթերի մէջ իւր քանակութեամբ ամենակարեւոր տեղն է բռնում ոչխարի արտածութիւնը: Վանն իր նահանգից ուղարկւում է ոչխար դէպի Հալէբ, Շամ, Ուրֆա, Այնթաբ, Եգիպտոս, մասամբ Պոլիս և ուրիշ քաղաքներ, ինչպէս նաև Ռուսաստան և Պարսկաստան:

Վանը որքան արտահանում է, նրա եռապատիկը, քառապատիկը ներածում է: Անկարեւի է որևէ կերպով ճիշտ հաշիւ

կազմել Վանի ներմուծուող և արտահանուող վաճառանիւթերի քանակութեան մասին, որովհետեւ պաշտօնական արձանագրութիւնները չափազանց թերի, անկատար և անգոհացուցիչ են. մնում է մեզ վաճառականների տուած հաշիւներէց կազմել մի հաշուեցուցակ ընթերցողին մօտաւոր զաղափար տալու համար այդ մասին.

Վան նահանգը արտահանում է տարեկան					
50,000	լիրայի ոչխար (այծ),	1000	լիրայի — գետոր, սխտոր,		
			ձուկ, բորակ,		
10,000	» բուրդ, գաժ,	1000	» կապերտ,		
4,000	» ոչխարի մորթ,	1000	» մեղրամոմ, ծի-		
			րանի կուտ,		
3,000	» ոսկերչ. նիւթեր,	1000	» շալ, արաւայլն,		
1,500	» աղուէսի մորթ,	2000	» ընկոյզի կոճղ		
			(քիւթիւկ),		
2,000	» եղ, կով,	3000	» զանազանք.		
1,000	» իւղ,	80,500	» ընդամենը:		
Վան նահանգում ներածուած է տարեկան					
100,000	լիր. մանուֆակտ. ապր.,	40,000	լիր. նուպարեղէն ապր.		
70,000	» մանր ապրանք,	50,000	» զանազանք		
		260,000	» ընդամենը		

Եթէ ներս մտնող գումարի վրայ աւելացնենք պանդուխտների և բողոքական միսիոնարութեան ձեռքով Վան մտած մօտ 25,000 լիրան, կ'ունենանք 260,000 լիրայի ելք և 150,500 լիրայի մուտք. տարբերութիւնը=154,500 լիրա:

Ներածուած նիւթերն սպառուում են քաղաքում և նահանգի զանազան մասերում: Նահանգի այն կէտերում, ուր կան առևտրի փոքրիկ հրապարակներ, տեղային վաճառականները հակերով գնում են քաղաքացի վաճառականներից և փոխադրում գաւառական առևտրական հրապարակներ և այնտեղ յաճախորդներին են վաճառուում: Այս կարգին են պատկանում հետեւեալ տեղերը—Բաշկալէ, Գէվէո, Զիւլամերկ, Շէմդինան, Սաւայ, Բերկրի, Արձէշ և այլն: Նահանգի միւս մասերի բնակիչները իրանց գնումներն անում են ուղղակի քաղաքից կամ յիշեալ տեղերի հրապարակներից: Այս կերպով Վանի վաճառականները Վան ներածուած ապրանքների մեծ մասը փոխադրում են նահանգի զանազան մասերը, իսկ զրա փոխարէն հաւաքում են միևնոյն տեղերից արտահանուելիք նիւթերն ու փոխադրում զրոսերը: Վերը յիշած արտահանութեան նիւթերից այծ ու ոչխարի արտածութիւնը կատարւում է բուն իսկ իրանց տէրերի ձեռքով, այսինքն օտարերկրա-

ցի ոչխարավաճառները (թէջիւրները) մտնում են Վանի սահմանները, ուղղակի սակարկում ոչխարատէրերի հետ, տասնեակ հազարներով այժ ու ոչխար գնում և փոխադրում վաճառատեղերն ու ծախում: Իսկ միւս արտահանելի նիւթերը մորթ, բուրդ, գետժ, իւղ և այլն մեծ մասամբ արտահանում են քաղաքացի վաճառականների ձեռքով: Ոչխար և այժ արտահանում են բոլոր այն կէտերից, ուր անասնապահութիւնը զարգացած է, այսինքն գլխաւորաբար նահանգի հարաւային, արևելիան և հիւսիսային կողմերից, ուր քիւրդական բնակչութիւններ կան հաստատուած: Իսկ միւս նիւթերը հաւաքուած են գլխաւորաբար այս տեղերից. ոչխարի և այժի մորթ—Բաշկալէից, Գէվէռից, Արճէշից և այլն. բուրդ և գետժ—Նոյն տեղերից և Սարայից, Նորդուղից, Շատախից և այլն. իւղ—Նոյն տեղերից և Գաւաշից ու Մոկսից, Շատախից և այլն. մեղրամոմ, գետոր—Մոկսից, Գաւաշից, Կարճկանից և այլն. ձուկ, բորակ, ծիրանի կուտ և այլն քաղաքից և իր շրջակայքից. միւս նիւթերն էլ զանազան տեղերից:

Ներածութեան և արտածութեան մասին այսքանը բաւական համարելով՝ դառնանք այժմ երկու խօսք էլ Վանի առևտրի ներքին վիճակի մասին ասելու:

Արդէն վերը դրուած ցուցակը կարող է մօտաւորապէս պարզել մեզ Վանի առևտրի վիճակը: Ուրեմն Վանի առևտրական հրապարակի նիւթերն են զրսից ներածուած ապրանքներ, նահանգի զանազան մասերից դէպի քաղաք փոխադրուած նիւթեր և տեղական բերքերի և արհեստանոցների արտադրած վաճառանիւթերը:

Վանի առևտուրը մշտափոփոխ վիճակի ենթակայ է. մինչև XIX դարու կէսերը վաճառականութիւնը և առևտուրը շատ սահմանափակ վիճակի մէջ էր գտնուում: Վանը վաճառականական յարաբերութիւն ունէր իր զրացի Բիթլիկ քաղաքի և Պարսկաստանի Ատրպատական նահանգի հետ, եւրոպական ապրանքները մուտք չունէին և ոչ էլ Վանի ապրանքները Բիթլիկից այն կողմն անցնում էին, միայն XIX դարու վերջին կիսուն է սկսում կամաց-կամաց զարգանալ Վանի արտաքին վաճառականութիւնը, և թէպէտ այս շրջանի մէջ նկատուած է աստիճանական առաջադիմութիւն, բայց ելևէջներ էլ շատ անգամ են պատահել. այս ելևէջների շնորհիւ երբեմն բոլորովին կանգ է առել Վանում առևտուրը, թէ վաճառականները և թէ հասարակ առևտրականները մեծամեծ վրասներ են կրել, սնանկացել և ասպարիղից հեռացել են, սակայն երբ վաճառականութեան զարգացման հակազդող պայմանները անցել են, Վա-

նի առևտրականները նոր ջանքերով աշխատել են հնարաւոր միջոցներով վերբը բուժել և նորից առևտուրը կանոնաւորել Շատ անգամ է կանգնել վաճառականութիւնը վանում, բայց յիշենք միայն երկու շրջան:

Եօթնամանական թուականներին վանի շուկայի մէջ մեծ ոգևորութիւն էր տիրում, առևտուրը կենդանի վիճակի մէջ էր, շուկան օրէցօր լցւում էր ապրանքներով, սակայն 1876 թուի դեկտեմբերի 1-ին յանկարծ մի հրդեհ է ծագում շուկայի մէջ, և 1000-ի չափ խանութներ են այրւում, որի հետևանքը լինում է ընդհանուր յուսահատութիւն. նշանաւոր վաճառատները սնանկանում են, հասարակ խանութպանները լքւում են և այդպէս կանգ է առնում վանի առևտուրը. թէև այդ վերքի նշանները խիստ փայլուն կերպով երևում են մինչև այսօր վանեցու վրայ, բայց հետզհետէ ջանքեր են թափւում դեղ ու դարման անելու: Ընդ 20 տարի յետոյ 1896 թուին վանում պատահած աղէտները գալիս են մի նոր հարուած տալու փոքր ինչ կենդանացած առևտրին: Այս անգամ շուկան թէև ազատ էր վտանգից, բայց ժողովուրդը ընդհանուր լքումի էր մատնուած: Այս վերքն էլ սակայն կամաց-կամաց բուժուելու վրայ է: Այժմ բաւական կենդանութիւն է տիրում առևտրական հրապարակի վրայ:

Այժմ թէ վաճառականները և թէ հասարակ խանութպանները աւելի վարկով են գործում, քան թէ դրամագլխով. պէտք է ասել, որ վանի առևտրականները խիստ զգուշութեամբ են վերաբերւում դէպի իրանց վարկը, որովհետև եթէ վարկի վստահութիւնը մէջտեղից վերացուի, կարելի է ասել՝ առևտրով զբաղուողների 90% անգործ կը մնայ և սովածութեան կը մատնուի: Թէև երբեմն-երբեմն պատահել են և պատահում են սնանկութիւններ, բայց բոլորովին անկախ սնանկացողների կամքից և հակառակ նրանց թափած ջանքերին:

Նայելով վաճառանիւթերին՝ վանի առևտրականները երեք գլխաւոր խմբերի կարելի է բաժանել.

Ա. խումբն զբաղւում է բէզէզիայի (мануфактура) վերաբերուող առևտրով:

Բ. խումբն զբաղւում է էթտէրիայի (мелочная) վերաբերուող առևտրով:

Գ. խումբն զբաղւում է բակալիայի (бакалейная) վերաբերուող առևտրով:

Իւրաքանչիւր խմբի մէջ կան 10—20 չափ առևտրական կամ վաճառականական ընկերութիւններ և տներ. սրանք

ապրանքներ են յանձնարարուած և ստանուած, ապա հասարակ խանութպաններին են տալիս:

Երեք ճիւղին պատկանող վաճառատների թիւը հասնում է 35-ի, իսկ հասարակ խանութների թիւը 3000-ի.

Բէզէզիա վաճառատների թիւը 14 է, իսկ խանութներին՝

մօտ 1000

Էթտէրիա » » 9 » » » 1200

Բաքալիա » » 12 » » » 800

Վաճառատների դրամադուլիսը հրապարակի վրայ յայտնի չէ, ինչպէս ասացի առևտրականները դրամադուլիսից աւելի վարկով են գործում. բայց նայելով նրանց տարեկան գործառնութիւններին՝ կարող ենք այսքանն ասել, թէ ամենամեծ վաճառատունը (բէզէզիա) տարուան ընթացքում կարող է ներածել և վաճառել 30,000 լիրայի (մօտաւորապէս $\frac{1}{4}$ միլիօն րուբլու) ապրանք, իսկ ամենափոքր վաճառատունը (բալալիա) հազիւ թէ տարեկան 3000 ոսկու գործառնութիւն անէ: Հասարակ խանութպանները իրանց խանութներում կարող են մշտապէս պատրաստ պահել 10—200 լիրայի (կամ 100—2000 րուբլու) ապրանք:

Շահի միջին թիւը կարելի է հաշուել 10% , ամենաբարձրը 20% , իսկ ամենապակասը 3% : Հասարակ խանութպանը եթէ ունի օրինակ 40 լիրայի բէզէզիա խանութ, այսինքն եթէ մշտապէս իր խանութում կարող է 40 լիրայի ապրանք պատրաստ պահել, տարուան ընթացքում առևտրի միջակ ժամանակ կարող է մինչև 200 լիրայի առևտուր անել և 15—20 լիրայի շահ ունենալ:

Վանի նշանաւոր վաճառատներից կարելի է յիշել հետեւեալները.

1. Գափամաջեան ընկ. կազմուած 1882 թ., որը ներածում է տարեկան 20,000 լիրայի ապրանք. մասնաճիւղեր ունի Պոլիս, Հալէբ, Տրապիզոն, Կարին, Այնթաբ, Դիարբէքիր, Խարբերդ, Թոկաթ, Բաղէշ, Սղերդ, իսկ գործակալներ կամ յանձնակատարներ՝ Մանչեստր, Համբուրգ, Երզնկա, Կեսարիա և ուրիշ քաղաքներում:

2. Ճիտէջեան եղբարք. գործն սկսած են 1876 թ., զբաղւում են ներածութեամբ, արտահանութեամբ և մասնակցում են տեղական կառավարութեան կողմից եղած զանազան աճուրդների գործառնութիւններին (օր. գնում են գիւղերի տասնորդական տուրքը. Վանի լճից պատրաստուած բորակի և տառեխ ձկնի միջնավաճառութիւնը և այլն և այլն): Ներածում են 15000 լիրայի ապրանք. $\frac{1}{2}$ -ի չափ էլ արտահանում են:

3. Երամեան եղբարք, 4. Թիւթիւնջեան եղբարք, 5. Շահ-բաղցեան և Վարդապետեան ընկերութիւն, 6. Այազեաններ, 7. Թէրզիպաշեաններ, 8. Տպաղեաններ, 9. Վուվունեկեան-Կազոեան ընկերութիւն ևայլն ևայլն: Այս վաճառատները ընդհանուր կերպով կարելի է ասել թէ 1876 թուից յետոյ են սկսել իրանց գործերը. թէև ոմանք այդ թուից էլ առաջ էին սկսել, բայց 76-ի հրգեհնը հին հաշիւը փակեց. սրանք ունին մօտաւորապէս տարեկան 5—10,000 օսմ. լիրայի գործառնութիւն: Գրեթէ չնչին բացառութեամբ զբաղւում են միմիայն ներածութեամբ:

Վանի առևտրի կենդանութիւնը կախուած է գլխաւորապէս գաւառացի ժողովրդի տնտեսական վիճակի պայմաններէց. եթէ չլինեն գիւղացիները, մանաւանդ քրդերը, Վանի շուկայի կամ նրա հետ կապ ունեցող երկրորդական գաւառական հրապարակների առևտուրը կը կանգնի: Առևտրականները շահուած են գլխաւորաբար գիւղացի տարրից: Եթէ քաղաքացին իր գնած ապրանքի համար ապրանքի տիրոջ տալիս է 5% շահ, գիւղացին վճարում է նրա կրկինը կամ եռապատիկը: Սպառողների 80% գաւառացի տարրն է: Վանի շուկայում այդ պատճառով էլ տարւում են ընթացքում երկու անգամ է կենդանութիւն տիրում, գարնան սկզբում և մանաւանդ աշնան վերջերում, որովհետև այս շրջաններում գիւղացիները ազատ ժամանակ ունենալով՝ հեռաւոր և մօտաւոր տեղերից լցւում են քաղաք իրանց տարեկան պիտոյքները գնելու. ամառը և ձմեռը երթևեկութիւնը դադարում է, և առևտուրն էլ կանգ է առնում: Խանութպաններին աւելի մեծ շահ են տալիս քրդերը: Կիսավայրենի քրդերը փողը չի ափսոսում, որովհետև շատ բրտինք չէ թափել վրան (ոչխարի հօտերն են իր հարստութեան աղբիւրը), ապրանք չի ճանաչում, գնում է նա, ինչ որ տեսել է մի ուրիշ քրդի վրայ և իրան լաւ է երևացել: Բաւական է, որ փայլուն, գունաւոր, պսպղուն, նախշուն և գոյնը գոյն լինի, մանաւանդ որ փողը առատ է գրպանում, խանութի մէջ ինչ որ աչքի ընկնի և լաւ երևայ, կը գնի:

Առևտրականների մէջ թէև չկան գծուած կանոններ ասնափական կեանքին վերաբերեալ, բայց նախնիներից մնացած աւանդական սովորութիւնները և օրէնքներն իրրեւ սրբագործուած պատուէրներ բաւական լայն գործադրութեան մէջ են: Թէև տարեցտարի զեղծումները շատանում են, և որոշ օրէնքների պէտք է զգացւում, բայց և այնպէս հղածով գոհանում են:

Առևտրականների միջև ծագած վէճերը քննւում են բիշաէթ հուգուգ մէհքէմէի—նախագատ քաղաքական դատարա-

նի մէջ. այս դէպքում վաճառականների կողմից ընտրուած մէկ-անձն իբրև անդամ մասնակցում է այս դատարանի գործողութիւններին, և դատարանը կրում է թիշարէթ — վաճառականական — անունը:

Անշուշտ հետաքրքիր է իմանալ, թէ Վանում առևտրի խանութները վարձու տրուելիս որքան շահ կարող են բերել իրանց տէրերին. թէև դա կարելի էր գանազան միջոցներով էլ հասկանալ, օրինակ՝ խանութպանների տարեկան շահից կամ դրամագլխից էլ եզրակացնել, բայց գուցէ դժուարանաք ճիշտ գաղափար կազմել: Շուկայի ամենագլխաւոր մասում վաճառատուն կարելի է վարձել տարեկան առառաւելն 15 լիրայով (130 բուբլի). իսկ միևնոյն տեղում հասարակ խանութներ կարելի է վարձել տարեկան 5—10 լիրայով. իսկ հասարակ տեղերում (արգէն Վանի շուկան չունի շատ կարևոր տեղեր) կարելի է խանութ վարձել 1—2 լիրայով կամ 10—20 բուբլիով:

Վանի լիճը բաւական կարևոր դեր է կատարում Վանի առևտրական յարաբերութիւնների գործում: Այս լիճը փռուած է Վան և Բիթլիզ նահանգների միջում. կարևոր յարմարութիւններ է ընծայում Վան—Բիթլիզ առևտրական ճանապարհի գծին: Երկու խօսքով նկարագրենք այս լիճը:

Վանի լիճը, որ երբեմն կոչուել է նաև Բզնունեաց և Աղթամարայ ծով, բռնում է մօտ 3360 քառ. վերստ տարածութիւն. մօտ 6000 ոտնաչափ ծովի մակերևոյթից բարձր է. յայտնի չէ, թէ որքան խորութիւն ունի, բայց նկատուած է, որ այս լճի խորութիւնը հետզհետէ մեծանում է: Շատ նշաններ և ապացոյցներ կան, որոնք հաստատում են, թէ Վանի լիճը վերջին 1/2 դարու մէջ իր սահմաններն զգալի կերպով ընդարձակել է: Գրեթէ լճի չորս կողմն էլ կարող էք գտնել շէնքեր, որոնք սրանից 50—60 տարի առաջ ծովափից բաւական հեռու էին գտնուում, իսկ այժմ ջրով ծածկուել են: Այսպէս Աւանց նաւահանգստի հին եկեղեցին այժմ ծովի մէջն է. այդ վիճակումն է գտնուում Հին Արճէշի բերդը, Աղթամարի շէնքերի մի մասը: Վանի լճի մէջ թափւում են 30-ից աւելի մեծ և փոքր գետակներ, որոնցից կարևորներն են Բէնգիմահու, Սիկամ Մարմէզ, Խոշար կամ Անգղ, Թուխ, Օրօօն, Հայդարբէզ և այլն: Ծովի ջուրը չափազանց աղի և դառն է: Ունի իր մէջ երկու տեսակ ձուկ. հոշակաւորն է տառեխ ձուկը, միւս տեսակը կոչւում է կողատ, որ ոչ տառեխի առատութիւնն ունի և ոչ էլ նրա հոշակն ու յարգը: Վանի լիճը տառեխի անսպառելի շտեմարան է: Տարուայ մէջ միայն երեք ամիս (մայիս, յունիս, յուլիս) կարելի է որսալ այս ձուկը: Գարնան կէսերին

—ապրիլի մէջ այս ձկները սկսում են երամով գլխաւորապէս Բէնդիմանու և Մարմէդ գետերի մէջ լցուել և ջրի հոսանքին հակառակ ընթացքով արշաւանքներ կազմել. ահա այս արշաւանքի ժամանակն է, որ ձկնորսները յատուկ ձկնորսութեան համար պատրաստած թակարդաւոր կողովներով սկսում են իրանց որսորդութեան գործը. ուռկանով ձկնորսութիւնը դեռ գրեթէ անծանօթ է վանեցիներին. այդ պատճառով էլ բուն լճում ձուկ չի որսւում, այլ գետերում՝ կողովներով: Վերջերս փորձեր են լինում ուռկանով ծովից որսալու:

Կառավարութիւնը ձկնորսութիւնը մենավաճառ է դարձրել: Վանի լճի միայն Վանայ մասում ձուկ կայ, իսկ Բիթլիզում՝ ոչ: Երեք գլխաւոր ձկնորսական տեղ կայ, որոնց աճուրդից կառավարութիւնը ստանում է միջին հաշուով տարեկան 900 լիրա (մօտ 8000 ռուբլի): Ամբողջ 2—3 ամսուայ ընթացքում որսւում է աւելի քան 30,000 փութ ձուկ, որի ամենամեծ մասը սպառւում է քաղաքի մէջ, իսկ մի փոքր մասն էլ արտահանւում է դէպի Բիթլիզի, Երևանի նահանգները և Պարսկաստան:

Վանի լճի ջրից Աւանց նաւահանգստի բնակիչները պատրաստում են բորակ, որ գործածւում է գլխաւորաբար հագուստների մաքրութեան համար: Բորակագործները ծովափին պատրաստում են 2 արշինաչափ խոր ածուներ. ամառուայ տօթ օրերում այդ ածուները լցնում են ջրով, օրէցօր ջուրը գոլորշիանում է՝ աղի բարակ խաւ թողնելով ածուի յատակի վրայ. գոլորշիացող ջրերի տեղը լցնում են շարունակ նոր ջուր, և այս գործողութիւնը կրկնւում է 1—2 ամիս, մինչև որ բորակմազնէղիային խաւերի թանձրութիւնը 4—5 վերջուկի է հասնում, այն ժամանակ սկսում են կտրատել: Եթէ սպառւում լինի, Աւանց գիւղացիները կարող են տարեկան մինչև 50000 փութ բորակ պատրաստել, բայց ներկայումս հազիւ 20,000 փութ սպառւում լինի: Սպառւում է գլխաւորաբար Վան քաղաքում, չնչին քանակութեամբ փոխադրւում է Բիթլիզ և Պարսկաստան: Բորակի փութը պատրաստողները իր տեղում ծախում են 4—8 կոպէկ, երբեմն էլ մի քիչ աւելի:

Վանի լճի վրայ ներկայումս 100-ի չափ մեծ և փոքր առգաստանաւեր կան, որոնք կարող են վերցնել մինչև 6—7000 փութ բոռ: Նաւակարութեան գործը մասնաւորապէս Աւանց նաւահանգստի բնակիչների սեփականութիւնն է:

Ամենակարեւոր նաւահանգիստներն են Վան քաղաքի համար Աւանց, ապա Արճէշ, Դատուան, Սորփ և այլն: Յաջող հողմով կարելի է 20—24 ժամում նաւով անցնել Վանի լճի՝

արևելքից—արևմուտք ամենաերկար տարածութիւնը: Միքանիս անգամ փորձեր են եղել Վանի լճի վրայ շոգենաւակներ բանեցնելու, միքանի անգամ յատուկ այդ նպատակով ընկերութիւններ են կազմուել և դիմումներ են եղել, ուր որ պէտք է, արտօնութիւն ստանալու շոգենաւ գործածելու համար, սակայն զանազան պատճառներով մինչև այժմ այդ գաղափարը անիրագործելի է մնում. թերևս մօտիկ ապագայում այդ խորհուրդը իրականանայ: Վանի լճի գերը աւելի և շատ կարևոր պիտի համարուի, երբ իր նահապետական առագաստանաւերը շոգենաւակների փոխուեն, Վանն այդ ժամանակ Վան—Բիթլիզ հաղորդակցութեան ճանապարհով Անատոլիոյ բոլոր մասերի հետ կենդանի յարաբերութեան մէջ կարող է մտնել, որով մեծամեծ յեղաշրջումներ կարող են մտնել Վանի առևտրականութեան մէջ:

Վանի լիճը բացի վանեցիներին հասցրած տնտեսական բարիքներից ֆիզիկական օգուտներ էլ է տալիս նրանց: Առանց լճի Վանն անշուշտ իր ունեցածից բոլորովին տարբեր մի կլիմա պիտի ունենար: Ամառուայ տօթագին օրերում ծովակից ամբողջ քաղաքի վրայ փչող զեփիւռը ջերմաչափի վրայ մեծ ազդեցութիւն է անում:

Վանի լճում կան չորս կղզի, որոնք տեղացիներից անապատ են կոչւում: Աղթամար, որ հռչակաւոր է իր կաթնուղիկոսարանով, Առտէր, որ անբնակ և ամայի է, Լիմ և Կտուց: Այս անապատները հայերին են պատկանում, որոնց մէջ հաստատուած են վանքեր, ուր ապրում են մեր մեղաւոր աշխարհից ձեռք քաշած միքանի անապատականներ: Այս անշուրճ ձգնաւորները իրանց միօրինակ-վայրենաբարոյ կեանքը այդ մենաստաններում քաջքշում են աղօթքով, մենախոհութեամբ, հայհոյանքներով, քսութիւններով: Գոնէ իրանց նախորդներից ոմանք նուիրում էին իրանց վանական այս ու այն գործին, գրագրութեան, մատենագրութեան եայլն, իսկ սրանք ոչ մի բանի պէտք չեն գալիս: Ափսոս իրանց կերածին...

Վանը Թիւրքիայի թղթատարական (почтовой) Դ. շրջանակին է պատկանում: Ունի պոստ-հեռագրատուն. պոստային յարաբերութիւնը Պոլսի, Պարսկաստանի, եւրոպական և ամերիկական քաղաքների հետ կատարում է Կարին և Տրապիզոն քաղաքների վրայով: Թիւրքիայի զանազան քաղաքներում ուղարկուելիք նամակների համար, որոնք 15 գրամից աւելի ծանրութիւն չունին, պոստատունն առնում է 40 փարայի կամ 8 կոպէկի թղթադրոշմ (մարկա), արտասահմանի համար 100 փարայի կամ 20 կոպէկի թղթադրոշմ, դաւութլի (ապահովուած) նա-

մականերին կրկնապատիկ: Թղթատարութեան միւս պայմաններն այստեղ յիշել շատ երկար և աննպատակալարմար կը լինի: պոստային յարաբերութիւնը Կարնի և Տրապիզոնի, ինչպէս նաև Ասիական Թիւրքիայի ուրիշ միջանի քաղաքների հետ կատարւում է ձիով: Վանից—Կարին պոստը հասնում է 5 օրում, Վանից—Տրապիզոն՝ 8 օրում (Տրապիզոնից—Պոլիս Սև Ծովի վրայով շոգենաւով 3 օրում): Զմեռուայ ընթացքում երբեմն Վանից—Տրապիզոն պոստը դնում է 15—20—25 օրում, անցած ձմեռուայ մէջ ձիւնի առատութեան պատճառով ամբողջ 3 ամսուայ ընթացքում Տրապիզոնից պոստը Վան էր հասնում մի ամսուայ ընթացքում: Շաբաթը մի անգամ Վանը պոստ է տալիս և առնում: Զմեռուան ընթացքում երբեմն այդ կարգը խանգարւում է: Ամառուան ընթացքում նամակ ստացւում է Վանում Պոլսից 10 օրում, Թիֆլիզից 15, իսկ Ամերիկայից 30 օրում:

XVI

Արհեստները.— Ոսկերչութիւն. հին և նոր շրջան. ոսկերչական նիւթերի արտահանութիւնն ու շահը. փորագրութիւնը. կահագործութիւնը. դերձակութիւնը. մոնակագործութիւնը. կօշկակարութիւնը. ժամագործութիւնը. կտաւագործութիւնը. դոկ և շայքեր. շալագործութիւնը. կաշուեգործութիւնը. արհեստների ներկայ ընդհանուր վիճակը:—Միւս զբաղումները.— Այգեգործութիւնը. մշակութեան ձևը. արգիւնքը. պտուղների քանակութիւնը: Պարտիզպանութիւնը. արտադրած նիւթերը:— Երկրագործութեան արտադրութիւնը: Անասնապահութիւնը: Պանդխտութիւնը. նիւթական օգուտները. պանդխտների ներածած գումարները. պանդխտավայրը:

Կէս դար առաջ Վանում արհեստներ գրեթէ չկային, եղածներն էլ խիստ ողորմելի վիճակի մէջ էին գտնւում: Ամենագլխաւոր և ընդհանրացած արհեստն էր ոստայնակութիւնը: Այս արհեստով զբաղուողները Պարսկաստանից բերուած բամբակը տեղական ճախարակներով մանել տալուց յետոյ կտաւ էին պատրաստում, իսկ չիթչիներն էլ այդ կտաւը ներկում և պատրաստում էին շիլա (զուտ կարմիր գոյնի կտաւ) և չիթ. չիթի զարդանկարի և կամ ծաղկանկարի համար երկու տեսակ կաղապար կար, և այդ կաղապարների անուններով էլ չիթերը կոչւում էին կոռ պոչ չիթ և երկու պոչն չիթ: Այս համբաււոր չիթը մեծ քանակութեամբ գործածւում էր Վանի և Բիթլիզի մէջ:

Այժմ երբ նայում էք Վանի արհեստների վրայ, թէև տեսնում էք միևնոյն ողորմելի նահապետական դրութիւնը, բայց և այնպէս կարող էք նկատել զգալի առաջադիմութիւն:

կամ առաջադիմելու ձգտում: Արհեստների արդիւնքի արտադրութիւնն օրէցօր շատանում է, իսկ արհեստների թիւն աւելի ու աւելի է մեծանում: Առածաձև մէկ ասացուած ունեն վանեցիները, չգիտեմ սակայն՝ իրանց հեղինակութիւնն է, թէ՞ դրսից են փոխ առել, գոնէ ես առաջին անգամ վանեցիներից եմ լսում. «Սանաթ (արհեստ) չունեցողը մէկ օր անօթի կը մնայ, սանաթ ունեցողը կէս օր անօթի մնացէ»: Այս խօսքը սրբագործուած սկզբունք է դարձել ներկայումս վանեցիների համար, և իրաւ որ վանեցի հայերի խոշոր մեծամասնութիւնը արհեստաւորներից է կազմւում: Ներկայումս Վանի մէջ բաւական կարեւոր տեղ են բռնում հետեւեալ արհեստները. ոսկերչութիւն, փորագրութիւն, կահագործութիւն, հիւսնութիւն, մուճակագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն, կաշուեգործութիւն, ժամագործութիւն, որմնադրութիւն, կտաւագործութիւն, երկաթագործութիւն, փականագործութիւն, պղնձագործութիւն, խոհարարութիւն: Բացի սրանցից կան ուրիշ շատ երկրորդական արհեստներ, որոնց անունները միառմի այստեղ թուել աւելարդ է: Յիշած արհեստներից մի քանիսնեւրի մասին այժմ երկու խօսք:

Ոսկերչութիւնը Վանի հին արհեստներիցն է, բայց մինչև 90-ական թուականները բոլորովին անշահն և անկարևոր արհեստ է համարւում, իսկ վերջին 15 տարուայ ընթացքում այնքան զարգացաւ, որ դարձաւ Վանի ամենակարևոր արհեստներից մէկը, որի համբաւը ոչ միայն Թիւրքիայում, այլ նոյնիսկ արաւասահմանումն էլ հռչակուեց: Այժմ ոսկերիչներին երկու խմբի կարելի է բաժանել. առաջին կամ հին խմբին պատկանողները շինում են հին ճաշակին համապատասխանող արծաթէ զարդեր—կոճակ, գինտ, ապարանջան, մատանի կայլն: Իսկ երկրորդ կամ նոր խմբին պատկանողները շինում են նոր ճաշակին գոհացնող գեղեցիկ արծաթէ իրեր, որոնց մէջ ամենահռչակուածն է արծաթէ ծխատուփը. պատրաստում են նոյնպէս արծաթից զանազան տեսակ խմիչքների բաժակներ, պընակներ իրանց պարագաներով, ճաշի գդալ, դանակ, պատառքաղ, անուշահոտ իւղերի օշարակների սրուակներ, հեշտաեռ, սանր, գօտի, բրոշ կայլն: 1902 թուին միայն 7000 հատ ծխատուփ է ուղարկուած Վանից Կարին, Տրապիզոն, Պոլիս, Եգիպտոս, եւրոպական և ասիական Թիւրքիայի զանազան քաղաքներ: Վանի ոսկերիչներից մէկի շինած հեշտաեռը անցածները նահանգապետի կողմից նուէր ուղարկուեց Պոլիս իբրև կայսերական պալատի զարդ: Տարեկան աւելի քան 100 փութ արծաթ է մտնում Վան, որից պատրաստուած իրեղէնները գրեթէ

նոյն քանակութեամբ ուղարկուած են դուրսը: Վանի արհեստ-
ների մէջ միայն ոսկերչութիւնն է, որ արտահանութեան նիւթ
է տալիս վանեցիներին և տարեկան իբրև զուտ շահ մօտ 3000
լիրա (25000 ռուբլի) գումար է մտցնում Վան: Կան շատ հը-
մուտ և տաղանդաւոր ոսկերիչներ, որոնք սակայն աղքատու-
թեան պատճառով չկարողանալով 30—40 լիրայի (3—400
լուբլու) զբամագլուխ ճարել՝ հեռանում են ասպարիզից: Նոր
խմբին պատկանող ոսկերիչների թիւը հասնում է 50-ի, հին և
նոր միասին՝ 80-ի:

Փորագրութիւնն էլ թէև հին արհեստ է համարւում, բայց
սա էլ իր նախկին վիճակից բոլորովին կերպարանափոխուել է.
30—40 տարի առաջ մէկ-երկու փորագրիչներ կային Վանում,
որոնք կնիքներ փորելուց զատ ուրիշ գործ չունէին, սակայն
ոսկերչութիւնը իր զարգացումով գրեց փորագրութեան առա-
ջադիմութեան: Այժմ փորագրութիւնը ոսկերչութեան մէկ կա-
րեւոր ճիւղն է. փորագրիչները ոսկերիչների շինած արծաթե-
ղէնները զարգանկարների՝ քանդակներով զարդարում են. փո-
րագրիչն իր մատների շնորհալի շարժումով ոսկերչի ձեռա-
կերտները գեղեցկացնում և շքեղացնում է. առանց փորագրչի
քանդակներին Վանի ոսկերչի շինած ամենագեղեցիկ ծխատու-
փը ոչ մի շքեղութիւն չի կարող ունենալ. փորագրիչը շունչ ու
կենդանութիւն է տալիս արծաթի զանգուածներին: Փորագրու-
թեան կամ արծաթի վրայ բանաւած քանդակների ոճը արևե-
լեան է կամ աւելի ճիշտ՝ զուտ թիւրքական: Արծաթեղէնների
վրայ մարդու պատկեր չի քանդակւում, որովհետև՝ ինչպէս
յայտնի է՝ Մահմէդն արգելում է, իսկ զրա փոխարէն գործած-
ւում է թիւրքական շքեղ «արմա»-ն (գինանշան, թուղրան):
Քանդակների մէջ տիրապետող է ծաղկանկարը. ընդունուած
ոճի և ճաշակի համաձայն միկ արմատի վրայ կարելի է գտնել
բազմատեսակ տերեւներ, ծաղիկներ և պտուղներ: Շէնքերի, քա-
ղաքների, հրապարակների և բնութեան զանազան տեսարան-
ների պատկերներ էլ գործածւում են փորագրութեան մէջ: Ներ-
կայումս փորագրիչ վարպետների թիւը հասնում է 25-ի (Վա-
նի արհեստաւորներից միայն ոսկերիչներն ու փորագրիչները
վարպետութեան վկայական ունին):

Կահագործութիւնը նոր արհեստ է և բաւական զարգա-
ցած, թէև վանեցի կահագործի մտքի ստեղծագործութեան և
ճաշակին գոհացում տուող գործիքներն ու մեքենաները պակա-
սում են Վանում, որով նա չի կարող վիեննացի կամ թիֆլի-
զեցի վարպետի պէս իր երեսակայած ձեւը նրբութեամբ և ճշ-
տութեամբ մարմնացնել, բայց և այնպէս իր ձեռքում գտնուած

պարզ գործիքներով էլ նա պատրաստում է այնպիսի ճաշակաւոր և գեղեցիկ սեղաններ, աթոռներ, կանաֆէներ, թիկնաթոռներ, պահարաններ, արկղներ, մեծ ու փոքր տուփեր, պատկերներ շրջանակներ և այլն:

Դերձակութիւնն էլ երկու շրջան է ունեցել Վանում. առաջին շրջանին պատկանող դերձակները հազուատեղէնները կարում էին ձեռքով. այդ շրջանի մէջ հազիւ 5 դերձակ ունենար Վանը, որովհետեւ նրանց կարուձեւը կանայք էլ կարող էին անել, այդ պատճառով էլ հազուատեղէնների ամենաչնչին մասն էր միայն դերձակներին յանձնւում. իսկ 80-ական թուականներին, երբ Զինգերի կարի մեքենան մտաւ Վան և նոր շրջանի սկիզբ դրաւ, դերձակութիւնն օրէցօր թեւ առաւ և ըսկսեց առաջ վազել. տարէցտարի «Փռանգ-թարդի»-ների (այսպէս են կոչւում մեքենայով գործող վարպետները հներից զանազանուելու համար) թիւը շատանում է, և հազուատի ձեռք մէջ նոր-նոր մոդաներ են մտնում: Այսօր Վանի դերձակները թէև եւրոպացի վարպետների հետ մրցել անկարող են, բայց բաւական հմուտ հետևող են նրանց: Իզական սեռի հազուատներից աւելի արական սեռի հազուատեղէնները իրանց կարուձեւով բոլորովին նման են եւրոպականին: Երկու սեռի հազուատեղէնները առանց բացառութեան դերձակներն են պատրաստում հակառակ մինչև 20 տարի առաջ տիրող սովորութեան: Հին շրջանի դերձակները օրէցօր անյայտանում են, իսկ նոր շրջանի դերձակ վարպետների թիւը հասնում է 100-ի:

Մուճակագործութիւնն էլ զգալի առաջադիմութիւն է արել վերջին տարիներում: 15—20 տարի առաջ մատով էին ցոյց տալիս պարզ մուճակ—կոնտուռա հագնողներին (այժմ այդ անճոռնի կոնտուռան քրդերի մէջն էլ մոդայից ընկած է), իսկ այժմ ընդհանուր կերպով Վանում գործածւում են զանազան տեսակ մուճակներ կամ՝ ինչպէս իրանք են ասում՝ բոթիններ: Վանի մուճակագործները կարող են պատրաստել ամենանուրբ և ճաշակաւոր մուճակներ, մանաւանդ կրկնակօշիկներ, բայց պէտք չի զգացւում, որովհետեւ մուճակի գործածութեան նորավարժ վանեցիին պահանջում է, որ իր գործածած կօշիկները նրբութիւնից աւելի դիմացկունութիւն ունենան, այդ պատճառով էլ մուճակների տակ շարում են կիսազնդած և մեխեր և երկաթի տափակ շերտեր, որպէսզի շուտ չփչանան, թէև օրէցօր նուրբ կօշիկներ փնտրողների թիւն էլ շատանում է: Այժմ մուճակագործների թիւը Վանում կարելի է հասցնել մինչև 60-ի:

Մուճակագործութիւնից յետոյ յիշենք կօշակարութիւնը.

վանեցիներն առաջին արհեստին թիւրքերէն լեզուով ասում են՝ կոնդուռաջութիւն, իսկ երկրորդին սոլկարութիւն. կովկասցիները գրական լեզուի մէջ երկու արհեստին մէկ անուն են տալիս (?) — կօշկարութիւն, բայց կօշկակար ասելով տաճկահայերը հասկանում են չուստ, սոլ կարող. այդ պատճառով էլ բոսին կօշիկ կարողներին ասում են մուճակագործ: Մենք էլ նրանց հետեւելով ջոկ-ջոկ անուններ տուինք: Այժմ ուրեմն կօշկարութեան վրայ մասնաւորեմք մեր խօսքը: Այս արհեստը հին է. քանի դեռ չէր սկսուել կոնդուռայի կամ բոսինի գործածութիւնը Վանում, սոլկարութիւնը բանուկ արհեստ էր համարւում, բայց մուճակագործութիւնը բաւական հարուած տուեց այս արհեստին. օրէցօր սոլի կամ չուստի գործածութիւնը քաղաքից վտարւում է դէպի գիւղերը: Վանեցիներից հասակաւորները մի փոքր մասը կօշիկ է հագնում, այն էլ ամառուայ ընթացքում գլխաւորաբար շոգի պատճառով, իսկ 3—15 տարեկան մանուկները ընդհանրապէս սոլ են հագնում: Սոլկարները տեղական պահանջման համեմատ պատրաստում են ոչ այնքան նուրբ, որքան ամուր ու զիմացկուն սոլ: Սոլկարների թիւը հասնում է 80-ի:

Ժամացոյց գործածելու սովորութիւնն ընդհանրացել է Վանում. ժամացոյց գործածում է երկու սեռն էլ, արական սեռն իբրև անհրաժեշտութիւն, իսկ իգական սեռն աւելի իբրև զարդ կամ մոդա. նորահասների նշանների մէջ կարևոր տեղ է բռնում ժամացոյցը: Ժամացոյցի գործածութիւնն առաջ բերեց Վանում նաև ժամագործութեան արհեստը. այժմ ունենք այստեղ 8 ժամագործ, որոնք նորոգում են ժամացոյցի վնասուած մասերը: Վարպետները աշակերտ չեն պահում թիւը չչատացնենելու համար:

Կտաւագործութիւնն ամենահին արհեստներից միսն է, որ մօտիկ անցեալում ունեցել է իր ոսկեդարը, սակայն այժմ ընկած է և կորցրել է իր նախկին փայլը: Վանեցիները, ինչպէս նաև նրանց զրացիները, եւրոպական ամերիկայի, բաթիստի, չիի փոխարէն գործածում էին Վանի ջուլհակների գործած և ներկարարների կամ չիթչիների պատրաստած կտաւը, շիւան և չիթը. այժմ գրեթէ քաղաքում բոլորովին վերացուած է զրանց գործածութիւնը. քաղաքացիների փոխարէն գիւղացիները բաւական մեծ քանակութեամբ գործածում են Վանի չիթը, կտաւն ու շիւան. սակայն կտաւագործութեան անկման միակ պատճառը եւրոպական ապրանքների մուտքը չէր, այլ մի ուրիշ ոչ նուազ կարևոր պատճառ, այն է՝ բամբակի թանգութիւնը կամ՝ աւելի ճիշտ՝ սակաւութիւնը. մինչև 97—98

Թուերը Վանը ուզածի չափ բամբակ էր ստանում Պարսկաստանից, բայց երբ յիշած թուերից սկսած Պարսկաստանն իր բամբակի ճանապարհը Վանից դէպի Երևան փոխեց, Վանի կըտաւագործութիւնը կանգ առաւ. այժմ կտաւագործները գործածում են Բիթլիզի բամբակ և Լըռոպական մանած ֆէլէմէնկ: Չնայած այս աննպաստ պայմաններին՝ այնուամենայնիւ այսօր էլ կտաւագործութիւնն իր կարևոր տեղն ունի Վանում: 100-ի չափ կտաւի գործարան կայ Վանում, որոնց մէջ կայ մօտ 300 դէզգեան: Մէկ տարում այս գործարանները տալիս են Վանի առևտրական հրապարակին մօտ 100,000 թուի կտաւ (թուիը = 20 տանկ. արշինի):

Եւրոպական մանածի մուտքը Վանի մէջ առիթ տուեց կտաւագործներին պատրաստել դոկ, դոկումա, և իրօք որ բաւական յաջողուեց. Վանի դոկը նոյն նըբութիւնն ու աւելի դիմացկունութիւնն ունի, ինչ որ Լըռոպականը, սակայն զնի կողմից աւելի թանգ. Լըռոպական նոյն ապրանքը այնքան երկար ճանապարհներ անցնելուց յետոյ Վանում աւելի աժան է ծաւաւում, քան տեղականը, այս պատճառով վերջինս չէ կարող առաջադիմել:

Դոկից առաջ Վանում ձեռնարկուեց շայեքի գործարան բանալու, և բաւական մեծ քանակութեամբ զանազան տեսակ շայեքներ պատրաստուեցին, բայց յարատեւ ընդունելութիւն չկարողանալով վայելել գլխաւորաբար իրանց կոշտութեան և սղութեան պատճառով, Լըռոպական ապրանքները յաղթանակը տարան, և այսօր բոլորովին դադարել է Վանի շայեքագործութիւնը: Նոյն վիճակն ունեցան Երեւան Վանում գոյութիւն ունեցող մետաքսի 1—2 գործարանները:

Կտաւագործութեան մէկ ձիւղը պէտք է համարել շալագործութիւնը. կտաւը բամբակի մանածից են պատրաստում, իսկ շալը այծի մազից—գետժից: Վանեցիները 15—20 տարի առաջ Լըռոպական կոստիւմին անծանօթ էին, պանտալոնի փոխարէն գործածում էին տեղական լայն շալվարը, որ պատրաստւում էր գետժից. այժմ հազիւ է երևում շալվար քաղաքում. Վանի շալագործների գործն էլ գլխաւորաբար շալվարի վրայ էր. որքան ընկաւ շալվարի գործածութիւնը, նոյնքան ընկաւ նաև շալագործութիւնը Վանում: Շալագործները պատրաստում են այժմ քիչ քանակութեամբ շալվար, շալ (մէջքի գօտի արական սեռի համար), ջէջիմ հայլն: Ամբողջ շալագործների թիւը հասնում է 25-ի:

Կաշուեգործութիւնը շատ նահապետական վիճակի մէջ է գտնւում. կաշուեգործները միայն ոչխարի մորթուց են կօշկի

(սովի—չուստի) համար կաշի պատրաստուում. ներկայումս ընդամենը 7 հատ կաշուի գործարան կայ Վանում, որոնց մէջ աշխատում են 30-ի չափ վարպետներ. միքանի տարի առաջ, երբ դեռ Վանից մորթու արտահանութիւնն այժմեանի չափ ծաւալ չէր ստացել, Վանի կաշու գործարաններն աւելի մեծ քանակութեամբ էին գործ տեսնում և Վանի կոշկակարներին կարողանում էին բաւականութիւն տալ, իսկ այժմ Սղերդից մեծ քանակութեամբ կաշի է փոխադրւում Վան: Հիմիկուման կաշու գործարանները տարուան ընթացքում հազիւ թէ կարողանան 20,000 ոչխարի մորթու կաշի պատրաստել:

Միւս արհեստներն էլ նահապետական վիճակի մէջ են. կրիայի քայլերով են առաջ գնում: Վանի արհեստների մասին ընդհանուր կերպով այս պէտք է ասել, որ շատ արագ կերպով կը ծաղկէին և կը զարգանային, եթէ շրջապատող հանգամանքները շատ թէ քիչ նպաստաւոր լինէին, և եթէ այսօր զրեթէ քառորդ դարում Վանի արհեստներն այս վիճակի են հասած, վանեցի արհեստաւորների մէջ նկատուում է սէր դէպի իրանց արհեստը, ընդունակութիւն և տաղանդ, չնայած իրանց չնչին վարձատրութեան: Երբեմն-երբեմն երեացել են Վանում հանձարեղ արհեստագէտներ, որոնք ինքնահնար գիւտեր են արել, սակայն պահանջուած դրամագլուխ, դիւրութիւն, քաջալերութիւն չունենալու պատճառով յուսահատուել, խենդացել են և իրանց յղացած գաղափարները սաղմի մէջ մեռցրել: Քանի՜ քանիներն իրանց տունուտեղը տուել են իրանց գաղափարին, քանի՜ քանիները յուսահատութիւնից խենդացել են:

Քանի դեռ արհեստներն այս վիճակումն են, Վանը պարտաւորուած է ներմուծել իր մէջ եւրոպական արհեստանոցների արտադրութիւնները: Այդ իրեղէնների քանակը տարէցտարի աւելանում է: Դրանց փոխարէն Վանն իր արհեստանոցների արտադրութիւնների ամենաչնչին մի մասը միայն (ոսկելւչական նիւթեր) կարողանում իր նահանգի սահմաններից դուրս հանել, համարեան ամբողջ արտադրութիւնները սպաւում են քաղաքի և նահանգի մէջ: Տարէցտարի արհեստների ամեն մի ճիւղում արհեստաւորների թիւն աւելանում է, և որովհետև արհեստաւորների թուի՝ մեծանալու հետ արհեստանոցների արտադրութիւնների սպաւման քանակն էլ չի մեծանում, ուստի տարուայ կէսը զրեթէ պարապ են անցկացնում արհեստաւորները:

Արհեստաւորները նոյնքան շատ են շահում, որքան գործ շատ են ունենում կամ որքան մեծ դրամագլուխ են ունենում: Վանի արհեստաւորներից ամենամեծ դրամագլուխ ունեցողները հա-

զիւ 200 լիրայի գործիք և գոյք ունենան. ընդամենը 5 հոգի հազիւ գտնուի Վանում այդքան դրամագլուխ ունեցող, իսկ ընդհանրութիւնն ունի 20—50 լիրայի կարողութիւն: Փոքր թիւ չեն կաղմում նաև այն արհեստաւորները, որոնք պահանջուած դրամագլուխ չունենալու համար ուրիշներին ծառայում են իբր բանուոր:

Վանեցիների զբաղումների մէջ բաւական կարևոր տեղ են բռնում նաև այգեգործութիւնը, պարտիզպանութիւնը, երկրագործութիւնն ու անասնապահութիւնը:

Իր տեղում խօսելիս ասացինք, որ Վանի Այգեստան կոչուած մասում իւրաքանչիւր տուն՝ չնչին բացառութեամբ՝ ունի իր կից այգի կամ պարտէզ. բացի սրանից՝ Այգեստանի արեւելեան ծայրում գտնուում են «Նորատունկ» կոչուած խաղողի մեծ այգիները: Այգիները շատ էլ մեծ չեն, այլ ամեն տուն իր չափով, այնպէս որ բառի բուն նշանակութեամբ այգիով զբաղուողներ կամ այգեգործներ չկան Վանում. անկարելի է գտնել Վանում մարդ, որը բացի այգեգործութիւնից ուրիշ զբաղում չունայ. այգեգործութիւնը երկրորդական, երրորդական զբաղում է համարւում. այգետէրը վարնան ժամանակ միքանի օր միայն նուիրում է այգուն, աշխատողներ վարձում, փորել տալիս, ծառերի աւելորդ ճիւղերը քշտում (կտրում), չորացածները հանում, նորերը տնկում, տեղափոխում, պատուաստ անում. այնուհետև մնում է 15—20 օր աւելորդ խոտերը մաքրել և ջրել այգին, պտղի ժամանակն այցելել, համտես անել մինչև այգեկութ: Ահա այս է վանեցի այգետէրերի զբաղումն այգում: Եթէ այգիներ քիչ լինէին Վանում, կամ թէ չէ եղածները միքանի հոգու պատկանէին, անշուշտ այդ ժամանակ այգեգործութիւնն իբրև մասնագիտական զբաղում որոշ տեղ պիտի բռնէր, իսկ այժմ նախանձելի վիճակ ունենալուց հետո է: Սաղողի այգիներ ունեցողներն աշխատում են խաղող շատ ըստանալ, որովհետև գինին ծախւում է, իսկ միւս պտուղներն այդքան արժէք չունեն, այդ պատճառով էլ ամեն-մի այգեպան աշխատում է իր տան համար միայն պտուղ ստանալ: Այգեգործութեան մէջ գործածուած միջոցներն ու ձևերը անդըր-ջրհեղեղեան դարերից են գալիս: Այգետէրը իր հօրից կամ հարևանից ինչ որ տեսել կամ սովորել է, այն էլ ինքն է սրբութեամբ պահում և գործածում: Արդէն իր տեղում յիշել ենք, թէ Վանում ինչ պտուղներ են մշակւում այգիների մէջ, այժմ կամենում եմ թուերով շատ թէ քիչ որոշ գաղափար տալ ընթերցողին Վանի այգիների արտադրութիւնների քանակութեան մասին:

Վերցնենք այնպիսի մէկ տարի, որ Վանի «պտուղների տարին» է, այսինքն ծառերը սովորական չափով պտուղ են տալիս, ցրտից, կարկտից, անձրևից, թրթռուից կամ ուրիշ որևէ հիւանդութիւնից ու վտանգից ազատ են մնացել. այսպիսի տարում Վանի Այգեստանի այգիներից կարելի է ստանալ մօտաւորապէս՝

խաղող—	30,000	լիտր (լիտրը հաշուեցէք $\frac{1}{2}$ փութ)	կամ
զինի	20,000	լիտր,	
տանձ—	20,000	»	
խնձոր—	25,000	»	
ծիրան—	20,000	»	
դամոն—	3,000	»	
սալոր—	10,000	»	
սերկէիլ—	3,000	»	
դեղձ—	200	»	
բալ—	100	»	
կեռաս—	200	»	
փշատ—	100	»	

Միայն խաղողի հետ այգետէրերը մի քիչ խնայողութեամբ են վարւում և աշխատում են ծախել, իսկ մնացած պտուղների կէսից աւելին ուտում են, մնացած փոքր մասը ծախում: Այգիների մէջ բացի խաղողից և պտղատու ծառերից մշակում են նաև խոտ, բանջարեղէններ և անպտուղ ծառեր: Բանջարեղէնները, ինչպէս նաև խոտը մշակում են տնային գործածութեան համար, իսկ անպտուղ ծառերն էլ շինութեան կամ զանազան գործիքների համար ծախւում են:

Վանի այգիներից և պարտէզներից նշանաւոր տարիներում կարելի է մօտաւորապէս մինչև 50,000 խուրձ խոտ ստանալ. խուրձը նոր քաղած ժամանակ կշռում է մինչև $\frac{1}{2}$ փութ կամ 1 լիտրից աւելի: Ներկայումս Այգեստանում կարելի է 1,000,000-ի չափ 4 վերջուկից աւելի հաստութիւն (տրամագիծ) ունեցող բարդի ծառ համրել, նրա քառորդի չափ էլ ուռի ծառ. մնացած տեսակներին պատկանող անպտուղ ծառերն աննշան թիւ են կազմում:

Վանեցիներն ընդհանուր կերպով զանգատւում են, թէ տարէցտարի իրանց այգիների բերքը պակասում է, մանաւանդ խաղողի բերքը. այն այգին, որ սրանից 30 տարի առաջ տալիս էր 200 փութ խաղող, այժմ տալիս է 20—30 փութ:

Ընդհանուր առմամբ այգիները մէկ տարի առատ պտուղ են տալիս, իսկ յաջորդ տարին կամ բոլորովին չեն տալիս, կամ քիչ. պատահարներն էլ մեծ մնաս են հասցնում. անցած

տարի ցուրտը վնասեց Վանի ամբողջ պտուղներին, իսկ այս տարի թրթուռը վնասեց խնձորենիներին. ծաղկելուց յետոյ խնձորենիները խոստանում էին աներևակայելի առատութեամբ խնձոր տալ, բայց 15 օր յետոյ երևացող թրթուռը 2—3 շաբաթում ամբողջ խնձորենիները մերկացրեց տերևներից ու պտուղներից: Միւս պտուղները շատ առատ են, մանաւանդ խաղողն ու տանձը: Թէ տանձի և թէ խաղողի ֆունտը ծախւում է մէկ կոպէկով:

Պարտիզպանութիւնն այգեգործութիւնից աւելի կարևոր զբաղում կարելի է համարել, որովհետև սրանով զբաղուողները ուրիշ զբաղում չեն կարող ունենալ զարնան սկզբից մինչև ձմրան սկզբները և նոյնիսկ կէսերը: Պարտիզպանները կամ բաղչէպանները քաղաքի շրջակայքի անդաստաններից յարմարագոյններն ընտրելով՝ բանջարանոց են դարձնում, որոնց արտադրութիւններն օրէցօր փոխադրում են քաղաքի հրապարակները և վաճառում: Պարտիզպանութեան մէկ ճիւղն է նաև «պախէզպանութիւնը». պախէզպանները մշակում են սեխաստաններ դարձեալ քաղաքի անդաստանների յարմարաւոր մասերում. տարուան ընթացքում միջին հաշուով՝

բանջարանոցները տալիս են՝	սեխաստանները տալիս են՝
սոխ — 100,000 լիտր,	սեխ — 200,000 լիտր,
կաղամբ — 200,000 »	ձմերուկ — 50,000 »
ճակնդեղ — 150,000 »	վարունգ — 30,000 »
պաղըմջան — 25,000 »	զդում — 50,000 »
պղպեղ — 5,000 »	
շոգգամ — 40,000 »	
բոդկ — 30,000 »	
գետնախնձոր 30,000 »	
գաղար — 10,000 »	
սխտոր — 3,000 »	
ոլուն — 5,000 »	

Բանջարանոցներով և սեխաստաններով զբաղուողներից անհամեմատ աւելի մեծ թիւ են կազմում երկրագործութեամբ զբաղուողները: Քաղաքի շուրջը փռուած մշակելի հողերը քաղաքացիների սեփականութիւնն են: Երկրագործութեամբ պարապողները միայն քաղաքի հողերով չեն բաւականանում, շատերը զիւղերումն էլ հող ունեն. ոմանք էլ թէև հող չունեն, սակայն վարձում են. սրանք էլ գիւղերումն են զբաղւում երկրագործութեամբ:

Քաղաքն իր այգիների և շրջակայքում տարածուած արօտավայրերի շնորհիւ փոքր չափով յարմարութիւն է ներկայացնում ոմանց կով ու ոչխար պահելու: Այժմ քաղաքում կայ

1000 հատ կով, նոյնքան այծ ու ոչխար. միջին հաշուով 5 տան 2 կով է ընկնում և նոյնքան այծ ու ոչխար: Կով ու ոչխար պահում են ոչ թէ կաթ, մածուն կամ իւղ ծախելու նպատակով, այլ տան մէջ գործածելու համար. ամեն մի տուն մէկ կովից աւել չի պահում, երկու կով պահողները բացառութիւն են կազմում: 7—8 տարի առաջ քաղաքացիներից շատերը անասնապահութեամբ էին զբաղւում գիւղերում, իսկ այժմ այդ արդիւնաւոր զբաղումից բոլորովին ձեռնթափ են եղել:

Ահա սրանք էին վանեցիների կարեւոր զբաղումներն ու արհեստները. իհարկէ՝ դեռ կան յիշածներիս կրկնապատկից էլ աւելի զբաղումների տեսակներ, որոնցով պարապում են վանեցիներն իրանց ապրուստը ճարելու համար, բայց դրանց վրայ կանգ առնելը շատ կ'ուշացնի մեզ:

Ինչպէս տեսնում էք, վանեցիները տեղական պայմանների ընդարձակ դիւրութիւնների համաձայն ամեն տեսակ զբաղումի դիմել են, թէ՛ վաճառականութեան, թէ՛ զանազան ձեռական արհեստների, թէ՛ հողագործութեան և թէ՛ անասնապահութեան. չնայած դրան՝ այնուամենայնիւ ապրելու բաւականացուցիչ միջոցներ չունենալու պատճառով վաղուց ի վեր մէկ ուրիշ միջոց են ընտրել իրանց համար: Այդ միջոցն է պանդխտութեան երթալը: Օտար երկիր երթալու սովորութիւնը փող շահելու նպատակով շատ վաղուց է մտել Վան, բայց աւելի սուր կերպարանք ստացաւ 80-ական թուականներին. գլխաւորաբար հայերն էին օտարութեան դիմողները. 80 կամ 90-ական թուականներին եթէ Պոլսում միայն վանեցի (քաղաքացի) պանդխտների վիճակագրութիւն կազմուէր, անշուշտ պիտի գոյանար մի թիւ, որ եթէ 3000-ից աւելի չլինէր, շատ էլ պակաս չպիտի մնար. աշխատելու կարող արական սեռին պատկանողների գրեթէ կէս մասը միայն մնում էր հայրենեքում: 1895 թուին կայսերական հրամանի համաձայն երբ արգելուեցաւ գաւառացիներին Պոլիս գնալ, պանդխտութեան հոսանքը յանկարծակի կանգ առաւ, Պոլսում եղողների մեծ մասը հայրենիք դարձաւ, իսկ մի փոքր մասը ցրուեց Եգիպտոս, Բուլղարիա և եւրոպական ու ամերիկական զանազան քաղաքներ: Վանեցիները իբրեւ պանդուխտ Պոլսում յանձն էին առնում ամեն տեսակ ծանր և ստոր ծառայութիւններ և զբաղումներ՝ հայրենիքում իրանց ձեռքին աչք տնկած ընտանիքի անդամներին օգնելու, թշուառութիւնից ազատելու համար, իրանց օձիքը պարտատէրերից և իրանց տունն ու այգին վաշխառուների կոկորդից ազատելու համար: 5—10 տարի անընդհատ պանդուխտ մնալուց յետոյ իրանց պարտքը տալիս

և միքանի լիրա էլ դիզում ու վերադառնում էին հայրենիք, իրանց կարօտն առնում և 2—3 տարի բերած փողը ծախսելուց յետոյ նորից դիմում իրանց պանդխտավայրը: Պանդխտութիւնն ունեցել է և ունի իր թէ օգուտները և թէ վընասները վանեցիկների համար: Տնտեսապէս մեծ օգուտ է տալիս պանդխտութիւն, իսկ բարոյապէս ոմանք օտարութեան մէջ փշանում են, ընկնում են, կորցնում են իրանց առողջութիւնը, մոռանում են իրանց հայրենիքը, տունուտեղը, ծնող ու զաւակ. բայց պէտք է ասել, որ այդպիսիները շատ չնչին թիւ են կազմում, իսկ տնտեսական օգուտը շատ մեծ է: 90-ական թուականներին միջին թուով միայն քաղաքացիները մինչև 40,000 լիրա են փոխադրել հայրենիք:

Եւ որովհետև միայն Պոլիսն էր վանեցիկների պանդխտավայրը, ուստի երբ արգելուեց Պոլիս մտնել, վանեցիկները այլևս փող չահելու նպատակով ուրիշ յարմար քաղաք կամ յարմար եղած տեղ երթալու դիւրութիւն չունեն և աշխատում են բաւականանալ հայրենիքում եղած միջոցներով: Քիչ քանակութեամբ վանեցիկներ կան Կովկասում և օտար երկրների այս ու այն քաղաքներում, որոնք գլխաւորաբար 96—97 թուերին դիմեցին այդ տեղերը: Պոլսում ունեցած յաջողութիւնը վանեցիկները շատ դժուարութեամբ են կարող ուրիշ քաղաքներում ձեռք բերել: Պոլիսը գրեթէ նրանց համար հայրենիք էր դառել, երկրի սովորութիւններին, վարքութեանը, նիստովացին շատ թէ քիչ ընտելացել էին, պետական լեզուով խօսել գիտէին. իսկ այժմ օտար երկրներում այս յարմարութիւններից և ոչ մէկն էլ գոյութիւն չունի: Օտար երկրների ժողովուրդների վարքութեանը բոլորովին օտարոտի է թւում նրանց, օտար լեզուով խօսել անկարելի, ուստի և գործել շատ դժուար: Դարեր պէտք են վանեցիկների համար օտար քաղաքներում՝ Պոլսի յաջողութիւնը ձեռք բերելու համար: Այժմ վանից դուրս եղող բոլոր պանդխտների թիւը մօտաւորապէս հասնում է 3,000-ի, սրանք տարեկան 5—6,000 լիրայի գումար են փոխադրում վան, որի 30% Ռուսաստանից, 15% Ամերիկայից, 20% Եգիպտոսից և Բուլղարիայից, իսկ մնացածը աշխարհիս զանազան անկիւններից:

ԾԵՐՈՒԿ

(Կը շարունակուի)

Պ Ա Տ Ը

(Լ. Անդրէանի)

I

Նա ու մի ուրիշ բորոտ զգուշութեամբ պատի մօտ սողացինք և նայեցինք վերև: Պատի կատարը չէր երևում այդ տեղից. բարձրացել էր նա, ուղիղ ու հարթ, և ասես թէ երկինքը երկու կէս էր արել: Նւ երկնքի մեծ մասը շառագոյնս և էր, իսկ հորիզոնին մօտ մուգ-կապոյտ, այնպէս որ անկարելի էր հասկանալ, թէ սև հողը ճրտեղ էր վերջանում և ճրտեղից էր սկսւում երկինքը: Նւ երկըրից ու երկնքից ճնշուած սև գիշերը հեռւմ էր, և խուլ ու ծանրագին հեծեծում էր ու ամեն-մի հառաչի հետ դուրս էր թքում իր խորերից սուր ու այրող աւազ, որից չարաչար այրւում էին մեր վերքերը:

— Փորձենք վրայից անցնել, — ասաց ինձ բորոտը, և նրա ձայնը ոնգային էր ու ժահահոտ, այնպէս, ինչպէս իմը: Նւ նա մէջքը դէմ արաւ, իսկ ես կանգնեցի վրան, բայց պատն էլի այնպէս բարձր էր: Հատել էր ինչպէս երկինքը, նոյնպէս և՛ երկիրը, ընկել էր վրան հաստ կուշտ օձի պէս, իջել էր անդունդը, բարձրացել էր սարերը, իսկ գլուխն ու պոչը թագացրել էր հորիզոնի այն կողմը:

— Է՛, դէ որ այդպէս է, և կքանդենք — առաջարկեց բորոտը:

— Փանդենք, — համաձայնեցի ես:

Մենք կրծքներս խփեցինք պատին, և նա ներկուեց մեր վերքերի արիւնով, բայց մնաց խուլ ու անշարժ: Նւ մենք վըհատուեցինք:

— Սպանեցէք մեզ: Սպանեցէք մեզ, — հեծեծում էինք մենք ու սողում, բայց բոլորը գարշաւքով երես էին դարձնում մեղինից, և մենք տեսնում էինք խորին զղուանքից դողդողացող մէջքեր: Այդպէս մենք այնքան սողացինք, որ սովեցինք: Նա նստել էր՝ քարին յենուած, և թւում էր թէ հատաքարն էլ էր ցաւ զգում նրա սուր ծակող թիակներին նայիլուց: Նա բոլո-

բովին միս չունէր, և շարժուելիս ոսկորները չխկչխկում էին, ու չոր կաշին խշխշում էր: Նրա ներքին ծնօտը կախ էր ընկել, և բերանի մութ անցքից չոր անհարթ ձայն էր գալիս:

— Ես սոսկած եմ:

Եւ մենք ծիծաղեցինք ու աւելի արագ սողացինք, քանի որ չէինք ընկել չորս պարողների ձեռքը: Նրանք հաւաքւում, ցրւում էին, գրկում էին միմիանց և պտտւում, և նրանց դէմքերը դժգոյն էին, չարչարուած, անժպիտ: Մէկը լաց եղաւ, որովհետեւ յոգնել էր անվերջ պարից և խնդրում էր դադարել, բայց միւսը լուռ գրկեց նրան և պտտեց, և նա նորից սկսեց միւսներին մօտենալ ու հեռանալ, և նրա իւրաքանչիւր քայլափոխին մի մեծ պղտոր կաթիլ արցունք էր ընկնում:

— Ես ուզում եմ պարել, — ընդախօսեց իմ ընկերը, բայց ես նրան այն կողմը քաշ տուի: Մեր առաջ էլի պատն էր, և նրա մօտ երկու մարդ էին կկգած: Մէկն ամեն-մի որոշ ժամանակամիջոցից յետոյ պատին էր խփում ձակատն ու ընկնում՝ գիտակցութիւնը կորցնելով, իսկ միւսը լրջօրէն նայում էր նրան, ձեռքով շօշափում էր նրա գլուխը, իսկ յետոյ պատը, և երբ ընկերն ուշքի էր գալիս, ասում էր:

— Էլի պէտք է. այժմ քիչ է մնացել:

Եւ բորոտը ծիծաղեց:

— Դա յիմարներ են, ասաց նա՝ ուրախ-ուրախ ուռցնելով այտերը:

— Դա յիմարներ են: Նրանք կարծում են, թէ այնտեղ լոյս է: Բայց այնտեղ էլ է մութ, և նոյնպէս սողում են բոլորտներն ու խնդրում, որ իրանց սպանեն:

— Իսկ ծէրը, — հարցրի ես:

— Ծերն ի՞նչ պէտք է լինի որ, — առարկեց բորոտը: Ծերը տխմար է, կոյր ու ոչինչ չէ լսում: Ո՞վ է տեսել այն ծակը, որ նա փորել է պատում: Դու տեսե՞լ ես: Ես տեսե՞լ եմ:

Եւ ես զայրացայ և ուժգին խփեցի ընկերոջս զանգի ուռած փամփուշտներին ու գոռացի:

— Իսկ ինչո՞ւ դու ինքդ բարձրանում էիր պատով:

Նա լաց եղաւ, և մենք երկուսս լացեցինք ու սողացինք՝ դէնը՝ խնդրելով:

— Սպանեցէք մեզ: Սպանեցէք մեզ:

Եւ մարդիկ սարսուռով երես էին դարձնում մեզնից, և ոչոք չէր ուզում մեզ սպանել: Գեղեցիկներին և ուժեղներին նրանք կոտորում էին, իսկ մեզ վախենում էին՝ ձեռք տալ: Այնպիսի ստորներն էին:

II

Մենք ժամանակ չունէինք, և ոչ երեկ ունէինք, ոչ այսօր, ոչ վաղը: Գիշերը երբէք չէր հեռանում մեզնից և չէր հանգստանում լեռնի յետևում, որպէսզի այնտեղից գայ թունդ, յստակ սև ու խաղաղ: Ուստի և՛ նա միշտ այնպէս յոգնած էր, նեխուած ու խոժոռ: Նա չար էր: Այնպէս էր լինում, որ նրա համար անտանելի էր դառնում մեր ողբն ու կոծը լսելը, մեր վէճերը, վիշտն ու չարութիւնը տեսնելը, և այն ժամանակ մօլի կատաղութեամբ եռում էր նրա սև, խուլ տքնող կուրծքը: Նա գոռում էր մեզ վրայ գերուած խելակորոյս գազանի պէս և դայրազին ճպում էր սոսկալի հուր աչքերը, որոնք լուսաւորում էին սև, անյատակ անդունդները, մռայլ, հպարտ-անդորր պատը և դողացող մարդկանց եղկելի կոյտը: Այդ մարդիկը հպում էին պատին որպէս բարեկամի և նրանից պաշտպանութիւն էին խնդրում, իսկ նա միշտ մեր թշնամին էր, միշտ: Եւ գիշերը վրդովւում էր մեր փոքրոգութեամբ ու վախկոտութեամբ ու սկսում էր խրոխտ քրքրջալ՝ իր բժաւոր մօլընքագոյն փողը ճօճելով, և ծեր լերկ անտառները ձայնակցում էին այդ սատանայական քրքջին: Այդ քրքիջը հնչեղ կրկնում էր մռայլ-ուրախացած պատը, չարախնդութեամբ մեզ վրայ քարեր էր գցում, իսկ նրանք ջարդոտում էին մեր գլուխներն ու ծուռտում մեր մարմինները: Այդպէս ղուարճանում էին նրանք, այդ հակաները, և իրար ձայն էին տալիս, և քամին սուլում էր նրանց համար վայրենի մեղեդի, իսկ մենք երեսներս ի վայր ընկած էինք և սարսափով ականջ էինք դնում, թէ ինչպէս երկրի խորքերում շուռումուռ է գալիս մի ինչ-որ ահագին բան և խուլ քրթնջում՝ բաղխելով ու աղաւտ տեղ դուրս գալ խնդրելով: Այն ժամանակ մենք բոլորս աղաչում էինք.

—Սպանեցէք մեզ:

Բայց ամեն-մի վայրկեան մեռնելով՝ մենք անմահ էինք ինչպէս աստուածներ:

Անցնում էր անմիտ գայրոյթի և ուրախութեան թափը, և գիշերը լալիս էր զլշման արցունքներով ու ծանր հառաչում էր՝ հիւանդի պէս թքելով մեզ վրայ թաց աւաղ: Մենք ուրախութեամբ ներում էինք նրան, ծիծաղում էինք նրա վրայ, քամուած ու թոյլ էր նա, և ուրախանում էինք ինչպէս երեսխաներ: Քաղցածի ողբը մեզ քաղցը ևրգեցողութիւն էր թւում, և ուրախ նախանձով մենք մտիկ էինք տալիս այն չորսի վրայ, ո-

րոնք հաւաքւում էին մի տեղ, ցրւում և սահուն կերպով պըտտւում էին՝ անվերջ պարելով:

Եւ զոյգ զոյգի յետևից սկսել էինք պտտուել և՛ մենք, և՛ եւ բորոտս էլ էի գտնում ինձ համար ժամանակաւոր ընկերուհի: Եւ այդ անյալէս զուարճալի էր, անյալէս դուրեկան: Ես գրկում էի նրան, իսկ նա ծիծաղում էր, և նրա մանր ատամները ճերմակ, ճերմակ էին, և թշիկները վարդագոյն, վարդագոյն: Դա անյալէս դուրեկան էր:

Եւ անկարելի է հասկանալ, թէ այդ ինչպէս պատահեց, բայց ուրախօրէն բաց արած ատամներն սկսել էին ճրթճրթալ, համբոյրները դառնում էին խայթոց, և կաղկանձոցով, որի միջից դեռ չէր անհետացել ուրախութիւնը, մենք սկսել էինք իրար կրծոտել և սպանոտել: Եւ ճերմակ փոքրիկ ատամներ ունեցող այն կինը նոյնպէս խփում էր իմ հիւանդ թոյլ գլխին և սուր փոքրիկ ճանկերը խրում էր կուրծքս՝ հասցնելով մինչև սիրտս—ծեծում էր ինձ բորոտիս, խեղճիս, այդպէս խեղճիս: Եւ այդ աւելի սարսափելի էր, քան նոյնիսկ գիշերուայ զայրոյթն ու պատի անհոգի քրքիշը: Եւ ես բորոտս լալիս էի ու դողում անից, և մեղմիկ, ամենքից զաղտնի համբուրում էի պատի գարշելի ոտներն ու խնդրում էի նրան՝ ինձ, միայն ու միայն ինձ բաց թողնել այն աշխարհն, ուր չկան խելագարներ, իրար կոտորողներ: Բայց այդ լիրբ պատը բաց չէր թողնում ինձ, և այն ժամանակ ես թքում էի նրա վրայ, խփում էի բըռունքներով ու գոչում:

—Նայեցէք այս մարդասպանին: Նա ծիծաղում է մեզ վըրայ:

Բայց իմ ձայնը ռնգային էր, և շնչառութիւնս ժահահոտ, և ոչոք չէր ուզում լսել ինձ բորոտիս:

III

Եւ էլի սողում էինք մենք, ես ու միւս բորոտը, և էլի չորս կողմն աղմկալի դարձաւ, և էլի անմոռնչ պտտւում էին նրանք, այն չորսը, իրանց շորերից թօթափելով փոշին ու արիւնոտ վէրքերը լիզելով: Բայց մենք յոգնել էինք, մարմինները սառւում էր, և կեանքը ծանր էր մեզ համար: Իմ ուղեկիցը նստեց և ուռած ձեռքը գետնին համաչափ խփելով՝ արագ-արագ վրայ էր տալիս ռնգային ձայնով:

—Սպանեցէք մեզ: Սպանեցէք մեզ:

Կտրուկ շարժումով մենք ոտքի կանգնեցինք և յարձակուեցինք ամբոխի վրայ, բայց նա ետ գնաց, և մենք միայն

մէջքեր տեսանք: Եւ մենք երկրպագեցինք մէջքերին ու խնդրեցինք.

—Սպանեցէք մեզ:

Բայց անշարժ ու խուլ էին մէջքերը որպէս երկրորդ պատ: Դա անպէս սարսափելի էր, երբ մարդկանց երեսները չէս տեսնուած, այլ միայն նրանց մէջքերը, անշարժ ու խուլ:

Բայց ահա իմ ուղեկիցը մենակ թողեց ինձ: Նա մի դէմք տեսաւ, առաջին դէմքը, և դա նոյնպիսի դէմք էր, ինչպէս և՛ իրանը, խոցոտ ու սոսկալի: Դա կնոջ դէմք էր: Եւ ուղեկիցս սկսեց ժպտալ, և ման էր գալիս նրա շուրջը՝ վիզը երկարացրած ու գարշահոտութիւն տարածելով, իսկ կիներ էլ նոյնպէս ժպտում էր փլուած բերանով նրա դէմքին և խոնարհեցնում էր արտևանդներէց զուրկ աչքերը:

Եւ նրանք ամուսնացան: Եւ մի ակնթարթ բոլոր դէմքերը դէպի նրանց դարձան, և լայնածաւալ քրքիշը դղրդացրեց առողջ մարմինները, նրանք անպէս ծիծաղելի էին, երբ սիրաբանում էին իրար հետ: Ծիծաղում էի և՛ ես բորոտս. ախր անմիտ բան է ամուսնանալը, քանի որ ինքզայդպէս տգեղ ու հիւանդ ես:

—Յիմար,— ասացի ես ծաղրաբար:—Այդ կնոջն ի՞նչ պէտք է անես:

Բորոտը հպարտ-հպարտ ծիծաղեց ու պատասխանեց.

—Մենք պէտք է ծախենք այն քարերը, որ թափւում են պատից:

—Իսկ երեսնամեծ:

—Իսկ երեսներին պէտք է կոտորենք:

Ի՞նչ անմիտ բան է. ծնել երեսներն՝ կոտորելու համար: Իսկ յետոյ կիներ կը դաւաճանի մարդուն—նա անպիսի նենգ աչքեր ունի:

IV

Նրանք վերջացրել էին իրանց աշխատանքը—այն, որ ճակատը պատին էր խփում, և միւսը, որ օգնում էր նրան, և երբ ես մօտ սողացի, մէկը կախուած էր պատին խփած կեռից և դեռ տաք էր, իսկ միւսը մեղմիւ մի ուրախ երգ էր երգում:

—Գնա, ասա քաղցածին, — հրամայեցի ես նրան, և նա հնազանդութեամբ գնաց՝ երգելով: Եւ ես տեսայ, թէ քաղցածն ինչպէս ձօճուեց ու հեռացաւ իր քարից: Օրօրուելով, ընկնելով, ծակող արմունկներով ամենքին կպչելով, մերթ չորեքթաթ տալով, մերթ սողալով՝ նա քաշ էր գալիս պատի մօտ, ուր ձօճ-

ւում էր կախուածը, և ատամները կրճատացնում էր ու ծիծաղում ուրախ-ուրախ ինչպէս երեխայ: Ոտի մի փոքրիկ կտոր միայն: Բայց նա ուշացել էր, և միւսները, ուժեղները, նրա առաջը կտրեցին: Իրար գրոհ տալով, ճանկոտոտելով ու կծոտելով՝ նրանք շրջապատել էին կախուածի դիակը, կրծոտում էին նրա ոտները և ախորժակով չրթացնում ու զրճատացնում էին կրծոտուող ոսկորները: Եւ նրան չթողեցին: Նա կկզեց, նայում էր, թէ ինչպէս են ուտում միւսները, և խշխշող լեզուով շրթունքներն էր լիզում, և նրա մեծ, դատարկ բերանից հնչեց երկարատե ճիչ:

— Ես սո-ված եմ:

Այ ծիծաղելի էր հա՛. նա մեռել էր քաղցածի համար, բայց քաղցածին մինչև անգամ նրա ոտից մի կտոր էլ չհասաւ: Եւ ես ծիծաղում էի, միւս բոլորտն էլ էր ծիծաղում, ներառ ինչն էլ հէնց այդ ժամանակ բացուխուփ էր անում իր խորամանկ աչքերը. նրանց կկոցել նա չէր կարողանում, որովհետեւ արտեանունքներ չունէր:

Իսկ նա աղաղակում էր աւելի կատաղօրէն ու աւելի բարձր.

— Ես սո-ված եմ:

Եւ նրա ձայնի խաղոտութիւնը չքացաւ, և նրա ձայնը մաքուր մետաղի հնչիւնով, սուր ու յստակ, բարձրանում էր վեր, պատին խփւում ու նրանից արագութեամբ ետ դառնալով՝ թռչում էր մութ անդունդների ու լեռների ճերմակ գազաթների վրայով:

Եւ շուտով աղաղակեցին ամենքը, որոնք գտնւում էին պատի մօտ, իսկ նրանք անքան շատ էին ինչպէս մորեխներ, և ազահ ու քաղցած էին նրանք ինչպէս մորեխներ, և թւում էր, թէ անհանգուրժելի ցաւերի մէջ աղաղակեց ինքը երկիրը՝ լայն բանալով իր քարային երակը: Որպէս մրկող քամուց մի կողմը թեքուած չոր ծառերի անտառ՝ բարձրանում ու դէպի պատն էին կարկառում ջղայնօրէն ձգուած ձեռներ, նիհար, արգահատելի, աղերսող, և նրանցում այնքան լքում կար, որ քարերը սարսռում էին, և վախով փախչում էին ճերմակ ու կապոյտ ամպերը: Բայց անշարժ ու բարձր էր պատը և անտարբերութեամբ անդրադարձնում էր թանձր գարշահոտ օդի շերտերը հատող ու թափանցող ճիչը:

Եւ բոլոր աչքերը դարձան դէպի պատն, ու հուր շողեր հոսեցին նրանցից: Նրանք հաւատում ու սպասում էին, որ իսկոյն կ'ընկնի նա և բաց կ'անի մի նոր աշխարհ, և հաւատով կուրացած՝ արդէն տեսնում էին, թէ ինչպէս են տատանւում

քարերը, ինչպէս հիմնիվեր դողում է արիւնով ու մարդկային ուղեղով պարարտացած քարէ օձը: Գուցէ դա արցունքներն էին դողդողում մեր աչքերում, իսկ մենք կարծում էինք, թէ ինքը պատն է, և մեր աղաղակն աւելի սուր դարձաւ:

Նրանում հնչում էին զարոյթն ու մօտալուտ յաղթութեան ցնծութիւնը:

V

Եւ ահա թէ ինչ պատահեց այն ժամանակ: Բարձր, մի քարի վրայ կանգնել էր մի նիհար, պառաւ կին խոր ընկած չոր այտերով ու երկար չսանրուած մազերով, որոնք սոված ծեր գայլի ճերմակ բաշի նման էին: Նրա հանդերձը պատառտուն էր, որի տակից երևում էրն դեղին ոսկրոտ ուսերը և լղար կախ ընկած ծծերը, որոնք շատերին կեանք էին տուել և ուժաւապառուել էին մայրութեամբ: Նա ձեռները կարկառեց դէպի պատը—և բոլոր հայեացքները նրանց հետեւեցին. նա ըսկսեց խօսել, և նրա ձայնի մէջ անքան տառապանք կար, որ քաղցածի յուսահատ ճիչն ամօթու կտրուեց:

—Ե՛տ տուր ինձ իմ զաւակին,—ասաց կինը:

Եւ մենք ամենքս սուս էինք ու կատաղօրէն ժպտում էինք ու սպասում, թէ պատն ինչ կը պատասխանէ: Պատի վրայ բոսորային-մոխրագոյն բծի նման երևում էր նրա ուղեղը, որին այդ կինն անուանում էր «իմ զաւակ», և մենք անհամբերութեամբ, սպառնալիօրէն սպասում էինք, թէ ինչ կը պատասխանէ գծուծ մարդասպանը: Եւ այնպէս անդորր էր ամենուրեք, որ մենք լսում էինք մեր գլխաւերեսով ընթացող ամպերի խշշոցը, և ինքը սև գիշերն էլ կրծքում փակել էր իր հեծեծանքը և միայն թեթև սուլոցով դուրս էր թքում այրող մանր աւազը, որ ուտում էր մեր վէրքերը: Եւ նորից սկսեց թնդալ խստագին ու դառը պահանջը:

—Անողորմ, ետ տուր ինձ իմ զաւակին:

Աւելի խրոխտ ու կատաղի էր դառնում մեր ժպիտը, բայց գծուծ պատը ձայն չէր հանում: Եւ այդ ժամանակ անմղուէնչ ամբոխի միջից դուրս եկաւ մի գեղեցիկ ու խստահայեաց ծեր և կանգնեց այն կնոջ կողքին:

—Ե՛տ տուր ինձ իմ որդուն,—ասաց նա:

Այնպէս սարսափելի էր և ուրախալի: Մէջքս կուշ էր գալիս ցրտից, և սկաններս կծկւում էին մի աներևոյթ ու սպառնալի ուժի ներս հոսելուց, իսկ իմ ուղեկիցը կողքիս էր

խփում, կափկափում էր ատամները, և փթող բերանից լայն հոսանքով դուրս էր գալիս ժատահոտ շնչառութիւնը:

Եւ ահա ամբոխից դուրս եկաւ մի ուրիշ մարդ էլ ու ասաց.

—Ե՛տ տուր ինձ իմ եղբօրը:

Եւ մի մարդ էլ դուրս եկաւ ու ասաց.

—Ե՛տ տուր ինձ իմ աղջկան:

Եւ ահա սկսեցին դուրս գալ տղամարդիկ ու կանայք, ահիլ ու ջահիլ, և կարկառում էին ձեռքներն, ու անողորմարար հնչում էր նրանց դառը պահանջը.

—Ե՛տ տուր ինձ իմ զաւակին:

Այն ժամանակ ես բորոտս էլ իմ մէջ ոյժ ու համարձակութիւն զգացի ու առաջ դուրս եկայ և բարձր ու խրոխտ գոչեցի.

—Մարդասպան: Ե՛տ տուր ինձ հէնց ինձ:

Իսկ նա,—նա սուս էր: Նա, այն խաբեբայ ու ստոր պատը, նա այնպէս էր ցոյց տալիս, որ չի լսում, և չարախինդ ծիծաղը ցնցեց իմ խոցոտուած այտերն, ու խելագար կատաղութեամբ լցուեցին մեր խորը ցաւած սրտերը: Իսկ պատը շարունակ լուռ էր, անտարբեր ու բութ. և այն ժամանակ կիներ զայրագին թափ տուաւ իր դալուկ, դեղին ձեռներն ու անողորմարար շանթեց.

—Ուրեմն անիծուած լինես դու, որ սպանել ես իմ զաւակին:

Գեղեցիկ, խստահայեաց ծերունին կրկնեց.

—Անիծուած լինես:

Եւ հազարաձայն հնչեղ հեծեծանքով ողջ երկիրը կրկնեց.

—Անիծեալ լինես: Անիծեալ: Անիծեալ:

VI

Եւ խորը հառաչեց սև գիշերը, և մլրկով բռնուած ու իր բոլոր ծանրագին գոռացող զանգուածով ժայռերին նետուած ծովի նման տատանուեց ամբողջ տեսանելի աշխարհն ու հազար լարուած ու կատաղի կրճեր խփեց պատին: Բարձր, մինչև ծանր-ծանր շարժուող ամպերը ցայտեց արեան փրփուրը և ներկեց նրանց, և նրանք հրեղէն ու սարսափելի գարձան ու կարմիր լոյս արին ներքև, այտեղ, ուր որոտում, գրգռում ու ձչում էր մի ինչ-որ մանր, բայց զարմանալի բաղմաթիւ, սև ու վայրագ բան: Անասելի ցաւով լի մարող հծծիւնով նա ետ նահանջեց—և պատը կանգնած էր անսասան ու լուռ:

Բայց ոչ վախեցած և ոչ ամօթու էր նա լուռ—դաժան ու սպառնալի էր նրա անձն աչքերի հայեացքը, և նա թագունու պէս հպարտ ցած էր թողնում իր ուսերից արագ իջնող արեան ծիրանի քղամիդը, և նրա տուտերը կորչում էին այլանդակուած դիակների մէջ:

Բայց իւրաքանչիւր վայրկեան մեռնելով՝ մենք անմահ էինք աստուածների պէս: Եւ նորից թնդաց մարդկային մարմինների հզօր հոսանքն ու իր ամբողջ ուժով ընդհարուեց պատին: Եւ նորից ետ նահանջեց, և այդպէս շատ, շատ անգամ, մինչև որ վրան յոգնութիւն և մեռած քուն ու խաղաղութիւն եկաւ: Իսկ ես բորոտս հէնց պատի մօտ էի և տեսնում էի, որ սկսում է նա տատանուել, այդ հպարտ թագունին, և անկման սոսկումը դողոցով անցնում է նրա քարերի միջով:

—Նա ընկնում է,—գոչեցի ես:—Եղբայրներ, նա ընկնում է:

—Դու սխալուում ես, բորոտ,—պատասխանեցին ինձ եղբայրներս:

Եւ այն ժամանակ ես սկսեցի խնդրել.

—Թող որ նա կանգնի, բայց միթէ ամեն-մի դիակ մի աստիճան չէ ծայրը բարձրանալու համար: Մենք շատուոր ենք, մեր կեանքը ծանրագին է: Մեր դիակները փռենք երկրի վրայ. դիակների վրայ նոր դիակներ գցենք և այդպիսով հասնենք կատարին: Եւ եթէ մեզնից միայն մէկն էլ մնայ,—նա նոր աշխարհ կը տեսնէ:

Եւ ուրախ յուսով շուրջս նայեցի ես—և միայն մէջքեր տեսայ, անտարբեր, չաղ, յոգնած: Անվերջ պարելով պտտւում էին այն չորսը, մի տեղ հաւաքւում ու ցրւում էին, և սև գիշերը հիւանդի պէս դուրս էր թքում թաց աւազ, և անխորտակելի ժայռի պէս կանգնած էր պատը:

—Եղբայրներ,—խնդրում էի ես:—Եղբայրներ:

Բայց իմ ձայնը ռնգային էր, և շնչառութիւնս ժահահոտ, և ոչոք չէր ուղղում լսել ինձ բորոտիս:

Վայ մեզ... Վայ մեզ... Վայ մեզ...

Թարգմ. Ա. Ա. ԹԱՅԵԱՆ

Դ Է Ր Վ Ի Շ Ն Ե Ր Ը

Դէրվիշները, մահմէդականութեան այդ թափառաշրջիկ քաղաքները մի հետաքրքիր և խորհրդաւոր դասակարգ են ներկայացնում պարսկական աշխարհում: Ամեն տեղ են նրանք, Իրանի ամենայն տիւր անկիւնում անգամ կարելի է նրանց տեսնել: Եւ նրանք միշտ դուրսն են, փողոցում, հրապարակում, ժողովրդի մէջ:

Դէրվիշի արտաքինը նոյնքան հետաքրքիր է և ուշագրաւ: Նրա երկար, ցիրուցան թափուած մազերը համուած են մինչև ուսերը. դէմքը ամբողջապէս թաղուած է մազերի մէջ, իսկ աչքերը խիստ փայլում են դէմքի համատարած թխութեան մէջ: Ուսերին գցած է հաստ, բրդոտ մորթի, որ իջնում է մինչև ոտները, իսկ ձեռքին ունի երկար և հաստ, խորդուրորդ և ահագին զլխով մահակ, որը հանդիսաւոր կերպով շարժում, մտնում է այս ու այն խանութին, խորհրդաւոր կերպով կանչում «եա հակի» (արդարութիւն), ստանում մէկ փուլ, մէկ շահի և շարունակում իր ընթացքը:

Ահա այնտեղ, քիչ հեռու, փողոցի հակառակ ծայրում խոնուած հոծ բազմութիւն: Բազմութեան մէջ, իրար դէմուդէմ, զլուխը բարձր բռնած, կուրծքները դուրս գցած կանգնել են երկուսը այդ հետաքրքիր անձնաւորութիւններից: Նրանք խորամիտ կերպով քայլում են, խիստ մրցում է տեղի ունենում, վիճում են, հերթով խօսում, հարցեր տալիս, և իւրաքանչիւրը ձգտում է ինքը յաղթող դուրս գալու: Նրանք խօսում են բարձր, եղանակով—երգելով, բառերը արտասանում են հատիկ-հատիկ, շեշտում իւրաքանչիւրի վրայ, պահպանում դերասանական ամենանուրբ շարժումները և ձևերը, միևնոյն ժամանակ հանդիսաւոր կերպով շարժում, երկաթից շինած իրանց թաւաւը, որը արևի ճառագայթների տակ փայլում է, իսկ ձեռքներին կախած ունեն քէշկիւլը:

Ահա այնտեղից, շատ հեռուից հնչում է մի մելամաղձոտ, թախծալի կլկլոց, նման ընդհատուող հառաչանքի, որը սար-

սուռ է բերում մարդի վրայ: Դա էլ գէրվիշն է, որը պատմում է Ալիի արկածներից, ներբողում նրան...

Բայց ով է գէրվիշը, ի՞նչ է ներկայացնում նա իրանով, ի՞նչ դաւանանքներ ունի և վերջապէս ինչո՞ւ է նա այդպէս թափառում երկրէ երկիր:

Դէրվիշութիւնն էլ մի առանձին աղանդ (?) է—Պարսկաստանի անթիւ աղանդների շարքում, բայց և կրում է ճգնաւորական կնիք—քնաւորութիւն: Դէրվիշութիւնը համարեա թէ մի տեսակ ճգնաւորութիւն է, գուցէ միայն այն տարբերութեամբ, որ գէրվիշները կամաց-կամաց դուրս են եկել, հեռացել ճրգնաւորի միայնակեաց վիճակից, բայց հիմքը, էութիւնը մնացել է նոյնը:

Դէրվիշները, ինչպէս նրանք են բացատրում, սերուած են Ղամբար արաբից, որը համարւում է երկնքից իջած եօթ գոյններից հինգերորդը (Ադամ, Նոյ, Աբրահամ, Յոր երանելի և Ղամբար), և իջել է գէրվիշի կերպարանքով:

Ուրեմն գէրվիշութիւնը սկսուել է Պարսկաստանում անյիշատակելի ժամանակներից և այժմ այնքան տարածուած է, որ ունի կանոնաւոր կազմակերպութիւն, մի սերտ կապ բոլոր իր հատուածների մէջ:

Դէրվիշների կենտրոնը համարւում է Խորասանը, ուր նստում է և գէրվիշների ընդհանուր ղեկավարը, մեծաւորը՝ Շամիր Ալի շահը: Դրա հետ Խորասանում մնում են նաև 40 ուրիշ նշանաւոր գէրվիշներ, որոնք մեծի հետ միացած հսկում են միւս մասերի վրայ: Խորասանն է նշանակում ղեկավար անձնաւորութիւններ զանազան գաւառների և քաղաքների, ինչպէս Սալմաստի, Թաւրիզի, Սոյի, Ռաշտի, Ուրմիի և այլ տեղերի համար: Նա է հետևում գէրվիշների վայելուչ ընթացքի՝ վրայ, հրահանգներ տալիս, կարգադրութիւններ անում:

Խորասանի այդ 40 հոգի գէրվիշները մեծաւորի խորհրդով հականեն են, զրանք միշտ էլ մնում են այնտեղ: Մեռնելիս մեծաւորը կանչում է 40 գէրվիշներից ամենախելօքին և ընտրւում է իր տեղը—նա ժառանգ չունի: Նա ունենում է երեք սուրբ գիրք, զրանցից երկուսը յանձնում է իր յաջորդին, իսկ մէկը թաղում են նրա հետ: Խորհրդականների քառասուն թիւը լրացնելու համար ընտրւում են զրսից մի յայտնի գէրվիշ և այդպէս շարունակաբար:

Այդ կենտրոնից գաւառները և քաղաքները ուղարկուած գէրվիշները ունեն գրեթէ նոյն պաշտօնը, ինչ մուշտէիզները: Նրանք են հոգում իրանց յանձնուած վայրի գէրվիշների պէտքերը, հսկում կանոնաւոր գործունէութեան վրայ և այլն: Նրանք

ունեն ընդհանուր ժողովատեղի, ուր հաւաքուում են որոշ օրեր — կիրակի, ունենում են կրօնական վէճեր, աղօթում են: Այդ ժողովատեղին կոչում է թաքիա, որի մէջ գտնւում է և դէրվիշների դպրոցը, ուր սովորում են հասակաւոր մարդիկ և պատրաստւում են դէրվիշութիւն ընդունելու: Որոշ դասընթաց կայ, որ պիտի անցնեն և ապա ստանան դէրվիշութիւն: Ով ուզում է դէրվիշ դառնալ, նա ամբողջ եօթ տարի մնում է թաքիայում, մեծի մօտ, ծառայում, պատրաստւում, գրքեր կարդում, և ապա, եթէ տեսնում են ընդունակ է և կարող, ընդունում են նրան դէրվիշութեան մէջ և առաջին անգամ տալիս են կացինը — թաւար: Երբեմն թաւարի տեղ, մանաւանդ աննշան դէրվիշներին, տալիս մի հաստ մահակ:

Կարճ ժամանակից յետոյ նորընծայ դէրվիշին տրւում է բէշկիւլ — ընկոյզի ամանը, որը լինում է սև գոյնի, որ միշտ էլ դէրվիշները կախում են ձեռքներից, փողը ափստեղ են զցում: Բէշկիւլից յետոյ նորընծան ստանում է փուստը: Դա բրդոտ մորթի է, որը զցում են ուսերի վրայ և ծածկում ամբողջ մէջքը: Փուստը համարւում է դէրվիշի անկողինը, որը անբաժան է իրանից և միշտ էլ, երբ և ուր կամենայ, կարող է հանգչատանալ, քնել: Փուստը հէնց անկողնի մտքով է տրւում դէրվիշին: Այդ բոլորից յետոյ դէրվիշին տրւում է թաշը — գլխարկ: Թաշը լինում է ամբողջապէս սպիտակ. բայց բոլոր դէրվիշներն էլ չեն ստանում թաշ, միայն ընդունակներն են այդ ստանում, իսկ անընդունակները, որոնց խենթ են համարւում, պտտում են գլխաբաց, երկար մազերը դէզ արած գլխին:

Այս բոլորից զատ դէրվիշներին տալիս են սպիտակ կըտորից շապիկ, որը իջնում է մինչև գետին: Այդ ըսպիտակը համարւում է դէրվիշի պատանքը, որը դեռ կենդանի ժամանակ կրում է իր վրայ: Ձեռնադրութեան միջոցին տրւում շապիկը չեն հագնում, մաքուր պահում են, սպիտակ կտորից նորն են կարել տալիս և հագնում. իսկ այն իսկականը միայն մեռնելիս է գործ ածւում իրր պատանք:

Սպիտակ հագնելը — շապիկ և թաշ — բացի այն, որ կենդանի թաղուածի նշան է, հեռու աշխարհային զուարճութիւններից, կեանքի ցոփութիւններից և զեղխութիւններից, համարւում է նաև նշան մաքրութեան, յստակութեան և անբծութեան, այդպէս մաքուր պիտի լինի և դէրվիշի սիրտը, նրա հոգին: Եւ իսկապէս, հէնց դէրվիշութեան հիմքն, ուսմունքն էլ դրա մէջ է կայանում: Վերցնենք. անարատութեան, մաքրութեան գաղափարի ուսմունքը, խախտում է և դէրվիշական

աղանդի ամբողջ շէնքը, այն ժամանակ մեզ կը ներկայանայ մի անմիտ, առանց որոշ դաւանանքների աղանդ, զուրկ էութիւնից և գլխաւոր հիմունքներից: Որ այդ այդպէս է, ապացոյց կարող է ծառայել և այն, որ վերոյիշեալ մի շարք արարողութիւնների միջոցին խփում են նորընծայ դէրվէշի գլխին և ասում. «Կոյր եղիր, խուլ եղիր, խեղճ եղիր»: Այդ պատգամը, որ շատ բնորոշում է դէրվիշութեան աղանդը, կրկնում են երեք անգամ, իւրաքանչիւր խօսքը երեք անգամ կրկնում են և շեշտում:

Այդ պատգամի մէջ է կայանում աղանդի էութիւնը և դէրվիշների ամբողջ դաւանանքը: Կոյր եղիր, որ մէկի տուները գնալիս յանցաւոր միտումներով չնայես այդ տան կնոջ վրայ, առհասարակ տգեղ, վատ բան տեսնես. խուլ եղիր, որ չլրտեսես, յանցաւոր խօսքեր չտանես և բերես. խեղճ եղիր, ուրիշներին մի ճնշիր, մի հարստահարիր, մի կեղեքիր:

—Ահա ինչքան ծանր և դժուար է դէրվիշութիւնը, — ոգևորուած նկատեց մի դէրվիշ, երբ բացատրում էր այդ պատգամի էութիւնը: Ճիշտ է, ծանր, խիստ դժուար է այդ բոլորը, բայց այդ գաղափարը մեզ համար շատ բարձր, նուիրական է: Միթէ դրանից աւելի վեհ, աւելի հմայիչ դաւանանք կայ, լի նել մաքուր, յստակ հոգով, ուրիշին միայն բարի ցանկանալ, միթէ դրանից աւելի մեծ անձնագոհութիւն կայ, երբ դեռ ողջ ժամանակ կրում ենք մեր վրայ պատանք...

Այդպէս են միշտ դէրվիշները. ամենահասարակ խօսակցութեան ժամանակ անգամ գործ են դնում հարուստ միմիկա և դերասանական ձևեր, խօսում են ճոխ և գեղեցիկ, էլ ուր մնաց իրանց հաւատալիքի մասին խօսելիս:

Դէրվիշականութիւնը, եթէ այդպէս կարելի է ասել, բաժանում է մի շարք աղանդների, թուով մօտ 17: Այդ աղանդ-սըլսըլանները բաժանում են երկու որոշ խմբերի: Առաջին խմբի սըլսըլանները, ինչպէս դաւուդի, քէքիսար, դուդէի, հաքանի և այլն, չեն ամուսնանում, իսկ միւս խմբի սըլսըլանները, օրինակ աջամի, սուլթանի, ընդունում են ամուսնութիւնը:

Դէրվիշի կինը երբ մեռնում է, նա այլևս իրաւունք չունի երկրորդը առնելու. այդ խիստ արգելւում է: Դէրվիշականութիւնը ընդունում է միակնութիւնը, և եթէ մէկ դէրվիշ յանդգնում է գաղտնի կենակցութիւն վարել մի երկրորդի հետ և այդ պարգւում է, այն ժամանակ շատ անողորմ են վերաբերւում դէպի յանցագործը: Նրան կանչում են հրապարակական ժողովի թաքիայում, բոլորի ներկայութեամբ անպատում են, առնում դէրվիշին յատուկ իրերը — փուստ, թաշ, թաւար, քէշ-

կիւլ, և ճանապարհ դնում՝ զրկելով իհարկէ նրան գէրվիշի իրաւունքներից:

Չմոռանանք նկատել, այդ սըլսըլա-աղանդները իրանց էութեամբ և դաւանանքի սկզբունքների տեսակէտից շատ աննշան տարբերութիւն են ներկայացնում: Այնքան աղօտ, անորոշ են այդ տարբերութիւնները, որ իրանք՝ տարբեր սըլսըլաների պատկանող գէրվիշները անգամ չեն կարողանում բացատրել, պարզել: Շատ սըլսըլաներ տարբերում են միայն աննշան արտաքին ձևերով, ծէսերով, արարողութիւններով: Միակ աչքի զարնող և յայտնի տարբերութիւնը այն է, ինչ վերը ընդգծեցինք, այսինքն միքանի սըլսըլաներ ընդունում են ամուսնութիւնը, իսկ միւսները մերժում են:

Դէրվիշը առհասարակ վարում է աստանդական, թափառական կեանք. նա այսօր այստեղ է, կարճ ժամանակից յետոյ, կամ գուցէ հէնց վաղը կը հեռանայ: Դէրվիշը նստակեաց կեանք չի վարում. նա միշտ էլ ոտի վրայ է, միշտ էլ շրջում, խօսում, քարոզում է: Այդ թափառելուն նպաստում է այն, որ գէրվիշը ընդհանրապէս չունի սեփականութիւն, նա կապուած չէ հողի հետ, նա չունի—և չպիտի ունենայ էլ—հարստութիւն: Նա լիւթ է, գրպանը մաքուր: Դէրվիշի միակ հարստութիւնը կազմում են թաջը, թաւարը, քէաշկիւլը, փուստը, որոնք նաև նրա անբաժան ընկերներն են: Դէրվիշը ունի այդ, պատում է ամեն տեղ, խօսում, քարոզում, մուրում և ժողովրդի տուած փուլերով ապրում: Եւ ժողովուրդն էլ տալիս է այդ փուլերը, այդ «տալը» ասես ստացել է պարտաւորութեան բնաւորութիւն, շատ անգամ շատ գէրվիշներ ուղղակի պահանջում են, թէև այդ գէրվիշականութիւնը չէ ընդունում:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Այստեղ էլ օրէնքները անյայտ են:

Մեր գլուխներից վեր՝ երկնքի կենտրոնում փայլում է սիրոյ այն աստղը, որ մեզ է վիճակուած: Եւ մեր սէրը միշտ կը ծնի այն աստղի շողերից ու մթնոլորտից: Իզուր տեղը մենք կ'աշխատենք դառնալ աջ կամ ձախ, դէպի բարձունքները կամ դէպի խորքերը: Մեր ամբողջ կեանքը պատող ճյուղ ղրթական օղակից ազատուելու համար՝ մենք իզուր կ'աշխատենք բռնադատել մեր բնազդը, ընտրութիւն անել հակառակ մեր աստղի, վերջիվերջոյ մենք էլի կ'ընտրենք այն կիներ, որ մեզ վիճակուած է մեր աստղով: Եւ թէկուզ Դօն-ժուանի պէս մենք հազարումէկ կ'ին համբուրած լինենք, երբ վրայ հասնի երեկոն, և բազուկները հեռանան ու շրթունքները զատուին, մենք կը զգանք, որ սա միևնոյն կիներն է, բարի կամ վատ, քնքոյշ կամ անսիրտ, սիրող կամ անհաւատարիմ, որ կանգնած է մեր առաջ...

Իսկապէս մենք երբէք չենք կարողանում դուրս գալ այն փոքրիկ փայլուն շրջանից, որ ճակատագիրը քաշում է մեր քայլերի շուրջը: Եւ կարծէք թէ մարդիկ նոյնիսկ չափազանց հեռուից գիտեն այս անանցանելի օղակի մեծութիւնը և նիւանմները: Եւ ահա այս հոգևոր ճառագայթների գոյնն է, որ նրանք նկատում են ամենից առաջ և ըստ այնմ կամ մեկնում են իրանց ձեռքը ժպտալով, կամ յետ քաշում երկիւղով: Մենք ամենքս իրար ճանաչում ենք մի գերագոյն մթնոլորտում: Եւ մի անձանօթի մասին իմ կազմած գաղափարը անմիջապէս հաղորդակից է մի խորհրդաւոր ճշմարտութեան որ աւելի խորունկ է քան նիւթական ճշմարտութիւնը: Ո՞վ չի զգացել այն՝ ինչ կատարւում է մեզանից չափազանց հեռու մարդկանց ներքին անթափանցելի աշխարհում: Եթէ դուք ովկիանոսների մէջ կորած մի կղզուց մի նամակ էք ստանում գրուած այնպիսի ձեռքով, որի գոյութիւնն անգամ դուք չգիտէիք, վստահ էք արդեօք, որ դա մի անձանօթի գրած է: Այն վայրկենին երբ կարդում էք նամակը, չէ՞ք զգում արդեօք այնպիսով ձեզ հան-

դիպող հոգու վրայ բացարձակ ճշմարտութեան հաւաստիք՝ աւելի խորունկ, աւելի հզօր քան բոլոր սովորական ճշմարտութիւնները: Միւս կողմից միթէ այն հոգին որ ժամանակի և տարածութեան միջից մտածել է ձեր հոգու մասին, չի ունեցել նոյնպիսի ճշմարտութեան հաւաստիք: Ամեն կողմից տարօրինակ ծանօթութիւններ կան և մենք չենք կարող ծածկել մեր գոյութիւնը: Ոչինչ այնպէս լոյս չի սփռում հոգիների մէջ եղած նուրբ կապերի վրայ՝ որքան այն փոքրիկ խորհրդաւորութիւնները, որոնք ծագում են երկու անծանօթների մէջ փոխանակած նամակներից: Սա գուցէ մէկն է դռների այն նեղիւկ բացուածքներից, որոնց միջոցով մենք կարողանում ենք մի վայրկեան իմանալ թէ ի՞նչ է կատարւում այն գանձերի այրելում, որոնք երբէք չեն գտնուիլ: Այս բացուածքներն անշուշտ չափազանց ողորմելի են, բայց չեղած տեղը մենք ստիպուած ենք բաւականա՛նալ թէկուզ ամենագոնատ, խղճուկ լոյսով: Քննեցէք որեւէ մէկի թղթակցութիւնները և դուք այնտեղ կը գտնէք մի տարօրինակ միութիւն: Եւ չեմ ճանաչում ո՛չ սրան ո՛չ նրան, որոնք ինձ հարց են ուղղում այս առաւօտ, և սակայն ես գիտեմ արդէն, որ չեմ կարող առաջինին պատասխանել նոյն ձևով ինչպէս երկրորդին: Ես տեսայ արդէն մի անտեսանելի բան: Եւ իմ հերթին, եթէ մէկը, որին ես երբէք չեմ նկատել, գրում է ինձ, հաւատացած եմ, որ իր նամակը կէտառկէտ նոյնը չէ, ինչ որ նա գրել է այս վայրկենին ինձ նայող բարեկամին: Միշտ մի անըմբռնելի վերացական տարբերութիւն կայ: Սա նշան է այն աներևոյթ ողջոյնի, որ մի հոգի ուղղում է մի ուրիշ հոգու: Պէտք է կարծել, որ մենք ճանաչում ենք իրար այն գերազանց աշխարհներում, որոնք մեզ անծանօթ են, որ մենք մի ընդհանուր հայրենիք ունինք ուր մենք գնում ենք, գտնում ենք իրար և որտեղից մենք յետ ենք գալիս առանց դժուարութեան:

Ահա այդ ընդհանուր հայրենիքումն ենք մենք ընտրում մեր սիրած կանանց և հաւ թէ ինչո՞ւ մենք չենք սխալւում, ինչպէս և չեն սխալւում մեր սիրածները: Միւրոյ թաղաւորութիւնը նախ և առաջ հաւաստի ճշմարտութիւնների մեծ թագաւորութիւնն է, որովհետեւ այդտեղ է, ուր հոգիները ամենաշատ ժամանակն ունին: Այստեղ նրանք իրար ճանաչելուց դուրս՝ անելիք չունին. նրանք փոխադարձապէս հիանում են իրարով, արցունքն աչքերին հարցեր են տալիս, ինչպէս այն ջահիլ քոյրերը, որոնք գտնում են իրար, գրկւում ու համբուրւում են: Նրանք վերջապէս ժամանակ են գտնում իրար ծրպտալ, ապրել մի վայրկեան միայն իրանց համար ամենօրեայ

ճանր կեանքի հանգստեան այս ժամին: Եւ գուցէ այս ժպիտներն և աննկարագրելի հայեացքներն են խորհրդաւոր կերպով ճաշակ տալիս սիրոյ նոյնիսկ ամենաանհամ վայրկեաններին, և յաւիտենականապէս պահպանում երկու շրթունքների հալումի յիշատակը:

Ես խօսում եմ այստեղ միմիայն իսկական և նախասահմանուած սիրոյ մասին: Երբ մենք հանդիպում են նրանցից մէկին որ բախտը մեզ է վերապահել, և որին նա գուրս է հանում մեր կեցած խորհրդաւոր քաղաքների խորքից, ուր մենք ապրում ենք առանց իմանալու և նրան ուղարկում է որոշ ժամին մեր անցնելիք ճանապարհի վրայ, մենք այդ գգում ենք հէնց առաջին հայեացքից: Ոմանք փորձում են այն ժամանակ բռնադատել բախտը: Գուցէ մենք զայրոյթով փակենք մեր աչքերը ձեռքով՝ չտեսնելու համար նրան, որին հարկաւոր է տեսնել. գուցէ մենք կարողանանք մեր փոքրիկ ոյժերով յաւիտենական ոյժերի դէմ պայքարելով՝ կտրել, անցնել ճանապարհը՝ դիմելու համար դէպի մի ուրիշը, որ մեզ համար չի եկել այնտեղ: Սակայն իզուր, այնուամենայնիւ մենք «չենք կարողանայ յուզել կանգնած ջուրը ապագայի մեծ թասերի մէջ»: Ոչինչ չի պատահի. վերնական վսեմ ոյժերը չեն իջնի և այսնոր համըոյրներն ու անօգուտ ժամերը կը հրաժարուն միանալ մեր կեանքի իսկական ժամերին և համըոյրներին...

Բախտը յաճախ չտեսնելու է տալիս, բայց նա հաստատ գիտէ, որ մենք կը դանք դէպի նա երեկոյեան, և որ վերջին խօսքը իրան է պատկանում: Նա կարող է փակել աչքերը, այդ ժամանակը կորած է մեզ համար:

Թւում է թէ կինը մեղանից աւելի է ենթակայ բախտին. նա կրում է բախտի իշխանութիւնը ամենամեծ պարզութեամբ և երբէք ուժով չի պայքարում նրա դէմ: Նա աւելի մօտ է Աստծուն և աւելի նուազ վերապահումով է անձնատուր լինում գերագոյն միստերին: Եւ անշուշտ այս է պատճառը, որ մեր կեանքի այն դէպքերը, որոնց նա մասնակցում է, ասես մեզ տանում են դէպի բախտի աղբիւրը: Եւ հէնց այնտեղ է, որ մարդ անցողակի ունենում է «մի պարզ նախազգացում այն կեանքի, որը միշտ գուգահեռական չէ արտաքին կեանքին»: Կինը մեզ մօտեցնում է մեր էութեան դռներին:

Ո՞վ գիտէ, գուցէ հերոսները իրանց աստղի ոյժն ու հաւատարմութիւնը կարողացել են իմանալ միայն այն խորունկ վայրկեաններից մէկում, երբ նրանք քնած են եղել կնոջ կրծքի վրայ: Եւ մի մարդ՝ որի գլուխը երբէք չի հանգչել մի կնոջ

կրճքին, կարո՞ղ է ունենալ արդեօք ապագայի իսկական գիտակցութիւնը:

Ելի մի անգամ մտնենք գերագոյն գիտակցութեան խռովայոյզ շրջանը: Ահ, որքան ճշմարիտ է, որ այստեղ էլ, «այսպէս կոչուած հոգեբանութիւնը այն որդերից մէկն է, որոնք սրբավայրում բռնի տիրել են աստուածների իսկական պատկերներին յատկացրած անկիւնը»: Որովհետեւ խօսքը մակերևոյթի համար չէ, ինչպէս և ամենածանրակշիռ յետին մտքերի համար: Մի թէ կարծում էք, որ սիրոյ մէջ մտքերից, գործողութիւններից և խօսքերից դուրս էլ բան չկայ և որ հոգինքը չէ՞ն դուրս գալիս այս բանտերից: Պէտք կայ իմանալու թէ նա, որին ես այսօր համբուրում եմ խանդոտ է, թէ՞ հաւատարիմ, ծիծաղկոտ, թէ տխուր, անկեղծ թէ նենգաւոր: Հաւատացած էք, թէ այս փոքրիկ ողորմելի խօսքերը բարձրանում են մինչև այն կատարներն, ուր մեր հոգիները նստած են և ուր մեր ճակատագիրը կատարւում է լուսութեամբ: Ի՞նչ փոյթ, թէ նա խօսում է անձրևից կամ զարդերից, փետուրներից ու ասեղից և թէ նա կարծես ինձ չի հասկանում: Կարծում էք միթէ, որ ես ծարաւ եմ գերբնական խօսքերի, երբ նկատում եմ ինչպէս մի հոգի նայում է իմ հոգու ներսը, և երբ գերագոյն մտքերն անգամ իրաւունք չունին գլուխ բարձրացնել միստերի առաջ: Ես միշտ ովկիանոսի ափին եմ. եթէ լինէի Պլատոն, Պտակալ կամ Միքել Անջելօ և եթէ սիրածս ինձ հետ խօսէր իր ականջօղերից, այնուամենայնիւ ինչ որ նա ասէր, կամ ես ասէի, միևնոյն ձևով կը լողար այն ներքին ծովի խորքերում, որ մենք փոխադարձաբար տեսնում ենք իրար մէջ: Իմ ամենավըսեմ միտքը աւելի ծանրութիւն չի ունենայ կեանքի և սիրոյ կշեռքում՝ քան այն երեք բառերը որ ինձ սիրող երեխան կ'ասէր իր արծաթէ մատանու, իր ակնագարդ օղակի կամ յուլունքների մասին:

Մենք չենք հասկանում, որովհետեւ մենք միշտ դտնւում ենք հասկացողութեան ստորին աստիճաններում: Բաւական է բարձրանալ և հասնել լերան առաջին ձիւներին և ահա բոլոր անհարթութիւնները տափականում են բացուող հորիզոնի սըրբող ձեռքի տակ: Ի՞նչ տարբերութիւն կայ այն ժամանակ Մարկոս Աւրելիոսի մի խօսքի և երեխայի այն ֆրագայի մէջ, որ ասում է, թէ ցուրտ է: Հեղ լինինք և տարբերենք դիպուածը էութիւնից: Ամենազեղեցիկ մտքերը, ինչպէս և ամենաստոր գաղափարները չեն կարող փոխել մեր հոգու յաւիտենական պատկերը, ինչպէս որ Հիմալայները և անդունդները չեն փոփոխի մեր երկրի պատկերը աստղերի մէջ: Մի հայեացք, մի

համբոյր և մի անտեսանելի ու հզօր ներկայութիւն ամեն ինչ է. այդ վայրկենին, ես գիտեմ, որ կանգնած եմ հաւասարի կողքին:

Եւ այդ հաւասարը յիշաւի սքանչելի է և տարօրինակ: Աղջիկներից ամենայեւեմը անգամ հէնց որ սիրում է արդէն մի բան ունի, որ մենք չունինք երբէք, որովհետեւ նրա հասկացողութեամբ սէրը միշտ յաւիտենական է: Գուցէ և այս է պատճառը, որ նրանք բոլորը իրանց կոյս կարողութիւններով յարաբերութիւններ ունին, որոնք մեզ անծանօթ են: Կինը երբէք չի մոռանում իր սիրոյ գանձի ճանապարհները. ճոխութեան թէ խեղճութեան մէջ, տգէտ թէ իմաստուն, փառքի թէ անարգանքի մէջ, եթէ ես նրան մի խօսք ասեմ, որ իրապէս դուրս գայ իմ հոգու կոյս խորքերից, նա կը կարողանայ գտնել այն խորհրդաւոր շաւիղները, որ երբէք չի կորցրել իր աչքից և առանց տատանուելու նա ինձ իր սիրոյ անսպառ աղբիւրից կը նուիրի մի խօսք: Մի հայեացք կամ ժեստ, որը նոյնքան մաքուր կը լինի, որքան խմբ: Կարծէք նրա հոգին միշտ իր ձեռքի տակն է, այդ հոգին պատրաստ է գիշեր թէ ցերեկ պատասխանելու մի ուրիշ հոգու ամենաբարձր պահանջներին:

Յարգանքով մօտենանք ամենափոքրերին և ամենահպարտներին, և՛ նրանց որոնք երազուն են, և՛ որոնք խորհում են, և՛ նրանց, որոնք դեռ ծիծաղում են, և որոնք լալիս են, որովհետեւ նրանք բաներ գիտեն, որ մենք չգիտենք և մի լապտեր ունին, որ մենք կորցրել ենք: Նրանք ապրում են անխուսափելի անմիջական ստորոտում և մեզանից լաւ են ճանաչում նրա ճանապարհները: Եւ անա թէ ինչո՞ւ նրանք ունին զարմանալի ճշմարտութիւններ ինչպէս և սքանչելի լրջութիւն: Եւ մարդ պարզ տեսնում է, որ ամենափոքր գործերի մէջ անգամ կանայք իրանք իրանց ղգում են մեծ աստուածների ուժեղ և հաստատ բազուկների վրայ յենուած:

Քիչ առաջ ես ասում էի, որ կանայք մեզ մօտեցնում են մեր էութեան դռներին: Եւ արդարեւ՝ կարծէք թէ մեր բոլոր յարաբերութիւնները նրանց հետ կատարւում են այդ կուսական դրան բացուածքից և այն անհասկանալի փոփոկով, որ անշուշտ դուզւնթաց է իրերի ծննդեանը, երբ դեռ խօսքը կատարւում է ցած ձայնով մի անսպասելի արգելքի հրաման լսելու երկիւղից:

Նա չի անցնի այս դրան շէմքը և մեզ կը սպասի ներսում, ուր գտնւում են աղբիւրները: Եւ երբ մենք դրսից խփում ենք դրանը և նա բաց է անում, բայց երբէք ձեռքից բաց չի թողնում ոչ բանալին և ոչ փեղկը: Նա մի վայրկեան նայում

է եկողին, և այս կարճ վայրկեանում, նա իմանում է բոլորն, ինչ հարկաւոր է, և ապագայ տարիները ցնցւում են մինչև յաւիտեան... Ո՞վ կ'ասի մեզ թէ ի՞նչ է պարունակում սիրոյ առաջին հայեացքը, այս «կախարդական գաւազանը, որ շինած է լոյսի մի բեկուած ճառագայթից», ճառագայթ՝ որ ծնունդ է առել մեր էութեան յաւիտենական օջաղից և որը կերպարանափոխում է երկու հոգիներ և նրանց երիտասարդացնում է քսան դարերով:

Դուռը կամ բացւում է կամ վերստին փակւում. էլ ոչ մի ջանք մի արէք, որովհետև ամեն ինչ վճռուած է. նա գիտէ: Նա էլ հաշուի չի առնի ձեր գործողութիւնները, ձեր խօսքերը, ձեր մտքերը, և եթէ դեռ նրանց վրայ հսկում է, նա կ'անի այդ ժպտալով:

Նւ նա դէն կը շարտի այն բոլորը, ինչ որ չի գայ լրացնելու առաջին հայեացքի հաւաստիքը: Նւ եթէ դուք մտածէք նրան սխալեցնել, հաւատացած եղէք, որ նա կը յաղթանակի, և մենակ դուք կը սխալուիք, որովհետև նրա աչքում դուք՝ դուք էք մնում իրապէս և ոչ այն, ինչ կարծում էք լինել ձեր հոգում, նոյնիսկ այն դէպքում, եթէ նա շարունակ խաբուի մի ժպտով, ժեստով կամ արցունքով: Կանայք իսկապէս բոլոր մեծ և անտեսանելի բաների քողապատ քոյրերն են: Նրանք մեզ շրջապատող անհունութեան ամենամօտիկ աղգահաններն են և միայն նրանք գիտեն ժպտալ այդ անհունութեանը այնպէս ինչպէս մանուկը ժպտում է իր հօրը, որից չի վախենում: Նրանք պահպանում են այս աշխարհում որպէս մի երկնային և անօգուտ զարդ, ձեր հոգու աղը. և եթէ նրանք թողնեն հեռանան, ոգին մենակ կը թագաւորէր անապատի վրայ: Նրանք պահում են դեռ առաջին օրերի աստուածային յոյզը և նրանց արմատները մերինից աւելի ուղիղ են թաղուած այն ամենի մէջ, ինչ երբէք սահման չի ունեցել:

Նա խղճում եմ նրանց, որոնք տրանջում են կանանցից, որովհետև նրանք չեն հասկանում, թէ որպիսի բարձրութեան վրայ են գտնւում ինկալան համբոյրները: Նւ սակայն նրանք, այս կանայք որքան չնչին են երևում, երբ տղամարդիկ նրանց նայում են անցողակի: Ահա իրանց փոքրիկ բնակարաններում նրանք իրարանցման մէջ են, մէկը կռացած է մի փոքր, միւսը հեկեկում է, երրորդը երգում է և վերջինը ասեղնագործում է, և ոչ մի տղամարդ չի հասկանում, թէ նրանք ի՞նչ են անում:

Տղամարդիկ նրանց այցելում են այնպէս, ինչպէս կ'այցելեն ժպտացող իրերին, նրանք մօտենում են զգուշութեամբ և

այսպիսով հոգին իհարկէ չի կարող ներս մտնել, բայց եթէ ամենաբացառիկ դիպուածով: Նրանք հարց են տալիս թերահաւատութեամբ, բայց կանայք ոչինչ չեն պատասխանում, որովհետեւ կանխապէս գիտեն արդէն:

Եւ ահա նրանք հեռանում են վեր քաշելով ուսերը, համոզուած՝ թէ կանայք իրանց չեն հասկանում... «Բայց ի՞նչ կարիք ունին նրանք հասկանալ, ասում է մի բանաստեղծ, որ միշտ իրաւունք ունի—ի՞նչ պէտք ունին հասկանալ այս երջանիկ հոգիները, որոնք ընտրել են ամենալաւ բաժինը և որոնք ինչպէս սիրոյ մի մաքուր բոց այս հողեղէն աշխարհում, բռնկւում են միմիայն տաճարների կատարներին, կամ թափառական նաւերի ծայրերին, որպէս նշան երկնային կրակի, որի մէջ լողում է ամեն ինչ: Շատ յաճախ այս սիրող երեխաները կարողանում են նուիրական ժամերում բռնել բնութեան սքանչելի գաղտնիքներ և յայտնագործել անգիտակից նրբամտութեամբ: Գիտունը նրանց հետևում է, որպէսզի հաւաքի այն բոլոր զանձերը որ իրանց անմեղութեամբ նրանք ցրում են ճանապարհներին: Բանաստեղծը՝ որ զգում է այն, ինչ կանայք զգում են, շնորհապարտ է մնում նրանց սիրուն և աշխատում է իր երգերով վերատնկել այդ սէրը, ոսկէ դարի այս սիրմը, ուրիշ ժամանակներում, ուրիշ երկրներում»:

ՄԵՏԵՐԼԻՆԿ

Թարգմ. ***

ՎՐԱՅ ԿԵԼՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի եռանդոտ վրացի-կաթոլիկ քահանայ:—Իշխան Ի. Ճաւաւաձէն իբրև բանաստեղծ:—Վրացերէն ընդարձակ բառարանի գործը:

Այս անգամ էլ մեր ընթերցողներին պէտք է մի փոքր զբաղեցնենք պ. Ջաք. Ճիճինաձէի գործերով: Ինչպէս «Մուրճ»-ի անցեալ համարում ասել էինք, նրա նոր շարադրած գրքոյկներից մէկը կոչւում է «Իվան Գվարամաձէ» և կապ ունի հայերի հետ: Այդ անունը պատկանում է մի 71-ամեայ ծերունու, որ ներկայ ըոպէիս քահանայ է Ախալցխայի կաթոլիկ եկեղեցում: Ճիճինաձէի գրքոյկը վերագրում է այդ հոգևոր հովուին բաւական խոշոր պատմական նշանակութիւն. հայր Գվարամաձէն առաջին կաթոլիկ քահանան է եղել ամբողջ Կովկասում, որ բարձրաձայն քարոզել է իր ժողովրդին, թէ նա միայն կրօնով է հայ-կաթոլիկ, իսկ ազգով վրացի է: Նա սկսել է իր այդ քարոզը քահանայ ձեռնադրուելուց մի տարի անց, 1869 թուին, ուրիմն 35 տարի առաջ և շարունակում է այն մինչև այսօր մի հազուադիւս եռանդով: Նրա գործունէութեան ասպարէզը եղել է սկզբից մինչև այժմ Ախալցխան իր շրջակայ գիւղերով:

Մեզ պէտք է նախ կանգ առնել այստեղ մի վիճելի հարցի առաջ: Ախալցխայի, Ախալքալաքի, Արդուինի և մերձակայ միջանի տեղերը մօտ 300 տարի գտնւում էին օսմանցոց տիրապետութեան տակ: Այդ կողմերում գտնուող կաթոլիկները յանձնուած էին պապի կառավարութեան կողմից Կ.-Պոլսի հայ-կաթոլիկ պատրիարքների հովուութեանը: Որովհետև այդ վաւառները օսմանցոց ձեռքն անձնելուց առաջ գտնւում էին ըսկած 12-դ դարից վրաց իշխանութեան տակ, ուստի վրացի գրողները պնդում են, թէ այդ կողմերի բոլոր կաթոլիկները ազգով վրացի են: Բացառութիւն են կազմում, նրանց ասելով, միայն էրզրումից Կարապետ եպիսկոպոսի հետ եկած կաթոլիկները: Յիշեալ պատրիարքները, առում են նրանք, անարդար կերպով մտցրել են այդ բոլոր «վը-

ըացի-կաթոլիկներին» եկեղեցիներում հայկական ծիսակատարութիւն, այսինքն նախնի հայոց շարականներն ու մեղեդիները երգելը, հայերէն դրաբար աղօթքներ արտասանելը ևայլն ըստ կարգին: Գալով լեզուի հարցին—վրացերէն են խօսում միայն Ախալցխայի մօտի մի երկու գիւղերը, միչդեռ մնացած ահագին, հարիւրաւոր վերստերի տարածութեան վրայ կաթոլիկների մայրենի լեզուն է զուտ-հայկական, էրզրումեան գաւառաբարբառը:

Դառնանք դարձեալ հայր Գվարամաձէին: Դրա քահանայագործութիւնը սկսուեց Ախալցխայում Պողոս վ. Շահուլեանի մահից 13 տարի անց: Ինչպէս «Մուրճ»-ի նախորդ համարում տեսանք, այդ Շահուլեանը ամբողջ վաթսուոն տարի պնդում էր իր ժողովրդականներին, թէ դրանք հայ-կաթոլիկ են և վրացերէն են խօսում՝ Վրաստանում ապրելու պատճառով: Ծիծիհնաձէն վկայում է, որ մինչև հայր Գվարամաձէի հանգէս գալը ոչ մի տեղացի գաղափար չուներ ազգութեան մասին, այլ ամենքն իրանց անուանում էին միայն «կաթոլիկ»: Եւ ահա գործերի այդ դրութեան մէջ սրանից 35 տարի առաջ հանգէս է գալիս երիտասարդ Գվարամաձէն ու բարձրաձայն և խիստ ոգևորուած քարոզում իր հաւատացեալներին վրացականութեան գաղափարը...

«Մենք կաթոլիկներս, —ասում է նա, —ազգով վրացի ենք. մեր հայրենիքը Վրաստանն է, մեր մայրենի լեզուն—վրացերէնը. հայերը մեզ հետ չունեն ոչ մի կապ ու ազգականութիւն, այլ միայն մեր դրացիներն են: Այս պատճառով իւրաքանչիւր կաթոլիկ պարտաւոր է լաւ իմանալ իր պապերի ով լինելը —ծագումը, հայրենի աշխարհը, նրա պատմութիւնը, մայրենի լեզուն, գրականութիւնը ևայլն: Քանի որ մենք վրացի ենք, պէտք է մեր մայրենի լեզուն ու մայրենի գրականութիւնը լինեն վրացերէն լեզուն ու վրացերէն գրականութիւնը: Մեզ հայ-կաթոլիկ այն պատճառով են անուանել, որ մենք ընդունել ենք հայ-կաթոլիկ եկեղեցու ծիսակատարութիւնը: Մենք վրացի ենք, սխալ է մեզանից շատերի այն կարծիքը, թէ իբր մենք ազգով էլ հայ ենք»:

Եւ այդ քարոզը, ինչպէս վկայում է Ծիծիհնաձէն, շարունակւում է մինչև օրս ամեն տեղ, ուր ոտք է դնում հայր Գվարամաձէն՝ բարձրաձայն, համարձակ, առանց սրանից ու նրանից քաշուելու... Տէր հայրը կանգնած է իր ընտրած ճանապարհին, «ինչպէս մի հաստահիմ սիւն ու անյաղթ աշտարակ» (եր. 38)...

Երեք ու կէս տասնեակ տարին այդպիսի մի համոզուած

ու անխոնջ գործողի, այն էլ շատ յարմարութիւններ վայելող մի հոգեւորական գործողի համար, իհարկէ, փոքր ժամանակ չէ, և այսօր, ինչպէս վկայում է դարձեալ մեր Ճիճ., վրացի-կաթոլիկների մէջ կազմակերպուած է ուղիղ հայեացք ազգութեան հարցի մասին և առաջ է եկել մի ամբողջ սերունդ, որ գիտէ իր նախնիների պատմութիւնը և տոգորուած է անկեղծ հայրենասիրութեամբ...

«Բայց մինչև այդ յաջողութեան հասնելը, — աւելացնում է Ճ., — հայր Գվարամաձէն ունեցել է շատ ընդհարումներ ներսի և դրսի մարդկանց հետ, նաժանաւանդ հայոց «Մեղու Հայաստանի», «Մշակ» և «Արձագանք» լրագրների և Մխիթարեան վարդապետների այլևայլ հրատարակութիւնների հետ»:

Վրացի կաթոլիկ հովիւը իր վիճարանական յօդուածները տպագրելիս է հղել 70-ական և 80-ական թուականներին «Իրօէբա» և «Իվերիա» լրագրներում, տպագրել է նոյնպէս մի առանձին գիրք Կ.-Պոլսում «Պատասխան «Մշակ» լրագրին» անունով: Տէր հօր այդ գրուածները մենք չենք տեսել. Ճիճ. ըստ իր սովորութեան մինչև երկինք է բարձրացնում նրանց՝ հաւատացնելով, թէ Գվարամաձէն «իր պարզ ու ճշմարիտ խօսքերով ջախջախում, ոչնչացնում էր հայ հրապարակախօսների բերած տեղեկութիւններն ու արտայայտած մտքերը: Տէր հօր այդ գրուածները դարձրին իրանց վրայ վրաց հասարակութեան լարուած ուշադրութիւնը և այնպիսի մեծ ծառայութիւն մատուցին վրաց ազգին, որ վերջինս յաւիտեան կը յիշէ նրանց հեղինակի անունը»...

Պէտք է այստեղ անցողակի յիշենք, որ հայր Գվ. լաւ հիմուն է հայոց հին և նոր լեզուներին, որ նա սովորել է Ախալցըլիայի ու Կ.-Պոլսի կաթոլիկ ուսումնարաններում:

Հայր Գվարամաձէն շատ է սիրում զբաղուել նոյնպէս գրականութեամբ: Նա աշխատակցել է մինչև այսօր «Վինմէ Մեսիխ» (ոմի մեսիցի) կեղծանունով վրաց համարեա բոլոր ժամանակակից պարբերական հրատարակութիւններին և ունի տպագրած բազմաթիւ գրքեր գլխաւորապէս կրօնական ու պատմական բովանդակութեամբ: Նա հայերէնից վրացերէն է թարգմանել ու տպագրել Մխիթարեան վարդապետների հետեւեալ հրատարակութիւնները. «Աստուածաբանական փիլիսոփայութիւն», «Ճարտասանութիւն», «Մարդկային իմաստութիւն», «Կեանքի ճանապարհ» և «Երկնքի առաջնորդը»: Օգտուելով հայոց հին գրաւոր աղբիւրներից՝ հայր Գվ. կազմել է նոյնպէս մի երկհատոր «Վրաց պատմութիւն», որի առաջին հատորն է միայն լոյս տեսել նրա կենսագիր Ճիճինաձէի հրատարակու-

Թեամբ: Ինչպէս վերջինս խոստովանուում է, այդ գիրքը ահա-գին լոյս է սփռում վրաց անցեալի, մանաւանդ նախաքրիստոնէական շրջանի վրայ, տալով այնպիսի տեղեկութիւններ, որ վրացիք ոչ մի տեղից չէին լսել: Մեր հին յիշատակարաններից գրքի յօրինողը քաղել է ոչ միայն այն, ինչ որ վրաց մասին հայերն են գրել, այլ և այն, ինչ որ վերջինները թարգմանել են ասորական, պարսկական, արաբական ու օսմանական գրականութիւնից: Գրքի մեծ արժէքի մասին վկայել է հրապարակօրէն նաև վրաց հանգուցեալ պատմագէտ Դիմ. Բաքրաձէն, որ խոշոր համարում էր վայելում իր հայրենակիցերի աչքում: Եւ այդքան բարեխաղող պայմաններից յետոյ մարդ մնում է բոլորովին ապշած, երբ ճիճ. առանց այլևայլութեան յանկարծ ողբում է, թէ աշխատութեան երկրորդ մասը լոյս չտեսաւ այն պատճառով, որ նրա «առաջին հատորը վրացիների մէջ այնպիսի թշնամիներ վաստակեց, որոնք նոյնիսկ խոչընդոտներ հանդիսացան այդ հատորի տարածուելուն» (եր. 19)...

Այդ ինչ հանելուկային հալածանք է, և ինչո՞ւ ձ. պարտաւոր չէ համարում իրան բացատրութիւն տալու մեզ նրա մասին... Նա ծածկում է այնպիսի մի հալածանքի շարժառիթ, որ ստիպել է գրքի յօրինողին անտիպ պահելու իր աշխատութեան երկրորդ մասը մինչև այսօր, այսինքն ամբողջ 22 տարի... Չպէտք է արդեօք ենթադրել, որ հալածանքը առաջ է եկել հայ աղբիւրների վրաց մասին տուած մի շարք աննպաստ տեղեկութիւններից...

Մեր հասարակութեան շրջանում այնքան տխուր հուշակունեցող իշխան Իլիա Ճաւճաւաձէն վրաց խոշոր ու սիրելի բանաստեղծ է: Նրա բազմաթիւ պօէմաների, ոտանաւորների և վէպերի ժողովածուն լոյս տեսաւ սրանից մօտ տասը տարի առաջ 4 հատորով: Այնուհետև պ. Ճաւճաւաձէն ոչ մի գեղարուեստական գործ չէ արտադրել: Այդ գեղարուեստական ամուլութեան շրջանումն էր, որ նա սկսեց տպագրել հայոց դէմ անվերջ ֆելիետոնների մի շարք, որ յետոյ արտատպուելով «Իվերիա»-ից՝ լոյս տեսան նաև առանձին գրքով՝ «Հայ գիտնականները և աղապակող քարերը» վերնագրով: Հայերի մասին վատ խօսելը, իհարկէ, մի անսովոր բան էէր վրացի գրողների համար, բայց ճաւճ. իր վերջին տասը տարուայ հրապարակախօսական գործունէութեամբ առաջացրեց մի այնպիսի շփոթ, որի անգամները չեն կարող իրանց հարազատ վրացի համարել, մինչև որ մի լաւ չհայհոյեն հայերին... Ահա մօտ ե-

րեք տարի է, որ նա բոլորովին թողել է իր օրգանը, և «Իվերիան» հրատարակում է մի ակցիօներական ընկերութեան ձեռքով, բայց այդ ուսուցչի հոգին սաւառնում է դարձեալ իր աշակերտների գլխին ու ներշնչում նրանց նորանոր թունաւոր խօսքեր ասելու հայերի դէմ ոչ միայն «Իվերիա»-ում, այլ և ուրիշ հրատարակութիւններում և առանձին գրքերում...

Իշխանն այժմ բոլորովին դադարել է գրելուց. չէ գործում այլևս նրա դիւթիշ քնարը, լուել է նոյնպէս հրապարակախօս գրիչը: Այժմ այդ 68 տարեկան ծերունին զբաղուած է միայն իր հիմնած կալուածական բանկի գործերով, որի կառավարիչն է նա շատ տարիներից ի վեր:

Այս խօսքերն ասելու մեզ առիթ տուեց մօտերս հրատարակուած մի կոկիկ, սիրունիկ, հեղինակի պատկերով ու ազնիւ թղթի վրայ շարուած գրքոյկ: Դա պարունակում է իր մէջ Իւլիա Ճաւճաւաձէի 29 ոտանաւոր, որ յայտնի հրատարակիչ Ս. Մերկիլիաձէն քաղել է նրա վերոյիշեալ ընդարձակ հատորներից: Շատ դեղեցիկ միտք է այդ էփանագին (15 կոպ.) փնջի հրատարակելը, նախանաւանդ որ նա կարող է մատակարարել ժողովրդին անպայման օգտակար մտքեր ու զարթեցնել նրա մէջ համակրելի գաղափարներ...

Կանգնում ենք այդ գրքոյկի առաջ ապշած... Տէր իմ, միթէ դա այն Ճաւճաւաձէն է, որ այնքան ատելութիւն ցանեց իր հայրենակիցներին սրտում դէպի մեզ... Ո՛չ մի նշոյլ մի այդպիսի բանի. այլ ամբողջ գիրքը ծայրէիծայր ներշնչում է ընթերցողներին ամենամաքաւէր, ամենավեհ զգացումներ և ոչ միայն պարսաւում է ատելութիւնը դէպի մարդիկ, այլ պահանջում է, որ վրացիք ուրիշների թշնամութեանը ներողամտութեամբ ու սիրով պատասխանեն... Բանից դուրս է գալիս, որ Ճաւճ. բոլորովին ուրիշ մարդ է եղել մինչև ծերութեան հասակին հասնելը և կամ նա մի առանձին երկիւղածութեամբ է մօտենալիս եղել գեղարուեստի սուրբ տաճարին...

«Նրացի մայրը,—ասում է նա ի միջի այլոց (կր. 11),— պէտք է իր տուած կաթի հետ սէր ներշնչէ երեխային դէպի մարդիկը և այնպէս մեծացնէ նրան, որ նրա սիրտը թրթռայ միայն բարի գործի համար: Մեր աշխարհն այնպէս է ստեղծուել, որ գիշերին հետեւում է ցերեկը, և ինչ որ քանդում է ատելութիւնը, այն վերաշինում է սէրը (կր. 62): Կատաղի ու զօրեղ թուրը չէ կարող անել այն, ինչ որ ընդունակ է անելու մի խաղաղ գրչի փոքրիկ ծայրը (կր. 61): Թշնամուն պէտք է յաղթել բարութեամբ և խուսափել նրան իր արիւնով յանցանքը քաւել տալուց. վեհանձնութեամբ յաղթելը աւելի բար-

ձըր է քաջութեամբ յաղթելուց (եր. 60): Թշնամին երբ իր սուրը խրէ կուրծքս, ես կ'ուզեմ գոչել. «Ներքի դրան, Տէր, որովհետեւ չգիտէ, թէ ինչ է անում» (եր. 55) կայլն կայլն...

Ահա թէ ի՜նչ սքանչելի բարոյական սնունդ էր տալիս իր ընթերցողներին իշխան Ճաւճաւաձէն, երբ գործում էր իբրեւ բանաստեղծ և երբ հասակով էլ աւելի թարմ էր: Կան մարդիկ, որոնք զգալի կերպով փոխուում են, երբ նրանց կեանքը թեքւում է դէպի արևմուտք...

Այդ բանաստեղծութիւնների հաւաքածուն, ինչպէս որ պէտք էր սպասել, պատճառում է կարդացողներին միաժամանակ գեղարուեստական մեծ հաճոյք: Դրա մէջն են ամփոփուած հեղինակի ամենարնտիր մանր արտադրութիւնները: Այդպէս է՝ «Էլեգիա»-ն, որի մէջ բանաստեղծը զգում է անասելի խորը թախիժ՝ տեսնելով, թէ ինչպէս իր հայրենիքը շարունակ քնում է, քնում է ու քնում... Այդպէս է՝ «Բազալէթի լիճը», որ պարունակում է իր մէջ մի վերին աստիճանի վարպետօրէն հիւսած և հայրենասիրական լեզենդա՝ լճի խորքում գտնուող առասպելական ոսկի օրօրոցի մասին: «Մայր և որդի» բաց է անում մեր առաջ մի դրամա, որի մէջ մերձիմահ պառաւ մօր և նրա միակ որդու փոխադարձ համաձայնութեամբ վերջինս գնում է պատերազմի դաշտը՝ հայրենիքի թշնամիներին վռնդելու: «Բեռնակիր մշակը», որի մէջ ըստ երևոյթին դուրս է բերուած Թիֆլիսում սրտաճմլիկ կեանք վարող և ապա շատ աննախանձ կերպով մեռնող հայաստանցի պանդուխտը—աննման է:

«Ի՜նչ շինեցի՜ք կամ Վրաստանի 19-դ դարու պատմութիւնը» երկար, ամբողջ 6 երեսից բաղկացած գրուածքը մի հրաշալի երգիծաբանութիւն է, որի մէջ սիրտ ծաղկող հումորով դատաւիտւում են վրաց հասարակութեան առաջաւոր դասակարգի բացասական կողմերը՝ սկսած Վրաստանի քաղաքական անկումից մինչև մեր օրերը: Գեղեցիկ են նոյնպէս «Հարց ու պատասխանը», «Գարունը» և «Մաճկալը»:

Հաւաքածուի մի քանի կտորները գրուած են 16 ոտնանի երկար տողերով: Դրանք համեմատաբար կարդացւում են աւելի ծանր և չունին այն մուգիկալ՝ արտայայտութիւնը, որ այնքան յատուկ է ինչպէս Ճաւճաւաձէի միւս աւելի սահուն ոտանաւորներին, այնպէս էլ առհասարակ վրացական գոված քնարին:

Ինչպէս մենք սրանից մի քանի ամիս առաջ գրել էինք, վրաց հասարակութեան մէջ հանդէս եկաւ մի բարերար, որ ցանկութիւն էր յայտնում տպելու իր հաշուով ընդարձակ վրացերէն բառարան: Դրա հետ միասին նա առաջարկում էր հաւաքել նախօրօք վրաստանի բոլոր անկիւններից այնպիսի ժողովրդական բառեր, որ մինչև այժմ եղած բառարաններում տեղ չեն գտել: Այժմ, ինչպէս հաղորդում են վրաց լրագիրները, այդ գործը մի տեսակ պաշտօնական կերպարանք ստացաւ, և իմացուեց, որ այդ բարերարն էլ Գորու նախկին երիտասարդ եպիսկոպոս Կիրիօնն է: Վերջինս հիմայ Ռուսաստանի Օրլովեան թեմի առաջնորդ է և այս օգոստոսի սկզբին Թիֆլիս գալով՝ հաստատ հողի վրայ դրեց իր ձեռնարկած գործը: Ինտելիգենտների մի շրջան ընտրեց իր միջից 3 հոգուց բաղկացած մի բառարանական մասնաժողով, որն արդէն գործի գլուխ անցաւ և մօտերս պէտք է ուղարկի գաւառները բառեր հաւաքելու համար առանձին ձևով տպուած մատենաներ: Բառեր հաւաքողները ստանում են իւրաքանչիւր գտած բառի համար 5 կոպէկ: Ինչպէս ընդհանուր ժողովում հաղորդուեց, շատ գաւառացի գործողներ արդէն հաւաքել են բաւականաչափ պաշար և շատ տեղերից էլ իմաց են տալիս, որ հաւաքիչները հրաժարւում են վարձատրութիւն ստանալուց: Սրբազան Կիրիօնը յանձնել է արդէն մասնաժողովին մի որոշ գումար սկզբնական ծախսերի համար և շարունակարար պէտք է հասցնէ իր հասոյթները, երբ հարկը պահանջէ: Յանկանք յաջողութիւն այդ օգտակար ձեռնարկութեանը:

Ինչպէս մենք ուրիշ անգամ էլ ասել ենք, վրացի եպիսկոպոսները մի զարմանալի գուգադիպութեամբ միշտ համակրելի և իրանց հօտի անձնուէր հովիւներ են լինում: Նրանք ի միջի այլոց սիրում են նաև հովանաւորել գրողներին և մեկենաս հանգիստանալ նրանց աշխատասիրութիւններին: Այդպէս էր առաջ հանգուցեալ Գաբրիէլ եպիսկոպոսը և այդպէս են այսօր Ալեքսանդր և Կիրիօն սրբազանները...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Սարոյկը բորբոքուում էր. չոր փայտերը ճարճատուում էին. լոյսը մեղմով օրօրուում ու թրթռում էր խաւարի մէջ. կայծերը վեր էին թռչում, շողում բոպէապէս և կորչում խաւարի մէջ:

Ես և Զաքօն էինք մենակ. նա նստած խարոյկի մօտ չոր փայտեր էր աւելացնում:

— Ընկերներդ շօւտ կը գան, հարցրի ես:

— Զգիտեմ, պատասխանեց նա չոր կերպով. երևում էր, որ մարդը տրամադրութիւն չունէր խօսելու:

Արտաքինով աչքի ընկնող շատ բան ունէր Զաքօն. բարձրահասակ էր նա, ու մարմնով յաղթ. բայց ամենից աւելի դէմքն էր ուշադրութիւն գրաւում. ամենից առաջ աչքի էր ընկնում երկայնաձև, համարեա թէ սրածայր գլուխը, որի վրայ անկարգ կերպով տճած մազերը գալիս թափւում էին ճակատի վրայ, կախուելով մինչև թաւ, իրար միացած յօնքերը. աչքերը զարմանալի սևութիւն ունէին, որի խորքում սակայն կայծկայծում էր ծակող, սարսեցնող մի կրակ. կեռ ու նեղ քիթը իջնում էր երկար ու սև ընչացքների վրայ, որ գնում, միախառնւում էր վայրենի կերպով աճած միջուքի հետ. ներքևի շըրթուները առաջ էր ընկած, որ տալիս էր գէմքին զօրեղ կամքի և նոյնիսկ անգութ արտայայտութիւն. և այդ բոլորին համապատասխանում էր պզնձէ գոյնը, որ տալիս էր ամբողջութեանը ինչ-որ անարկուլիւն: Բնաւորութեան մէջ մի զարմանալի տարօրինակութիւն ունէր. շատ անգամ խորին թախծութեան մէջ էր ընկնում, և այդ րոպէներին հետը ոչոք խօսել չէր կարող: Եթէ մէկը պատահամբ հարց տար. «Ի՞նչ է պատահել, Զաքօ», նա դանդաղութեամբ գլուխը վեր կը բարձրացնէր, չոր, զայրացկոտ հայեացքով կը չափէր հարցնողին, և լուռ էլի կը խորասուզուէր իր մտքերի մէջ:

Ես տարածուած էի գետնի վրայ. խաւարը դիզւում էր կրծքիս. երբեմն միայն խարոյկի լոյսը աղօտ կերպով գալիս էր փայփայելու ինձ. նա քողում էր իմ վրայ. երբեմն կարծես

հանգչում խաղառ. բայց ահա էլի բոցավառում, ծուլօրէն գալիս թրթռում, պտտում էր շուրջս: Ամեն ինչ թախծալի էր թւում. այդ խաւարը, որ տարածւում էր ինձնից վերև ամեն կողմ. խարոյկի այդ աղօտ լոյսը, որ դանդաղութեամբ զալիս խաղում էր դէմքիս վրայ. և վերևի անհուն կամարում շողշողացող աստղերը: «Դըլօ, դըլօ, դըլօ...» յանկարծ սկսեց երգել Ջաքօն իր մեկամաղձոտ ու դուրեկան ձայնով քրդական երգերից մէկը, որոնք երբեմն այնքան լի են լինում խորին թախիծով: Ջայնը դօրեղ ու փոթորկալից դուրս էր ժայթքում սրտի խորքից, ճեղքում էր օդը թափով, սաւառնում էր գիշերային խաւարի մէջ ու գնում դիպչելու հեռում վարագուրուած լեռներին ու ժայռերին. բայց ահա մեղմանում էր, խորին թախիծով ու դանդաղութեամբ սահում զարնանային եղկ օդի մէջ, և ինձ թւում էր, որ զալիս բռնում շուրջս, ձուլւում վրաս խաղացող լոյսի հետ, ապա հետզհետէ թուլանալով մեղմ հեծեծանքով մարում է խաղառ. և ամեն ինչ դառնում էր թախծալի, անհուն կերպով վշտոտ: Եւ երգում էր Ջաքօն նստած խարոյկի մօտ, հայեացքը սկեռած խաւարի մէջ, գլուխը յենելով ձեռքին: Լոյսը վեր էր բարձրանում, ըոպէսպէս ողողում նրա դէմքը և էլի իջնում, թողնելով նրան նորից խաւարի մէջ. զարմանալի թախծութիւն էր շնչում այդ դէմքը. սև աչքերը վառւում էին այնպիսի մի մեկամաղձոտ լոյսով, և հայեացքը այնպիսի մի խորութիւն ունէր, որ ես զարմացած սկսեցի նշրան դիտել. «դըլօ, դըլօ, դըլօ», շարունակում էր երգել նա, խաղառ մոռացած իրան. բայց հայեացքս կարծես վերջապէս խայթեց նրան. մի անհանգիստ շարժում գործեց, ձեռքը յետ քաշեց և լուռ ինձ նայեց. մի մոռյլ անցաւ դէմքով. յօնքերը սպառնազին ցած կախուեցին:

— Ջաքօ, դու ինչո՞ւ երբեմն այդպէս ամպում ես, անզուսպ հետաքրքրութեամբ յանկարծ դուրս թռաւ բերնիցս:

Ջայրացած հայեացքը մի քանի ըոպէ կանգ առաւ իմ վրայ, և լուռ գլուխը էլի խոնարհեց. ես վճռեցի մինչև վերջ տանել:

— Ջաքօ:

— Ի՞նչ է, ի՞նչ ես ուզում:

— Խնդրում եմ ասա:

Միքանի ըոպէ լուռ անցկացաւ. ես սրտատրոփ սպասում էի:

— Մինչև այսօր քիչ մարդ սիրտ է ունեցել ինձ այդ հաւցընելու, խօսեց նա վերջապէս. դու սիրտս կտրատեցիր: Ի՞նչու ես ուզում իմանալ զարդս. բայց հոգ չէ, կը պատմեմ,

քեզ մենակ կը պատմեմ. դու ուրիշ ես... հարցնելովդ դիպար վերքերիս, թո՛ղ հիմայ արիւն գայ:

Ես ու Ներսոն մանկութեան ընկերներ էինք, սկսեց նա. մի գիւղացի, մէկտեղ ապրել, մէկտեղ խաղացել, մէկտեղ մեր սարերում հօտադուլիւն արել, մէկտեղ մեծացել, և մի օր էլ մէկտեղ ստիպուեցինք փախչել մեր գիւղից. թէ ինչո՞ւ փախանք, մինչև հիմայ էլ մեզքս լաւ չգիտեմ. գուցէ նրա համար, որ լաւ ջահիլ տղերք էինք. և իսկապէս, հպարտանալ չլինի, գիւղում մեր թայը չկար. և մի օր փորձանք եկաւ գլուխներս ու երկսով դաշաղ ընկանք. պէտք էր փախչել մեր գիւղից և գնալ հեռու-հեռու. անմեղ էինք, բայց ճար չկար. է՛հ, աշխարհը. մարդակեր է, վերան մնայ:

Գարունը նոր էր սկսուել. դեռ սարերի գլխներին ձիւն կար. բայց մենք պիտի գնայինք. մութ գիշեր էր. մատդ կոխէիր ընկերովդ աչքը, չէր իմանայ. մեզ համար էլ հէնց այդպիսի գիշեր էր հարկաւոր. բայցեցինք ողջ գիշեր առանց յոգնելու. ոչինչ չէր տխրեցնում մեզ. ճիշտ է, որ հայրենիքից հեռացանք, անխ, շատ-շատ վարդագոյն յոյսեր ունէինք. էլի կը գանք հայրենիք հանգիստ, ապահով... կը շէնացնենք մեր տներն ու տեղերը... երազում էինք մենք. և դրա համար էի ծանր սրտով չբաժանուեցինք հայրենիքից:

Այսպէս գնացինք ամբողջ գիշեր. առաւօտ եկաւ. էլ առաջ գնալ չէինք կարող. լոյսը բացւում էր, եթէ մեզ տեսնէին, վնջ էր: Տեղաւորուեցինք քարերի արանքներում և հերթով քնում ու հսկում էինք. այդպէս անցաւ ամբողջ օրը. երեկոյեան երբ մութն ընկաւ, էլի ճանապարհ ընկանք. գիշերն ամբողջ գնացինք ողջ-առողջ. մեր բախտից էր. ո՛չ մի շունչ, ո՛չ մի հոգի չէր երևում. «Աստուած մեզ հետ է», ասում էինք մենք և երեսներս խաչակնքում:

— Ներսո, որ էսպէս գնանք, գիտե՞ս ինչ մատաղ կ'անեմ Տիրամօր համար:

— Մենակ եթէ ձիւնի չբռնուենք. երկուսս էլ բնադաբար երկինքը դիտեցինք. հեռու արեմուտքը պատած էր մըշուշով: Աղօթրանը բացւում էր. էլի քաշուեցինք քարերի տակ. քունս տանում էր. կծկուեցի ու սկսեցի նիրհել:

Թէ որքան ժամանակ այդպէս մնացի, չգիտեմ. բայց երբ աչքս բաց արի, տեսնեմ մշուշը սարսափելի կերպով պատել է չորս կողմս. ցուրտ քամին թափանցում է մինչև ոսկորներս. Ներսոն նստած էր կողքիս:

— Տեսա՞ր, շնչաց նա:

Ես չպատասխանեցի. մի ծանր նախազգացում ասում էր

ինձ, որ մենք էժան չենք պրծնի: Մշուշը կամաց-կամաց սկսեց խտանալ և կապտեց. պէտք էր ճանապարհ ընկնել. թէ չէ, որ սպասէինք մշուշի ցրուելուն, օրերով նստած պիտի մնայինք. «բայց հոգ չէ. գէթ ձիւն չէ գալիս», աշխատում էի յուսադրել ինձ. բայց ինքս էլ զգում էի թէ ինչքան անմիտ էր այդ յուսադրանքը. և ճանապարհ ընկանք. ցուրտ քամին սառեցնում էր մեզ. արագացրինք մեր քայլերը, տաքանալու համար: Գիշերն էլ վրայ հասաւ իր անոռի խաւարով:

—Ներսո, ճանապարհը լաւ գիտե՞ս, հարցրի ես.—չմոլորուե՞նք:

—Գնանք, վստահութեամբ ասաց ընկերս:

Քամին ուժեղացաւ. սառն կաթիլներ սկսեցին հատ-հատ դիպչել երեսիս:

—Ձիւն:

Կարիք չկար ուրիշ խօսք ասելու. երկուսս էլ գիտէինք թէ ինչ էր այս ձիւնը մեզ համար. ինչ անել. ոչ մի բլուր, ոչ մի ժայռ, որի տակ կարողանայինք ապաստանել. պէտք էր գնալ, բայց մեր զօրաւոր Աստուածը մեզ թողնում էր: Կաթիլներն աւելի անխիղճ կերպով սկսեցին ծեծել դէմքս, քամու շնչի հետ վազում էին երեսիս վրայով, մտնում բերանս, սահում աչքերիս մէջ, խփում քրտնած ճակատիս. բայց մենք գնում էինք արագ, անընդհատ. շարժւում էին մեր ոտները, մեքենայի պէս վեր բարձրանում, էլի իջնում, դիպչելով երբեմն մի քարի, մացառի կամ յանկարծակի թափով ընկնելով մի փոսի մէջ. ձիւնը մաղում էր անընդհատ, ճերմակով պատում չորս կողմ, իսկ մենք խելագարի նման առաջ էինք վազում արագ, շուտափոյթ:

—Սպասիր, յանկարծ կանգնեց Ներսոն, կուցաւ և սկսեց ուշադրութեամբ նայել գետնին, ապա էլի բարձրացաւ, աշխատեց թափանցել խաւարի մէջ, տեսնելու լեռները. բայց իզուր. նա վարանած մի շարժում գործեց. ես հասկացայ, կարիք չկար բացատրութեան. ճանապարհը կորցրել էինք մենք, և այդ բոլոր պէին ամենևին չգիտէինք թէ ուր ենք գնում:

—Գնանք տեսները, ուր կը հասնենք. ասաց նա և առաջ քայլեց. ու գնացինք:

Դէհ, ինչ երկարացնեմ. շատ թափառեցինք, շատ այս ու այն կողմ ընկանք. ճանապարհ չկար ու չկար. ձիւնն անողորմ կերպով իջնում էր մեզ վրայ, հալւում մեր ջերմութիւնից և ցած էր հոսում. յոգնած առաջ էինք շարժւում ստուերների նման, երկուսս էլ լուռ:

Թէ որքան ժամանակ գնացինք այդպէս չգիտեմ. մի տե-

սակ ինքնամոռացութեան մէջ էի ընկել. յանկարծ ցնցուեցի սարսափահար. կատաղի հաջող լսուեց մեր առաջից. կասկած չար, որ մոլորուած՝ եկել հասել էինք մի վտանգաւոր գիւղի, կարող էինք բռնուել:

—Ո՞վ է, լսուեց մի ձայն. մեր քայլերն արագացրինք. յետևներիցս լսուեց մի պայթիւն. առանց կողոպուտի աւազակներ էինք դարձել և մեզ հալածում էին մարդիկ, շներն էլ միւս կողմից աւելի կատաղած յառաջ նետուեցին:

—Հանգնեցէք, կրկին հնչեց նոյն ձայնը. բայց մենք թշուշում էինք արագ, առանց յետ նայելու. անխնայ քարերին էինք դիպչում, փոսերի մէջ գլորւում. ոչինչ չէինք զգում սակայն. մի բան միայն մեխուել էր մեր ուղեղում. այն է, որ պէտք է փախչել այդտեղից որքան կարելի է, արագ: Խառնաշփոթ աղմուկ բարձրացաւ մեր շուրջը. կրկին լսուեցին հրացանի պայթիւն ուղղակի դիմացներս. մենք ղաշաղներ էինք, ով չէր կրակի մեզ վրայ: Կատաղի շները բռնեցին մեր չորս կողմը. ի՞նչ անենք Տէր Աստուած:

—Պառկիր, ասաց Ներսոն և ինքը փռուեց գետնին. ես էլ պառկեցի. շները կարծես հանդարտուեցին. բայց իզուր. կրկին պայթեցին հրացաններ. շները թափով յառաջ ցատկեցին. մեզ միայն մի միջոց մնաց աղատուելու համար—կռուել. մենք թաք կացանք հէնց պատահած քարի յետև:

—Լաւ նստիր և կրակիր, ասաց Ներսոն և հրացանն ուղղեց դէպի այն կողմը, ուր փայլեց մի լոյս ու պայթեց հրացան. միաժամանակ իմ կողքիս էլ հրացան պայթեց. լսուեց մի ճիչ, մի հայհոյանք: Անասելի ժխոր բարձրացաւ:

—Դիպաւ, փախչենք, սպանուածով են զբաղուած. և էլի ըսկսեցինք վազել. մեր ոտներն էին, որ մեզ պիտի փրկէին, և մենք նրանց չէինք խնայում. մի ինչ որ գերբնական ուժից մղուած, մենք յառաջ էինք սլանում կատաղի վաղքով, անկարող փրկուելու համար մի ուրիշ միջոց մտածելու:

Թէ որքան տևեց այդ վաղքը չեմ յիշում. ուժգին դիպչում էինք քարերին, քիթ-բերնի վրայ ցած փռւում. բայց զօրեղ ճիգով նորից վեր էինք բարձրանում, առաջ նետուում հալածուած եղնիկներին նման. սառը քամին դիւակաւ քրքրիչով մեր երեսին էր շալրտում ձիւնը. բայց մեր յետևից հրացանների ձայնը երբէք չդադարեց:

Յանկարծ Ներսոն մի կողքի վրայ թեքուեց և ընկաւ ծընկերների վրայ. բայց հակառակ իմ սպասածին անմիջապէս ոտքի չթռաւ. մի ծանր կասկած փայլատակեց մտքումս:

—Խօմ չվիրաւորուեցիր:

—Ոչինչ, ոչինչ, թոթովեց նա, վազիր, բան չկայ, և ինքը մի խուլ հառաչանք խեղդելու ճգնելով, ոտքի ելաւ, միքանիք քայլ ևս վազեց և էլի ցած ընկաւ:

—Փախիր, Զարօ, ես կամոց-կամաց կը գամ, շնչաց նաւարիւնս կանգ առաւ երակներէս մէջ. ի՞նչ, փախչե՞լ, թռչե՞լ, թողնե՞լ Ներսօին. ո՛չ, հազար անգամ ոչ, մտքուս մի բան ծագեց:

—Արի շալակեմ քեզ, Ներսօ, ասացի ես:

—Գնա, գնա, ասաց նա զայրացած, գերբնական ճիգով վեր կացաւ, թափով յառաջ նետուեց, մի քանի քայլ փոխեց, բայց էլի ցած գլորուեց. ես էլ ուշք չդարձրի, չորեքի և շալակըս առայ:

Աղաղակներն ու հայհոյանքները մօտենում էին, ես սկըսեցի վազել: Աստուած գիտէ, թէ ի՞նչ մի ուժ էր, որ լցուել էր մէջս, չնայելով որ այնքան վազել էի, այժմ կարծես մի նոր բան եկաւ, միացաւ իմ ուժին ու նրան տասնապատկեց, և վազում էի ես աւելի թեթեւ քան առաջ, երբ միայնակ էի վազում, աւելի արագ, աւելի շուտափոյթ: Ո՞ւր էի վազում, ո՞ւր պէտք էր հասնէի այդպէս, ես չգիտէի. գիտէի միայն, որ պէտք է վազեմ, վազեմ մինչև կտրուեն յետևիցս հրացանի որոտն ու հայհոյանքը:

—Թող ինձ, Զարօ, թող, թող մնամ. բայց ես ոչինչ չէի ուզում լսել. ես թողնեմ Ներսօին, այդ գլխուս չէր կարող տեղաւորուել. և աւելի ևս ուժով սեղմում էի նրան իմ մէջքին, թոյլ չտալու, որ վայր գլորուի, բայց զգում էի, թէ ինչպէս մի ինչ որ տաք բան թափանցում էր քամակիցս շորերիս մէջ, կպչում մարմնիս, տաքացնում ինձ. ես գիտէի, որ այդ Ներսօի արիւնն էր գալիս խաւնուելու իմ քրտինքի հետ,

Երկար վազեցի, ընկնելով, կանգնելով շատ առաջ գնացի. բայց հալածանքը երբէք չդադարեց: Դէհ մարդկային ոյժն էլ չափ ու սահման ունի. զգում էի թէ ինչպէս արճճի պէս մի ծանր բան իջնում դէպի ոտներս, ծանրացնում ինձ, անդիմադրելի կերպով դէպի գետին ձգում. սրտիցս կարծես մի բան էր կտրուել, ալիքի նման գալիս, կանգնում շնչիս գիմացը. քունքերիս երակները մուրճի պէս ամուր բաղխում էին, խփում գլխիս. ես հառաչելով ցած գլորուեցի. ցաւն ինձ համար չէր, ան վիրաւորուած ընկնէս. և նա արտասուեց դառն-դառն, գլուխը յենած ուսիս. արտասուքը կաթում էր ջերմացած ճակատիս վրայ, այրում, մրկում էր ինձ: Ես վերկացայ նորից ու առաջ վազեցի, բայց ծնկներս ծալում էին. մի կատաղութիւն բռնեց ինձ, մի կատաղութիւն, որ

կեանքիս մէջ միայն այդ օրը զգացել եմ. կատաղութիւն իմ վրայ, իմ ոտներիս վրայ, որ չէին կարող վազել, որ չէին կարող ազատել իմ բեռին, և վազում էի ես էլի արագ, բայց ոտներս չէին հընազանդւում. կատաղութիւնից լաց եղայ ես...

Դէհ, ի՞նչ երկարացնեմ. ուժս հատաւ բոլորովին, մի քիչ էլ վազեցի ու ընկայ. այլ ես վեր կենալ չէի կարող:

— Զաքօ, թող ինձ, մոռնաց Ներսօն, թող, գնա, ի՞նչ բան ունիս հետս, կորիւր, կորիւր, կորիւր, կրկնեց նա ատամների մէջ. ես լուռ էլի գրկեցի նրան ու փորձեցի վեր կենալ, բայց չկարողացայ. նա խփեց ինձ:

— Գնա, Զաքօ, թող ինձ այստեղ, թող, թող... Կրկին անգամ պայթեցին հրացաններ...

Թէ ինչ եղաւ այնուհետեւ, մինչև հիմայ էլ պարզ չէ ինձ. յիշում եմ միայն, որ մի կռիւ սկսուեց իմ և նրա մէջ, ես գրկւում էի նրան, նա ինձ խփում էր, ձեռքով, ոտքով հարուած էր տալիս. ես անգիտակից, սկսեցի քարշ տալ նրան, նա գրկեց մի թուփ և կպած մնաց...

Մինչև հիմայ էլ հաշիւ տալ չեմ կարող ինձ, թէ ինչպէս թողի ես նրան. այն եմ յիշում, որ մենակ, խելագարի նման վազում էի առաջ, մինչ արդէն լոյսը բացուեւ էր. մենակ վազում էի ամայի լեռների վրայ, առանց զգալու, որ ինձ հալածողները վաղուց է, որ չկան...

Կը հաւատամ, երեք օր, երեք գիշեր ես թափառում էի լեռներում ու դաշտերում մենակ, առանց վախենալու. կատարեալ խելագար էի դարձել. ոչինչ, ոչինչ չէի կարող մտածել, այն սարսափելի գիշերուան կռիւն էր միշտ աչքիս առաջ, և զարդանդած՝ սլանում էր ուրուականի նման. իմ բախտից էր, որ ոչոք չհանդիպեց...

Այդ օրերից անցել է եօթ տարի, բայց ես Ներսօն երբէք մոռանալ չեմ կարող, մինչև հիմայ էլ չեմ կարող ներել ինձ, որ նրան թողի. ախլը ինչո՞ւ թողի. ինչո՞ւ չկանգնեցի այնտեղ կռուելու մինչև վերջ, քանի շունչ կար բերնումս... Բայց ես փախայ առանց ամաչելու, որ այնտեղ վիրաւոր ընկերս էր փռուած. տղամարդութիւն չէր արածս, և ես այդ երբէք մոռանալ չեմ կարող...

Մի խոր հառաչանք արձակելով լռեց Զաքօն. խարոյկը անուշադրութեան մատնուած ծխում էր. և խորին խաւարի մէջ անորոշ հեռում լոկ բուն էր վայում չարաշուկ ու սարսուղացող թախիծով:

ՍԱԼՄԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԿ ՄԱՄՈՒԼԸ

Մահմեդական իրականութիւնը բնորոշող կարգ մը փաստեր առաջ բերեր էինք, անցեալ անգամ: Այսօր, մեր ընթերցողներու ուշադրութեան պիտի յանձնենք Չախմախ գիւղէն «Շարքի Ռուս»-ին գրուած թղթակցութիւն մը, որ շատ լաւ ցոյց կուտայ մեզի թէ գիտակցութեան ո՞ր աստիճանին վրայ կը գտնուի իսլամ հասարակութիւնը:

Թղթակիցը կը պատմէ թէ հրաւիրուած է եղեր պսակադրութեան մը հանդէսին, իրենց գիւղէն վեց վերստ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղի մը մէջ:

Աղջիկը ամուսնացնող անձը՝ անցեալ տարի, ուխտագնացութենէ (հաջ) վերադարձին հետ բերած անմահական (դէմզէմ) ջուրէն մէյ մէկ փոքրիկ բաժակ հանդիսականներուն հրամցուց: Հրաւիրեալներու գլուխը նստող անձը սրբազան ջուրը նստած խմելուն համար, միւսները անոր օրինակին հետեւելով նստած խմեցին: Ամեն մարդ խմել վերջացնելէ յետոյ, անմահական ջուրը՝ նստած՝ թէ հոգի վրայ խմելը «ընդունելի է»-ի մասին վէճ մըն է փրցուցին գիտնականները *) (իւլէմա): Մէկին խօսքը միւսը լսել, որտե՞ղ: Ամեն մէկը՝ Մարգարէին այս կամ այն վկայութիւնը առաջ կը բերէր: Մէկը նստած խմելուն կարելիութիւնը, միւսը կանգնած խմելուն անհրաժեշտութիւնը կը պաշտպանէր: Ամբողջ կէս ժամ իրենց ոսկի ժամանակը այս տեսակ վէճի մը մէջ վատնեցին: Այնուհետեւ «գիտական խորհրդակցութիւն» տիտղոսին տակ կարգ մը խնդիրներ վիճաբանութեան ասպարէզ բացին: Վիճաբանութեան պարկան՝ այսինչ կամ այնինչ բանը կրօնապէս թոյլատրելի, ընդունելի է թէ դատապարտելի է-ն կը կազմէր:

Քիչ յետոյ լուսանկարի խնդիրը մէջտեղ ելաւ: Լուսանկա-

*) Մահմեդականները գիտութիւն ըսելով կը հասկանան միայն կրօնի գիտութիւնը, այն ալ կրօնքի գիտութեան ոչ էական մասը, այլ ծիսակատարութիւնը, այնպէս որ «գիտական խորհրդակցութիւնը» պէտք է կարգաւ «ծիսագիտական խորհրդակցութիւն»:

րուիլը և լուսանկարին նայիլը թոյլատրելի՞ է թէ ոչ: Լուսանկարը հեթանոսական պատկեր պէ՞տք է համարել թէ ոչ: Այս մասին նորէն աղմկալից կերպով վիճաբանելէ յետոյ, մեծամասնութեան քուէով արգելուած ըլլալուն վճիռ տրուեցաւ: Ներկայ եղողներէն մոլլա մը. «Ես լուսանկարով հանուած պատկեր մը ունիմ. լուսանկարուեցայ ասն նպատակով որ գիտնամ թէ ժամանակ յետոյ ինքզինքս որքան փոխուած պիտի գտնեմ»:

Կըսէ: Այս խօսքերուն վրայ խնդիրը բոլորովին տարբեր հանգամանք ստացաւ: Լուսանկարուիլը նկատուեցաւ ուղղակի ծանր մեղք մը և այդ պատճառով խեղճ մոլլան անհաւատ դատեցին: Լուսանկարին հարամ չըլլալը ապացուցանելու համար ոմանք մատնացոյց ըրին 25, 50 և 100 բուլլիանոց թղթադրամները, որոնց վրայ պատկերներ կան, բայց այդ ապացոյցը չընդունեցաւ, որովհետեւ թղթադրամներու պատկերները նկատեցին ստիպուած ի հարկէ. և դուրանի մէկ վկայութեամբը նոյնիսկ վճիռ տուին թէ հարկադրանքի պարագային պատկերը արդարանալի է:

*
* *

«Շարքի-Ռուս»-ի նոյն համարին մէջ Օրէնբուգէն «Թաթար օղլու» ստորագրութեամբ նամակագիր մը ցանկութիւն կը յայտնէ, որ Հեռաւոր Արևելքի պատերազմին մասնակցող իսլամ զինուորները իրանց կրօնական մխիթարութենէն չզրկուին: «Հայրենիքէն հեռու, իրենց հօրմէն ու մօրմէն, զաւակներէն ու ընտանիքներէն զրկուած՝ Եալու գետի ափերուն վրայ, Մանջուրիայի անապատներուն մէջ վիրաւոր ու մահամերձ մեր դժբախտ կրօնակիցներուն բերանը թ՛վ կաթիլ մը ջուր պիտի կաթեցնէ: Ո՞վ զանոնք պիտի սփոփէ և մեր սուրբ կրօնի պատուէրը թ՛վ պիտի գործադրէ անոնց վերջին շունչին: Ուրիշ ազգերու հոգևոր անդամները ամեն տեսակ նեղութիւն ու տանջանք յանձն առնելով պատերազմի բեմը կ'երթան. ինչո՞ւ այնտեղ ներկայ չըլլայ թուրք հոգևորական մըն ալ: Մեր կառավարութիւնն արդար է. թէ մեր հայրենիքին մէջ և թէ պատերազմի վայրը մեզի թոյլ կու տայ կատարել մեր կրօնական ամեն տեսակ գործողութիւնները:

*
* *

Թուրք թերթի № 52-ի մէջ «Մեր իրաւունքը ինչո՞ւ չենք պահանջեր» վերնագրին տակ հետաքրքիր յօդուած մը կայ: Հե-

դինակը՝ Փաիգ Նաման Ջատէ՝ այն միտքը կը յայտնէ, թէ իսլամները իրենց տգիտութեան, անփութութեան շնորհիւ կը ձգեն որ իրենց կարգ մը իրաւունքները ոտնակոխ ըլլան, կորսուին: «Մեր ժամանակին մէջ, մեզի պէս դատարկ երեակայութեամբ, ցնորքներով ապրող, առիթէն օգուտ չքաղող գուցէ ոչ մէկ ազգ կայ»: Յօդուածագիրը կը նկատէ որ թուրք ունեւոր երիտասարդութիւնը իր ազգով, իր ազգի ապագայով այնքան չի հետաքրքրուիր, որքան, օրինակ, Թիպէտի արշաւանքի մանրամասնութիւններով, Ջեմրէշլենի ճառերով, ռուս-ճապոնական պատերազմի դէպքերով:

Պատմական ճշմարտութիւն մըն է, որ յաղթուող ազգերը իրենց պարտութենէն յետոյ իրենց աչքը կը բանան, իրենց թերութիւնները կը տեսնեն և կ'աշխատին կրթութեամբ իրենց սխալներն ուղել: Այսպէս եղաւ քրիստոնէաներուն համար, երբ յաղթուեցան ափ մը կը թուած (?) միւսիւմաններէն: Եւրոպայի համար, այդ պարտութիւնը կրթութեան և երջանկութեան ըսկզբնակէտն եղաւ: Մենք մահմեդականներս, որ երկու, երեք հարիւր տարիէ իվեր ամեն կողմով պարտութիւն կը կրենք, մեր կորցուցածը շահելու և նորէն գիտութեամբ զօրանալու համար ցորեկը չէ, գիշերն իսկ աշխատելու պարտաւոր ենք. այս մասին պնդելն անգամ աւելորդ է:

Այս խօսքերէն յետոյ յօդուածագիրը կը հաստատէ, որ Ռուսիոյ զթասիրտ թագաւորն ու պետական մեծ մարդիկը՝ այս օրերս, դէպի թուրքերն ունեցած իրենց վստահութիւնն ու յարգանքը աւելցուցած են: Ու ատիկա մահմեդականներուն համար մեծ բարիք մը և քաջալերութիւն մըն է, որպէսզի նոյն շաւղով գործեն:

«Մենք Ռուսաստանի մահմեդականներս, մեր կառավարութեան արդարութեան հանդէպ ամեն ժամանակ հաւատարմութիւն ցոյց տալը մեզի համար պարտք մը կը ճանչնանք. և պատերազմի այս նեղ օրերուն մէջ ամեն տեսակ օգնութիւն և նպաստ հասցընել և մեր ազնիւ զգացումներն ու հաւատարմութիւնը աստիճան մը ևս աւելցնելը լաւ գիտենք: Այս կէտը, ոչ թէ դատարկ խօսքերով, այլ մեր վերաւոր հայրենակիցներուն ի նըպաստ ամեն կողմը հաւաքած մեր փողերով, կատարած աղօթքներով հաստատապէս ապացուցինք: Այս պատճառաւ, մեծ պարծանքով և համարձակութեամբ արար աշխարհին կ'ուզեմ յայտնել, որ ռուսերէն յետոյ մեր կառավարութեան և հայրենիքին հաւատարմութիւն ցոյց տուող այսչափ այլազան ազգերու ամենաառաջինը մենք մահմեդականներս ենք: Նոյնիսկ ռուս լրագիրներու հաստատածին նայելով, մէկ իսլամաբնակ

նահանգէն—մեր աղքատ հասարակութենէն—հաւաքուած նուիրատուութեանց գումարը, ամբողջ պոլեակներու նպաստէն աւելի է: Նոյն համեմատութիւնը կայ մեր և ուրիշ ազգերու նուիրատուութեանց մէջ:

Սուրմալու գաւառի նաչալնիկին պաշտօնական տեղեկագիրը ցոյց կուտայ թէ մինչդեռ գաւառի չքաւոր, աղքատ մահմեդականներէն 5—6,000 բուբլի հաւաքուած է, միւս ունեւոր ազգերէն հազիւ հազ 300 ռ. ժողովուած է. այս բոլորը ամեն մարդ «Շարքի Ռուս»-ի մէջ կարգացած և մեր հաւատարմութիւնը չափած է, կարծեմ: Պէտք է ուշադրութիւն դարձնել և այն բանի վրայ, որ այդ նպաստներուն մեծ մասը մեր ազգի գլխաւորները եղող կրօնաւորներու ջանքովը հաւաքուած են: Կարող եմ ըսել նոյնիսկ, որ մեր այս աստիճան ցոյց տուած պաշտպանութիւնն ու աղօթքներու միջոցով արտայայտած հաւատարմութիւնը և ազնիւ գործերը հիացուցած է շատ մը ռուս պաշտօնեաներ: Աւելորդ է խօսքն ընել իսլամ զինուորներուն, որոնք իրենց ռուս հայրենակիցներուն նման իրենց կուրծքով կը դիմադրեն թշնամու գնդակներուն և կ'աշխատեն հայրենեքի պաշտպանութեան: Ահա այնպէս թէ հոգիի և թէ ստացուածքի զոհաբերութեամբ վստահութիւնն ու յարգանքը շահած կառավարութիւննու օրէնքի շրջանակին մէջ մեզմէ ոչինչ չխնայելը գիտնալու ենք: Վստահ ըլլալու ենք որ մեր կառավարութիւնը դիւրութիւն պիտի ընծայէ որպէսզի սնամտութեամբ և երկիւղով մինչև հիմայ մեր կորցուցած ու մնացած իրաւունքները նորէն ձեռք բերենք: Ամեն ժամանակի և դրութեան մէկ պահանջ կայ: Ինծի այնպէս կ'երեւայ, որ հիմայ ժամանակը եկած է: Առիթը ձեռքէ չփախցնենք: Մեր վերակենդանութեան համար անհրաժեշտ եղած կարգ մը բաները կա՞մաց-կամաց մեր կառավարութենէն պահանջենք: Ամեն մարդ կը զգայ թէ, այսօր, մեր ազգին գլուխը հաշուըող մեր կարգ մը մոլլաները, ախունտները, կրօնաւորները ազգը դէպի թըշուառութիւն կ'առաջնորդեն: Այդ կրօնաւորներու բարեկարգութեան և յառաջադիմութեան շնորհիւ պիտի կրնանք ազգը ազատել կործանումէ: Պէտք է որ մեր բոլոր ուժով և կարողութեամբ աշխատենք զանոնք ժամանակի ոգիին և պահանջներուն համեմատ կրթել և դաստիարակել: Չյուսայատինք և ամբողջ Կովկասի համար «հոգևոր ուսումնարան» մը ստեղծենք:

Մեր ծխատէր մոլլաներու ապրուստը ժողովուրդի քահանայքէն կախուած չթողունք: Այսուհետև ամէն ինչ հաստատ ու կանոնաւոր դարձնենք: Հարկաւոր եղած զինուորներն ընենք, ռուս, վրացի, հայ հոգևորականներուն պէս, մեր ազգի հայրե-

բուն ապրուստի միջոցը նախապէս ապահովելու համար: Ժողովրդի գթութեան ու խղճին նայելու ժամանակ չէ: Կեանքը դժուարացած է: Ժամանակի պահանջը փոխուեցաւ: Մենք ալ անոր համեմատ փոխուելու և վարուելու ենք: Ապա թէ ոչ ապագային պարզ աղօթքներով մեր ուզածը չենք կրնար ձեռք ձգել:

Շատ մը քաղաքներու արհեստական, երկրագործական և քաղաքային ուսումնարաններու ծախքին մէկ մասը, գուցէ և մեծ մասը, մենք մահմեդականներս է որ կը վճարենք: Օրէնքով իրաւունք ունինք որոշ չափով ձրի աշակերտներ դնել այդ դըպրոցները: Բայց բանն այն է, որ մեր հասարակութեան աչք փակելովը, տեղական դատիւներու, մեր գլխաւորներու անուշադրութիւնովը, մեր այդ տեղերը, իրաւունքները ուրիշները կը գրաւեն: Աչքերնիս չորս բանալու ենք և աշխատելու ենք որ մեր ազգի զաւակները մտնեն ուսու դպրոցներ: Ժողովուրդն ալ դրդելու ենք, վարժեցնելու ենք այդ բանին: Որովհետեւ, հիմայ, ուսու դպրոցներէն խրտչելով՝ մեր ուսման բուրաստանին մէջ գալիք ջրի էն զօրաւոր ակը կը կտրենք:

Մեր զաւակները մէկ կողմէ ուսու դպրոցները ուղարկելով հանդերձ, ուսու դպրոցները չգնացողներուն համար ալ ամեն քաղաքի, ամեն մեծ գիւղի մէջ մասնաւոր դպրոցներ բանանք: Բազմացնենք մեր եւրոպաձև դպրոցները, Կենդանացնենք քայքայման մօտ եղող մեր մէտրէսէները: Այս մասին ալ երկուդ կրելու տեղի չկայ. օրէնքը թոյլ կու տայ: Միայն թէ այդ օրէնքը գիտնալով՝ անոր համեմատ պէտք է աշխատենք: Եթէ երբէք լինին—թէն չի լինիր—օրէնքին անձանթ պզտիկ պաշտօնեաներ, որ արգելք յարուցանեն մեր այդ տեսակ գործերուն դէմ, դիմենք մեծերուն: Ամեն քաղաքի մէջ անպատճառ ու անպայման, աժանագին, նոյնիսկ ձրի, գրադարանընթերցարաններ բանանք. երկինքէն աստղեր վար առնելու, «Ֆինիսուանչէն»-էն լուրեր փնդուելու տեղ, ժամանակէն, առիթէն օգուտ քաղելով՝ մեր աչքին տակ գտնուող ազգային կարիքներուն, մեր տխուր վիճակին դարման փնդուենք, գտնենք: Ինչո՞ւ կարևոր հարցերով չենք զբաղուիր, ինչո՞ւ մեր իրաւունքը չենք պահանջեր»:

*
* *

Մենք երկար խօսած էինք, մեր նախորդ յօդուածներուն մէջ, այն կէտ, նոյնիսկ վիրաւորական բանակոտի մասին, որ «Շարքի Ռուս»-ն ու «Կասպի»-ն մղեցին իրարու դէմ: Յայտնի

է թէ Մէհմէտ Աղա Շահթաթինսկին ինչ ծանր մեղադրանքներ բարդած էր մասնաւորապէս Աղայեւի, «Կասպի» լրագրի գլխաւոր աշխատակցին վրայ: Աղայեւը՝ Մէհմէտ աղայի համար, սկզբունքէ, բարոյականէ, համոզմունքէ զուրկ մարդուկ մըն էր, որ իր գոյութիւնը կը պահպանէր սուտի, զրպարտութեան, խաբեբայութիւններու ուժով՝ «Ալիին գլխարկը Վէլիին գլուխը դնելով, Վէլիին գլխարկը Ալիին գլուխը»:

Արդ, տեսարանն այժմ փոխուած է: Ողբերգութեան յաջորդած է զաւեշտութիւն: Երկու ախոյեանները՝ «Շարքի Ռուս»-ի 60-րդ համարին մէջ, սրտաշարժ փութկոտութեամբ մը կը համբուրուին: Սկզբունքի խիստ պաշտպան Մէհմէտ աղան, իր թերթին մէջ հիացումի ծաղիկներ շաղ կուտայ սկզբունքէ զուրկ Աղայեւի ոտքերուն առջև: Կամ ինչպէս ժողովուրդը կ'ըսէ. թիւրք թերթի խմբագիրը «իր թքած թուքը կը լիզէ». յիշեալ համարին մէջ Աղայեւին նուիրուած չափազանց դրուատալից յօդուած մը, պանծիւրիկ մը կը հրատարակէ, որը առնուազն մեր ծիծաղը կը շարժէ: Աղայեւը այդ յօդուածին մէջ «ազգասէր» մըն է «բարձր կարողութիւններու տէր» «խոշոր անձնաւորութիւն մը: Եւ յօդուածագիրը կը փափաքի որ «իր բոլոր կրօնակից եղբայրները, առիթը չսպաննելով այդ ազգասէր, մեծ ձիւքերով օժտուած գրողին աշխատութիւններէն, գրած գործերէն ժամանակին օգտուին»: Ու ցոյց տալու համար հերոսն իր ամբողջ փառքին մէջ, յօդուածագիրը անոր կենսագրութիւնը կ'ընէ: Աղայեւ ընիկ զարաբաղցի՝ Շուշիի բէալական դպրոցը աւարտելով հանդերձ, շատ գեղեցիկ կերպով կը սորվի թուրք, պարսիկ, արաբ լեզուներն ու գրականութիւնները: Այդքան կրթութեամբ, ընդհանրապէս բաւական էր թէն «գիտուն» անունը վաստկելու թուրքերուն մէջ, բայց «ուսման այդ սիրահարը» Ֆրանսա կ'երթայ զարգացնելու համար իր «աստուածապարզ կարողութիւնները»: Այնտեղ Ֆրանսայի ամենէն նշանաւոր համալսարանը՝ Սորբոն կը մըտնէ: Գիտութեան և գուարճութեան ընդարձակ ասպարէզ եղող Ֆրանսայի մէջ ևս աշխատութեան և բարի վարկի՝ չափամէտ ըլլալով՝ համալսարանը կ'աւարտէ և այդ կերպով կ'ապացուցանէ, թէ Կովկասի մահմեդականները—եթէ ուզեն և աշխատին—կարող են ֆրանսիացիներուն նմանուիլ: Կովկաս վերադառնալէ քիչ յետոյ կը մտնէ «Կասպի» մէջ և ամեն մարդու հաճելի և օգտակար ձևով մը կը գրէ: Իսլամական կեանքի մասին գրած յօդուածները մանաւանդ խկապէս հազուագիւտ են: Աղայեւը պարզեր է մահմեդականներուն առջև «նորանոր աշխարհներ», «բարձր նպատակներ», «նուիրական գործեր»: Ահա

այսպէս «Ալիի քուհը Վէլիին և Վէլիինը Ալիին գլուխը դնող» Աղայեւը 15 տարիէ ի վեր կը գործէ Կովկասի մամուլին մէջ իր «խօսուին գրիչովը», «ընդարձակ ծանօթութիւններովը», «հեռատես, խորաթափանց հայեացքովը», «արագ արտադրութեամբը», «հաստատ կարծիքներովը» և «ազգասիրութեամբը»:

Մէկ խօսքով՝ Աղայեւը՝ դատելով այդ յօդուածէն, թուրքերուն մէջ ընկած հրաշք մըն է: Եւ յօդուածագիրը՝ չափազանց համեստ՝ կը գտնէ որ բաւական պերճախօսութիւն չունի երգելու համար, ինչպէս որ պէտք է, այդ հրաշքը: Իր ցանկութիւնն է միայն Աղայեւի «սփռած գոհարներուն»—յօդուածներուն տեղը մատնանիշ ընել: Մանաւանդ կը փափագի «որ Սիբիրի, Սամարղանտի, Կազանի, Օրէնբուրգի, Ուֆայի և այլն կողմերը բնակող և ուր լեզուին ծանօթ իսլամ եղբայրները առիթը չսպաննելով՝ Բագուի մէջ ամեն օր հրատարակուող և տարեկան բաժանորդագիրնը 8½ ռուբլի եղող «Կասպի» լրագիրը կարդան և անկէ օգուտ քաղեն»:

Շատ լաւ: Բայց այս ռեկլամ-պանծիւրիկը՝ քանի մը առիւտ առաջ ցեխը կոխուած պաշտօնակցի մը և անոր գլխաւոր աշխատակցի հասցէին՝ մեր մտքին մէջ հարցում մը կը ծնեցնէ: Կամ այն է որ Աղայեւը շիտակ, ազնիւ գործիչ մըն էր և «Շարքի-Ռուս»-ը զայն անուանարկեց և զրպարտեց: Եւ կամ Աղայեւը իսկապէս անազնիւ, անսկզբունք և բախտախնդիր մէկն էր և «Շարքի-Ռուս» ճշմարտութիւնը խօսեցաւ: Արդ, ո՞րն ուղիղը: Երկրորդ՝ Մէհմէտ աղան ի՞նչպէս պէտք է բնորոշել, զրպարտի՞լ թէ իր սեփական սկզբունքին, ուղղութեան դաւաճանող: Ամեն պարագայի պատասխանը հետաքրքիր էր:

*
*
*

Կանանց կրթութեան մասին ինչ ընդհանուր կարծիք կը տիրէ մահմեդական ժողովրդին մէջ—բացատրելու կարիք չկայ: «Շարքի-Ռուս»-ը իր 65-րդ համարով քայլ մը աւելի առաջ կ'երթայ և կը պահանջէ, որ թիւրք աղջիկները ոչ միայն սկըզբնական, միջնակարգ կրթութիւն ստանան, այլ և հետամտին պրոֆեսսիօնալ կրթութեան, ինչպէս դայեակ—մանկաբարձութեան, բժշկականութեան: Յօդուածագիրը կը պատմէ թէ հաւաքոյթի մը մէջ հանդիպեր է վրացուհի մը, որ Թիֆլիսի մանկաբարձական ուսումնարանը նոր աւարտած է եղեր: Խօսակցութեան մտնելով իմացեր է, որ այդ դպրոցը կը յաճախեն վրացիներ, հայեր, ուսմաներ, հրէաներ: Ուրեմն այդ յաճախողներու մէջ մահմեդական աղջիկներ չկան, կը հարցնէ:—Ո՛չ

չկայ, մինչև հիմա ոչ մէկ մահմեդականի աղջիկ այդ դպրոցը
չէ մտած երբէք, կը պատասխանէ վրացուհին: Թուրք թերթը
խորհուրդ կուտայ մահմեդական աղջիկներուն սորվիլ մանկա-
բարձութիւն, բժշկականութիւն և ուրիշ «օգտակար գիտութիւն
վր, արհեստ մը», որպէսզի հասարակութեան օգնեն: «Այժմեան
վիճակով և ուղղութեամբ չենք կրնար փրկուիլ: Պէտք ու ան-
հրաժեշտ է որ մենք ալ մեր դրացիներուն պէս մեր գործը
գիտնանք»:

ՏԻՓՐԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

ԲԱՐԻՉԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Եւրոպական յունիսի 30-ին «Société des artistes Français» և «Champs-de-Mars»-ի «Սալոն»-ները իրենց ղուռները փակեցին երկու ամսուայ ժամանակամիջոցի մը մէջ իրենց բազմաթիւ սրահներու մէջ ընդունելով 600,000-է աւելի այցելուններ: Գրել մանրամասնաբար ցոյց դրուած հազարաւոր նկարներու, արձաններու, գծագրութիւններու, «օֆորթ»-ներու մասին՝ անկարելի է այն միակ պատճառով, որ երկու ամիսը նոյնիսկ ամբողջովին նուիրելով այդ ըննութեան, բաւական չէր ըլլար:

Բայց և այնպէս կը յուսամ թէ հետաքրքիր կ'ըլլայ նա յուացք մը ձգել այդ յարատե ու անդուլ աշխատանքի գեղեցիկ հաւաքածոյին վրայ, թուուցիկ կերպով նկատելով այն գեղեցիկ կտորները՝ որոնք արժանացան ընդհանուր ուշադրութեան:

Եւ բան մը որ աւելի մեզ կրնայ հետաքրքրական դարձնել երկու «Սալոն»-ները, այդ հայ արուեստագէտներու մասնակցութիւնն է. մասնակցութիւն մը, որը իրաւամբ կրնայ պատուաբեր համարուիլ հայ հասարակութեան, մանաւանդ այս տարի՝ երբ՝ Փռանսական կառավարութիւնը զարձեալ խոստովանելով հայ ստեղծագործութեան զերազանցութիւնը, բազմաթիւ գործերու մէջէն հայ արուեստագէտի մը՝ պ. Է. Շահինի մէկ «Dessin»-ը կը գնէ, զայն Լիւքսեմպուրկի թանգարանին յատկացնելու համար, ուր ապահովապէս պատուոյ տեղերէն մէկն է որ պիտի գրաւէ:

Փոքր չափով, ածուխով գծուած՝ բարիղուհիի գլուխ մ'է, գլուխ մը, որու մէջ պ. Շահին գիտցած է դնել բարիղուհիին այն առեղծուածային նայուածքը, որու մէջ գուցէ ամենավարժ հոգեբաններն անգամ վարանին կարգալ. նայուածք մը ուր ամէն բան կայ, որ կը քաշէ, կը մագնիսացնէ, կը խոստանայ... վերջապէս նայուացք մը, որու զաղտնիքը բարիղցի «Demi-Mondain»-էն յետոյ... պ. Շահինը միայն գիտէ, որը յաջողած է ածու-

խի մի քանի ազատ գիծերով՝ որոնք սակայն անհուն նրբութիւն մ'ունին՝ թուղթին վրայ կենդանացնել, խտացնել այդ նայուածքի դժուարին բանաստեղծութիւնը: Բացի այդ պ. Շահին ցոյց է դրած 4—5 ուրիշ գործեր, որոնք շատ քիչ տարբերութիւններով ուժեղ գործեր են, շնորհալի ու վարժ ձեռքով մը նկարուած:

Պ. Շահին, որ մինչև այժմ կը ցուցադրէր «Société des Artistes Français»-ի մէջ, առաջին անգամ ըլլալով մասնակցած է «Champs de Mars»-ի «Սալոն»-ին և ուր հաճոյքով կը լսենք թէ «Sociétaire» ընտրուած է:

Պ. Է. Շահինին միայն շնորհաւորել կարելի է այդ մեծ յաջողութեան համար, որը իր միւս յաղթանակներուն վրայ կու գայ մէկ նորն ալ աւելցնել, բարձրացնելով նոյնպէս հայտնադանդին մակարդակը գեղարուեստի այժմեան օրրանին մէջ:

Հայ իգական սեռն ալ իր ներկայացուցիչը ունի գեղարուեստից տաճարին մէջ՝ ուր օր. Պապայեան ցոյց դրած է կանացի դէմքեր ներկայացնող երկու կտաւներ, որոնք նկարուած են Քառուիէոսի հետևողութեամբ՝ ամպոտ և անորոշ շրջագծերով ու գրեթէ գորշ միագոյն, թէպէտ ունենալով առանձին շնորհ մը, նրբութիւն մը, որը սակայն աւելի տղաւորիչ կ'ըլլար՝ եթէ միանար գոյներու նուրբ և հարուստ խաղի մը:

Ամեն պարագայի մէջ կը կարծեմ թէ օր. Պապայեան ինքնուրոյն կերպով գծելով իր ուղղութիւնը՝ առանց հետևելու այս կամ այն նոր հոսանքին, որոնք հազիւ թէ կարողանան իրենց գոյութեան իրաւունքը պաշտպանել, աւելի հետաքրքրական կը դառնար:

Պ. Զաքարեան՝ ինչպէս միշտ՝ պատուոյ տեղերէն մէկը կը գրաւէ իր 4 փոքրիկ «Nature-Morte»-երով, որոնց մէջ վարպետի վրձինը իր ոյժը դրած է անհերքելիօրէն, դեղձերու թաւշապատ փափկութիւնը, միսերու հիւթեղ ու ճիշտ վերարտադրումը, գաւաթներու թափանցկութիւնը աւելի ճիշտ կերպով հազիւ թէ կարելի ըլլար պատկերացնել: Եւ պ. Զաքարեան միշտ պատուոյ տեղը պիտի պահէ այդ ճիւղին մէջ՝ ապացոյց՝ որ իր գործերէն մէկը երկար ժամանակէ ի վեր արդէն կը գտնուի Լիւքսենպուրկի թանգարանին մէջ, իբր արդի գեղարուեստի գոհարներէն մէկը:

Բան մը միայն՝ որ զիս վարմացուց. այդ իր ստորագրւելու եղանակն է:

Հպարտ պիտի զգայի ինձ կարգալով այդ վարպետի գործերուն տակ փոխանակ երկու սկզբնատառերու, պ. Զաքարեան

նի ամբողջ ստորագրութիւնը՝ որը ապացոյց մը պիտի ըլլար իր վերջաւորութեամբ՝ հայու գործ մը ըլլալուն, հետեաբար պ. Զաքարեանի տաղանդին վրայ հիացող ամեն մի օտարակա-
նի մտքին մէջ պիտի ծնեցնէր և մասնակի հիացում մը ան-
աղգին հանդէպ, որը իր աննախանձելի պայմաններուն մէջ
իսկ կրցած է ոյժեր արտադրել՝ և որուն պատկանելու պատի-
ւը ունի պ. Զաքարեան...

Այդպէս չէ վարուած պ. Շապանեան, որ բաւական մեծ
դիրքով կտաւ մ'էստորագրած այս անգամ, ուր լուսնոյ շողե-
րուն տակ հանդարտ ծովը կը փռուի թեթև ծփանքներով, ո-
րոնք կու գան համբուրել ծովու գրկախառնումին յառաջացող
սև ժայռերու մերկ կուրծքերը: Նկարին մէջ կը զգացուի գիշե-
րային անդորրութիւնը, որը սակայն աւելի խորհրդաւոր պի-
տի դառնար, եթէ գիշերուան մը համար այդքան պայծառ ե-
րանդներով նկարուած չըլլար:

Պ. Տիրանեան դժբախտաբար չէ մասնակցած ներկայ
«Սալոն»-ին՝ ուր հետաքրքիր պիտի ըլլար զինքը տեսնել:

Այս չորս ցուցադրողներով հայ արուեստագէտներու թիւը
կը փակուի փոքր «Սալոն»-ին մէջ, ուր ֆռանսացի և օտար
վարպետներու գործերու քով երբեմն կ'երևին նոյնիսկ անհաս-
կանալի ըլլալու աստիճան տարօրինակ ու անճշակ նկարներ:
Օրինակ Քառուիւս-Տիւռանի՝ նուրբ ու ճոխ գոյներու բանաս-
տեղծին քով Ժան Պեոսի մը կտաւը, որու տակ իրաւամբ մէ-
կը մատիտով գրած է «horreur!» (սոսկում) և հազիւ թէ այդ
նկարներու ներկայութիւնը հասկանալի ըլլայ այլապէս՝ բայց
եթէ խնամիական կապերու գոյութիւնը՝ որը պատուաբեր չէ
անշուշտ՝ և որը այնքան գեղեցիկ կերպով հրապարակ է հա-
նած Զոլա իր «l'Oeuvre»-ի մէջ՝ և ազատ մտածողներու, ան-
կախ աշխատողներու մեծ տեղ մը տրուիլը, որոնք սակայն ի-
րենց տպաւորութիւնները, գաղափարները արտայայտելու ե-
ղանակին մէջ երբեմն հասած են ծայրայեղութիւններու:

Քառուիէն՝ օր. Պապայեանի ուղղութեան հեղինակը ցու-
ցադրած է չորս նկարներ՝ միշտ հաւատարիմ իր ուղղութեան՝
և որոնց միայն ընդհանուր տեղեկութեան ու մեղմութեան մէջ
մարդկանց աչքերը տարօրինակ ուժով մը սև կէտեր կը դը-
նեն:

Անշուշտ վարպետը իր մտածելու եղանակը ու պատճառ-
ները ունի՝ որոնք զինքը մղած են այդպէս արտայայտելու՝
և որը սակայն կրնայ աստիճան մը վիճելի ըլլալ:

Արձաններու բաժնին մէջ՝ Ռոտէն՝ յայտնի վարպետը ձու-
լած է պղնձէ հսկայ արձան մը «le Penseur» (Մտածողը), որը

իր պատուանդանին վրայ նստած, ձեռքը ծունկին ու կզակը ափին մէջ, նայուցողը յառած անորոշ կէտի մը, անհունութեան անլուծելի գաղտնիքները մտածել կը թուի:

Լայն, հսկայական ուժեղ բան մը կայ այդ գործին մէջ, որ մտածել կու տայ:

Եւ ահա ինչպէս կը բացատրէ հեղինակը իր գլուխ-գործոցի մարմնացումը՝ որ փոքրիկ պատմութիւն մ'ունի.

«Վերջերս «Դժոգքի դուռ»-ի մը ծրագիրը կը կազմէի, ուր դուռն առաջ՝ ժայռի մը վրայ նստած Տանդէ խոր մտածումներու մէջ իր բանաստեղծութեան ծրագիրը պիտի խորհէր: Իր ետեւ պիտի ըլլային Խեղդիկ, Ֆրանցէսքա, Բաօլօ, վերջապէս «Աստուածային Կատակերգութեան» բոլոր անձնաւորութիւնները:

Սակայն այս գաղափարս չիրագործեցի:

Նիհար ու չոր, իր պարզ ու շիտակ պատմութեան մէջ, ընդհանուրէն զատուած, իմ Տանդէն նշանակութիւն մը չպիտի ունենար:

Իմ նախկին ներշնչումէն առաջնորդուած ուրիշ «Մտածող» մը ծրագրեցի: Մերկ մարդ մը, ժայռի մը վրայ նստած՝ որ կզակը ափին կը մտածէ: Արդիւնաբեր մտածումը յամբարար կը ծաւալի իր գանգէն: Երագող մը չէ սա, այլ ստեղծագործող մը... ահա ինչպէս շինեցի արձանս»:

Եւ Ռոտէնի «Մտածող»-ը քիչ ժամանակէն շնորհիւ խումբ մը պետական ու գեղարուեստի աշխարհին պատկանող անձնաւորութիւններու փափաքին, Բարիզի հրապարակներէն մէկուն վրայ պիտի տրուի, ուր Բարիզը՝ այդ յար մտածող, ստեղծագործող քաղաքը ներկայացնող խորհրդանշանը պիտի ըլլայ:

Նախապէս յիշած պատճառներով մանրամասնաբար թուել բոլոր աչքառու գործերը անկարելի է:

«Société des Artistes Français»-ի մէջ հայ գեղարուեստը ներկայացուած է երկու նկարիչներով միայն:

Պ. Քիւրքճեան՝ որ երկրորդ անգամ ըլլալով կը ցուցադրէ, ստորագրած է փոքրիկ կտաւ մը: Պատուհանին առաջ՝ սենեակին կիսաստուերով պաշարուած՝ աշխատող կին մ'է, որուն զիմագիծը մութ գիծերով կը նկարուի պատուհանին տփոյն լուսաւորութեան վրայ: Կեանքէն առնուած իրական կտոր մ'է, որ զուրկ չէ տեսակ մը բանաստեղծութենէ՝ անկեղծօրէն զգացուած ու արտայայտուած, առանց աւելորդ «effet»-ներու:

Բան մը որ ցաւալի է, այդ միջոցներու սղութիւնն է, որը արգիլած է մինչեւ այսօր երիտասարդ նկարչին արտադրել աւելի բարդ գործեր, ուր նկարիչը իր կազմելու, ներդաշնակելու, լայն ու ազատ կերպով աշխատելու բոլոր կարողութիւններով հրապարակ կու գայ, և որոնք ապահովաբար պիտի կըրնար պատուաւոր կերպով գլուխ հանել պ. Գիւրքճեան, ցոյց տալով դեռ այնպիսի յատկութիւններ, որոնք այդ աննպաստ պայմաններու պատճառաւ անյայտ են մնացած: Յանկալի էր յառաջիկայ «Սալոն»-ին պ. Գիւրքճեանին դիտել աւելի մեծ ու պատասխանատու նկարի մը մէջ, որուն արտադրուելուն նպաստաւոր պայմաններու ստեղծուիլը ի սրտէ կը մաղթենք:

Պ. Գրիգորեան ցոյց է դրած Լուվրի Թանգարանին ներքին մէկ մասը նկարուած շատ ուղիղ, մաքուր և խնամուած գիծերով, ուր պողպատեայ քանդակուած դուռը իր ամեն մանր-րամանութիւնները ունի. թէպէտ ընդհանրապէս այդ աշխատութեան ձեւը առաջ է բերած նկարին մէջ չորութիւն, մինչդեռ ցուցահանդէսի մէկ ուրիշ սրահին մէջ ցոյց է դրուած Պեռոտի մէկ գործը, նոյնպէս Լուվրի մէկ մասը «Rubens»-ի սրահը ներկայացնող մէկ նկարը, ուր սակայն գոյներու ճշտութիւնը, երանգներու աստիճանաւորումը և արժէքը, սրահին մէջ վերէն մաղուող առատ և հաւասար լոյսը այնքան ճշտօրէն են վերարտադրուած, որ իրականութեան կատարեալ զգայնութիւնը կու տան դիտողին նոյնիսկ խաբուելու աստիճան, կարծելով գտնուած սրահի շարունակութիւնը տեսնել նկարին մէջ, և ցանկութիւն մը տալով շրջանակէն ներս մտնելու: Աշխատելու եղանակներու մէջ շատ մեծ տարբերութիւն մը կայ: Պ. Գրիգորեանի «Interieur»-ը աւելի մաքուր ու նուրբ գիծերով է նրկարուած, մինչդեռ Պեռոտ աւելի ուշադրութիւն է դարձուցած դոյներու արժէքի և ներդաշնակութեան՝ առանց շատ մանրամասնութեան մէջ մտնելու, և այդ աշխատելու եղանակը նկարին տուած է տեսակ մը հիւթեղութիւն և կեանք, որը թեթեւապէս կը պակսի պ. Գրիգորեանի նկարին մէջ:

2-րդ մետայլի (hors concours) արժանացած են բաւական թուով դորժեր, որոնց մէջ պատուոյ տեղը կը բռնէ Կառուղիի գիշերային մէկ տեսարանը: Գիւղական տօնավաճառ է, խառն ի խառն սայլերու, կառքերու մէջտեղ, նկարի առաջին աստիճանին վրայ կանգնած են երկու սպիտակ ձիեր, լուսաւորուած լուսնի յստակ լոյսով մը, գլուխնին կախած, յոգնած դիրքերով: Հեռուն գիշերային անորոշութեան մէջ անհետացող սայլերու շաղպատումին մէջէն կարմիր լոյսեր իրենց կէտերը կը դնեն, մարդկանց և ձիերու մարմիններէն մասեր թեթեւապէս

լուսաւորելով ու այդ բոլորի վրայ լուսնի լուսաւորութեան գեղեցիկ անդրադարձում մը, հաւասար, հանդարտ ու վարպետ աստիճանաւորումներով: Գիշերային բանաստեղծութեան գեղեցիկ կտոր մը, որու երիտասարդ հեղինակը 2-րդ մետայլէ վատ՝ որը իրեն *hors concours* (անմրցելի) ըլլալու առանձնաշնորհումը կը տայ՝ ստացած է *bours de voyage*-ի 3,000 ֆռ. մրցանակը և բախտը ունեցած է իր գործը կառավարութեանէն գնուած տեսնելու: Նախանձելի յաջողութիւն մ'է այդ որուն արժանացած է իրաւամբ:

Գրեթէ միևնոյն յաջողութեամբ նկարուած է Հառէօի գիշերային մեծադիր մէկ նկարը, ուր դարեձալ լուսնի լոյսի տակ գիւղական փողոցի մը մէջէն կովերու հրամակ մը կ'անցնի հանդարտ քայլերով: Լոյսի և ստուերի գեղեցիկ ու ճիշտ վերարտադրում, գիծերու շնորհ, նկարելու վարժ և ուժեղ եղանակ մը, ահա այն բոլորը՝ որոնք արժած են հեղինակին Ռոզա Պոն-հէօի մրցանակին և կառավարութեան ուշադրութեանը՝ որը գնած է զայն, անշուշտ թանգարանի մը յատկացնելու:

Ժան-Բօլ Լոռանս՝ մեծ վարպետը՝ ցոյց է դրած մեծագիւր նկար մը՝ «Գործարանէն վերադարձը», որը գործարանական կեանքին տխուր դրուագներէն մէկն է, արտայայտուած կորովի և զգացուած վրձինով մը: Անտարբեր կարելի չէ նայել այդ սև ամբողին՝ որ զառիվայրէ մը վար կ'իջնայ յոգնած, ոտքերը քաշքշելով, թևերը կախած: Մարդիք են ատոնք՝ մարդիք որոնց դէմքերուն վրայ ճարտար վրձինով մը դրոշմուած է տառապանքի կնիքը, կիներ, որոնց քով կանացի գրեթէ ոչինչ չէ մնացեր, և այդ բոլորը շրջապատուած է գործարաններու մխացող ծխնելոյզներու հեռապատկերով մը, նկարուած տխուր ու ճնշող գոյներով:

Իրապէս գործարանական աշխարհն է այդ, ստուռազդեցիկ կտոր մը այդ անծանօթ աշխարհէն՝ դրուած բարիգեան ազնուապետական և հարուստ դասակարգի աչքերուն առաջ, որոնց Ժան-Բօլ Լոռանսի հոնձարը կանգ պիտի տոնել տայ գիտելու համար այն բոլորը, որոնց գոյութիւնը կ'անգիտանան և որոնց պիտի չուզէին նշմարել իսկ իրականութեան մէջ:

Նոյնքան տխուր մտածումներ կ'արթնցնէ Գանքաուէի «Էկը-Ջին մտածումը»: Այստեղ աղքատ նկարչի կեանքի ողբերգութեան գրեթէ սովորական, անխուսափելի մէկ տեսարանը՝ վերջին տեսարանն է ցոյց դրուած անհունապէս յուզիչ ամբողջութեամբ մը: Վեցերորդ յարկի փոքրիկ սենեակ մ'է. մահճակալին վերայ՝ տփգոյն, այտոսկրները դուրս ցցուած՝ մազերու փունջ մը լայն ու դալկահար ճակտին, երիտասարդ նկարիչը իր կնոջ

բազումներու օգնութեամբ նստած է, անթարթ, խորունկ նա-
յուածքով մը դիտելով՝ գուցէ վերջին անգամ՝ իր կիսաւարտ
մէկ նկարը, որը իր դէմ կը բռնէ ընկեր մը, մինչդեռ բժիշկը
և խումբ մը ընկերներ տխուր, յուսահատ դիրքերով իր շուրջը
բոլորած են: «Վերջին մտածումն» է որ կ'անցնի մահամերձ
արուեստագէտին ուղեղէն: Արուեստի վերջին պլպլացող կայծն
է որ զայն վերջին ճիգով մը կը բարձրացնէ իր բարձին վրա-
յէն, դիտելու համար այն կիսաւարտ գործը, որ գուցէ դար-
ձեալ չպիտի գնահատուէր նախկիններուն նման: Միտ սեղմող
բան մ'ունի նկարը, որու առաջ մարդ ակամայ կանդ կ'առնէ,
նայուածքը կը մեխուի, մտածումը կը թռի այս հսկայ քաղա-
քի այն անթիւ վեցերորդ յարկերը՝ ուր այս տողերը գրած մի-
ջոցիս այնքան նոյնօրինակ տխուր տեսարաններ կը պարզուին,
այն վեցերորդ յարկերը, ուր ստեղծագործող միտքը կը տքնի
գիշեր ու ցերեկ որ կը հալի, կը մաշի զրկանքի ճիրաններուն
մէջ, և որը շատ անգամ դատապարտուած է Զօլայի՝ հերոսին
Claud-ի նման չհասկցուելու և, եթէ անողոք հիւանդութիւնը
դեռ չէ ընկճած, կիսախելագար՝ անձնասպան ըլլալու իր նկա-
րին դիմաց... Կառավարութիւնը գնած է Գանքառէի գործը,
որ ստացած է 3-րդ մետալ:

Մանրամասնաբար գրել իւրաքանչիւրի մասին անկարելի
ըլլալով կը բաւականանամ մատնացոյց ընել Լըբլէոքի մէկ
գործը՝ «Կաթ տուող մայրը»: Տժգոյն բայց ճիշտ գծուած կը-
տոր մ'է որ կառավարութենէն գնուելէ յետոյ ստացած է Պաշ-
քերցակի մրցանակը:

Հանիքոթի «Իրանց ծովը» ձկնորսներու կեանքէ մեծ
դիրքով նկար մը ուր ձկնորսներ եկած են իրենց ծովը դիտել
ձիւնի և սառի սաւանին տակ, լայն վրձինով մ'աշխատուած նը-
կար մ'է, որ 3-րդ մետալով պարգևատրուելէ յետոյ գնուած
է կառավարութենէն:

Տիւկաուտիէի «Ծովափին»-ը, ուր արևի տակ թեթև ա-
մառնային հագուստներով աղջիկ մ'է կանգնած առաջին մասի
վրայ, մինչդեռ հեռուն լողացողներ կը պատրաստուին ծով
մտնել, արևի ճիշտ և ուժեղ տպաւորութիւն մ'է ամբողջովին,
որ ստացած է 3-րդ մետալ և գնուած կառավարութենէն:

Կառավարութենէն գնուած կամ 3-րդ մետալ ստացած են
դեռ բաւական թուով գործեր որոնց երկար կ'ըլլայ թուել:

Արձաններու բաժնին մէջ պատուոյ մրցանակ (Medaille
d'honneur) ստացած է Պէքքէ իր «Խաչէն վար առնուած Յի-
սուս»-ին համար: 2-րդ մետալ ստացած և կառավարութիւնէն
գնուած է Բայլէնի «Երկու բարեկամներ»-ը, փոքրիկ սիրուն:

Հատոր մը, որը կապիկի մը գիրկը հանդարտօրէն քնացող փոքրիկ շուն մ'է, մինչդեռ կապիկը տարօրինակ լրջութեամբ և հոգածութեամբ մը զայն կը գիտէ. կատարեալ գործ մ'է, որը շատ է գիտուած:

Վիյյընէօվի «Մառսիյաս»-ը, «որը ուղեց Ապոդոնէն լաւ երգել, որուն համար Աստուածը զայն ծառի մը կապել տալով կաշին քերթել տուաւ, ցաւի աշնպիտի գալարումներ ունի՝ որը ակամայ սառսուռ կ'ազդէ գիտողին, և որու վարպետը արժանացած է 1-ին մետալի և կառավարութեան գնումին:

Ֆոնթէնի «Լետա»-ն՝ ուր կանացի մարմնի գիծերու նըրբութիւնը դժուար թէ կարելի ըլլար աւելի փափուկ և շնորհալի դուրս բերել մարմարին վրայ, գործ մ'է որուն մարմար ըլլալն հազիւ թէ կը զգայ գիտողը, և որը իրաւամբ ստացած է 1-ին մետալը:

Մաքս Պլոնտաի «Աւագանը» սիրուն և յաջող յղացում մ'է, որ արժած է իրեն 1-ին մետալէ զատ կրթութեան և գեղարուեստից նախարարութեան կողմէն տրուած Ազգային մըրցանակին (prix nationale): Փոքրիկ բարձրութեան մի վրայ երեք մերկ մանուկներ են, որոնք սիրուն գրկախառնումներով միացած, վարը, աւագանին եզերքը ելած երեք գորտերու կը նային:

Կառավարութիւնը գնած է մօտ 65,000 ֆռ.»-ի նկարներ և արձաններ, որոնք պիտի երթան հարստացնել ազգային թանգարանները:

Երկու «Սալօն»-ները միասին ունեցած են 365,128 ֆռ.»-ի հասոյթ մը մուտքէն գոյացած:

Դիտելու արժանի մէկ կէտը երկու «Սալօն»-ներու մէջ հաւասարապէս կրօնական գործերու գրեթէ բացարձակ պակասութիւնն է:

Այդ մաշուած ու փտած նիւթին տեղը զրաւած է առողջ և ուժեղ նկարչութիւն մը, որը տուած է լայն բաժին մը իրական կեանքի տեսարաններուն, գիտուած բնութեան շրջապատին՝ ապրուած կեանքին մէջ, և արտայայտուած անկեղծ համակրութեամբ մը. տեսարաններ ուր անցեալի սուրբերուն տեղ կը տողանցուին՝ այն առաւելապէս համակրելի դէմքերը, որոնց ձկնորս, հողագործ, երկաթագործ, բանուոր, գիւղացի համեստ անուններով կը կոչենք, տեսարաններ ուր անոնք կ'երևին իրենց տանջանքի կամ ուրախութեան վայրկեաններուն, երկուքին մէջ ալ համակրելի, երկուքին մէջ ալ միշտ ուշադրութեան արժանի:

Ֆռանսական կառավարութեան ներկայ ուղղութիւնը մե-

ծապէս ազդած է ֆոսնսական գեղարուեստին վրայ որու մեծութիւնը, ըրած ճիգերը և տարած յաղթանակները իրապէս ըմբռնելու համար պէտք է միայն ժօտէն տեսնել այն գործերու հսկայ հաւաքածոն, որոնք կը հաւաքուին երկու «Սալօն»-ներուն, Լուվրի, Վեռսայլի և Լիւքսենպուրկի թանգարաններուն մէջ՝ ուր արդէն կը հանգչին անթիւ գլուխ-գործոցներ:

Հ. ԱԼԻԱՆԱՔ

ՔՆՆԵՎԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԵԽՈՍՈՒԹԻՒՆ

Հիւրլմանի «Հին հայկական անուններ». (*Hübschmann. Die altarmenische Ortsnamen. Mit eine Karte. Indogermanische Forschungen XVI Bd. 3. 4. 5. Heftz.*).

«Հնդկագերմանական հետազոտութիւններ» անուն թերթի վերջին համարում (XVI Bd.) լոյս է տեսել Շտրասբուրգի համալսարանի ուսուցչապետ Հիւբշմանի «Հին հայկական տեղերի անունները» վերնագիրը կրող մի հետաքրքիր աշխատութիւնը, որի մասին հայ հետաքրքրուողներին համառօտ տեղեկութիւն տալը կարծեմ անտեղի չի լինիլ:

Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս, յարգելի բանասէրի աշխատանքի առարկան այս անգամ եղել է Հին Հայաստանի աշխարհագրութիւնը, որը հասցրել է մինչև 600 թիւը (Ք. յետոյ):

Հիւբշման իր այս աշխատանքը բաժանել է վեց հատուածների՝ 1. Հայաստանը մինչև 600 դարը (Ք. յետոյ). 2. Հայաստանի բնակիչները. 3. Հայկական գաւառների անունները. 4. Հայկական կանտոնների անունները. 5. Տեղերի անունների կազմուէլը. 6. Այբուբենական ցուցակ այն տեղերի անունների, որոնք ամբողջովին կամ մասամբ բացատրելի են:

Առաջին և երկրորդ հատուածներում Հիւբշման համառօտակի յիշում է հայոց պատմութիւնը, Հայաստանի հին բնակիչները, Հայաստանի մասերի բաժանուէլը ևայլն: Հիւբշման հիմնուած ասորական և քաղդէական սեպաձև արձանագրութիւններից ստացած տեղեկութիւնների վրայ՝ ընդունում է, որ

հայերից առաջ Հայաստանում բնակուելիս է եղել մի ժողովուրդ, որը խալդեր կամ քալդեր (Neumann) էր կոչւում: Այդ ժողովուրդը, ինչպէս իրանց լեզուից երևում է, ոչ հնդկագերմանական և ոչ հայ է եղել: Խալդերը գեո 9 տարից (Ք. առաջ) սկսած ունեցել են իրանց առանձին պետութիւնը, որը քաղզէական արձանագրութիւնների մէջ Բիաինա (Biaina), ասորերէն՝ Ուրարտու (Urartu) և հայերէն Քաղզիք էր կոչւում: Նրանց պատմութիւնից յայտնի են միայն մի քանի թագաւորների անուններ և գործեր. ինչպէս են օր. Սարգուր (Sardur) Լուտիպիրիսի (Lutipiris) որդին, Արամ (Arame) ասորացի Սալմանասարի (Salmanasar) հակառակորդը, Մենուս (Menus), Արգիստիս (Argistis) I, II, III, Րուսուս (Rusus) I, II, III կային:

Խալդերի պետութեան սկսնաւորութիւնը խորին մթութեան մէջ է: Միայն նրա մասին յիշուած է Ասորեստանի թագաւոր Ասուրանիսրաբալի (Asuranisrabal) յիշատակութիւնների մէջ, որին ինքը յաղթել է (884—860): Խալդերը թէև ասորիներից միշտ յաղթուել են, բայց այնուամենայնիւ ձգտել են անկախութեան և նոյնիսկ մի քանի յայտնի թագաւորների օրով սկսել են իրանց երկրի սահմաններն ընդարձակել (Մենուս, Սարգուր III, Րուսուս I և II կային):

Րուսուս II-ի ժամանակ խալդերի երկրի սահմանը հասնում էր հիւս. մինչև այսօրուայ Ալեքսանդրոպոլի մօտերը, արևմուտքից Եփրատ, հարաւարեւելքից մինչև մաներացիք և Լուլու, հարաւից մինչև Սուֆրիա, Նէհիրի երկիր կային: Կսերկէսի և Կիւրոսի ժամանակ ինչպէս Ասորեստանը, այնպէս և խալդերի պետութիւնը ճանաչում է պարսկական գերիշխանութիւնը: Ահա հէնց այդ ժամանակներում կարծւում է, որ արևմուտքից հնդկագերմանական մի ժողովուրդ գաղթած լինի, որին հայեր (Armenier) էին կոչում, և որը գալով՝ խալդերին տիրապետած ու այնտեղ բնակութիւն հաստատած լինի: Դարեհի յիշատակութիւնների մէջ Հայաստանը ընկնում էր Կապադովկիայի և մեդերի մէջ տեղը: Ըստ Հերոդոտի Հայաստանը ընկնում էր մատինացոց և Կիլիկիայի մէջ տեղը և մեդերի ու Պոնտոսի մօտերը պարող ժողովուրդների հետ. կազմում էր պարսից 13 հարկատու գաւառներ: Այդ ժամանակ Հայաստանի սահմաններն էին՝ հիւս. Սև ծովը, արևմտ. Եփրատ, հար. Վերին Տիգրիս և արևմ. մատինացոց, ալարոդիրացոց աշխարհները:

400 թուին (Ք. առաջ) Հայաստանը բաժանւում է երկու սատրապութեան. արեւելեան, որի իշխանը Տիրիբիասոս (Tiribiazos) էր կոչւում, և արևմտեան, որի իշխանը Օրանասոս (O-

rantas) էր կոչւում: Արեւելեան մասը ընկնում էր մինչև Արաքս, արևմտեանը մինչև Մուրադսու, Հարսանեաց երկիր: Անտոնիոս Մեծ (223—187) Հայաստանի արևելեան մասին տիրապետում է: Նրա Հռովմի դէմ արած կռուի առթիւ Հայաստանը բաժանւում է իր երկու իշխանների մէջ (Artaxias u Zariadris): Անտոնիոսի հռովմայեցիներից յաղթուելուց յետոյ այդ երկու իշխանները Հռովի կողմից ճանաչւում են որպէս թագաւորներ: Դրանցից Ջարիադրիս իշխում էր Տոսպի և մի քանի ուրիշ գաւառների վրայ, Արտաքսիաս՝ Արտաքսիասի (?) վրայ: Այդ ժամանակուայ Հայաստանը շատ փոքր էր և ըստ Ստրաբոնի շնորհիւ այդ իշխանների իր սահմանները աւելի է ընդարձակւում: Այդ իշխանների օրով հայ տարրը ոչ խառն ապրում էր Տուրուբերան և Այրարատ գաւառներում, խառն Աղձնիքում ու Զորրորդ Հայքում. իսկ մնացած գաւառները (Բարձր Հայք, Տայք, Գուգարք, Արցախ, Ուտի ևայլն) ոչ հայ-կական էին (հայեր չէին ապրում):

Յետոյ միայն հայկական են դառնում Սիւնիք, Վասպուրական, Բարձր Հայք, Կորդուիք, Գուգարք, Ուտի, Տայք. իսկ Պարսկահայք և Փայտակարան դարձեալ մնում են ոչ հայկական: Ընդհանրապէս հայերի խառն ապրում էին (յոյների և ասորիների հետ) հարաւային սահմանում, իսկ արևելեան մասում հաւանական է բոլորովին անխառն ապրած լինին:

Արտաքսիասի յաջորդ Տիգրան Բ. բովանդակ Հայաստանին տիրելով՝ նրա սահմաններն աւելի է ընդարձակում և Հայաստանի հետ միացնում է Սոփիենէ և Կորդինէ: Տրոյեան կայսեր օրով Հայաստանը դառնում է հռովմէական մի նահանգ (115 թ.): 387 թ. Հայաստանը բաժանւում է պարսիկների և հռովմայեցիների մէջ, որ $\frac{1}{3}$ արեւելեան մեծ մասը պարսիկներին և $\frac{1}{3}$ արևմտեան չնչին մասը հռովմայեցիներին է ընկնում: Այս բաժանումը համարեա թէ շարունակւում է մինչև Ոոսրով I (551—578) և Յուստինիանոս (527—560): Մաունիկոս կայսրը Ոոսրով Պարէզին իր գահը ժառանգելու համար հասցրած օգնութեան փոխարէն ստանում է Տանուտէրական, Կոտայք, Մակու և Կոգովիտ գաւառները, իսկ պարսիկներին մնում է Վասպուրականը իր շրջկայքով: Այս նոր բաժանումով հռովմայեցիք ստանում են Բարձր և Զորրորդ Հայք, Տայք, Այրարատ (առանց Դուինի), Տուրուբերան, Աղձնիք, պարսիկները՝ Մոզկ, Կորձէք, Վասպուրական, Պարսկահայք, Դուին, Ուտի և Արտաշատ (Յովհաննէս կաթողիկոս պատմ.): Այս բաժանումը տևում է մինչև պարսից պետութեան անկումը և արաբացոց տիրապետութիւնը:

Երրորդ և չորրորդ հատուածներում հեղինակը մանրամասն նկարագրում է հայկական գաւառներն ու կանտոնները:

Նախ քան Յուստինիանոս Հայաստանը կանոնաւոր կերպով նահանգների և գաւառների չէ եղել բաժանուած: Մի շարք հայ պատմիչներ (Փաւստոս, Կորիւն, Ագաթանգեղոս, Փարպեցի, Եղիշէ կայն) Հայաստանի զանազան մասերին տալիս են կամ գաւառ, կամ վերին, ներքին, միջին աշխարհ անունները: Միայն Յուստինիանոսից սկսած Հայաստանը բաժանւում է կանոնաւոր կերպով 15 նահանգների, որոնցից շատերը իրանց հին անուններն են կրում:

Հիւրշման ևս իր աշխարհագրութեան մէջ Հայաստանը բաժանել է 15 գաւառների, որոնք են. 1. Բարձր Հայք, 2. Զորրորդ Հայք, 3. Աղձնիք, 4. Տուրուբերան, 5. Մոզկ, 6. Կորճէք, 7. Պարսկահայք, 8. Վասպուրական, 9. Սիւնիք, 10. Արցախ, 11. Փայտակարան, 12. Ուտի, 13. Գուգարք, 14. Տայք, 15. Այրարատ:

Որոշ կարգով, առանձին-առանձին մեծ մանրամասնութեամբ հեղինակը խօսում է իւրաքանչիւր գաւառի մասին հանդերձ նրանց պատկանող գետերով, լեռներով, սահմաններով և պատմիչներից հանած վկայութիւններով կայն: Զորրորդ հատուածում դարձեալ մանրամասն խօսում է հայկական կանտոնների մասին, առաջուց բաժանելով գաւառների վրայ: Հայկական կանտոնների թիւը Հիւրշման հասցրել է մինչև 190 և գաւառների վրայ հետեւեալ կերպ է բաժանել. Բարձր Հայք 1—10, Զորրորդ Հայք 10—18, Աղձնիք 18—28, Տուրուբերան 28—44, Մոզկ 44—53, Կորճէք 53—64, Պարսկահայք 64—73, Վասպուրական 73—109, Սիւնիք 109—121, Արցախ 121—133, Փայտակարան 133—145, Ուտի 145—153, Գուգարք 153—162, Տայք 162—171, Այրարատ 171—190.

Զորրորդ հատուածում բացի կանտոնների նկարագրութիւնից հեղինակը երկու փոքրիկ հատուածներ ևս ունի, որոնցից առաջինի մէջ Հայաստանի լեռներն ու գետերն է նրկարագրում, իսկ երկրորդի մէջ կանգ է առնում Մովսէս Խորենացու և հին հայկական աշխարհագրութիւնների (գրած և կամ յիշած) վրայ: Աշխարհագրական տեղեկութիւնների համար աւելի հին համարում է Փաւստոսի յայտնած տեղեկութիւնները, իսկ Մովսէս Խորենացու հայկական աշխարհագրութիւնը համարում է ուշ ժամանակի գործ (7 դարու) և աւելի ուշ գրուած, քան Խորենացու պատմութիւնը:

Վերջին երկու հատուածները (5—6) զուտ լեզուաբանական բնաւորութիւն են կրում: Հինգերորդ հատուածում Հիւր-

շման աշխատում է տեղի անուն կազմող խօսքերը որոշել ու որոշ կարգերի բաժանել, իսկ վերջին հատուածում տեղերի անունները վերլուծել, բացատրել:

Հինգերորդ հատուածում ուշադրութիւն է դարձրուած գլխաւորապէս տեղերի անունների յետադաս մասնիկների, վանկերի, երկու խօսքից բաղկացած անունների վրայ: Օր. այբուբենական կարգով առաջ է բերուած մի շարք անուններ, որոնք քար, (Ագռաւքար, Դարբնաքար, Դայակի քար, Կարմիր քար), ընրան (Տուրուբերան, Առբերանի), գոմ (Մայրագոմ, Էծնագոմ, Մահկան գոմ), ւաւան (Անուշաւան, Սմբատաւան, Բագաւան) և այլ վերջաւորութիւններ ունեն:

Վերջին հատուածում այբուբենական կարգով վերլուծման է ենթարկում բաւականաչափ հայկական տեղերի անուններ բացատրելու նպատակով: Կան անուններ, որոնց բացատրելը հեղինակին յաջողուել է. կան անուններ, որոնք կամ բոլորովին անբացատրելի են մնացել կամ մասամբ յաջողուել են:

Առաջին տեսակի օրինակներ կարող են լինել. Տիրակատար (Տարոնի մէջ) = տէր և կատար, Հոռվմայր (Գուգարքում, Վարդան պատմիչ 29 եր.) = Հոռվմի-այր, Գառնակեր (Ինճիճեան, 273 եր.) = գառն և ուտել, Տանձափարախ (Օրբէլեան, 282 եր.) = տանձ և փարախ, Ուրբաթայրք (Վարազայ սարի վրայ) = Ուրբաթ օրուայ այրեր կային:

Երկրորդ տեսակի օրինակներ. Հայրակտափ (Օրբէլեան 102): ? և տափ, Հոգաբակ (Լաստ., 832. Փոքր Սիւնիքում) = ? և բակ, Մցնկերտ (Բասենում) = ? և կերտ, Խոնրաբակ (Լաստ. 64) = ? և բակ կային:

Վերջին տեսակի օրինակներ (անուններ, որոնք չեն բացատրուում). Նփրկերտ, Նպատ, Վան, Գուլին, Օշական, Երասխ, Աւարայր կային:

Ընդհանրապէս Հիւբշման իր աշխատութեան մէջ աւելի մեծ ուշադրութիւն դարձրել է 3, 4, 5 և գլխաւորապէս 6 հատուածների վրայ, ինչ վերաբերում է քարտէզին, նա կազմուած է գլխաւորապէս անգլիացի Lynch-ի 1901 թ. կազմած Հայաստանի քարտէզի համեմատ: Տեղ-տեղ, գլխաւորապէս անունների համար օգտուել է Kipert-ի Հայաստանի քարտէզից և Ալիշանի «Սիւնիք» և «Այրարատ» աշխատութիւններից:

Ընդհանրապէս յարգելի բանասէրի աշխատութիւնը շատ հետաքրքրական է և, եթէ չեմ սխալուում, որպէս Հայաստանի աշխարհագրութիւն՝ իր տեսակում միակն է:

ԴԱՐԲԻՆԵԱՆ

«Ոսեիկ», հայ կանանց ժողովածու, Ալեքսանդրապոլ, 1904:

Իդիվիդուալիստ ազգ ենք, կարծիք չկայ, և մեր գործողութիւնները հասարակական այս կամ այն ասպարէզում անխուսափելիօրէն կրում են իրանց վրայ մեր այդ ցեղական յատկութեան կնիքը: Ընդհանուր հաւաքական հիմունքների վրայ դրուած գործունէութիւնը կարծէք քիչ է բաւականութիւն պատճառում հային, որովհետեւ անկարելի է դարձնում նրա անհատական կարողութիւնների խիստ բացայայտ պատկերը: Վերջին հանգամանքը անձնական փառքի տեսակէտից շատ էլ ժպտուն չէ:

Թողնենք հասարակական միւս ասպարէզները, ուր սովորաբար հայը սիրում է թէկուզ իր միջակութիւնով մեն-մենակ փալլել և կանդ առնենք բացառապէս գրականի վրայ: Այստեղ էլ մենք գերազանցապէս ինդիվիդուալիստ ենք, արտասահմանեան հայ գաղութները հեղեղուած են հայ խմբագիրներով՝ Եգիպտոսում, Բուլղարիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում, նրանք սունկի պէս են բուսնում. միայն Պարիզում մի քանի օր մնացողը կարող է ծանօթանալ տասնեակ անցեալ, ներկայ կամ ապագայ թերթերի խմբագրների հետ: Եւ գիտական ու գրական ռի ճիւղին ասես նուիրուած թերթ չկայ. երկրագործութիւն ու հնագիտութիւն, հասարակագիտութիւն ու գեղարուեստ, երաժշտութիւն ու բնական գիտութիւններ փոխադիոյս դառնում են այդ թերթերի ժամանակաւոր ուշադրութեան առարկան, յետոյ անցնում են, գրական հրապարակի վրայ՝ թողնելով միայն մի խմբագրի անուն: Մենք ոչ զատապարտում ենք այդ և ոչ քաջալերում, որովհետեւ իւրաքանչիւր հասարակական երևոյթ կեանքի ամբողջութիւնից կտրելու և առանձին քննելու իրաւունքը չունենք: Այդ երևոյթն էլ մէկն է նրանցից և ունի իր թէ՛ լաւ և թէ՛ վատ կողմերը: Դա մի ծայրայեղութիւն է, որ արդիւնք է մեր անցեալի և մեր ժամանակակից ցաւալի իրականութեան:

Նոյն երևոյթը այլ կերպարանքի տակ կրկնւում է է նաև այստեղ մեզանում, ուր գրական հրապարակը համարեա թէ հեղեղուած է բազմաթիւ տհաս, անմիտ, կամ պարզապէս երեսայական մտքի արտադրութիւններով: Գիրք տպելը դարձել է վարակիչ ախտ, և իւրաքանչիւր գրիչ շարժող շտապում է իր խղճուկ անուանը մի նոյնքան խղճուկ անմահութիւն ձեռք բերել: Նոյնիսկ այլևս չեն դիմում գոյութիւն ունեցող արտասահմանեան կամ տեղական թերթերին, ուր կա-

րող է աւելի կամ պակաս ճիշտ քննադատական վերաբերմունք լինել, այլ ուղղակի տպարան են գնում: Դա էլ նոյն հիւանդ անհատականութեան անօգուտ արտայայտութիւնն է:

Ունէինք բազմաթիւ գրական-հասարական ամսագրեր ու թերթեր, նոյնիսկ միքանիսը գուտ մասնագիտական, վերջերս ունեցանք նաև հայ կանանց հանդէս՝ «Արտեմիս»-ը. դուրս է գալիս, որ այսքանը բաւական չէ, որ հարկաւոր է եղել նաև «Հայ կանանց ժողովածու»: Չենք յիշում, թէ ոուս կանայք իրանց առանձին հանդէսն ունենան, գիտենք սակայն, որ միքանի տարի Պարիզում հրատարակուող ֆրանսուհիների La Fronde-ը անցեալ տարի փակուեց՝ անկարող լինելով շարունակել իր գոյութիւնը: Այն, ինչ որ անկարելի եղաւ Ֆրանսիայում, հնարաւոր է համարւում մեր գունատ իրականութեան մէջ, ուր հայ կնոջ գրութեանը, եթէ այն էլ կայ, հարկաւոր է օտար լեզուից հայերէնի վերածել: Ինչ ուզում են ատածեն հայ կանանց մեկուսացած գրական գործունէութեան կուսակիցները, բայց այս վերջին երևոյթի մէջ մի արուեստական, յետ մղող բան կայ:

Թողնենք սակայն խնդրի այս ընդհանուր հասարակական կողմը և տեսնենք, թէ ի՞նչ են ասում հայ կանայք իրանց այս ժողովածուով:

Առաջնութեան իրաւունքը պատկանում է տիկին Մառի Պէյլլէեանին, որի հրապարակախօսական յօդուածը—«Կինը և հանրային կարծիքը»—բռնում է այս ժողովածուի սկզբի երեսները: «Արտեմիս»-ի տիկին խմբագիրը իր բոլոր հրապարակախօսական յօդուածների մէջ սովորաբար մտրալիստ է և որպէս կին՝ անհրաժեշտապէս իր սեռի բռնադատուած իրաւունքների պաշտպան: Կնոջ ստորնացած վիճակի մասին նա նոր բան չի ասում, որ արդէն ասուած չլինէր ֆեմինիզմի այլ՝ աւելի հեղինակաւոր ներկայացուցիչների ձեռքով, և մեր կարծիքով այդ հարցում նա մնում է միշտ միակողմանի՝ անկարող լինելով բարձրանալ մինչև բազմակողմանի ըմբռնումը: Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, երբ այնպիսի առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի խնդիր, որպիսին է կանանց էմանսիպացիան—հայ կանանց ուրոյն էմանսիպացիա չկայ—ուշադրութեան է առնւում միմիայն մտրալի տեսակէտից:

«Ստեղծելով կնոջ համար գերութեան ստորնացնող կեանքը... անոր հոգւոյն մէջ մեղացուն ինքնաճանաչութեան, իր անձի գիտակցութեան և արժանապատուութեան վսեմ զգացումները և կինը միշտ ենթակայ դարաւոր ճնշումներու սկսաւ ինքն ալ կամաց կամաց հաւատալ թէ՛ ընտելիւնը կամ արար-

չութիւնը զինքը ստրուկ ստեղծեր է, թէ՛ ինքը դատապարտուած է յաւիտեան ստրուկ մնալու» (եր. 8):

Այդ բոլորը չափազանց ճշմարիտ է, վաղուց յայտնի՝ բայց միթէ միայն կնոջ համար է ստեղծուած «գերութեան ստորնացնող կեանքը», միայն նա է հաւատում, թէ՛ ինքը դատապարտուած է յաւիտեան ստրուկ մնալու: Միլլիօններ կան, որոնք կին չեն և որոնք ստորնացած են և արժանապատուութեան, իրաւունքի գիտակցութիւնը չունեն:

Հասարակական ամբողջ կազմը մի կենդանի հսկայական պիրամիդ է, ուր եռում, կրծոտում են իրար գոյութեան խօլ կռուի մէջ իրար խռնուած դասակարգերը և միլլիօնների աւողորմ կռուի մէջ տրորուած են և՛ կանայք, որպէս ամենաթոյլերը: Կանանց ստորնացած վիճակը, որքան և նա ծանր լինի, ուրոյն, ամբողջութիւնից կտրուած երևոյթ չէ, նա մարդկութեան գլխին ծանրացած հսկայական ցաւի մի մասն է միայն: Չարիքն այնտեղ է, այդ ամբողջութեան մէջ է, և մորալի քարոզները անկարող են նրան արմատախիլ անել:

«Ծանչնանք մեր արժանապատուութիւնը, բացազանչում է տիկին Պէյլէրեան, բա՛շ ըմբռնենք մեր բարձր կոչման գիտակցութիւնը, գործենք առողջ և ամուր համոզումներէ առաջնորդած և մոռնանք հանրային կարծիքը»: Գեղեցիկ խօսքեր, բայց ի՞նչպէս մոռանայ ստորնացրած խիղճ կինը հանրային կարծիքը, երբ իր ոտքերի տակ տնտեսական հող չունի, նիւթական կայան չունի. ի՞նչպէս էք կամենում, որ նա շնորհիւ հասարակական յայտնի կարգերի մնալով իրաւագուրկ, իրական անկախութիւնից զուրկ, անհատական աշխատանքի խիստ սղմուած սահմաններում, կարողանայ կտրտել իր կապերը հասարակութեան հետ, կարողանայ նրա գէժ ընթանալ: Այդ միևնոյն է թէ՛ նաւը խիւլ մարդուց և ասել «Լողա՛, կտրի՛ր ծովը ինքնուրոյն կերպով, եղի՛ր անկախ և ազատ...»

Հասարակական մորալը, ինչքան և նա շաղախուած լինի նախապաշարմունքներով, այնուամենայնիւ անհատների լոկ շահագրգռուած կամայականութեան արդիւնք չէ, որի գէժ հնարաւոր լինի կռուել բարոյական քարոզներով: Այդ մորալը անհրաժեշտապէս կապուած է հասարակական կեանքի նիւթական պայմանների հետ, տնտեսական մի շարք բարդ պատճառների հետ, որոնք հանդիսանում են մարդկային յարաբերութիւնների հզօր ղեկավարներ: Վերջին հանգամանքը բնականապէս չի կարող հերքել և զուտ իդիօլոգիական ֆակտորները, որոնք մարդկային հոգու գաղտնախորհուրդ խորշերից են բարձրանում գուցէ անկախ նիւթական պայմաններից, բայց անուրանալի է,

որ լուկ բարոյական դաստիարակութիւնը ինչպէս կարծում է տ. Պէյլէրեան, չպիտի կարողանայ հասարակական մորալը փոխել և ստորնացած կնոջը բարձրացնել: Մի՞թէ քիչ են աշխարհում լաւ դաստիարակուած բայց ընկած կանայք, աշխարհի բոլոր ծայրերում: Լաւ դաստիարակութիւնը օժանդակիչ է, բայց նա բոլորը չէ: Չարիքը աւելի լայն է և աւելի խորը, քան կարծում է տ. Պէյլէրեան:

«Ոստիկ»-ի գեղարուեստական բաժնում տեղ են բռնում մի քանի պատմութիւններ՝ «Տանջուածի բողոքը» տ. Չ. Մեհրաբեանի, «Պօան»՝ Սիպիլի, «Միայն մէկը չզղջաց» Չ. Մեհրաբեանի և «Երկու նամակ» իշխ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբաղուկի: Այս պատմութիւնները բացի մէկից («Միայն մէկը չզղջաց») գրուած են հասարակական-բարոյական որոշ տենդենցիայով և այսպէս թէ այնպէս կապուած են բուրժուա շրջանի ներքին կեանքի հետ: Սկսենք առաջինից. — «Տանջուածի բողոքը» նիւթը պարզ է. հերոսուհին, տիկին Աշոտեան, որ՝ ի դէպ է ասել՝ իրանից ոչինչ չի ներկայացնում, ընտրել է ամուսին մի տգէտ, ախտաւոր և հարուստ վաճառական: Նա չգիտէ, թէ նա ախտաւոր է, բայց լաւ գիտէ, որ նա տգէտ է և հարուստ: Եւ նա ամուսնանում է նրա հետ: Հետեանքը պարզ է. ամուսինը վարակում է կնոջը, և նրանց կեանքը դառնում է դժոխք: Գարեգին Աշոտեանը մեռնում է, իսկ տ. Աշոտեանը երկար ժամանակ տառապում է նոյն հիււանդութեամբ, ի վերջոյ նոյնպէս մեռնում անիծելով ժամանակակից հասարակութիւնը, որ երկու չափ, երկու բարոյականութիւն ունի, մէկը կանանց, միւսը տղամարդկանց համար: Նիւթը նոր չէ, բոլոր ֆեմինիստների և մասնաւորապէս մորալիստների բողոքի առարկան է ժամանակակից հասարակական մօրալը, որ հանդիսանում է որպէս բացարձակ անարդարութիւն դէպի կանայք: Յոյզ ու թափ տալու համար այդ արդէն հին բողոքին հարկաւոր էր աւելի գեղարուեստականութիւն, հոգեկան տանջանքների աւելի բելիիֆ արտայայտութիւն, քան այդ յաջողուել է հեղինակին: Երբ յայտնի նիւթը ծեծւում է թէկուզ գեղարուեստական պատկերի տակ, բայց անգոյն, շաբլոն ձևով, վիպական գրութեանը դառնում է խղճուկ հրապարակախօսութիւն: Տ. Մեհրաբեանի պատմութեանը չէնց այդպիսի հրապարակախօսական գրութեան տպաւորութիւն է գործում, և նրա վրայ ոչինչ չեն աւելացնում վերնագրի տակ գրուած «հոգեբանական էտիւդ» բառերը:

Տ. Արղութեանի «Երկու նամակը» մեր կարծիքով աւելի օրիգինալ է իբրեւ միտք և աւելի արժէք ունի իբրեւ գրութեան:

Ընդամենը երկու կարճ նամակ է, և նրանց մէջ հեղինակը կարողացել է խտացնել մի ամուսնական փշրուած երջանկութեան պատկեր: Դժբախտութիւնը ծագել է նրանից, որ երջանիկ և սիրող կինը յանկարծ իմացել է, որ ամուսինը իրանից առաջ ունեցել է մի ուրիշ սիրային կապ, նոյնիսկ հայր է մի երեխայի: Այս ճշմարտութիւնը չափազանց դառն է սիրող կնոջ համար, նա տանել չի կարողանում իր ծանր յուսախաբուածութիւնը իր հաւատի մահը և դժբախտ է: Այստեղից հարց է ծագում, պիտո՞ւնք են ամուսինները փոխադարձաբար պատմել իրար իրանց անցեալը, թէ՞ լռութիւնը գերադասելի է ամուսնական երջանկութեան համար: Բուրժուա մորալը, ամուսնական կեանքը բազմաթիւ այսպիսի հարցերի մի ժողովածու է, որոնց պատասխանել չի կարելի, որովհետեւ այդ դասակարգի հիմունքը փթած է և արտաքին փայլի տակ ապրում է հրէշաւոր արսուղը: Պատմեն թէ չպատմեն, դրանով ոչինչ չի փոխուի, ամուսնութեան ժամանակակից պայմանները չեն լաւանայ, չի գեղեցկանայ: Սիպիլի «Պօան» իսկիսկ պոլսական նորավէպ է: Ճոխ լեզու, սիրուն պատկերներ, պատմելու շնորհք, բայց այդ բոլորի հետ՝ միասին անպատճառ մի տարօրինակութիւն: Տիկին Մաքրիկը ջահիլ սիրուն կին է, կեանքի վայելքի, գեղեցկութեան սիրահար, պաշտուելու հետամուտ: Բայց և նա մայր է, սիրող մայր մի հատիկ աղկայ, որ ծանր հիւանդ է: Մաքրիկը իր սովորութեան հակառակ առաւօտը վաղ վեր է կենում շտապում փողոց մի բժիշկ կանչելու: Եւ ի՞նչ, այդ մայրը ճանապարհին շարժում է տղամարդկանց հայեացքներից, երեխայի պէս գրաւում է խանութների առաջ ցուցադրուած կանացի զարդերով և վերջիվերջոյ թեթեւներին կռուից յետոյ մի «պօա» է գընում՝ ծախսելով բժշկին յատկացրած փողը, ձգում է պարանոցը և խրոխտ ու գեղեցիկ անցնում է իր վրայ ուղղած հայացքների առաջից, տուն է դառնում առանց բժշկի, առանց դեղի: Աղջիկը մեռնում է յաջորդ առաւօտ, իսկ կանչած բժիշկը յայտնում է, որ նախընթաց օրը կարող էր փրկել երեխային, եթէ կանչուած լինէր: Յուսահատուած ու գժբախտ կինը իր զգացած բուռն ապաշաւանքն ու ցաւը արտայայտում է փետելով այն «պօա»-ի փետուրները, որ իր միակ զաւակի մահուան պատճառ եղաւ: Ահա կարճ կերպով Սիպիլի պատմութեան բովանդակութիւնը: Այս դրութեան ինչպէս ասացինք գեղարուեստական երկին անհրաժեշտ բոլոր արտաքին պայմաններն ունի. կարգացում է հաճոյքով, հեշտութեամբ և նոյնիսկ հետաքրքրութեամբ: Բայց ներքին, հիմնական միաբնակարար զուրկ է հոգեբանական հիմունքից և մեղանչում է մայրութեան այն-

քան զօրեղ, այնքան անձնուրաց զգացմունքի դէմ: Ընդունում ենք, որ կարող են պատահել մայրեր, որոնք իրանց անձնական անմիտ, սին վայելքները կը դերադասեն իրանց զաւակներին, բայց այդպիսիների հետ մենք սովորաբար չենք կապում իսկական քնքոյշ մայրութեան այն գրաւիչ գաղափարը, որ քաղիչ ենք մեր ծնողների սրտից: Մեզ հակասական է թւում, որ մի կողմից Մաքրիկը այնպէս սիրում է իր զաւակին, այնքան անկեղծ կսկիծ ունի նրա հիւանդութեան պատճառով, որ «հակառակ մշուշին, հակառակ ձմեռ առտուններու սարսազղեցիկ ցուրտին... փողոց ընկեր էր բժիշկ մը գտնելու համար իր պղտիկ աղջկան, որ կրակներու մէջ էր առջի իրկուրնէ ի վեր» և միւս կողմից նոյն Մաքրիկը (թող նա լինի պճնասէր, վայելքի հետամուտ, թեթեամիտ) յանկարծ փողոցում մոռանայ իր մեռնող զաւակին և նրա կեանքը վճարի մի զարդ գնելու համար: Մայրերը, որոնց հոգին հրէշաւոր կերպով խեղաթիւրուած չէ, ամեն բան կարող են մոռանալ, բացի հիւանդ զաւակը: Եւ Սիպիլի Մաքրիկը իբրև տիպ մեզ թւում է չափազանց հակասական:

Ահա այն երեք պատմութեանքները, որոնք այսպէս թէ այնպէս շօշափում են հայ բուրժուա կնոջ կեանքը: Իզուր մենք փնդրեցինք այս ժողովածուի մէջ մի գրութեան, որ խօսէր մի փոքր հայ ժողովրդի կնոջ կեանքից, այն համար ու հնազանդ տառապողից, որի անունն է հայ գեղջկուհի, նա, որ այնքան դարերի ընթացքում իր սրտում կրել է մի ամբողջ ազգ և թիկունքին իր ցեղին վիճակուած գերագոյն ստրկութեան բեռը: Այդ մարտիրոս կնոջ հսկայ ցաւի առաջ ինչ արժէք ունին բուրժուա կոկեանների ճոճոան վշտերը, որոնք ծագում են առնում իրանց շրջանին յատուկ ախտերից:

Ուշագրաւ մի հանգամանք է, որ «Հայ կանանց ժողովածուն» իր բովանդակութեամբ նոյնքան հայկական է, որքան հայկական կը լինէր օրինակ ռուս, ֆրանսիացի կանանց որեւէ ժողովածուն: Այստեղ առաջին անգամ հայ կինը հրապարակ է գալիս որպէս գեղարուեստական գրող, և նրա ընտրած նիւթը համարեա ինչ մի առընչութիւն չունի հայկական իսկական միջավայրի հետ, մեր ժողովրդի հոգու հետ, ուր այնքան հզօր յոյզեր են աղմկում, և որ այնքան հետաքրքիր է, այնքան հարուստ ցաւերով և յոյսերով. կրկնում ենք, հետաքրքիր երեւոյթ է հայ կանանց ժողովածուի այս աչքի ընկնող խորթութիւնը և դժուար հասկանալի չէ: Մեր կրթուած կամ այդպէս համարուած տիկիները... նոյնքան խորթ են մեր կեանքին, որքան իրանց այս ժողովածուն: Նրանք չգիտեն նոյնիսկ այն

լեզուն, որ միայն կարող է խօսել հայ ժողովրդի հոգուն, չեն ճանաչում նրանց, որոնց համար գրում են, ինչո՞ւ չաւելացնենք՝ չեն էլ սիրում ոչ մէկը, և ոչ միւսը: Բայց թողնենք այս ցաւոտ խնդիրը, որ մեզ շատ հեռու կը տանի:

Միքանի խօսք էլ ասենք չորրորդ պատմութեան մասին («Միայն մէկը չզղջաց»), որ միակն է իր տեսակի մէջ իբրև հայ ժողովրդական կեանքի պատկեր և պատկանում է դարձեալ տ. Զ. Մենքարեանի գրչին: Ափսոս որ չենք կարող ասել, թէ յարգելի տիկինը այս գրութեան աւելի յաջողութիւն ունի քան առաջինում: Գեղարուեստական երկի լուծումը դիպում է մէջ դնելու ապացոյց է ստեղծագործական կարողութեան խոշոր պակասութեան: Հէնց այս է, որ աչքի է ընկնում այս պատմութեան մէջ: Գիւղում գուր տեղը մատնուած է մի անմեղ ուսուցչի, որ բանտ է նետած կախաղան բարձրանալու համար և ահա վրայ է հասնում աստուածային պատիժը. գիւղը աւերակ է դառնում երկրաշարժից: Հասկանալի է, որ խաւար ժողովուրդը այս չարիքը վերագրում է իր մեղքերին (սուտ վկայութեան ուսուցչի դէմ) և զղում է: Զի զղում միայն մէկը, անմեղ ուսուցչին կորցնելու իսկական հեղինակը—Ակոր աղան, որ շարունակում է նորանոր մատնութիւններ կատարել սրահնրադէմ: Այս գրութեան մէջ ոչինչ չկայ, որ նրան գեղարուեստական երկերի կարգը դասէր: Գաղափարը թոյլ, լուծումը արուեստական, պատմելու եղանակը ճապաղ, ամբողջը ճանձրալի:

Ժողովածուի մէջ կան միքանի ուրիշ պատկերներ, ինչպէս «Բողոք», «Մի ըսպէ», որոնք բնաւ կարող էին չլինել: Աւելի լաւ է տ. Պէլլէրեանի «Սէլիմ աղան» արաբական կեանքից, որը չնայելով իր նիւթի խիստ պարզութեան և վիպական ինտրիգի բացակայութեան՝ կարգացում է հաճոյքով շնորհիւ բանաստեղծական հարուստ լեզուի և յաջող պատկերներին: Զենք խօսում նաև տ. Պալեանի փիլիսոփայական փորձի մասին—«Մատերիալիզմը»,—որ դասագրքային գրութեան բնաւորութիւն ունի և զուրկ է ինքնուրոյնութիւնից. նրա մէջ հեղինակի անհատականութիւնը իջել է աշակերտական վիճակի:

Ժողովածուի զարդն է կազմում «Մանջուրական սահմանի վրայ» օրիորդ Մելիք-Հայկազեանի: Հեղինակը առիթ է ունեցել մի երկու տարի ապրել մանջուրական սահմանի վրայ և մի անգամ այցելել է Այգուն քաղաքը բացառիկ բարեպատեհ պայմաններում, որոնք հնար են տուել նրան մօտիկից տեսնել մանջուրական և չինական կեանքի բնորոշ կոյմերը: Ահա երկու տարուայ իր ընդհանուր տպաւորութիւնները և այդ ճանապարհորդութիւնն է, որ նա նկարագրում է յիշեալ

յօդուածում: Այս գրուածքի մէջ երևում է օրիորդի դիտելու աչքի ընկնող ընդունակութիւնը: Մօտ երեսուն երեսից բաղկացած այդ աշխատութեան մէջ չկայ ոչինչ, որ ընդհանրապէս յայտնի և շատերին ծանօթ լինէր չինական կեանքից: Համարեա բոլորն՝ ինչ նա ասում է նոր է, և՛ որ գլխաւորն է՝ երկընդորդական նորութիւն չէ, այլ վերին աստիճանի բնորոշ: Ե՛ւ այն սիւները, որոնք տնկուած են ճանապարհին ի պատիւ առաքինի կանանց, և՛ դագաղների մէջ ծառերից կախուած աղքատ մեռելները, որոնք սպասում են գարնան մի գերեզման ունենալու համար, որովհետեւ ձմեռը գետին փորելը թանգ է, յետոյ չինական տան ներսը, կանայք իրանց ներքին աշխարհում, նրանց զգեստը, կերակրները, հանդէսները, ամբոխը, ուրախութիւնները, չինացու հոգեբանութիւնը, նրա խորամանկ ընտելութիւնը և այլն և այլն, այս բոլորը հիմնալի կերպով են դիտուած և խիստ հետաքրքիր են: Աւելացնենք և այն, որ օրիորդը պատմել գիտէ, պարզ, անպաճոյճ և՛ որ գլխաւորն է՝ անկեղծ ոճով, ցուցամոլութեան, ազդեցութիւն գործելու ոչ մի նշոյլ: Իր անձնական խորհրդածութիւնները չափաւոր են և խելացի: Այս բոլորը միասին օրիորդի ճանապարհորդական նըկարագիրը դարձնում են խիստ գրաւիչ, և ժարդ վերջացնելով ափսոսում է, որ շարունակութիւն չկայ:

Ահա բոլորը՝ ինչ դրել են գրական հրապարակի վրայ հայ կանայքը իրանց ժողովածուով: Հաշտուենք փաստերի հետ. գոհ լինենք և՛ նրանով, ինչ ունենք: Իրականութիւնը բռնադատել նշանակում է աշխատել թուզից խաղող քաղել: Ի՛նչ ասել կ'ուզի, որ ներկայ ժողովածուն մշտական, պարբերական դառնալու յաւակնութիւն չունի, գոնէ մենք շատ սկեպտիկ ենք դէպի մի այդպիսի ձեռնարկութիւն մեր ներկայ գրական-հասարակական պայմաններում: «Ոստիկը» կարող է դադարել աւելի կամ պակաս մօտիկ ապագայում. մեծ կը լինէր նրա կատարած ծառայութիւնը, եթէ դոնէ իր գոյութեան ընթացքում կարողանար գէթ մի քանի հայ տիկիւնների և օրիորդների սովորեցնել զբոյժ շարժել և նետուել գրական ասպարէզը: Մեր խօսքը վերաբերում է մանաւանդ ուսանայ կանանց, որոնք, ցաւալի է ասել, մինչև այսօր համը են: Դա մի ցաւոտ երևոյթ է, որ ընդհանուր և խորին ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ, որովհետեւ կապուած է մի շարք ծանրակշիւ հանգամանքների հետ: Չափազանց յայտնի ճշմարտութիւն է, բայց ստիպուած ենք կրկնել, որ այն շրջանում, ուր միտնում է մայրենի լեզուն, տոհմային զրականութեան մասին խօսք լինել չի կարող: Հայ կիներ մեզ մօտ կանգնած է մի ճանապարհի վրայ, որ խորին

մտահոգութիւն կարող է պատճառել մեր և ինքնուրոյն գրականութեան նախանձախնդիրներին: Այդ կինը առանց մտածելու, առանց գիտակցութեան իօր աւուր մաս-մաս սպանում է իր մայրենի լեզուն, և եթէ այսպէս շարունակուի, հեռու է այն ժամանակը, երբ գրագէտ հայ կինը կը դառնայ մի բացարձակ անկարելիութիւն: «Ոստիկը» լաւագոյն ապացոյցն է, թէ ինչ է նշանակում անձանօթ լինել հայրենի միջավայրին, խորթանալ հայրենի այնպիսի աւանդութիւններից, որպիսին է լեզուն, անգիտանալ ազգային նկարագիրը, հոգեբանութիւնը, մի խօսքով այն բոլորը, ինչ կազմում է մի ժողովրդի ինքնատիպ ֆիզիօնոմիան: Լեզու և գրականութիւն միեւնոյն բաներն են. երբ չկայ առաջինը, երկրորդը ոչ մի պայմանով չի կարող լինել: Մենք աւելին կ'ասենք—լեզուն կորցրած դասակարգը ոչ թէ տոհմային, այլ առհասարակ ոչ մի գրականութիւն չի կարող աւրտագրել, նրա հոգին այն ճիւղում, տրորում բոյսն է, որ միշտ վիրաւոր է, և երբէք պտղաբերել չի կարողանում: Հեռու չերթալու համար ի նկատի առնենք մեր կեանքից մի ուշագրաւ փաստ: Բարձրագոյն կրթութեան հետամուտ թիւրքահայ օրիորդներ համարեա չկան Եւրոպայում, բայց Պոլիսը միշտ ունեցել է կին գրողներ. գրա հակառակ երոպական դասական կենտրոններում բազմաթիւ են հայ օրիորդներ մեր երկրից, բայց և այնպէս կին գրող չունենք և չենք էլ ունենայ հրապարակի վերայ: Պատճառը կարծում ենք չափազանց պարզ է, որպէսզի հարկ լինէր աւելորդ բացատրութիւնների մէջ մտնել:

Ա. Ա.

Dr. Franz Schaffer: «Cilicia». — Դոկտ. Ֆրանց Շաֆֆեր՝ «Կիլիկիա»:

Մատենախօսութեանս նիւթ կազմող աշխատութիւնը պատկանում է Վիեննայի համալսարանի աշխարհագրութեան և երկրաբանութեան ուսուցչապետ դոկտ. Շաֆֆերին, որ աշխարհագրական գիտութեան մէջ յայտնի է Կիլիկիայի մասին հրատարակած իր մի շարք աշխարհագրական-երկրաբանական հետազոտութիւններով: Նրա գիտական վերջին գործը վերոյիշեալ «Կիլիկիա» վերնագրով աշխարհագրութիւնն է, որ սկզբում մաս-մաս հրատարակուել է պրոֆ. Սուպանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Pettermann's Mittheilungen» յայտնի աշխարհագրական տմասագրում և յետոյ իբրև յաւելում հրատարակութիւն լոյս է տեսել առանձին գրքով:

Այս աշխատութիւնը հետաքրքիր է նամանաւանդ մեզ

հայերիս համար, որովհետև հեղինակաւոր Շաֆֆերի կողմից աշխարհագրական և երկրաբանական տեսակէտից ուսումնասիրւում է Կիլիկիան,—մի երկիր, որ պատմավայր է եղել հայկական վերջին քաղաքական անկախութեան, երբ հայերը ընկն հայաստանում կորցրին իրանց քաղաքական ինքնոյրոշութիւնը: Կիլիկիան ներկայացնում է հայոց 300-ամեայ պատմութեան շրջանի՝ Ռուբինեան հարստութեան բեմը, երբ հայերը անմիջական յարաբերութեան մէջ մտան Արևմտեան Եւրոպայի ազգերի հետ և նրանց կուլտուրան մտցրին և իրանց երկրում: Հետևապէս այդ շրջանի պատմութիւնը հիմնաւորապէս ուսումնասիրելու համար ամենից առաջ հարկաւոր է ծանօթանալ Կիլիկիայի երկրաբանական աշխարհագրական կազմութեան հետ, որ կազմում է նրա պատմութեան գլխաւոր բանալին: Այդ բանին շատ է նպաստում դոկտ. Շաֆֆերի «Կիլիկիա» աշխատութիւնը: Առհասարակ քիչ է այն երկրների թիւը, որոնք իրանց պատմական անցեալի հետքերը այնպէս պարզ դրոշմուած իրանց վրայ են կրում, և բացի դրանից հազիւ լինի մի ուրիշ երկիր, որ ունեցած լինի այնպիսի հետաքրքիր և բազմակողմանի պատմութիւն, ինչպէս որ անատոլիական և մասնաւորապէս Փոքր-Ասիա թերակղզու հարաւ-արեւելեան մասը՝ Հին-Կիլիկիան: Այստեղ է կատարուել արեւելքի տիեզերական պատմութիւնը, Կիլիկիան է եղել արեւելքի արեւնալի և սարսափելի պատմական ասպարէզը, և վերջապէս այստեղ են մէկը միւսի յետևից ծնուել, զարգացել և անյայտացել բազմաթիւ և բազմազան կուլտուրաներ: Դրա համար էլ Կիլիկիան այցելող ճանապարհորդը ամենուրեք նկատում է նրա երբեմնի պատմական զարգացման հետքերը, որոնք համր, բայց և պերճախօս վկաններ են Կիլիկիայի երբեմնի ծաղկած կուլտուրայի: Ծանոթարհորդի աչքին են զարնւում ամենուրեք ցրուած փառահեղ պալատների, տաճարների, թատրոնների, յաղթական դռների ու կամարների խղճուկ աւերակ մնացորդները: Եւրոպական տէրութիւնների և կուլտուրայի անցեալ դարու վերջերում հետզհետէ աջող ազդեցութեան շնորհիւ Կիլիկիան ներկայումս բաւական յառաջադիմել, զարգացել և յուսալի ապագայ է խոստանում: Բնութիւնից առատութեամբ արտօնուած Կիլիկիան ընդունակ է կրկին այնպէս ծաղկելու և առաջադիմելու, ինչպէս երբեմն հին Ժամանակն էր, և Բաղդադի ապագայ երկաթուղին, որ պէտք է Պարսից Ծոցը միացնի Բոսֆորի հետ, հաւանօրէն կենսական նոր ոյժ պէտք է շնորհի Կիլիկիային, այն պայմանով միայն, եթէ «Հիւանդ Մարդու» կառավարութիւնը քաղաքական խաղաղ զարգացումն նուիրի Կիլիկիային:

Դոկտ. Շաֆֆերի կարծիքով Կիլիկիան աշխարհագրական և երկրաբանական տեսակէտից մի շատ սահմանափակ բնորոշ տարածութիւն է ներկայացնում: Ժամանակակից Կիլիկիան պէտք է ընդունել հին հռոմէական պրովինց Կիլիկիան մինչև 137 թ. (Ք. Յ.), որի սահմանները կազմում էին Լիկաոնիա, Գամիրք կամ Կապադովկիա, Կոմմագենիա, Պամփիլիա և Իսաւրիա, հարաւային կողմից Միջերկրական ծովը, արեւմտեան կողմից Իսաւրիայի լեռները և արեւելեան կողմից Գեաւուր-Դաղը:

Դոկտ. Ֆ. Շաֆֆերը երեք անգամ ճանապարհորդել է Կիլիկիայում, 1900 թ. զարնանը և աշնանը և 1901 թ. ամառը: Իր աշխատութեան առաջին մասում նա թուղթիկ կերպով նշկարագրում է Կիլիկիայի բնակիչներին այնպէս, ինչպէս որ ինքըն է նրանց դիտել: Բնակիչների վրայ հեղինակը նայում է աշխարհագրագէտի և երկրաբանի տեսակէտով՝ միացնելով իր մասնագիտական ուսումնասիրութիւնների հետ մի շարք ազգագրական և հնախօսական տեղեկութիւններ, որոնք լուսաբանում են Կիլիկիայի բազմազան ազգաբնակչութեան այս կամ այն կողմերն ու երևոյթները: Ի նկատի ունենալով այն գլխաւոր հանգամանքը, որ Կիլիկիան իր ամբողջ պատմութեամբ պարտական է իր աշխարհագրական դիրքին, իսկ վերջինս էլ իր երկրաբանական կազմութեան, դրա համար էլ հեղինակը իր գիտական աշխատութեան մէջ առաջին տեղն է տուել Կիլիկիայի երկրաբանական և աշխարհագրական ֆակտորների ուսումնասիրութեան:

Ըստ Շաֆֆերի Կիլիկիան գտնւում է լայնութեան 36—38 և երկայնութեան 32—37 աստիճանների տակ և բռնում է Անատոլիայի հարաւ-արեւելեան անկիւնը: Ժամանակի ընթացքում, նամանաւանդ օսմանեան պետութեան ժամանակ, «Կիլիկիա» անունը զրկուեց իր քաղաքացիական իրաւունքից և ներկայումս այդ երկրի գրեթէ ամբողջ տարածութիւնը վարչական տեսակէտից կազմում է թիւրքիական Ազանայի վիլայէթը, որի տարածութիւնն է 40,000 քառ. կիլօմետր. այդ տարածութեան 38 տոկոսը բռնում են մշակելի հողերը, 60 տոկոսը լեռները և 2 տոկոսը ճահիճները:

Կիլիկիայի ազգաբնակչութիւնը 400,000 բնակիչներից է բաղկացած, ուրեմն իւրաքանչիւր քառակուսի կիլօմետրի վրայ ապրում են 10 հոգի: Ըստ դաւանութեան Կիլիկիայի բնակիչները բաժանւում են մահմէդականների (160,000), քրիստոնեաների (170,000) և ուրիշ դաւանութիւնների (70,000): Վերջին դաւանութիւններին պատկանող բնակիչների մէջ մտնում են

զլխաւորապէս հրէաները, գնչուները, անասրները, թախտաճիւնները ևայլն:

Հայերը քրիստոնեաների մէջ առաջին տեղ են բռնում, այն է մօտ 95,000 (որոցից հայ-լուսաւորչականներ 68,000, հայ-կաթոլիկներ 12,000 և հայ-բողոքականներ 15,000): Հայերից յետոյ գալիս են յոյները (մօտ 40,000), իսկ քրիստոնեաների մնացած մասը կազմում են երոպական և ուրիշ ազգեր: Մահմէդականների մէջ տիրապետող տարրը կազմում են օսմանցիները կամ թիւրքերը (մօտ 140,000), իսկ մնացածը պատկանում են մահմէդական ուրիշ ազանդների և ցեղերի:

Դոկտ. Շաֆֆերի գիտական աշխատութիւնը առհասարակ մի շատ լաւ ձեռնարկ է նրանց համար, որոնց ցանկանում են Հին Կիլիկիայի կամ ներկայ Ադանայի վիլայէթի աշխարհագրութեան և մասամբ էլ ներկայ զրութեան հետ ծանօթանալ: Այդ աշխարհագրութիւնը իր ժամանակին բաւական լաւ ընդունելութիւն գտաւ երոպական աշխարհագրական գրականութեան կողմից:

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Սիմ. Բաբիեան՝ «Քանասեղծութիւններ», 1904, Պետերբուրգ.

Ոտանաւորների այս փոքրիկ ժողովածուի մէջ կան բազմաթիւ մոտիւններ: Հեղինակը պարզապէս փորձեր է արել: Չի կարելի ասել, թէ այդ փորձերը բոլորն էլ յաջողուել են: Մեծ մասամբ նրա երգերը տարտամ են, որոնց մէջ պակասում է բանաստեղծական խանդն ու յոյզը: Մարդ կարգում է և իսկոյն մոռանում: Սիմ. Բաբիեան զգացմունքի և մանաւանդ խորունկ զգացմունքի երգիչ չէ: Նա թեթիւ յաջողութիւն ունի, երբ նկարագրում է խաղաղ բնութիւնը, լուռ դաշտերը, լուսընկայ գիշերները:

«Հորիզոնից երկինք սահեց

Պարզ լուսին,

«Թեքուեց թմրած առուի վրայ

Ուռենին:

«Շուրջս խաղաղ, շուրջս անդորր

Ու լուիկ,

«Միայն երբեմն շշնջում էր

Մեղմ հովիկ:

«Մնջիկ նստած անուշաբոյր

Պարտիզում

«Մինչ ուշ գիշեր ականջ դրի
Անկշտում՝
«Ոնց բնութիւնն երկնքի հետ
Ներդաշնակ
«Երգեց սիրոյ խորհրդաւոր
Մի նուագ»:

Այսպիսի պարզ նկարչական ամբողջ պատկերներ կամ կը-
տորներ աւելի կամ պակաս յաջողուած՝ պատահում են ժողո-
վածուի մէջ: Այսպէս վատ չեն նրա «Արմեանսկը», «Պերեկօպի
պարանոցի վրայ», «Պերեկօպի դաշտերում» և մի քանի ուրիշ-
ները: Դրանք բոլորն էլ բնութեան, խաղաղ տեսարաններ են.
բայց հէնց որ հեղինակը փորձում է խօսեցնել բնութիւնը, կամ
նրա մի հսկայ խաղը նկարագրել, օրինակ՝ փոթորիկ, խսկոյն
երևան է գալիս կատարեալ անկարողութիւնը: Պակասում են
ուժեղ արտայայտութիւններ, յաջող համեմատութիւններ և որ
զլխաւորն է՝ զգացմունքի թափ: Նոյնքան աղքատ են և՛ այն ոտա-
նաւորները, ուր հեղինակն աշխատել է մի որևէ իդէա դնել:
Դրանք բոլորն էլ տաղտկալի են, կամ միամիտ աշակերտական
փորձերի պէս:

Մեր անկեղծ խորհուրդն է պ. Բաբիեանին, չշտապել
հրապարակ գալ առանձին գրքերով, ուշք դարձնել սեփական
զարգացման վրայ, որ այնքան պակաս է երևում, լաւ ծանօ-
թանալ մեծ վարպետների գործերի հետ, և գրել միայն այն,
ինչ իրան խորապէս յուզում է: Ոտանաւոր կարող է գրել ա-
մեն մարդ, բայց բանաստեղծութիւնը տուած է քչերին, ըն-
տրեալներին: Մի փոքրիկ շնորք ունի պ. Բաբիան, որ կարօտ
է լուրջ, ուշադիր մշակութեան: Շտապելն անօգուտ է:

Կ. Հ.

Խ. Բաբայեան՝ «Բանաստեղծութիւններ», ա. հատոր. Թիֆլիս, 1904 թ., գի-
շըն է յիսուն կոպէկ:

Ամբողջ հարիւր երեսից մի հատորիկ է այս, ուր պ. Խ.
Բաբայեանը փոել է իր «բանաստեղծութիւնները», որպէսզի
«մեր ապագայ սերունդը նրանց մէջ գտնի իր տառապող հէգ
սրտի արձագանքները», ինչպէս ասում է հեղինակը: Ցանկութիւ-
նը լաւ է, նպատակը գովելի, բայց ծայրէիծայր քաղելով պ.
Բաբայեանի բանաստեղծութիւնները՝ մարդ միմիայն ցաւում է
հէնց հէգ հեղինակի վրայ, որ պարզապէս տարուել է իր անու-
նը մի գրքի ճակատին անպատճառ դրօշմելու պատանեկական

ցանկութեամբ: Իւրաքանչիւր—որ միանգամայն ազատ է իւր փոքրիկ խոհերը, իր մակերեւոյթային վաղանցուկ վիշտը ոտանաւորի վերածել՝ բառարանի մէջ յանգաւոր բառեր ջոկելով. այդքանը նրա իրաւունքն է. բայց երբ անպատրաստ, տհաս մտքի արտայայտութիւնները տպագրուում են և գրուում հասարակութեան առաջ, անմեղ զբօսանքը դառնում է անմիտ սնապարծութիւն:

Շուրջ տասն և հինգ տարուայ աշխատանք է պ. Բաբայեանի ժողովածուն. սա մի ժամանակ է, որի ընթացքում այսպէս թէ այնպէս պիտի գոնէ մի հատիկ ոտանաւորի մէջ արտայայտուէր նրա տաղանդը թէկուզ չնչին չափով: Եւ ի՞նչ. այս հարիւր երեսի մէջ ոչինչ. ոչինչ չկայ, որ հեռաւոր իրաւունք տար պարոնին բանաստեղծի անունով հրապարակ գալ:

Մենք փոքր ազգ ենք, մեր գրականութիւնը, մեր բանաստեղծութիւնը, մեր միտքը և առհասարակ մեր կեանքը տակաւին խեղճ է, նեղ է. և սակայն նոյնիսկ այդ խեղճութեան մէջ այսպիսի «բանաստեղծութիւնները» տեղ չեն կարող ունենալ, դրանք վիրաւորական են հասարակական ճաշակի, զգացմունքի, արժանապատուութեան համար: Զարժէ նոյնիսկ օրինակներ բերել, որովհետեւ ամբողջ գիրքը ծայրէիծայր տափակ խօսքերի, անդոյն պատկերների, բանալ՝ դարձուածքների, կեղծ արցունքների մի ժողովածու է միայն, բայց և այնպէս չենք ուզում հեռաւոր կասկած թողնել ընթերցողի սրտում դէպի մեր վերաբերմունքի արդարութիւնը: Այս նպատակով մենք կը դիմենք ոչ թէ պ. Բաբայեանի առաջին տարիների ոտանաւորներին, որոնց համարնա կ'ունենայ գուցէ պատանեկութեան արդարացումը, այլ վերջին տարիներին:

«Սակայն հասաւ կեանքիս աշուն,

«Թառամեցի ես արդէն.

«Այդպէս թօշնեց վարդը նախշուն,

«Երբ որ հասաւ իր վաղէն» (եր. 98):

Հիանալի է, այնպէս չէ՞—երբ որ հասաւ իր վաղէն,—և այս գոհարը պ. Բաբայեան գրել է տարի ու կէս առաջ, 1902 թուին:

«Կը գայ նորից մի վառ գարուն,

«Կը բողբոջի մի նոր վարդ,

«Սակայն, աւանդ, այդ նոր տարուն

«Ես կը լինեմ ննջող մարդ» (եր. 99):

Առայժմ, ինչպէս տեսնում էք, պ. Բաբայեանը ոտանաւորներ գրող մարդ է, անշուշտ նաև հաց ուտող, ման եկող, ասող, խօսող, ծիծաղող մարդ, ինչպէս լինում են մահկանացուները. յետոյ

նա կը դառնայ «ննջող մարդ», իհարկէ՝ նախապէս թողնելով հայ ազգին իր ոտանաւորները:

Եւ այդ ոտանաւորների մէջ ինչե՛ր ասես նա չի ասել.

«Աշխարհ, աշխարհ, ունայն աշխարհ,—

«Արտասուների մի աղբիւր.

«Աշխարհ, աշխարհ, փշոտ աշխարհ,

«Տանջանքներդ են բիւր ի բիւր» (եր. 62):

Եւ սա մի ամբողջութիւն է, վերնագիրն է «Աշխարհ». մի ամբողջ երես թուղթ է բռնել:

Ահա մի ուրիշը.

«Բախտից երկար հալածվեցի՝

«Երկրից երկիր թափառելով,

«Անհուն տանջանք ես կրեցի,

«Որոնաժա չը գտնելով» (եր. 48):

Ոչ երեւակայութիւն, ոչ ստեղծագործող փոքրիկ շնորհք, ոչ զգացմունք, և այս ողորմելի տողերը, որոնք աւելի վատ են, քան լրագրական ամենասովորական յօդուածները երաշտութեան, ցանքերի և ճանապարհների վատութեան մասին, պ. Բաբայեան անուանել է «բանաստեղծութիւններ»: Բոլորը կեղծ է, տգեղ ու շաբլոն այդ ոտանաւորների մէջ, և ճշմարտութիւնը «Մեծ մարդկանց գրուածները» վերնագրով չորս տող ոտանաւորի մէջ է, որ մեր կարծիքով ներկայացնում է հեղինակի իսկական հոգեբանութիւնը, երբ նա վճռեց հրապարակ դալ բանաստեղծ անունով: Իւրաքանչիւր իսկական մեծութեան, օր.՝ մի Դանտէի, Անջելօի, Շէքսպիրի առաջ, կամ լայնարձակ ծովի վրայ, փոթորկի տակ, հսկայ ջրվէժի հանդէպ մարդ ինքնիրան զգում է փոքրացած, համարեա ոչնչացած, որպէս մի ողբալի հիւլէ տիեզերքի մէջ, բայց պ. Բաբայեան համոզուած է թէ՛

«Ամեն անգամ, երբ կարդում ենք

«Մենք մեծ մարդկանց գրվածներ,

«Այն ժամանակ մեզ կարծում ենք

«Նրանց նման գրողներ» (եր. 74):

Միթէ... այդ դէպքում հայ գրականութեան նախանձախընդիր անձանց մնում է միջոցներ ձեռք առնել, որ պ. Բաբայեանն էլ երբէք «մեծ մարդկանց գրվածներ» չկարդայ, թէ չէ՝ նրա հատորները վերջ չեն առնի:

Զգիտեմ ուրիշներն ինչպէս, բայց մենք անկեղծօրէն խորհուրդ կը տայինք պ. Բաբայեանին միանգամ ընդմիշտ վարդնել գրիչը և էլ երբէք մի հատիկ տող ոտանաւոր չգրել:

Կ. Հ.

«Շֆել» արժում գեղարուեստական, Դ. պրակ, Գնունի-Մարիմ, Թիֆլիս, 1904.

Գնունի և Մարիմ փորձում են մեր հասարակութեանը և՛ քաղաքական հասկացողութեամբ գեղարուեստի ճաշակը տալ: Այս է վկայում նրանց «Շֆել» գեղարուեստական արժումի դ. պրակը, որ այս օրերս լոյս տեսաւ Թիֆլիսում: Ով որ ծանօթ է քաղաքական նոյն օրինակ գործերին, հեշտութեամբ կը համաձայնուի, որ Գնունի և Մարիմ իրանց արուեստով համարեա յետ չեն մնում քաղաքականից: Գեղարուեստական արժումի դ. պրակով մեր առջև դրուած են շէն ու անշէն ու յիշատակարաններով հարուստ մեր հայրենի երկրի տաան իրօք շքեղ նկարներ, 30×40 սմ. մեծութեամբ. «Հայր Յօհանայ վանքը», «Հաղբատ», «Մանահին» և Անիի աւերակների տեսարաններ: Տեսել ենք այդ բոլորը և՛ ուրիշների աշխատութեամբ, տեսել ենք նրանց յաջող լուսանկարները, բայց այս «Շֆել» արժումը գերազանցում է բոլորին և գոհացնում ամենապահանջկոտ ճաշակը: Մարդ հաճոյքով է նայում այդ հինաւորաց յիշատակարանների գունատ ստուերներին, նրանց մռայլ ու մթին խորշերին, նւրբաքանդակ զարդերին, բոլոր այդ աւերակներին, որոնց վրայ փայլփլող պայծառ շողքն անգամ խորին թախիծ ունի իր խաղերի մէջ: Անիի գրադարան համարուած շէնքի սքանչելի քանդակները այս նկարների վրայ դուրս են եկել որպէս քնքոյշ ծաղիկների գեղարուեստական շարք, որին մարդ նայում է նայում և չի կշտանում: Եւ յետոյ Անիի պարիսպները իրանց մռռայլ վեհութեամբ, իրանց այլանդակ ու բողբոջ բացուածքներով, հաստ ու գալարուած թիկունքների ծակոտիներով, որոնց վրայ լոյսն ու ստուերը մի յաւիտենական մրցութեան մէջ են, հիանալի նիւթ են տուել արժում կազմողներին: Եւ ամառութիւնը շրջակայքի, և՛ երկինքը այդ բոլորի վրայ չոր ու անհամբոյր, որի վրայից քանիմի գունատ ամպեր անցնում են շտապով, ասես եկել են մի ցաւոտ ակնարկ ձգելու գեղեցկութեան ու սրբութեան այդ անդառնալի աւերածի վրայ: Այս բոլորը հիանալի կերպով են կատարուած:

Զգիտենք ինչ յաջողութիւն են ունեցել Գնունի-Մարիմի միւս հրատարակութիւնները (ա. բ. գ. պրակները), բայց անկեղծ կերպով կը ցաւէինք, որ այսքան գեղեցիկ գործը իր սկզբնաւորութեան մէջ խեղդուի որպէս պղնձուած հողի մէջ տընկած բոյս: Մեր միջավայրը առհասարակ Մոլոխ է շատ գեղեցիկ յղացումների, բարձր խոհերի համար: Մի թոհչքով եւրո-

պայի հետ շփուած մեր հասարակութեան գլուխը մի շփոթ է, ուր լաւն ու վատը խառնուած են իրար, նրա զգացմունքին ու խելքին կերակուր տուողը յաճախ երկրորդն է և ոչ առաջինը: Այսպիսի գեղարուեստական գործերը, որոնք հայրենի աւանդութիւնները, մեր անցեալի մեծութիւնը, մեր ալեգարդ հնութեան թողած այսքան գեղեցիկ ժառանգութիւնը կապում են ազնուացնող արուեստի հետ, քարին ու գեղեցիկը լծորդում, իրօք խոշոր դաստիարակիչ նշանակութիւն կարող են ունենալ: Կորած, մոլորած խրճիթներում դարերի ընթացքում լուռ ապրում է տոհմային բնազդը, որ ինքնըստինքեան գեղարուեստ է. այնտեղից աւելին չենք կարող պահանջել. բայց մեր զանգեցնում, ուր այնքան բան է մեռնում ամեն օր, լաւ կը լինի որ գոնէ հայրենի երկրի յիշողութիւնները կենդանի մնան: Նրանք կրթիչ են և ազնուացնող. առանց դրանց երիտասարդ սերնդի հայեացքը դառնում է բութ և հոգին անըզգայ:

Ա. Ա.

Х. А. Вермишев: „Материалы для исторіи грузино-армянскихъ отношеній,“ С.-Петербургъ, 1904 г.

Հայ-վիրական յարաբերութիւններ... ահա մի հարց, որ մի փայլուն ապացոյց է թէ ինչպէս երբեմն ըստ երևոյթին առողջ գլուխներով մարդիկ կարող են յափշտակուել արսուրդով, տէգեր կոտորել հողմաղացների վրայ և միանգամայն գոհ մնալ իրանց արածից:

Պ. Վերմիշեան իր այս աշխատութիւնով մատը դրել է հէնց մի այդպիսի արսուրդի վրայ և անկողմնակալ ու սառն դատողութիւններով ցոյց է տալիս թէ որքան կեղծիք, որքան դիտաւորեալ, թունոտ չարակամութիւն կայ այն մարդկանց վարմունքի մէջ, որոնք հայ-վիրական անմիտ, հրէշաւոր հարցի տխրահոչակ հեղինակներ կարող են համարուել: Ահա այդ մարդկանց կարգին է պատկանում վրաց մէջ յարգ վայելող բանաստեղծ Իլ. Ճաւաւաձէն շնորհիւ իր «Հայ գիտունները և բողոքող քարերը» վերնագրով աշխատութեան, որի քննադատութեանն է նուիրուած պ. Վերմիշեանի գիրքը:

Իշխան Ճաւաւաձէն ինչպէս երևում է իր գիրքը գրելիս կրկնակի նպատակ է ունեցել, նախ իբր թէ պաշտպանել վրաց ազգը հայ գիտունների յարձակումներից և երկրորդ որքան կարելի է առատ ցեխ չպրտել ամբողջ հայ ազգի վրայ: Պ.

Վերմիշեանի լըջմիտ, ուղղադատ քննադատութեամբ պարզուած է սակայն, որ Ճաւճաւաձէի առաջին նպատակը մի կատարեալ անհեթեթութիւն է, որովհետեւ ոչ մի գիտուն հայ երբէք չի էլ մտածել վիրաւորել վրաց ազգութիւնը, հերքել նրա արժանիքը: Այսպիսով հրապարակի վրայ մնում է միայն մի գիրք, գրուած վրացի բանաստեղծի ձեռքով յատկապէս հայ ժողովըրդին վիրաւորելու, ստորացնելու նպատակով:

Ծայրէիծայր քաղելով պ. Վերմիշեանի գիրքը մարդ ակամայ գալիս է այն տխուր եզրակացութեան, որ յաճախ ամենաօթտուած հոգիներում անգամ սուտը, բամբասանքի ցանկութիւնը կարող է խոշոր անկիւն գրաւել: Եւ արդարեւ ահա քեզ մի մարդ՝ իշխ. Ճաւճաւաձէն, մի կըթուած մարդ, տաղանդաւոր բանաստեղծ ասում են, գրուած միանգամայն բարեպատեհ պայմաններում կշռադատելու, քննելու, որոճալու համար այն, ինչ կամենում է ասել մի հարեան ազգի, կամ նոյնիսկ սեփական ժողովրդի մասին, և ի՞նչ, այդպիսի մարդը կարողացել է հրապարակաւ առանց տատանուելու տարածել միայն ստեր, աջ ու ձախ փոել միայն վիրաւորանքներ այս կամ այն յարգելի անուան հասցէին և համոզուած լինել թէ ինքը կատարում է հայրենասիրական մի գործ: Արժէ կարգաւ պ. Վերմիշեանի գիրքը համոզուելու համար թէ մինչև որ աստիճան աբսուրդ կարող հասնել թէկուզ մի տաղանդաւոր բանաստեղծ, որի հայրենասիրութիւնը հարեաններին հայհոյելուց, ստորացնելուց աւելի հեռու չի անցնում:

Դուրս է գալիս ըստ իշխ. Ճաւճաւաձէի, որ հայերը պատասխանատու են ոչ միայն այն բոլորի համար, ինչ գրել են վրացիների մասին հայ գիտունները (Էմին, Պատկանեան, Խուդաբաշեան, և ուրիշները), այլ և այն բոլորի համար՝ ինչ գրել են օտարները — ինչպէս Սինեակի, պր. Մարր, Գոլմստերմ, Ֆրանսիացի Կուտուլի և ուրիշները: Եւ բոլոր այս ականաւոր գիտունները ըստ Ճաւճաւաձէի ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի գաղտնի դաւադիր ընկերութեան անդամներ, որոնց միակ նպատակն է իրանց գիտական աշխատութիւնների մէջ ստորացնել, սեւեռնել վրացիներին և ի հաշիւ նրանց բարձրացնել հայերին:

Պ. Վերմիշեան համբերութիւն է ունեցել տողաւորող հերքել այս այլանդակութիւնները և հերքել է սառն, հեղինակաւոր ոճով:

Նա բարեխղճօրէն բրքրել է անհրաժեշտ օտար և հայ աղբիւրները, համբերութեամբ կատարել է համեմատութիւններ, առաջ է բերել ճշգրիտ բնագիրներ, պարզել, լուսարանել է այդ բոլորը առանց մի վայրկեան կորցնելու իր հոգու խաղա-

դուժինը, իր անաչառ վերաբերմունքը դէպի փափուկ գործը:

Ընթերցողը վրդովւում, յուզւում է հետեւելով Ճաւճաւաձէի անհեթեթութիւններին, բայց պ. Վերմիշեանի փոյթը չէ, նա շարունակում է կազմալուծել բամբասանքների այդ կոյտը և միանգամայն օրհեկտիւ ձևով դնել հասարակական դատաստանի առաջ վրացի այս տարօրինակ հայրենասէրի մտքի գոհարները:

Պ. Վերմիշեանի գիրքը համոզիչ է. ընթերցողը, եթէ նա դիտաւորեալ ձևով չի փակում իր հոգին ճշմարտութեան առաջ, պարզապէս տեսնում է, որ վրացի բանաստեղծը իր աշխատութեամբ մի վատ ծառայութիւն է մատուցել իր ազգին, աշխատելով նրան ցաւալի թիւրիմացութիւնների մէջ ձգել թէ իր և թէ իր հարևանների վերաբերմամբ: Այո, ընթերցողը համոզւում է, բայց կը համոզուի՞ արդեօք ինքը իշխ. Ճաւճաւաձէն, շիտակութիւն կ'ունենա՞յ խոստովանելու իր սխալը: Կարծում ենք որ ոչ, որովհետև այստեղ սխալի մասին խօսք լինել չի կարող, Ճաւճաւաձէի ամբողջ գործը դիտաւորեալ, գաղտագաղի թռնոտ, գիտակցական բամբասանքների մի կոյտ է: Պ. Վերմիշեան իրաւունք ունի, երբ խօսելով Ճաւճաւաձէի տարածած ստերի մասին, բացագանչում է.

«Եւ միթէ այդ բոլորից քաշւում է Ճաւճաւաձէն. բաւական է, որ նա կարողանայ աղմուկ հանել, ճշալ, ահալուջ բարձրացնել թէ վրաց ազգի սրբութիւնները անարգւում են, բաւական է, որ հրապարակ է գալիս որպէս ազգային սրբազան արժանիքի պաշտպան. ո՞ւմ բանն է կտրուել հետամուտ լինել նրա ասածների ճշմարտութեան և ո՞վ կը հաւատայ որևէ մէկի հակաճառութեանը, երբ խօսում է հայերի գէմ, երբ բաց է անում հայերի խարդաւանքները ինքը իշխ. Իլիա Ճաւճաւաձէն, վրաց արդի գրականութեան փայլն ու փառքը»:

Այս ասողը հայ է, որ չնայելով իր բոլոր անաչառութեան, իր անկողմնակալ քննադատական ոգուն, շահագրգռուած օտարին և մասնաւանդ վրացուն կարող է թուալ ոչ առանց յետին մտքերի: Բայց ահա թէ ինչ է ասում նոյն հարցի մասին մի հեղինակաւոր և ձեռնհաս օտար մարդ՝ ինքը պրոֆ. Մարր:

«Տեսն երկու տարի է, ինչ մենք կարդում ենք հայերէն, տաս տարի է, ուսումնասիրում ենք հայ հեղինակներին մասնագիտօրէն, բայց հայ պատմադրերից, հայ գրողներից և ոչ մէկի երկերում մենք երբէք չենք գտել մի կտոր, ուր վրացիների ինքնուրոյնութիւնը ենթարկուէր այդպիսի ծայրայեղ կասկածի կամ հեզնութեան: Ընդհակառակը, եթէ հայ հեղինակներ չլինէին, վրաց անցեալի բաւական խոշոր մասը ծած-

կուած կը մնար յաւիտենական խաւարով: Վրացի թագաւորների արժանիքների, նրանց իշխանների արիւթեան մասին գրում են ոչ միայն հայ պատմագիրները, այլև հայկական ձեռագրերի յաւելուածների մէջ: Այս փաստը գիտութեան մէջ արգէն յայտնի է, և եթէ նոյն փաստը ըստ արժանոյն չէ գընահատուած վրաց հասարակութեան կողմից, պատճառը վրաց պատմութեան վերաբերեալ հայկական նիւթերի անպէտքութիւնը կամ անբաւարարութիւնը չէ, այլ իրանց վրացիների անծանօթութիւնը հին-հայկական գրականութեան և նոյն անծանօթութեան վրայ հիմնուած թշնամութիւնն է դէպի այն բոլորն, ինչ հայկական է: Եւ հայ գիտական շրջանը, որ լաւագոյն արտայայտիչն է ազգային գիտակցութեան զարգացման, ինչպէս և հայ ինտելլիգենցիան ոչ միայն համբերող ոգի ունի, այլ սիրով ուշադրութեան է առնում վիրական ազդեցութիւնը հին հայկական կեանքի վրայ: Յիշատակելի է, որ ոչ թէ մի վրացի, այլ հայ գիտուն Ի. Տաշեանը պարզեց թէ ինչ կարևոր դեր է իրացրել հայ գրականութեան մէջ վրացերէն ձեռագիրը յոյն գրող Պրոկլիսի մի փիլիսոփայական աշխատութեան, որ միջին դարերում ահագին նշանակութիւն ունէր» («Материалы», եր. 221):

Մի ուրիշ տեղ պատասխանելով վրացի գրող Ակակիային հայերի վրայ արած իր յարձակումների առթիւ պրոֆ. Մարր ասում է.

«Մենք համարձակ ձեռով կարող ենք պնդել, որ ոչ մի լըրջմիտ հայ գրող չի թոյլ տայ իրան վրացիների մասին գրել այնքան վայրենի բաներ, ինչքան ասել է հայերի մասին իր յօդուածում Ակակիան, այս առաջնակարգ վրացի գրող է» (նոյն տեղը):

Այսպէս է խօսում համակրելի գիտնականը հայ-վիրական յարաբերութիւնների մասին: Աւելի լաւ պատասխան տալ բոլոր Ակակիաներին և Ճաւճաւճէներին անկարելի է: Մի հարց, միայն մի հատիկ հարց սակայն կարելի է ուղղել այն բոլոր վրացի պարոններին, որոնց հայրենասիրութիւնը հայերին հայհոյելուց, ստորացնելուց հետո չի անցնում: Եւ այդ հետեւալն է. ի՞նչ էք վնդրում, պարոններ, ի՞նչ շահ ձեր ժողովրդին, որ օտարները ձեր շնորհիւ հայերի մասին վատ գաղափար կազմեն. միթէ դրանով վրաց ազգը կը բարձրանայ և ընդհանուր յարգանքի և ուշադրութեան առարկայ կը դառնայ: Միթէ վերջապէս մեր իրականութեան մէջ չկան աւելի կենսական, աւելի շահեկան խնդիրներ, աւելի ազնիւ, խելացի գործունէութիւն, քան արուեստական ձեռով փոխադարձ ատելութեամբ

թիւն զարթեցնելը դարաւոր հարեաններէ մէջ, որոնց նիւթական և բարոյական գերազանց շահերը պահանջում են միմիայն բարի հարեանութիւն և համերաշխ գործունէութիւն քաղաքակրթական ճանապարհին:

Ա. Ա.

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԴՐՔԵՐ

1. Իշխ. Ա. Սմբատով՝ «Դաւաճանութիւն», զրամա, թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեան, Թիֆլիզ, 1904, գ. 50 կ.:
2. Լամբայ՝ «Վէպք ի դերից Շէկսպիերայ», թարգմ. յանգլ. թ. Տ.-Ստեփանոսեան, Վենետիկ, 1903, գ. ?
3. Ա. Զելով՝ «Մարդը պատեանի մէջ», թարգմ. Ա. Բարուլձ, Շուշի, 1904, գ. 7 կ.:
4. Բժ. Դ. Տէր-Գրիգորեան՝ «Յղի ու ծննդական կնոջ առողջապահութիւնը», Թիֆլիս, 1904 թ., գ. 10 կ.:
5. А. С. Дагбашянъ: „Полный русско-армянскій словарь“, VI выпускъ, Тифлисъ, 1904, ц. 1 р.:
6. Ա. Վ. Ղլգճեան՝ «Միջազգային իրաւունք», Ալեքսանդրապոլ, 1904, գ. 50 կ.:
7. Վ. Փափագեան՝ «Խեղօք աքաղաղներ» և «Դրախտը», հրատ. Թիֆլ. հրատ. Ընկ., Թիֆլիս, 1904, գ. 5 կ.:
8. Խ. Բաբայեան՝ «Վաղաժամ մահ», ողբերգութիւն 5 ար., Թիֆլիս, 1904, գ. 1 ը.:
9. Ա. Ա. Ահարոնեան՝ «Արազը», Թիֆլիզ, 1904, գ. 80 կ.:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

ԲԻՕԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ *)

V

Գետնի մէջ աղբոց բակտերիաները: Բակտերիաները յաճախ փշացնում են մեր խմիչքներն ու սնդարար նիւթերը: Բակտերիաներն առաջացնում են տարափոխիկ հիւանդութիւններ: Վարակիչ հիւանդութիւնների պատուաստումը: Պրոֆ. Մեչնիկովի «Փաղոցիտների թէօրիան»:

Մի շարք բակտերիոլոգները հետազոտութիւնները ցոյց տուին, որ գետնի վերևի շերտերում վխտում են բակտերիաները, այդտեղից նրանք անդադար տարածւում են օդի և ջրի մէջ: Դիտողութիւնը ցոյց տուեց, որ բակտերիաների մեծագոյն մասը տարածւած է հողի ամենավերևի շերտերում (երկու ոտնաչափ հաստութեամբ): Երեք ոտնաչափ խորութեան վրայ հողի մէջ պակասում է բակտերիաների քանակութիւնը, իսկ 10 ոտնաչափ խորութիւն ունեցող շերտերում համարեա այլևս չեն լինում բակտերիաներ:

Մի քանի գիտնականների հաշուով վերևի շերտերում հողի իւրաքանչիւր մսխալը պարունակում է մինչև 20,000,000 բակտերիա, իսկ երբ հողը կեղտոտուած է լինում զանազան օրգանական նիւթերով (օրինակ կենդանիների աղբով, կենդանիների և բոյսերի փթող մնացորդներով...), այն ժամանակ հողի մէկ մսխալը պարունակում է միքանի հարիւր միլիոն բակտերիա: Մանաւանդ շատանում է բակտերիաների թիւը այն դէպքում, երբ հողի մէջ լինում են փթող դիակներ. օրինակ՝ հետազոտութիւնը ցոյց տուեց, որ գերեզմանատների հողը պարունակում է անհամար բակտերիաներ:

Դիտնականները երկրորդ քայլն արին. աշխատեցին որոշել հողի մէջ գտնուած բակտերիաների տեսակները: Պար-

*) Տես «Մուրճ», № 7.

զուեց, որ գետնի բակտերիաները բաժանուում են մի քանի խմբերի, որոնցից իւրաքանչիւրը մի նշանաւոր գործ է կատարում հողի մէջ:

Օրինակ՝ հողի բակտերիաների մէկ խումբը քայքայում, լուծում է կենդանիների դիակները և բոյսերի մնացորդները (разлагающая, гнилостная бактерия): Այդ բակտերիաների կատարած ահագին դերը պարզելու համար յիշենք, որ բոյսերը իրանց կեանքի ընթացքում միացնում են ընտելծեան ամենապարզ հանքային նիւթերը և նրանցից կազմում են քարոգ գործարանաւոր քաղաղրութիւններ: Որովհետև կենդանիները յաճախ կերակրւում են բուսեղէնով, ուստի նրանց մարմինները ևս կազմուած են բարդ օրգանական նիւթերից: Առհասարակ կարելի է ասել, որ բոյսերի և կենդանիների (նաև մարդկանց) մարմինը բաղկացած է գլխաւորապէս բարդ օրգանական բաղադրութիւններից:

Հէնց որ մարդիկ կամ կենդանիները մեռնում են (բոյսերը չորանում են), նրանց դիակների վրայ թափւում են փթեցնող, լուծող բակտերիաների անթիւ լեգէոններ, որոնք քայքայում են դիակների մէջ եղած բարդ օրգանական բաղադրութիւնները: Այդ գործողութեան հետևանքը այն է լինում, որ կենդանիների և բոյսերի մարմինները կազմող բարդ օրգանական նիւթերը փթելով (բակտերիաների շնորհիւ)՝ առաջացնում են պարզ հանքային նիւթեր: Ուրեմի լուծող, քայքայող բակտերիաները վերադարձնում են հողին այն պարզ հանքային նիւթերը, որ բոյսերը ծծել էին հողից: Ազատուած պարզ նիւթերից նորից կազմւում են նոր զարգացող բոյսեր ու կենդանիներ և այլն:

Այն, ինչ որ մնում է, պէտք է քայքայուի, վերլուծուի տարրական նիւթերի, որպէսզի նոր զարգացող օրգանիզմները կարողանան անել — ահա բնութեան ամենամեծ օրէնքներից մէկը: Այդ օրէնքի գործադրութեան ժամանակ ամենամեծ դերը, ինչպէս տեսանք, կատարում են բակտերիաների միջանի տեսակները (bacterium coli, bacterium liquefaciens և ուրիշները): Այդպիսով պարզ է, որ լուծող, քայքայող բակտերիաները օգտաւէտ գործ են կատարում բնութեան մէջ, որովհետև առանց նրանց մի կողմից կենդանիների դիակները չէին կարողանալ լուծուել, միևս կողմից նոր զարգացող բոյսերը պարզ անոգարար նիւթեր չլինելու պատճառով կը չորանային, իսկ առանց բուսեղէնի կենդանիները ևս կը կոտորուէին:

Գետնի բակտերիաների երկրորդ խումբը (nitrosomonas

nitrobacter) նոյնպէս վերին աստիճանի օգտաւէտ դեր է կատարում: Ընթերցողը յիշելիս կը լինի (ինչպէս հաղորդել եմ նախորդ էջերից մէկում), որ բոյսերի համար անհրաժեշտ մանրաբար նիւթերից մէկն էլ բորակածնի բաղադրութիւնն է (բորակատ): Երբ այդ կարևոր նիւթը բացակայում է հողից, այդտեղ բոյսերը չեն կարողանում աճել *): Բակտերիօլոգների բազմաթիւ հետազոտութիւնները ցոյց տուին, որ վերոյիշեալ անհրաժեշտ մանրաբար նիւթը—բորակատը—կազմւում է հողի մէջ բակտերիաների շնորհիւ: Երբ որևէ պատճառով այդ բակտերիաները բացակայում են, հողի մէջ չէ կազմւում բորակատ: Ուրեմն, այդ բակտերիաները խիստ կարևոր են մանաւանդ երկրագործութեան համար:

Բացի վերոյիշեալ բակտերիաներից գիտնականները հողի մէջ գտան մի շարք շլասակար (պաթոգեն) բակտերիաների սաղմերը: Օրինակ՝ պարզուեց, որ հողի մէջ լինում են Նարինքի բակտերիաները, խոլերայի եւ թորախտի բակտերիաները, կարկամութեան բակտերիաները (бакт. столбняка, bacillus tetani) և այլն:

Ամենավտանգաւորն այն է, որ այդ բակտերիաների սաղմերը ընդունակ են երկար տարիներ մնալ հողի մէջ՝ պահպանելով միևնոյն ժամանակ իրանց թունաւոր գորութիւնը: Օրինակ՝ գիտնական Միքէլը վերցրեց փոքր քանակութեամբ հող, որի մէջ կային $6\frac{1}{2}$ միլիօն բակտերիա (ի միջի այլոց կային և կարկամութեան բակտերիաներ), և ածելով հողը բակտերիաների հետ մէկ անօթի մէջ՝ ամուր փակեց անօթի բերանը: Տասնութեց տարի պահելուց յետոյ Միքէլը բացեց անօթը և ի մեծ զարմանս իւր նկատեց, որ բակտերիաների սաղմերի մեծագոյն մասը կենդանի է մնացել: Այդպիսով, ինչպէս տեսանք, օդը, ջուրը և մանաւանդ հողը սովորաբար լցուած են լինում բակտերիաներով, որոնց մէկ մասի գործունէութիւնը կարելի է համարել օգտաւէտ, միւսների գործունէութիւնը ընդհակառակը սաստիկ շլասակար է մարդկանց համար:

Սակայն պէտք է ասել, որ գիտնականները բարեխիղճ կերպով ուսումնասիրելով այդ տարօրինակ էակների կեանքը, եկան այն եզրակացութեան, որ շլասակար բակտերիաների դէմ կոխ մղելը թէեւ հեշտ չէ, բայց եւ անկարելի չէ: Եթէ յաճախ բակտերիաները սաստիկ զարգանալով մեր շուրջը՝ ահագին շլասաներ են հասցնում մեզ, այդ պատահում է մեր

*) Բացի ընդդէմներից, որոնք կարող են աճել այնպիսի հողում, որի մէջ չկայ բորակածնի բաղադրութիւն:

անհողութեան կամ տգիտութեան շնորհիւ. մեզնից է կախուած ոչնչացնել բակտերիաներին կամ բազմացնել անհամար թուով: Իսկ բակտերիաների դէմ կոտուելու ամենագորեղ միջոցը համարուում է մաքրութիւնը:

Գիտութեան այդ եզրակացութիւնը վերին աստիճանի մը խիթարական է, նա չէ յուսահատեցնում մեզ, այլ ընդհակառակը շեշտում է, որ մարդիկ եթէ կամենան, կարող են սահմանափակել և նոյնիսկ դադարեցնել այդ վտանգաւոր էակների գործունէութիւնը:

Երբ բակտերիոլոգները պարզեցին նոր գիտութեան (բագտերիոլոգիայի) հիմնական խնդիրները, այն ժամանակ հնարաւոր եղաւ բացատրել շատ երևոյթներ, որոնք մինչև այդ ժամանակ անբացատրելի էին համարուում կամ բացատրւում էին անհիմն դատողութիւններով: Բացի այդ՝ շատ երեւոյթների իսկական պատճառը գտնելուց յետոյ հնարաւոր եղաւ դարման գտնել անախորժ երևոյթների դէմ:

Օրինակ՝ պարզուեց, որ երբ գինիները թթւում կամ դառնանում են, երբ կաթը թթւում կամ առհասարակ փչանում է, երբ միսը կամ պանիրը փչանում են և այլն և այլն—այդ բոլորը կատարւում է օդի մէջ գտնուած բակտերիաների շնորհիւ: Բացի այդ՝ բակտերիաները առաջացնում են տարափոխիկ հիւանդութիւններ մարդկանց շրջանում, անխնայ կոտորում են եղջիւրաւոր կենդանիներ, հիւանդացնում ու կոտորում են շերամի որդերին. հաւերը և այլ թռչունները յաճախ մեծ թուով ոչնչանում են էլի նոյն բակտերիաների շնորհիւ...

Այժմ համարեա բոլոր վերոյիշեալ երևոյթների դէմ դարման են գտել գիտնականները, շնորհիւ այդ միջոցների այժմ հնարաւորութիւն կայ ոչ միայն բակտերիաների վնասակար ազդեցութիւնից պահպանել մեր բազմաթիւ մանդարար նիւթերը և խմիչքները, այլև մահից փրկել բազմաթիւ մարդկանց և կենդանիներին:

Գիտնական Պաստիօրը բազմաթիւ համոզեցուցիչ փաստերով ապացուցեց, որ գինու, գարեջրի և կաթնի «հիւանդութիւնները» առաջանում են բակտերիաների շնորհիւ. յայտնի է, որ օդից անընդհատ փոշի է թափւում և ծածկում առարկաները. փոշու հետ թափւում են նաև բակտերիաների սաղմեր:

Հասկանալի բան է, որ փոշու հետ սաղմերը ընկնում են նաև զանազան հեղուկների մէջ. գինու և գարեջրի մէջ բակ-

տերիաների սաղմեր ընկնում են արդէն այդ խմիչքների պատ-
րաստելու ժամանակ: Այնպէս որ ամուր փակած շշերի գի-
նու մէջ միշտ լինում են սաղմեր, որոնք բարեպատեհ հանգա-
մանքներում բազմանում են և առաջացնում «հիւսնդու-
թիւններ», այսինքն փչացնում են խմիչքը: Նոյն ձևով են կա-
տարւում նաև կաթնի փոփոխութիւնները (թթուելը և այլն):
Կաթնի բակտերիաների քանակութեան մասին գաղափար տա-
լու համար բերեմ մէկ աղիւսակ, որ պատկանում է գիտնական
Ֆրէյդենրէյխին. այդ բազտերիօլոգը զննեց կաթը կթելուց յե-
տոյ իսկոյն և միքանի ժամից յետոյ և մէկ խորանարդ սան-
տիմետր կաթնի մէջ գտաւ հետևեալ թուով բակտերիաներ.

Կթելուց յետոյ իսկոյն 1 խոր. սանտիմետրի մէջ 27,000 բակ.

» 4 ժամ յետոյ » » » » 34,000 »

» 9 » » » » » 100,000 »

» 24 » » » » » 4,000,000 »

Պարզ է, որ սովորական կաթը պարունակում է բաւու-
րիաների ահուկի քանակութիւն: Նոյն հետազօտութիւնը
կատարեցին նաև ուրիշ գիտնականներ և ստացան մօտաւորա-
պէս նոյն թուերը:

Կաթնի միկրոօրգանի մեծագոյն մասը պատկանում է ան-
վընաս բակտերիաների թուին, բայց երբեմն լինում են կաթնի
մէջ նաև վտանգաւոր բակտերիաների սաղմեր, այն է պալու-
րախտի (туберкулез), հարինքի, խոլերայի, քութէշի և այլ
հիւսնդութիւնների բացիլներ:

Կաթը, դարեջուրը և գինին բակտերիաների ազդեցութիւ-
նից (փչանալուց) պահպանելու համար Պաստօրը առաջարկեց
մէկ միջոց, որ ի պատիւ նրա կոչւում է pasteurisation: Այդ
միջոցը նրանում է կայանում, որ վերոյիշեալ հեղուկներով
լցուած ու ամուր փակած շշերը և ընկղմում են ռաբ ջրի մէջ.
Ջրի տաքութիւնը մօտաւորապէս պիտի լինի 60—70 աստի-
ճան: Ջրի տաքութիւնից շշերը նրանց մէջ գտնուած հեղուկը
ևս տաքանում են, իսկ այդչափ տաքութեանը չին դիմանում
հեղուկների մէջ գտնուած բակտերիաները: Տաք ջրի մէջ մի-
քանի րոպէ պահելուց յետոյ կարելի է հաւատարմ լինել, որ
խմիչքների մէջ եղած բակտերիաների սաղմերը ոչնչացել են:
Դիտողութիւնը ցոյց տուեց, որ վերոյիշեալ կերպով տաքացը-
րած շշերը անվնաս պահում են գինին տասնհազ աստիճանի
ընթացքում:

Նոյն միջոցով կարելի է պահպանել փչանալուց նաև կա-
թը: Փորձը ցոյց տուեց, որ Պաստօրի առաջարկած միջոցը

շատ նպատակայարմար է. այժմ այդ միջոցի գործադրութիւնը մեծ ծաւալ է ստացել գիւղատնտեսութեան մէջ:

Ես կանգ չեմ առնիլ այն վնասների վրայ, որ հասցնում են բակերիաները շերամապահութեանը և գիւղատնտեսութեան միւս ճիւղերին. ընթերցողը այդ մասին տեղեկութիւններ կը գտնէ իմ բրոշիւրի մէջ *): Իսկ այժմ կ'անցնեմ տարափոխիկ հիւանդութիւններ առաջացնող բակտերիաներին:

Մենք արդէն գիտենք, որ բակտերիօլոգները պարզեցին այդ հիւանդութիւնների էութիւնը. նրանք հաստատապէս ապացուցեցին, որ տարափոխիկ հիւանդութիւնների պատճառը բակտերիաներն են: Խոլերան, ժանտախտը, քութէշը, «ծաղիկ» հիւանդութիւնը, կարմրուկը և միւս նոյնանման հիւանդութիւնները՝ առաջանում են առանձին-առանձին բակտերիաների գործունէութեան պատճառով. Այս գիւտը XIX դարի ամենափայլուն գործերից մէկն է համարւում: Իրաւ, այդ գիւտի նշանակութիւնը հասկանալու համար ընթերցողը թող մտաբերէ, թէ ի՞նչպիսի աւերումներ էին անում այդ հիւանդութիւնները հընումը, և որքան նուազել է նրանց ազդեցութիւնը մեր ժամանակներում. առաջուայ ժամանակները այդ հիւանդութիւնները անցնում էին երկրագնդի վրայով ինչպէս մի զարհուրելի մըրրիկ՝ տեղ-տեղ ոչնչացնելով ազգաբնակչութեան մէկ քառորդը կամ նոյնիսկ կէսը, իսկ այժմ գոնեա քաղաքակիրթ երկրներում այդպիսի երևոյթները անկարելի են դարձել:

Հին ու նոր գաղափարների զանազանութիւնը նրանումն է կայանում, որ հին ժամանակներում ցանկանալով բացատրել վարակիչ հիւանդութիւնները՝ դրանց պատճառները որոնում էին յաճախ հիւանդ օրգանիզմից դուրս. օրինակ՝ այդ հիւանդութիւնները վերագրում էին որևէ գերբնական ոյժի: Մինչդեռ այժմ համոզուած ենք, որ այդ հիւանդութիւնները առաջանում են որոշ «թոյնի» շնորհիւ, որ այդ «թոյնը» բաղկացած է շատ մանր կենդանի էակներից—բակտերիաներից, որ յաճախ վնասակար բակտերիաները հիւանդ օրգանիզմից ընկում են առողջների մէջ և նրանց նոյնպէս վարակում: Տարափոխիկ հիւանդութիւնների տարածուած դէպքում՝ բակտերիօլոգները իսկապէս կռիւ են մղում բակտերիաների դէմ, աշխատում են բակտերիաներին ոչնչացնել կամ զրկում են նրանց բազմանալու և տարածուելու միջոցներից: Երբ

*) «Լուի Պաստեօր»:

բակտերիաների դէմ մղած կռիւը կատարւում է եռանդով, այն ժամանակ հիւանդութիւններն էլ քանի գնում՝ այնքան նուազում են և վերջապէս բոլորովին անհետանում են:

Անհրաժեշտ է աւելացնել, որ այդ նոր գաղափարները հեշտութեամբ չեն հաստատուել գիտութեան մէջ. ընդհակառակը՝ գիտնականները հսկայական աշխատանք են գործ դրել այդ մտքերը տարածելու համար: Բացի այդ՝ նոր գաղափարները հանդիպեցին մեծ գիմադրութեան բազմաթիւ հակառակորդների կողմից. առաջ ոչ միայն ժողովուրդն էր հակառակում նոր վարդապետութեան, այլ հէնց գիտնականների մէկ մասը չէր ընդունում նոր հայեացքը. շատերը պնդում էին, թէ վարակիչ հիւանդութիւնների պատճառը ամենևին կենդանի էակները չեն կազմում:

Այս ասպարիզում ամենից շատ արդիւնք են ցոյց տուել իրանց նշանաւոր հետազոտութիւններով Պաստեօրը, Դավէնը, Լիստերը, Կոխը, Մեյնիկովը, Բուռն և ուրիշները:

Դրանք ոչ միայն պարզեցին տարափոխիկ հիւանդութիւնների «թոյնի» էութիւնը, այլև շատ հիւանդութիւնների բակտերիաներ դուրս հանեցին հիւանդ օրգանիզմից և մանրամասն ուսումնասիրեցին նրանց: Նրանք նոյնպէս ապացուցեցին, որ եթէ որևէ պաթոգեն բակտերիաներ, զիցուք պալարախտի բացիլները, սրսկէք առողջ մարդկանց մարմնի մէջ, դրանցից շատերը կը հիւանդանան նոյն հիւանդութեամբ:

Պաթոգեն բակտերիաները զանազան ճանապարհներով են մտնում առողջ օրգանիզմների մէջ. երբեմն վարակումը կատարւում է օդի, երբեմն սննդի միջոցով, երբեմն բակտերիաների տարածողը լինում է հիւանդի սպիտակեղէնը կամ ներա արտաթորութիւնները (լորձուները և այլն)...

Պաթոգեն բակտերիաները մտնելով առողջ օրգանիզմի մէջ՝ կամ բազմանում են և տարածւում օրգանիզմի բոլոր հիւսուածքներում, կամ թէ տարածւում են միայն մարմնի մի որոշ մասում:

Ընդհանուր կարծիք կայ, որ բակտերիաները մնասում են օրգանիզմին իրանց թունաւոր արտադրութիւններով («տոկսին»):

Յաճախ պաթոգեն բակտերիաների մի որևէ օրգանիզմի մէջ մտնելուց յետոյ իսկոյնեթ հիւանդութիւն չէ առաջանում. երբեմն բակտերիաները մարմնի մէջ մտնելու և հիւանդութիւնն արտայայտուելու մէջ անցնում է որոշ ժամանակ. այդ ժամանակամիջոցը կոչւում է «իմփրման շրջան» (инкубационный период): Օրինակ ջրվախութիւնը սովորաբար ար-

տայայտուում է կատաղած կենդանու կծելուց (բակտերիաները մարմնի մէջ մտնելուց) մօտաւորապէս քառասուն օր յետոյ:

Հարկ եմ համարում մի քանի խօսք ևս ասել այն նշանաւոր գիւտի մասին, որ վերաբերում է վարակիչ հիւանդութիւնների բժշկութեան: XIX դարում ընդհանուր ընդունելութիւն գտաւ հիւանդութիւնների «թոյնի» պատուաստման միջոցը: Բազմաթիւ հետազոտութիւններ ցոյց տուին, որ երբ մարդկանց կամ կենդանիներին պատուաստում են վարակիչ հիւանդութիւնների թոյնը, կամ ուրիշ խօսքերով՝ երբ մարդկանց կամ կենդանիների կաշու տակ սրսկում են վարակիչ հիւանդութիւնների բակտերիաները — այդ միջոցը լաւ պաշտպանում է նոյն հիւանդութեամբ վարակելուց: Հանրածանօթ իրողութիւն է, որ այդ միջոցով կարելի է պաշտպանուել օրինակ «ժադիկ» հիւանդութիւնից:

Նոյն միջոցը գործադրեց Պաստեօրը ջրվախութիւնից բժշկելու ժամանակ: Ռուս գիտնական Նաւկինը փորձեց պատուաստել մարդկանց խոլերայի բակտերիաները: Փորձեր ատուեցին նաև ժանտախտի բակտերիաները պատուաստելու:

Մանաւանդ լաւ հետեանքներ տուեց ջրվախութեան պատուաստումը: Ինչպէս վերև ասեցինք, կատաղած շան կամ դայլի կծելուց յետոյ անցնում է մօտաւորապէս 40 օր մինչև հիւանդութեան արտայայտուելը: Ահա այդ «խմորման շրջանից» օգտուեց Պաստեօրը ջրվախութեան բժշկութեան համար: Այդ ժամանակամիջոցում նա միքանի անգամ սրսկում էր ջրվախութեան թոյնը հիւանդի կաշու տակ: Առաջ Պաստեօրն աշխատեց հնար գտնել ջրվախութեան թոյնը թուլացնելու, որ և յաջողուեց. նա նկատեց, որ եթէ միքանի օր պահենք կատաղութիւնից մեռած ճագարի ողնուղեղը, վերջինի մէջ գտնուած թոյնի ոյժը կը պակասի: Վերջապէս Պաստեօրը եկաւ այն եզրակացութեան, որ կատաղութիւնից մեռած ճագարի թարմ ողնուղեղը պարունակում է շատ զօրեղ թոյն, երկու օր պահելուց յետոյ թոյնը քիչ նուազում է, իսկ եթէ ողնուղեղը պահենք երկու շաբաթ, նրա թոյնը կամաց-կամաց կը նուազի և երկու շաբաթից յետոյ կը լինի շատ թոյլ:

Պաստեօրը առաջ սրսկում էր հիւանդի կաշու տակ ամենաթոյլ թոյնը (երկու շաբաթ պահածը), յետոյ ամեն օր զօրեղացնելով թոյնը, հասնում էր ամենազօրեղ թոյնին (թարմ ողնուղեղ), որից յետոյ բժշկութիւնը վերջացած էր համարուում: Պաստեօրը ապացուցեց, որ եթէ այդպիսի բժշկութիւն կատա-

րուի, խմորման շրջանը անցնելուց յետոյ հիւանդը չէ կատաղում, հակառակ դէպքում կատաղութիւնը անխուսափելի է:

Պաստեօրի առաջարկած միջոցը հաւանութիւն գտաւ ամեն տեղ. այժմ շատ քաղաքներում թէ Եւրոպայում և թէ Ռուսաստանում բացուած են պաստեօրեան կայարաններ^{*} և այդ կայարաններում բժշկւում են Պաստեօրի մեթոդով այն հիւանդները, որոնց կծել են կատաղած կենդանիները:

Միքանի գիտնականներ փորձեցին բացատրութիւն տալ պատուաստման երևոյթներին: Ցանկալի էր պարզել այն հարցը, թէ պատուաստած թոյնը ի՞նչպէս է պաշտպանում նոյն հիւանդութեամբ վարակուելուց: Կամաց-կամաց բակտերիօլոգները եկան այն եզրակացութեան, որ այս երևոյթներում ամենամեծ դերը կատարում են արիւնի սպիտակ գնդակները:

Անցեալ դարի երկրորդ կիսում գիտնականները նկատեցին, որ արեան սպիտակ գնդակները շրջապատում և կլանում են այն մանդարար հատիկները, որ պատահում են իրանց ճանապարհին: Երբ կլանած հատիկները անմարսելի են լինում, սպիտակ գնդակները լուծում և մարսում են: Նոյնպէս պարզուեց, որ սպիտակ գնդակները յաճախ կլանում են նաև արեան հնացած կարմիր գնդակները:

Այս խնդիրը առանձին կարևորութիւն ստացաւ և ամենքի հետաքրքրութիւնը շարժեց անցեալ դարի ութսունական թուականներին, երբ ռուս պրոֆեսսոր Մեչնիկովին^{**) (յաջողուեց ապացուցանել, որ սպիտակ գնդակները շրջապատում և կլանում են նոյնպէս բակտերիաներին, երբ վերջինները մշտնում են արեան անօթների մէջ: Մենք արդէն տեսանք, որ բակտերիաները զանազան ճանապարհներով կարողանում են մտնել մեր մարմնի մէջ, իսկ մարմնի մէջ՝ ըստ պրոֆեսսոր Մեչնիկովի՝ նրանք հանդիպում են սպիտակ գնդակների դիմադրութեանը: Սպիտակ գնդակները մեր առողջութեան պաշտպաններն են: Դիտողութիւնը ցոյց տուեց, որ բակտերիաները արիւնի մէջ մտնելուն պէս իսկական կռիւ է սկսում նրանց և սպիտակ գնդակների մէջ. երբ բակտերիաների թիւը փոքր է լինում, սպիտակ գնդակներին աջողւում է նրանց կլանել, ու}

*) Մէկ պաստեօրեան կայարան էլ կայ Թիֆլիսում:

**) Илья Мечниковъ առաջ պրոֆեսսոր էր Օդեսսայի համալսարանում, այժմ նա ապրում է Փարիզում և աշխատում է Պաստեօրեան Ինստիտուտում: Մեչնիկովը երեւելի գիտնականի հռչակ է ստացել իր ընկերների քիմիկական աշխատութիւնների շնորհիւ: Ընթերցողը յիշելու կը լինի, որ վերջերում նա պատուաստեց սիֆիլիսի թոյնը կապիկներին:

չնչացնել և փրկել մարմինը վարակուելուց. հակառակ դէպքում յաղթում են բակտերիաները և սաստիկ բազմանալով՝ վարակում են օրգանիզմը:

Սպիտակ գնդակները այդ յատկութեան վրայ է հիմնուած պատուաստումը: Ընթերցողը յիշելիս կը լինի, որ պատուաստելիս գործ են ածում առաջ թուլացրած թոյն (այսինքն այնպիսի թոյն, որի մէջ քիչ բակտերիաներ կան), յետոյ յաջորդաբար զօրեղացնում են թոյնը: Երբ սկզբում մտցնում ենք մարմնի մէջ քիչ բակտերիաներ, սպիտակ գնդակները նրանց իսկոյն ոչնչացնում են. երբ յետոյ կամաց-կամաց շատացնում ենք բակտերիաների թիւը, սպիտակ գնդակներն արդէն ընտելացած լինելով այդ կուռին՝ ոչնչացնում են նաև դրանց ևայլն: Ուրեմն պատուաստելով այս կամ այն հիւանդութեան բակտերիաները, մենք վարժեցնում ենք սպիտակ գնդակներին կռիւ մղել դրանց հետ:

Այս է պրոֆ. Մեչնիկովի «Փազոցիտների թէօրիան», որ այժմ հաւանական են համարում Եւրոպայում շատ գիտնականներ:

Ս. ԲԱԼԱՂԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր մամուլի զարգացման մի խոչընդոտ եւս:—Պոստային հաղորդակցութիւններից զուրկ վայրեր:—Ազատ ժամերի քուրժումական գործադրութիւն:—Գրականութիւնը քննական կեանքում:—Թագածտանգի ծնունդը:—Բարձրագոյն մանկափեսաներ եւ երաժշտիկներ:—Վիճակագրական դաստիարակներ:—Կանանց բնական ինքն. մեղքեր:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:

Գալլերի (Փրանսիացիների նախնիքների) մասին պատմում են թէ նրանք կանգնեցնում էին ճամբորդներին և հարցուփորձ անում նորութիւնների մասին: Թարմ լուրեր, նոր տեղեկութիւններ լսելու պահանջից իսկապէս զուրկ չէ և ոչ մի ժողովուրդ, թէև կեանքի ընդհանուր աննպաստ պայմանները յաճախ թուլացնում են ու բթացնում միջանի ժողովուրդների մէջ մտքի աշխուժութիւնը, հարցասիրութիւնը:

Քաղաքակրթութեամբ երկրներում այժմ իհարկէ ճամբորդներէ չեն իմանում նորութիւններ. կանոնաւոր պոստային հաղորդակցութիւնները և տեխնիկայի բոլոր կատարելութիւններով զինուած մամուլը իւրաքանչիւր օր մատակարարում են աշխարհի բոլոր ծայրերից այնպիսի մանրամասն տեղեկութիւններ, որ ամենաիզէալական ճամբորդի ուժերից վեր է: Թէ ինչպէս է դրուած այժմ լրագրական գործը քաղաքակրթութեամբ երկրներում այդ մենք ցոյց տուինք ամառգրիս 4-րդ և 5-րդ №-ում տպուած մի յօդուածում («Լրագրական գործը Անգլիայում»): Այդպէս է քաղաքակրթութեամբ երկրներում: Մինչդեռ մեզանում դեռ եւս կան բազմաթիւ դաւաճական անկիւններ, ուր մարդիկ պէտք է դիմեն գալլերի օրինակին՝ նորութիւններ իմանալու համար: Բանը այն է որ կանոնաւոր պոստային հաղորդակցութիւններից զուրկ է մեր գիւղերի մեծագոյն մասը. դրսի աշխարհից կտրուած ալդ վայրերում մարդիկ շաբաթներով պէտք է սպասեն որ պատահամբ մէկը բերի մօտագայ պոստային կայարանում իրանց հասցէով ընկած ծրարները: Բնականաբար այդպիսի պայմաններում ամենաանհեղեղ լուրերը տարածուելու համար նպաստաւոր հող են դառնում: Կար-

գին դպրոցների սակաւութեան պատճառով առանց այն էլ ընթերցողների թիւը պակաս է մեղանում. դրան աւելացրէք պոստային հաղորդակցութիւնների նկարագրած ձեւերը, և հասկանալի կը լինի թէ որքան է կորցնում տպագրական խօսքը իր նշանակութիւնը մեր գաւառներում և ինչո՞ւ այնքան դանդաղ է աճում լրագիր կարդացողների թիւը մեր գիւղերում: Նամակը, լրագիրը, ամսագիրը անկանոն և շատ ուշ են հասնում պոստային հաղորդակցութիւնից զուրկ գիւղերը, և կորչում է դրանց բնակիչների մէջ ամեն մի ցանկութիւն՝ դիմելու հեռաւոր կենտրոնների հետ մտաւոր շփման ժամանակակից յարմար ձեւերին: Հետևաբար եղած թոյլ ընթերցասիրական ձգտումներն էլ իսպառ մարում են, ոչնչանում, ժողովուրդը իր հետաքրքրութիւնը յագեցնում է այլ աղբիւրներից. պանդխտութիւնից վերադարձած համագիւղացուց կամ ճամբորդից է նա իմանում դրսում կատարուող անցքերի մասին, աշուղի երգերից է տեղեկանում մեր կեանքը յուզող ձգտումների մասին:

Պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնների բացակայութիւնը մնասում է մեր մամուլին ոչ միայն նիւթապէս ու բարոյապէս, այլ և ստեղծում է մի վիճ մեր զրոյների և գաւառական ժողովրդի մէջ. ապրելով իրարից «բէխարար»՝ դրանք դադարում են հասկանալ իրար և կազմում են իրար հետ ոչ մի առնչութիւն չունեցող աշխարհներ: Այդ հանգամանքներում գրականութիւնը արմատներ չգտնելով ժողովրդական ստուար խաւերում՝ նմանում է հողից հանուած վտիտ, օրէցօր թառամող բոյսի: Մամուլի և պոստի այդ սերտ կապակցութեան վերայ մենք սովոր չենք առանձին ուշադրութիւն դարձնել, մինչդեռ ժողովրդի մէջ ընթերցասիրութիւն տարածելու ամեն մի ծրագիր պէտք է լուրջ խոչընդոտի հանդիպի և բարի ցանկութիւնները մնան թղթի վրայ գծագրուած, մինչև որ գիւլն էլ մտնի պոստային կանոնաւոր շրջանառութեան մէջ:

Սպասել որ եթէ ոչ բոլոր, գէթ գիւղերի մեծագոյն մասը կապուի պոստային ցանցի հետ՝ նշանակում է թոյլ տալ որ դեռ տասնեակ տարիներ շարունակուի երկրի ներկայ վիճակը, մինչդեռ կարելի է օգնել գործին հէնց այժմուանից: Բոլոր ինքնօգնական ջանքերով. պէտք է միայն իւրաքանչիւր գիւղական համայնք իր սեփական ուժերով կանոնաւորի հաղորդակցութեան գործը՝ թէկուզ պահելով յատուկ մի մարդ, որ շաբաթուայ որոշուած օրերը տանի ու բերի գիւղական պոստը: Համայնքի ծախքերի վրայ դրանից կ'աւելանայ 30 - 60 բուրլի տարեկան, մի ծախք, որ յամենայն պէպս չի կարող ապարդիւն համարուել:

Պոստային հաղորդակցութիւններից կտրուած բազմաթիւ գիւղեր կան, որոնցից պանդխտել են և քաղաքներում հաստատուել շատ անհատներ. դրանք պէտք է օգնութեան հասնեն իրանց գիւղերին և վերացնելով այդ պակասութիւնը՝ նպաստեն համագիւղացիների առաջադիմութեան գործին: Վերջերումս նշկատուում է մի գովելի սովորութիւն—լրագիր կամ ամսագիր նուիրել այս կամ այն գիւղական հաստատութեան. բայց որքան է կորցնում այդ գեղեցիկ նախաձեռնութիւնն իրագործման մէջ, երբ յարգուած չէ հաղորդակցութեան խնդիրը և լրագիրն ու ամսագիրը պէտք է շաբաթներով ընկած մնան մերձաւոր պոստային կայարանում, մինչև որ պատահական մարդու ձեռքով տեղ հասնեն:

Անշուշտ պոստային հաղորդակցութիւնների բացակայութիւնը միակ պատճառը չէ ընթերցանութեան պակաս զարգացման մեզանում կամ կեանքի և գրականութեան փոխադարձ կտրուածութեան. կան գիւղեր, օրինակ Ագուլիսը, ուր սեփական միջոցներով պոստի կայարան են բացել, հեռագիր են բերել, ուր համարեա բոլորը գրագէտ են գէթ այնչափ որ կանոնաւոր նամակագրութիւն ունենան իրանց մերձաւորների հետ և սեփական գործերի ու հաշիւների վերաբերեալ, և այնուամենայնիւ լրագիրը, ամսագիրը, գիրքը անհրաժեշտութիւն, համատարած պահանջ չեն. ազատ ժամանակ անկացնելու համար ագուլիսեցին անսլայման գերադասում է թղթախաղը, բամբասանքը, կերուխումը, մոդայով պճնուիրը, թէև անկարելի է ժխտել որ այդ գիւղում համեմատաբար աւելի է տարածուած ընթերցասիրութիւնը, քան պոստային հաղորդակցութիւնից զուրկ տեղերում: Այդ օրինակը միայն ցոյց է տալիս որ ընթերցասիրութեան զարգացումը կախում ունի և՛ այլ նպատաւոր պայմաններից, մի բան որ չի հերքում պոստի նշանակութիւնը այդ հարցում: Իհարկէ ընթերցանութեան մէջ զուարճութիւն տեսնելու, ինքազարգացման պրոցեսսի մէջ հոգեկան բաւարարութիւն ղտնելու, գիրքը, ամսագիրը լաւագոյն ընկեր համարելու համար պահանջւում է մտքի և ճաշակի որոշ զարգացում, աւելի լայն մտաւոր աշխարհ, հասարակական հարցերով հետաքրքրութիւն,—բաներ, որ անկախ են ֆրակ ու ցիլինդրից, շէյֆի ու փետրագարգ գլխարկներից... Բալախանու մագուլթի մէջ շաղախուած մի մշակ կամ գործակատար, որ իր միջանի ազատ ընթացքը նուիրում է ընթերցանութեան, ինքնազարգացման—իբրև անհատ իր մտքի և ճաշակի նրբութեամբ անսաման բարձր է կանգնած այդ դատարկ ֆրակներից էլ, դեկորտէներից էլ... Մեր ընտանիքներում, դժբախտաբար, կրթութեան

նշան է համարուած բուրժուական նիւտուկացը և ստոր տեսակի գուարճութիւնները—թղթախաղը, ճոխ կերութեամբ, անմիտ պճնասիրութիւնը: Այդ թիւը կարծիքներից պէտք է բուժել մեր ընտանիքները. պրոպագանդան, աւելի կրթութեան օրինակը կաբող են կերպարանափոխել ազատ ժամանակ անցկացնելու ներկայ գոհնիկ, փուչ եղանակները. այն ժամանակ խելացի ժամանցութեան մէջ ընթերցանութիւնը կը գրաւի մեծ տեղ և մեր ընտանիքներում գրականութիւնը կը կատարի իրան վայել պատուաւոր դերը:

Լ. Ս.

Օգոստ. 20

—Անորին Մեծութիւն Թագունի Կայսրունի Ալեքսանդրա Ֆէօդորովնան բարեյաջող կերպով ազատուեց յղութիւնից ծննելով որդի—Թագաժառանգ Յեսարնիչ և Մեծ Իշխան, որ սուրբ աղօթքի ժամանակ կոչուեց Ալեքսէյ, յուլիսի 30-ին, կէսօրից յետոյ ժամը 1 և 15 բոպէին, Պետերհոֆում: Ստորագրեց Կայսերական պալատի մինիստր գեներալ-ադիւտանտ Բարոն Ֆրեդերիկս:

Բարձրագոյն մանիֆեստներ.

—«Ողորմութեամբն Աստծոյ, Մենք Նիկողայ Երկրորդ Կայսր և Ինքնակալ Ամենայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի, Լայն, Լայն, յայտնում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. այս յուլիսի 30-րդ օրը, Մեր Ամենաաւրեցեալ Ամուսին Թագունի Կայսրունի Ալեքսանդրա Ֆէօդորովնան բարեյաջող կերպով փարատուեց յղութիւնից, ծնելով Մեզ որդի, որ կոչուեց Ալեքսէյ: Ընդունելով այս ուրախալի գէպը իբրև յայտարար Աստուածային շնորհաց, որ թափում է Մեր և Մեր կայսրութեան վրայ, վերառաքում ենք Մեր հաւատարիմ հպատակների հետ միասին ջերմ աղօթքներ առ Բարձրեւելն Մեր անդրանիկ Որդու զարգացման և աճեցման համար, որ կոչուած է լինել Թագաժառանգ Աստծուց Մեզ յոնձնուած պետութեան և Մեր մեծ ծառայութեան: 1899 թ. յունիսի 28-ի հրովարտակով Մենք կոչեցինք Մեր սիրեցեալ եղբայր Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչին լինել Մեր ժառանգը մինչև Մեզ Որդի ծնուի: Այսօրուանից, Կայսրութեան պետական հիմնական օրէնքների զօրութեամբ Մեր Որդի Ալեքսէյին է պատկանում Թագաժառանգ Յեսարնիչի բարձր կոչումը և տիտղոսը նրան պատկանեալ բոլոր իրաւունքներով: Տուեալ Պետերհոֆում, յուլիսի 30-ին Քրիստոսի ծննդեան հաղար

իննհարիւր չորրորդ, իսկ Մեր Թագադրութեան տասներորդ տարին»: Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է «ՆԻԿՈԼԱՅ»:

— Ողորմածութեամբն Աստուծոյ, Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ Ամենայն Ռուսաց, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի ևայլն, ևայլն, ևայլն: Բարձրեալ Նախախնամութեան մեզ յանձնուած պետութեան բարգաւաճման և հանգստութեան, հաստատութեան պահպանութեան անշեղ հոգսի մէջ, հետեւելով Մեր անմոռանալի Նախորդների, երջանկայիշատակ Նիկոլայ I, Ալեքսանդր II և Ալեքսանդր III-ի օրինակին, Մենք Մեր նուիրական պարտաւորութիւնը համարեցինք հոգ տանել նախապէս ցոյց տալու այն միջոցները, որոնք պէտք է ձեռք առնուին արտակարգ դէպքերում: Այդ պատճառով և ի նկատի ունենալով Մեր Թագաժառանգի, Յեսարեւիչ և Մեծ Իշխան Ալեքսէյ Նիկոլայիչի անչափահասութիւնը, Մենք որոշեցինք, Կայսրութեան հիմնական օրէնքների զօրութեամբ, և Կայսերական Ընտանիքի մասին կարգադրութեան հիման վրայ, կարգադրել և յայտարարել ի տեղեկութիւն ընդհանուրի հետեւելը. 1) Մեր մահուան դէպքում նախ քան որ Մեր սիրեցեալ Որդին և Ժառանգը հասնէ Կայսրնների համար օրէնքով սահմանուած չափահասութեան հասակին, Պետութեան և նրա հետ անբաժան լեհական Թագաւորութեան և Ֆինլանդիայի Մեծ Իշխանութեան կառավարիչ նշանակուում է Մեր կողմից մինչև նրա չափահաս դառնալը Մեր ամենասիրելի եղբայր Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը: 2) Յիշեալ դէպքերում ինամակալութիւնը Մեր նախածին Որդու վրայ, ինչպէս և Մեր միւս Որդիների վրայ մինչև նրանց ամեն մէկի չափահաս դառնալը, բոլոր այն զօրութեամբ, ծաւալով, որ սահմանուած է օրէնքով, պէտք է պատկանէ Մեր ամենասիրելի Ամուսին Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնային: Մեր այսպիսի կամքի յայտարարութեամբ և հրատարակութեամբ պետութեան կառավարութեան մասին, Մեր ժառանգի անչափահասութեան ժամանակ, Մենք ամենամեծ յարգանքով դէպի Մեր հայրենիքի օրէնքները, աղօթում ենք Ամենաբարձրեալին, թող օրհնէ Մեզ մեր անդադար հողացողութեան մէջ Աստուծոյ Մեզ յանձնուած պետութեան երջանկութեան, հզօրութեան և բարգաւաճման մասին: Տուեալ Պետեր-հոֆում, օգոստոսի 1-ին, Քրիստոսի Ծննդեան հազար իննհարիւր չորրորդ և Մեր Թագաւորութեան տասներորդ տարին»: Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է «ՆԻԿՈԼԱՅ»:

—Թագաժառանգ Յեսարելիչի ծննդեան առիթով Բարձրագոյն մանիֆեստով հրամայուած է. 1) Մարմնական պատիժները յանցանքների համար գիւղական բնակիչների և այլացեղ ժողովուրդների, նոյնպէս և ուրիշ անձանց համար, որոնք չեն ազատուած այդ պատժից իրանց իրաւական դրութեամբ կամ առանձին օրէնքներով, վերացնել և այսուհետև նրանց այդ պատիժներին չենթարկել: Վերացնել այսուհետև մարմնական պատժի ենթարկելը ցամաքային և ծովային զօրքերում: 2) Շնորհել զիւրութիւններ մանիֆեստում մանրամասն թուած զանազան տուրքերի վերաբերմամբ: 3) Ներել հասանելի, բայց չմուծուած կամ չլրացրած, մինչև Թագաժառանգի ծննդեան օրը, մանիֆեստում մանրամասն թուած տուգանքները, պենիսները և պահանջները: 4) Ներել անուղիղ հարկերից գոյացած ապառիկները, բացի զրուագային (գերբովբայ) և խմիչքների պետական վաճառման ապառիկներից, նոյնպէս այն զանազան տեսակի հարկերը և պահանջները, որոնք ծախսուել են կայանաւորների պահպանութեան և ուղարկման համար և տրուել են գանձարանից մեղաւորների հաշուին՝ աննդի, ճանապարհածախսի և օրականի համար և որոնք գոյացել են մինչև Թագաժառանգի ծննդեան օրը, բայց այնպիսիները, որոնք առանձին վերցրած յիսուն բուբուլաց աւելի չեն. իսկ աւելի խոշոր ապառիկների մասին զեղջեղ իւրաքանչիւր յօդուածից յիսունական բուբուլ: 5) Ներել մինչև 1904 թ. յունուարի 1-ը գոյացած ապառիկները այն անձանց վրայ, որոնք աւելորդ թոշակ են վերցրել գանձարանից, և այն անձանց վրայ, որոնք մեղաւոր են այդպիսի թոշակները և ուճիկները անկանոն կերպով տալու մէջ և եթէ յիշեալ անձանց զէմ յարուցուած չէ մեղադրանք դիտմամբ միաս հասցնելու համար: 6) Ձնջել հաշիւներից այն միասները, որոնք պատճառուել են գանձարանին մինչև Թագաժառանգի ծննդեան օրը պաշտօնաթող զինուորներին, նրանց կանանց և այրիներին անկանոն կերպով յատկացնելով միանուագ և ցկեանս նպաստներ: 7) Ներել այն ապառիկները, որոնք մնացել են մինչև Թագաժառանգի ծննդեան օրը զանազան անձերի, հասարակութիւնների և հաստատութիւնների վրայ, հիւանդների բժշկութեան, խնամատարութեան և պահպանութեան համար բոլոր հիւանդանոցներում, լազարեթներում, բուժարաններում և ընդունարաններում, արքունական և պալատական վարչութիւններին վերաբերեալ, ինչպէս և Կայսրուհի Մարիայի վարչութեան հաստատութիւնների մէջ: Ձնջել հաշիւներից այն գումարները, որ հիւպատոսները ծախսել են արտասահմանում մինչև Թագաժառանգի ծննդեան

օրը՝ բժշկելու, պահպանելու և Ռուսաստան վերադարձնելու համար ուսւ ծովագնացներին և որ գրուած է իբր ապառիկ այդ ծովագնացների վրայ: 8) Թողնել առանց պահանջման և ջրնջել հաշիւներից գանձարանին հասնելի դրամները արքունի բնակարաններից օգտուելու և ուսուցման համար և գումարները ի հատուցումն այն ծախսերի, որոնք արուել են կրթելու և պահելու համար կրթական հաստատութիւնների մէջ գանձարանի հաշուով այն անձերին, որոնք ապագայում չեն ծառայել այնքան ժամանակ, որ սահմանուած է այն ծախքերը լրացնելու պարտականութիւնից ազատուելու համար կուտակուած և դեռ չպահանջուած ապառիկները Կայսրուհի Մարիայի վարչութեան հաստատութիւնների մէջ կրթութիւն և ուսման վճարի համար. ապառիկները, որոնք մնում են Ալտայեան և Ներչինսկէն շրջանների ծառայողների վրայ, տեղական կրթական հաստատութիւնների մէջ երթսանների պահպանութեան և ուսման հւումար: Ապատ կացուցանել 20 ր. վճարից համալսարաններում աւարտած անձերին, որոնք պէտք է ենթարկուեն քննողական ժամաժողովներում մինչև 1905 թ. դեկտեմբերի 31-ը, այն դէպքում, երբ աղքատութեան վկայական ներկայացընեն: 9) Ապատ կացուցանել ուղեւորից, պետական, պալատական և կարիսետին պատկանող հողերի վարձակալներին, ինչպէս և արքունական կալուածների վարձակալներին, այն պահանջներից, որոնք մանրամասն բացատրուած են մանիֆեստում: Ներել այն տուգանքները, որ դրուած են պետական անտառներից նիւթեր վերցնողների վրայ՝ համապատասխան վճարը ուշացնելու պատճառով և այդ անձերին վերադարձնել նրանց ներկայացրած գրաւականներից այն գումարները, որ կը մնան գանձարանին նրանց պատճառած վնասները դուրս դալուց յետոյ: 10) Թոյլատրել թեթեւացում այն նպաստների վճարման վերաբերմամբ, որոնք զանազան ժամանակներում տրուած են զանազան անձերի, հասարակութիւնների և դասակարգերի: 11) Առանց հաւաքելու թողնել այն գումարները, որոնք տրուած են պետական ձիաբուծական վարչութեան կողմից մասնաւոր անձերի և հաստատութիւնների, որպէսզի վերջիններս դրամական և նիւթական մրցանակներ ու պրիզներ տան ձիերի ցուցահանդէսներում և փորձնական վարժութիւնների ժամանակ մինչև 1903 թ., եթէ այդպիսի գումարները ծախսելու մասին արդարացուցիչ փաստաթղթեր չեն ներկայացուած: 12) Ներել և ընծայել մանիֆեստում յիշուած հիմունքներով դեռ չհաւաքած այն գումարները, որոնք գոյացել են թէ պետական և թէ Կայսրուհի Մարիայի անունով հիմնարկութիւնների վար-

չութիւնների մէջ՝ վնասների, կորուստների, յաւելումների և պակասորդների պատճառով, որոնք կազմուել են պետական հիմնարկութիւնների մէջ ծառայող զանազան կարգի անձերի անկանոն կերպով անհատական զրամական բաւարարութիւն տալուց: 13) Պետական գանձարանի հաշուով կրթել և խնամել այն օֆիցերները և զինուորների որբացած զաւակներին, որոնք մեռել են Նապոնիայի հետ ունեցած պատերազմում վէրքերից կամ այլ հիւանդութիւններից: 14) Պետական գանձարանից կենսաթոշակ ստանալու իրաւունք տալ այն բժիշկների ընտանիքներին, որոնք հասարակական ծառայութեան մէջ լինելով մասնակցել են համաճարակ հիւանդութիւնների դէմ կռուելուն և վարակուելով իրանց կեանքը զոհել են պետութեան օգտին: 15) Պատասխանատուութիւնից ազատել այն զինուորականներին, որոնք մինչև Թագաժառանգի ծննդեան օրը ամուսնացել են հակառակ սահմանուած զինուորական կարգերի: 16) Օրինական ամուսնութիւնից ծնուած զաւակներին շնորհել զրութեան նոյն իրաւունքները, ինչպիսին նրանք կը ստանային, եթէ ծնուած լինէին իրանց ծնողների ներում ստանալուց յետոյ, եթէ դրանք իրաւունքներից զրկուած են եղել, բայց նորից ներում են ըստացել մինչև Թագաժառանգի ծննդեան օրը: 17) Լեզբիմացիօնական, տոմսակներ ստանալու իրաւունք տալ այն անձերին, որոնք այդ իրաւունքից զրկուած են, եթէ դրանք 10 տարուայ ընթացքում մինչև Թագաժառանգի ծննդեան օրը ոչ մի տուգանքի չեն կենթարկուել մաքսային օրէնքները խախտելու համար: 18) Մանիֆեստում յիշուած ողորմածութիւններն ու արտօնութիւնները շնորհել այն անձերին, որոնք մինչև Թագաժառանգի ծննդեան օրը կատարել են նոյն մանիֆեստում յիշուած թէ ընդհանուր քրէական և թէ պետական ոճիրներ ու յանցանքներ: 19) Յանցաւորների ժառանգներին, ինչպէս նաև պն անձերի ժառանգներին, որոնք պատասխանատու են գանձարանի առաջ, բայց նիւթապէս անկարող են—ազատել զրամական պատասխանատուութիւնից, եթէ յանցաւոր գործողութեան օրից մինչև Թագաժառանգի ծնունդը անցել է 10 տարի:

Ֆինլանդիայի Մեծ Իշխանութեան ընակիչներին շնորհել ողորմածութիւն և առանձնաշնորհումներ հետեւեալ հիմունքների վրայ. ներել բոլոր անձնական հարկերը և հողային տուրքերը, որոնք պէտք է վճարէին առ 1-ն յունուարի 1904 թիւ և դեռ չեն ստացուած մինչև Թագաժառանգի ծննդեան օրը, ինչպէս և ապառիկ համարուող այն ստորին կարգի վճարը, որ մնում է պետական հիւանդանոցներում իրանց սեփական կամ ուրիշ մասնաւոր անձանց հաշուով մնացողների վրայ և մինչև

2400 մարկի գումար գանձարանի այն գումարներից, որոնք ապահիկ են մնում պաշտօնատար անձերի վրայ, հաստատուած որոշումներով, մանիֆեստի մէջ նշանակուած պայմաններով, ներել մինչև Թագաժառանգի ծննդեան օրը չվերադարձրուած երաշտութիւնից մնասուած տեղերում սնուցման համար փոխ տրուած դրամների, հացահատիկների և ալիւրի նախնական քանակութեան չորրորդ մասը: Յատկացնել 3,000,000 մարկ Ֆինլանդական պետական միջոցներից անձեռնմխելի Փոնդին անհողների օգտին: Ներել բոլոր այն տուգանքները, որոնք պահանջուած չեն մինչև Թագաժառանգի ծննդեան օրը և դրուած են գիւղական և քաղաքային համայնքների վրայ նրա համար, որ 1902 և 1903 թուին չընտրեցին անդամներ ղինուորակոչային ատեանների համար, եթէ այդ համայնքները կատարել են յիշեալ պարտաւորութիւնը: Թոյլատրել, չվախենալով պատժից, չթոյլատրուած հեռացման համար, Թագաժառանգի ծննդեան օրից մի տարուայ ընթացքում, վերադառնալ Ֆինլանդիա, այն պայմանով, որ ղինուորապարտները անմիջապէս հայրենիք վերադառնալիս կամաւորապէս դան տեղական ղինուորակոչական ատեանը: Ազատել պատժից ծառայութեան կոչուած ղինուորապարտներին, որոնք առանց օրինաւոր պատճառների շեղուել են ղինուորական ծառայութիւնից, եթէ նրանք մինչև երեք ամիս Թագաժառանգի ծննդեան օրից դան ղինուորակոչական ատեանը: Ազատ կացուցանել դատաստանից և պատժից այնպիսի յանցանքներ գործողներին, որոնց համար որոշուած են իւրեւ բարձր պատիժ դրամական վճար ոչ աւելի 500 մարկից, բանտարկութիւն ոչ աւելի մի տարուց, հեռացումն ծառայութիւնից և որոնց դէմ մինչև Թագաժառանգի ծննդեան օրը յարուցուած չէ քրէական հալածանք կամ կայացած չէ դատաստանական վճիռ կամ որոշումն, որոնց մասին եղած մեղադրական դատավճիռը ի կատար չէ ածուած և կա՛ որոնք դեռ կրում են դատարանով սահմանուած պատիժները: Ներկայ ողորմածութիւնը չէ տարածուած այն անձանց վրայ, որոնք յանցաւոր են յափշտակութեան, գողութեան, գողացած բանի ծածկման, աւազակութեան, կեղեքման, խաբեբայութեան, կեղծման մէջ և առհասարակ այն յանցանքների մէջ, որոնց հետեանքն է քաղաքացիական վատահոլութիւնից զրկուելը կամ երկրի ծառայութեան մէջ մնալու անարժան յայտարարուելը, ինչպէս և չէ տարածուած այն անձանց վրայ, որոնք մասնաւոր մեղադրութեան ենթակայ յանցանքներ են գործել: Իսկ այդ յանցանքները գործողներին կամ այնպիսի յանցաւոր գործողութիւններ կատարողներին, որոնց համար օրէնքով սահմանուած

հն աւելի բարձր պատիժներ, քան վերոյիշեալները, պակասեցընել պատիժը մի երրորդ մասով, իսկ սաստիչ տան մէջ ցկեանըս բանտարկման դատապարտութեան նշանակել այդ բանտարկութիւնը 14 տարի: 21) Ֆինլանդիայի ընդհանուր նահանգապետը պէտք է նկատողութեան առնէ այն միջոցները, որոնք կարող են ձեռք առնուել թեթեւացնելու համար այն անձանց վիճակը, որոնց արգելուած է բնակութիւնը Ֆինլանդիայում և ներկայացնէ իր ենթադրութիւնները Բարձրագոյն հայեցողութեան:

— Հրամանն զինուորական վարչութեանը. Թագաւոր Կայսրը Թագաժառանգ Յեսարեկի ծնունդը յաւերժացնելու համար բարձրագոյն բարեհաճեց թեթեւացնել ոճիր գործածները վիճակը. դրա հետ միասին Նորին Մեծութիւնը Ամենաողորմած ուշադրութիւնը դարձնելով ոճիր գործած զինուորական ծառայողների վրայ, որ կատարուած է բացառապէս զինուորական վարչութեան մէջ, որոնց վրայ չէ տարածուած մանիֆեստի զօրութիւնը, Բարձրագոյն բարեհաճեց հրամայել. 1) Ներել իրանց կոմանդանտների բացակայածներին, արձակուրդի ժամանակն անցկացրածներին, ծառայութեան կոչուածներից օրէնքի որոշած ժամանակը ծառայութեան չեկողներին և մի զօրամասից միւսն անցնելու ժամանակ, արձակուրդից ծառայութեան կոչելու ժամանակ, հիւանդանոցից դուրս գալուց յետոյ ևայլն, եթէ նրանք՝ այս օրուանից սկսած՝ միտաբերուած ընթացքում կամաւոր կերպով կը գան տեղական ոստիկանական կամ զինուորական վարչութեան մօտ և եթէ նրանք փախած կամ բացակայ ժամանակամիջոցում՝ բացի ապօրինի բացակայութիւնից՝ չեն կատարել ոչինչ ինչպէս և բացի զինուորներին անհրաժեշտ պետական զգեստը տանելուց ուրիշ յանցանքներ, որոնք տեղի են տալիս քրէական կամ ուղղիչ պատիժների, որ միացած են իրաւունքներից և արտօնութիւններից զրկուելու կամ կրճատման հետ: Այս կէտի զօրութիւնը տարածել այն զինուորականների վրայ, որոնք ապօրինի բացակայութիւնից կամաւոր կերպով վերադարձել են մինչև այսօր, և որոնց մասին եղած գործերը մինչև օրս դեռ չեն վերջացել: 2) Ծառայութիւնից դուրս արածներին, որոնք զրկուել են և աստիճաններից, համարել ծառայութիւնից վաղուած՝ առանց աստիճաններից զրկուելու. դրա համեմատ էլ նրանց, որոնք դեռ չեն դատապարտուած բայց որոնք ենթակայ են ծառայութիւնից արձակման աստիճաններից զրկուելուն, այդպիսիներին ենթարկել արձակման, միայն առանց աստիճաններից զրկելու: 3) Նրանց, որոնք ենթակայ են հաստ-

րակ զինուոր դառնալու, իբր պատիժ՝ արձակել ծառայութիւնից՝ առանց աստիճաններից զրկելու, տալով իրաւունք ծառայութեան մտնելու իբր հասարակ զինուոր՝ մինչև դրա համար նշանակուած 3-ամեայ միջոցը լրանալը:

4) Առանց աստիճաններից զրկելու ծառայութիւնից արձակուածներին, եթէ նրանք դատաւարտուած են այնպիսի յանցանքների համար, որոնք կատարուած չեն շահագիտական կամ այլ ամօթաբեր դիտումներից, համարել պաշտօնից հրաժարեցըրած, նոյնպէս և նրանց, որոնք ենթակայ են կամ ենթակայ կարող էին լինել ծառայութիւնից արձակման՝ առանց աստիճաններից զրկուելու՝ դրանց հրաժարեցնել ծառայութիւնից, չտարածելով այս՝ յիշուած ստորացուցիչ յանցանքներում մեղադրուողների վրայ: (Ծանօթութիւն: Այս կէտում որոշուած կանոնը տարածուած է այն գործողութիւնների վրայ, որոնք նախատեսուած են ընդհանուր մանիֆեստի 19-դ յօդուածի 2-դ կէտի մէջ, որ ենթակայ է գործադրութեան ամբողջ զօրութիւնով՝ զինուորականների վերաբերութեամբ: 5) Նախընթաց կէտում յիշուած հիմքերի վրայ՝ հրաժարեցումով փոխարինել նոյնպէս ծառայութիւնից արձակուածներին՝ առանց աստիճաններից զրկուելու և ուրիշ իրաւագոյնութիւնների, միաւորուած բերդում ժամանակաւոր բանտարկութեան հետ: 6) Այն անձերին, որոք մինչև Թագաթառանգի ծննդեան օրը այնպիսի յանցանքներ գործելու համար, որոնք չեն մտնում 4-դ և 5-դ պարագրաֆների տակ, կը դատաւարտուեն ծառայութիւնից արտաքսման առանց աստիճաններից զրկուելու կամ որոնք արդէն յիշեալ յանցանքների համար այդ պատիժը կրել են, վճիռը օրինական ոյժի մէջ մտնելու օրից 10 տարի անցած, իրաւունք տալ նորից մտնել պետական և հասարակական ծառայութեան:

7) Ծառայութիւնից հեռացնելը՝ ինչպէս արդէն դատաւարտուածների նոյնպէս և այդ պատիժն ենթակայների համար՝ փոխարինել ծառայութիւնից արձակումով: 8) Կրճատել մի պատժի մի երրորդը բերդերում ժամանակաւոր բանտարկութեան ծառայութեան մի քանի իրաւունքների և արտօնութիւնների կրճատումով կամ ուրիշ աւելի կարեւոր հետևանքներում, նոյնպէս և զինուորական բանտում պահուողներին՝ նոյն սահմանափակումներով, ինչպէս այդ պատիժներն արդէն կրողներին, նոյնպէս և նրանց, որոնք ենթարկուելու են այդ պատիժներին: 9) Այն օֆիցերներին և պաշտօնեաներին, որոնք բանտարկուած են կամ ենթակայ են բանտարկութեան առանց իրաւունքների և արտօնութիւնների սահմանափակութեան՝ ծառայութեան գործում և կարգապահական պատիժների, դրանց

ազատել այդ պատիժներից, չտարածելով այս կէտի զօրութիւնը այն անձերի վրայ, որոնք ծառայութիւնից պէտք է արձակուեն զիսցիպլինար կարգով: 10) Ուղղիչ կամ զիսցիպլինար բատալիօնների և վաշտերի մէջ պահելու ժամանակամիջոցները, նոյնպէս և զինուորական բանտերում բանտարկութեան ժամանակամիջոցները թէ արդէն դատապարտուածների և թէ դատապարտութեան ենթակայ անձերի համար կրճատել մէկ երրորդը: 11) Այն զինուորներին, որոնք գտնւում են պատժուածների շարքում ծառայութեան ժամանակը երկարացնելով կամ առանց դրան՝ ազատել, սակայն չտարածելով այս կէտի զօրութիւնը այն զինուորների վրայ, որոնք գտնւում են ուղղիչ մասերում և բանտարկուած են զինուորական բանտերում կամ ենթակայ են պատիժներին, միայն այդ մասերում և տեղերում են գտնւում: Նմանապէս ներել զինուորների վրայ դրուած տուգանքները և համարել նրանց անբիծ ծառայող զինուորների շարքում: 12) Զինուորների միակեաց բանտարկութեան ժամանակ զինուորական բանտում, թէ կարողութեան որոշ իրաւունքներ ունեցողները և թէ չունեցողները, ենթարկել բանտարկութեան, բայց առանց փոխադրելու տուգանքի ենթարկուածների կարգը կրճատելով բանտարկութեան ժամանակամիջոցը մի երրորդով: 13) Պատժից ազատել ստորին աստիճանաւորներին, որոնք կարգապահական կարգով, դատարանով կամ իշխանութեան կարգադրութեամբ ենթարկուելու են պատժի: 14) Իշխանութեանը թոյլատրել խնդրելու՝ ա) չհաշուել այն տուգանքները, որոնք արգելւում են ծառայողական պարգէներ ու առաւելութիւններ ստանալու այն օֆիցերներին և աստիճանաւորներին, որոնք տուգանքի են ենթարկուել, ծառայողական ցանկի մէջ անցկացնելով, թէկուզ այդպիսի խնդիրների համար սահմանուած ժամանակամիջոցը անցած կը լինի: Բ) Ունտեր-օֆիցերի աստիճան տալ այն անձերին, որոնք դատարանով հասարակ զինուորի աստիճանին են ցածրացրած, իսկ եթէ նրանք արդէն ունտեր-օֆիցերի աստիճան ստացել են, այն ժամանակ տալ օֆիցերի կամ առաջին կարգի աստիճան պարգէներ ստանալու արգելք, չհաշուելով կրած տուգանքները. այն անձանց համար, որոնք չեն օգտուել դրանցից: (Ծանօթութիւն. յօդ. 10 ում և յօդ. 14-ի ա. կէտում յիշուած որոշումները իրանց զօրութիւնը պահպանում են նաև պահեստի և արտօնութիւն ունեցող զինուորականների վերաբերմամբ). 15) Պատժից ազատել այն զինուորականներին, որոնք քրէական օրէն. 1035 յօդ. համաձայն ենթարկուել են 2 ամիս ժամանակամիջոցից ոչ աւելի ձերբակալութեան կամ մե-

նակ բանտարկութեան զինուորական բանտում՝ առանց փոխադրելու պատժուածներէ կարգը կամ իրաւունքներն ու արտօնութիւնները սահմանափակելու: 16) Իսկ եթէ 15-րորդ կէտում յիշուած կարգով զինուորական բանտում բանտարկուածի ժամանակամիջոցը 2 ամսից աւելի է—կրճատել այդ ժամանակամիջոցը $\frac{1}{3}$ -ով, եթէ հաստատուի յանցաւորի բարի վարքը: (Ծանօթութիւն. այս կէտում յիշուած ողորմածութեան գործադրութիւնը թոյլատրուած է Հեռաւոր Արևելքի սահմանների գաւառներում և նահանգներում զօրքերի հրամանատարներին—Նորին Մեծութեան փոխարքային): Միապետական այդպիսի ողորմածութեան մասին յայտնուած եմ զինուորական վարչութեանը պատշաճաւոր տեղեկութեան ու գործադրութեան համար»: Ստորագրել է գեներալ-ադիւտանտ Սախարով:

Համանման հրաման դրուած է ծովային վարչութեանը: Փոփոխութիւնները սկսուած են 13-րդ կէտի ծանօթութիւններէ մէջ: Ծանօթութիւն: Ներկայ հրամանի որոշումները, որոնք արձանագրուած են 16-դ յօդուածում և 13-դ յօդուածի ա. կէտում, տարածուած են նոյնպէս պահեստում գտնուողների և կամաւոր նաւատորմի մէջ ծառայողների վրայ, առևտրական նաւերի և ուրիշ վարչութիւնների վրայ: 15) Քրէական դատավարութեան օրինագրքի 1035 յօդուածի հիման վրայ կալանաւորման կամ միակեաց բանտարկութեան ենթարկուած զինուորները զինուորական-ծովային բանտում մինչև երկու ամիս առանց տեղափոխելու նրանց տուգանքի ենթարկուածներէ շարքը և առանց սահմանափակելու նրանց իրաւունքները և առաւելութիւններն ծառայութեան մէջ պատժից ազատել, իսկ երկու ամսից աւելի ժամանակամիջոցով նոյն կարգով վերև մատնացոյց արուած միակեաց բանտարկութեան ենթարկուածների համար պատժի ժամանակամիջոցը կրճատել մէկ երրորդով, երբ կը վկայուի, որ լաւ վարք է ունեցել պատիժ կրողը: (Ծանօթութիւն: Այդ յօդուածում մատնացոյց արուած շնորհների գործադրութիւնը յանձնուած է գլխաւոր հրամանատարներին և այն անձանց, որոնք, վայելում են նրանց հետ հաւասար իշխանութեամբ, իսկ փոխարքայութեան սահմաններում Հեռաւոր Արևելքում—Նորին Մեծութեան փոխարքային): Արքայական այդպիսի շնորհների մասին յայտարարում եմ ծովային վարչութեանը պատշաճաւոր տեղեկութեան և կատարման համար:

—Բարձրագոյն հրաման զինուորական վարչութեանը օգոստոսի 10-ին Պետերհոֆում. վերացնել ֆինլանդական զինուորական շրջանը: Այդ շրջանի երկիրը և նրա վրայ եղած

բոլոր զօրքերն ու զինուորական վարչութեան հիմնարկութիւնները մտցնել Պետերբուրգի զինուորական շրջանի մէջ: Այս միջոցը դորձադրել որոշուած օրէնսդրական կարգով:

— Զինուորների համար արուած է հետեւելը. ա) պատժի ենթարկուածների շարքը կարող են ընկնել միայն դատարանի վճիռով. բ) ոռզգին դուրս է նետուում պատիժների թուից պատերազմական և խաղաղ ժամանակին պատժի ենթարկուածների համար:

— Անուական Բարձրագոյն ուկազ Կայսերական Պալատի և ուղեկների մինիստրին. «Մշտական հոգ տանելով զինուորական ծառայողների կարիքների մասին Մեր գլխաւորագոյն մտածմունքն էր ըստ կարելոյն ապահովել նրանց մանուկների դաստիարակութիւնը. այդ նպատակով Մենք Ֆինլանտների մինիստրին 1896 թուի մայիսի 14-դ օրը տուած ուկազներով հրամայեցինք, սրբազան թագադրութեան օրը յաւերժացնելու համար պետական գանձարանի գումարներից տալ իւրաքանչիւր տարի, սկսած 1897 թուի յունուարի 1-ից, հարիւր հազար թոշակների թիւը աւելացնելու զինուորական վարչութեան պաշտօնեաների աղջիկների համար Կայսրուհի Մարիայի վարչութեան տակ գտնուող իգական ինստիտուտներում և տասը հազար ըուրլի նոյն նպատակով ծովային վարչութեան պաշտօնեաների աղջիկների համար: Այժմ Ճապոնիայի հետ բռնկուած պատերազմի պատճառով, խոշոր նշանակութիւն է ստանում Ռուսաստանի պատիւը և արժանաւորութիւնը պաշտպանելով, պատերազմի դաշտի վրայ իրանց կեանքը և առողջութիւնը թագաւորին և հայրենիքին զոհ բերող Մեր քաջարի զինուորների մանուկների համապատասխան դաստիարակութեան ապահովութեան հարցը: Պետութեան ամենաառաջին պարտականութիւնն ենք համարում հոգ տանել այդ մանուկների մասին որոնք այնքան մօտ են և թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնայի սիրառատ մայրական սրտին, և ուրախութեան մէջ, որ ուղարկուած է Մեզ և Ռուսաստանին Տիրոջ շնորհով, որ արտայայտուեց թագաժառանգ Յեսարևիչի ծննդեամբ ուղղում են դէպի նրանց մեր մտածմունքները, և թող աճեն նըրանք ազնիւ և լուսաւոր մարդիկ, թող սրբութեամբ պահպանեն իրանց հայրերի յիշատակը և թող սերնդից սերունդ հաստատ և անսասան մնայ Ռուսաստանի մեծ անունը նրա լաւագոյն զաւակների պաշտպանութեան տակ: Ցանկանալով ցոյց տալ անմիջապէս Մեր հոգածութեան նշանը այն զինուորական ծառայողների երեխաների մասին, որոնք չլսասուել են կամ առանձնապէս աչքի են ընկել պատերազմի մէջ, հրամա-

յուժմ ենք ձեզ, յաւերժացնելու համար Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Յեսարեւիչ Ալեքսէյ Նիկոլաւելի-չի ծննդեան օրը, բաց թողնել իւրաքանչիւր տարի, սկսած առաջիկայ ուսումնական տարուց. 1) Մեր կաբինետից պահանջուած գումարը հարիւր ստիպենդիաներ հիմնելու համար, որոնց թւում յիսունը Մեր Անունով բոլոր զինուորական և ծովային դպրոցներում այն զինուորական ծառայողների դաւակների համար, որոնք սպանուել, վիրաւորուել կամ առանձընապէս աչքի են ընկնում պատերազմի մէջ. 2) Ուղեւի գըլխաւոր վարչութիւնից Մեր ամբողջ Ընտանիքի կողմից երկու միլիոն ըուրլու եկամուտը, պետական տոկոսաւեր արժեթղթերով, նշանակելով այդ գումարը, որ բաժանուի պատերազմի մէջ սպանուած, վիրաւորուած կամ առանձնապէս քաջութիւն գործած զինուորականների ընտանիքներին որպէս նպաստ գլխաւորապէս նրանց դաւակների դաստիարակութեան, այլև առհասարակ զանազան ուրիշ անյետաձգելի կարիքներին բաւարարութիւն տալու համար:» Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով զծաղրուած է. «ՆիկոլԱՅ»:

(«Մշակ»):

— Թագաժառանգ Յեսարեւիչ և Մեծ Իշխան Ալեքսէյ Նիկոլաւելի նշանակուած է բոլոր կազակ զօրքերի ատաման:

— Հրատարակուած է Բարձրագոյն ուկազ. «Ժողովրդական լուսաւորութեան միւսիստրութեան կառավարիչ պէներալ-լէյտընանտ Գլազովին Ամենաողորմած հրամայում ենք լինել ժողովրդական լուսաւորութեան միւսիստր»:

— Միւսիստրների կոմիտետի որոշումով՝ հաստատուած Նորին Կայսերական Մեծութիւնից՝ հրամայում է հիմնել առանձին վիճակագրական դասընթացներ: Այդ դասընթացները կամ կուրսերն ունենալու են երկու դասարան—կրտսեր և աւագ կամ ստորին և վերին: Այդ նոր կրթական հաստատութիւնը բացուելու է վիճակագրական կենտրոնական կոմիտետին կից և նրա ղեկավարորի ու դրա համար կազմուած մի յատուկ ուսումնական կոմիտետի անմիջական վարչութեան տակ: Ուսումնական յատուկ կոմիտետի կազմի որոշումը կախուած է ներքին գործերի միւսիստրութիւնից: Նոր կուրսերի նպատակն է պատրաստել տեսականապէս ձեռնհաս գործիչներ վարչական վիճակագրութեան համար: Այդ կուրսերում ընդունուելու են քոլոր ուսանապատակները, որոնք առնուազն միջնակարգ կըրթութիւն ունեն: Լսողների սկզբնական թիւը լինելու է 200-ից ոչ աւել: Ապագայում, նայելով միւսիստրութիւնների ունեցած պահանջներին վիճակագրական գիտութեան պատրաստակա-

նութիւն ունեցող անձերի, այդ թիւը կարող է մեծանալ՝ համաձայն ներքին գործերի մինիստրի բարեհայեցողութեան:

—Օրէնքների ժողովուածուի մէջ հրատարակուած է Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտի ձևափոխութեան մասին: Աւարտողներին իրաւունք է տրուած ձեռք բերել դիտնական բժշկական աստիճաններ: Օտար համալսարաններում բժշկապետի աստիճան ձեռք բերած կիներին թոյլատրուում է ուսական ինստիտուտում լեկարի աստիճանի քննութիւն տալ: Հրէուհիները կազմելու են լսողների թուի 3⁰/₁₀-ից ոչ աւելի: Ինստիտուտի համար պետական գանձարանը տալիս է տարեկան 139,900 ռուբլի: Ինստիտուտ ընդունուում են լսելու 16 տարեկանից ոչ փոքր և 28-ից ոչ մեծ հասակ ունեցող կիներ, որոնք աւարտել են իգական գիմնազիաներ կամ դրանց հաւասար որևէ ուրիշ դպրոց՝ տալով արական գիմնազիաների մի քանի լրացուցիչ առարկաներից քննութիւն:

—Բարձրագոյն որոշումներ են կայացրուած միացնելու Կայսրութեան և Ֆինլանդիայի դրամական սխտեմները. ոսկու, արծաթի և թղթի դրամները պէտք է Ֆինլանդիայում ընդունուեն տեղական դրամների հետ հաւասարապէս:

—Որոշուած է գանձարանի հաշուով շինել նոր երկաթուղի Ներսոնից մինչև Նիկոլաև (Ներսոնեան նահանգ):

—„Новъ“ լրագիրը գրում է, որ Թիֆլիսի ոստիկանապետը ոստիկանութեան բոլոր ծառայողներին համապատասխան կարգադրութիւններ անելու համար հաղորդեց, որ ներքին գործերի մինիստրը ցենզուրական կանոնադրութեան 178-դ յօդուածի և 175-դ յօդուածի 3-դ ծանօթութեան հիման վրայ (Օրէնքների ժողովածու, հատոր XI), 1900 թուի հրատարակութիւնը), անհրաժեշտ դատեց արգելել հասարակական գրադարաններում, հանրային ընթերցարաններում գործածել և փողոցներում, հրապարակներում և այլ հասարակական տեղերում ծախելը նոյնպէս և շրջիկ ծախողների միջոցով վաճառելը՝ կովկասեան ղեկուորական կոմիտէի թոյլտուութեամբ Քվիրիլի աւանում (Թութայիսի նահանգ) տպուած վրացերէն լեզուով օրացոյցը 1904 թուի համար. տպուած է Գացէչիլիձէի տպարանում 1903 թուին:

—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.

Թոյլատրուած են Մոսկուայում նոր պարբերական հրատարակութիւններ. „Телеграммы и сообщения изъ театра военныхъ дѣйствій“ ամենօրեայ թերթ, „Дѣло и Потѣха“ ամսագիր, պատկերազարդ ամսագիր՝ „Семья и Школа“:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թուս-ձապոնական պատերազմը. — Թիւրքիա:

Դաշիչաօն և Ինկօուն գրաւելուց յետոյ դիւրացաւ մարշալ Օյամաի ծրագրի իրագործումը՝ Լեաօեանի մօտ վճռողական ճակատամարտ տալ գէն. Կուրոպատկինին: Դաշիչաօի կողմից յետոյ իրար հետ շաղկապուեցան Օկուի և Նոդզուի զօրաբանակները, որոնք Կուրոկիի հետ կազմեցին մի անընդհատ աղեղ Լեաօեանի շուրջ. այդ աղեղի կենտրոնում գետեզուած էր Նոդզուի զօրաբանակը, հարաւից ունենալով Օկուի զօրաբանակը, որի ծայրը հասնում էր Նիւշժուանին, իսկ հիւսիսից՝ Կուրոկիի զօրքը, որի ծայրը յենւում էր Տայցզըխէ գետին: Եթէ ի նկատի ունենանք, որ այդ գետը հոսում է Լեաօեանից հիւսիս և Նիւշժուանը գտնւում է այնտեղ, ուր այդ գետը թափւում է Լեաօխէ գետի մէջ—մենք կը տեսնենք որ ճապոնական զօրքից կազմած աղեղի ծայրերը հասնում էին Տայցզըխէ յորդառատ գետին և այդ բնական խոչընդոտի հետ մի օղակ էր գծուած Լեաօեանի շուրջ: Լեաօեանից դէպի Մուկդենչ տանող երկաթուղային գիծն էր միակ ազատ ելքը այդ շրջագծից: Զբաւականանալով դրանով՝ ճապոնական բանակների հիւսիսային (Կուրոկի) և հարաւային (Օկու) զօրքերը մասեր էին հանել և դէպի Մուկդենչ. Ինկօուն-Նիւշժուանից Լեաօխէի ամրով դէպի վեր նշանաւոր ուժեր էին տեղափոխւում՝ նպատակ ունենալով Սինմինտինը, որ գտնւում է Մուկդենից դէպի հիւսիս արեւմուտք, իսկ Կուրոկին կամուրջներ էր պցում Տայցզըխէ գետի վրայով և իր ուժերից մաս հանում դէտի Սինցզինտին, այսինքն դարձեալ Մուկդենի ուղղութեամբ: Բացի այդ ռազմաւաւեր էին ուղարկուած Լեաօխէ գետով դէպի վեր: Պարզ էր որ Օյաման ձգտում է շրջապատել գէն. Կուրոպատկինին և, եթէ այս վերջինը խուսափի դէպի հիւսիս, կտրել նաև Մուկդենը հիւսիսային կողմից:

Յուլիսի 13-ից սկսած ճապոնական զօրքերը անընդհատ սեղմում էին աղեղը Լեաօեանի շուրջը. 18—20 նրանք գրաւեցին Իւշուլին, Եանցզլին, խայչեն և Սիմուչին: Այնուհետև

վճողական ճակատամարտը անխուսափելի էր, օգոստոսի 12-ից սկսուեց Լեաօեանի զրաւման համար երկու հզօր զօրաբանակների ընդհարումը. երկու կողմից մօտ կէս միլիօն էր մասնակցում և 1300 թնդանօթներ էին գործում Հեռաւոր Արևելքի պատմութեան այսուհետև անմոռանալի դարձնող այդ կռուի մէջ։ Ռուսները օգ. 14-ից յետ նահանջեցին Անշանչժանից, Անպինից Լեանդասանից և ճակատամարտը շարունակուեց Լեաօդանի շուրջը։ Ճապոնացիները աշխատում էին ջախջախել ռուսաց զօրքի կենտրոնը և նրա ձախ թևը շրջապատել. դրա համար Կուրոկին անցնելով Տայցզըխէ գետի աջ ափը աճապարանքով դիմում էր դէպի երկաթուղային զիծը։ Առաջ բերենք միքանի հեռագիրներ Տոկիօից և Պետերբուրգից, որոնք աղօտ գաղափար են տալիս տեղի ունեցած անցքերի մասին.

Տոկիօ (Վոլֆ)։ Պաշտօնական։ Օգոստոս 12, 13 և 14-ին Լեաօեանի մօտ եղած կռիւները մասին հաղորդւում է. օգոստոսի 12-ին առաջին բանակն սկսեց արշաւել թշնամու վրայ, որ ուժեղ դիրք էր բռնել դիք լեռնաշղթայի վրայ Լեաօեանից 23 մղոն հարաւ-արևելք։ Երեկոյեան շատ ուշ, օգոստոսի 12-ին, ճապոնական կենտրոնը կարողացաւ տիրել ռուսական դիրքերին՝ սուինի կռուից՝ յետոյ, բայց ռուսական աջ և ձախ թևերը շարունակում էին յամառ դիմադրութիւն ցոյց տալ։ Օգոստոսի 13-ին վերսկսուեց կատաղի կռիւ, բայց ռուսների դիմադրութիւնը չէր թուլանում։ Ուշ երեկոյեան ճապոնական աջ թևն արիւնահեղ կռուից յետոյ՝ յետ մղեց ռուսական ձախ թևը և խլեց 8 ռուսական թնդանօթ։ Օգոստոսի 14-ին ճապոնական բոլոր զօրասիւնները կըրկին կռուի մօտան։ Արևամուտին ռուսաց բոլոր դիրքերն ընկել էին ճապոնացիների ձեռքը. ճապոնացիները կորցրել էին 2,000 մարդ։ Միևնոյն ժամանակը ճապոնական միւս բանակներն արշաւում էին Անշանչժանի վրայ, որտեղից ռուսները յետ նահանջեցին առանց դիմադրութեան։ Ճապոնացիները հալածում էին ռուսներին, այն ինչ նոյն ժամանակը ճապոնական ուրիշ զօրախմբեր կտրեցին նրանց փախուստի ճանապարհը։ Ճապոնացիների ձեռքն անցան 8 թնդանօթ, ռազմամթերքներ և բազմաթիւ սայլեր։

Պետերբուրգ։ Գիներալ-լէյտ. Սախարովի հեռագիրը 1904 թ. օգոստ. 18-ից. «Ներկայ թուին Կուրոկիի զօրամասերն անցան Տայցզըխէ գետի աջ ափը Սական և Կանկուանտուն վայրերը, ուր գետը պտոյտ է անում։ Առաւօտեան հինգ ժամին մեր խուզարկուները պարզեցին, որ գետով անցել է դիվիզիան ոտքով։ Ճապոնացիները առաջ շարժուեցին երկու

ուղղութեամբ՝ արևմտեան և հանտայեան հանքերի ուղղութեամբ: Գետն անցնող զօրամասերը կազմեցին ծածկոյց, որ թագցնում էր մնացած զօրամասերի գետով անցնելը: Մեր առաջապահ զիւրքի վրայ օգոստոսի 18-ին սաստիկ լարուած կռիւ էր շարունակւում երեկոյեան 8 ժամից մինչև գիշերուայ 12 ժամը, երբ կատարեալ լուսթիւն տիրեց: Ինչպէս և երեկուայ թուին, կռիւը մեզ համար կատարեալապէս աջող վախճան ունեցաւ, որովհետև մենք առանց բացառութեան պահպանեցինք բոլոր մեր առաջապահ զիւրքերը: Առանձնապէս յամառ կռիւ էր մղւում զեներալ-մաիօր Կոնդրատովիչի գիվի-դիայում: Ճապոնացիները արձակեցին ահագին քանակութեամբ արտիլլերիական ուժերը: Ամբողջ օրը շրայնիւները հարուածները տակ ծածկուած մնալով՝ մեր զօրքերը հազուադէպ յամառութեամբ պաշտպանում էին իրանց յանձնուած զիւրքերը: Նախապատրաստելով յարձակումը արտիլլերիական կրակով ճապոնացիները միքանի անգամ զրոհ էին տալիս մեր զիւրքերի վերայ: Մեր ամենաառաջապահ ամբուլթիւններից միքանիսը յամառ պաշտպանութիւնից յետոյ անցնում էին ճապոնացիներին ձեռքը, բայց իւրաքանչիւր անգամ մենք նորից տիրում էինք նրանց սուիներին հարուածներով, որի ժամանակ ճապոնացիները թողնում էին բազմաթիւ սպանուածներ: Սուիներով ընդհարումից յետոյ զիւրքերի միքանի հողարածիներին առջև զօրքերը կարողացան փորել գաօլեանում մեծ թւով փոսեր. տեղ-տեղ փոսերը լցուած էին մինչև բերանը ճապոնական զինաներով: Ճապոնացիների կորուստները պէտք է ահագին լինեն, բայց մեր կորուստներն էլ, որոնք դեռ ի յայտ չեն բերուած մինչև անգամ մօտաւորապէս, նոյնպէս նշանաւոր են: Վիրաւորուած է զեներալ-մաիօր Մրոդովսկիյ. թեթև կերպով վիրաւորուած, բայց մնաց կազմի մէջ, զեներալ-լէյտենանտ բարոն Շտակիլերգ: Մեր ձեռքն անցաւ ճապոնական զէնքի նշանաւոր քանակութիւն»:

Տոկիօ. 20 օգոստոսի: Պաշտօնապէս Մարշալ Օյաման ղեկուցանում է, որ թշնամին անկարող էր դիմանալ ճապոնացիների եռանդուն յարձակման և օգոստոսի 19-ին յետ քաշուեց գէպի Լեաօհան: Ճապոնացիների աջ թիւը յարձակում գործեց ուսնների վրայ օգոստոսի 19-ին Կէյ-յինտալի մօտ, 15 մղոն գէպի հիւսիս-արևելք Լեաօհանից: Ճապոնական կորուստները օգոստոսի 16-ից կազմում են մօտ տասը հազար մարդ: Կենտրոնի զօրքի շտաբի հրամանատարը Լեաօհանի մօտ հեռագրեց օգոստոսի 20-ին առաւօ-

տեան, որ կենտրոնը շարունակում է յարձակումը մէկ գծի վրայ կանգնելու համար ձախ զօրաբաժնի հետ:

«Մինչև օգոստոսի 18-ի երեկոն այստեղ ստացուած զեկուցումները հիման վրայ պաշտօնապէս հաղորդւում է հետեւեալը. Օգոստոսի 14-ից զօրքը շարունակում է յարձակումը Լեաօեանի վրայ. օգոստոսի 16-ին առաւօտեան աջ թևը և առաջին զօրաբաժնի միջին զօրասիւնները գրաւեցին դիրքեր 9 մղոն դէպի հարաւ-արևելք Լաօեանից. Տայցղըիխէ գետի ձախ ափի վրայ: Օգոստոսի 16-ին այդ զօրաբաժինները յարձակում էին գործում Խայչենեան ճանապարհով Լեաօեանի վրայ առաջին զօրաբաժնի ձախ թևի հետ միասին: Նրանք գրաւեցին դիրքեր ռուսական պաշտպանողական գծի հանդէպ, որը ձգւում էր արևելքից դէպի արևմուտք Լեաօեանից 6 մղոն դէպի հարաւ: Օգոստոսի 17-ին ամբողջ օրը տեղի ունէր կատաղի կռիւ, որը շարունակւում էր դեռ օգոստոսի 18-ին ցերեկով: Ռուսները, կարծեմ, ունէին 12-ից մինչև 13 դիվիզիա»:

«Օգոստ. 20 (Րէյտէր): Լեաօեանի մօտ կռիւն շարունակւում էր օգոստոսի 20-ին առաւօտեան: Կուրուպատկինը ուժեղացրեց իր ձախ թևը արևելքից և հիւսիսից, յուսալով կանգնեցնել Կուրոկիի յարձակումը և պաշտպանել նահանջելու համար հաղորդակցութեան ճանապարհները: Պաշտպանուող ոյժերի մեծ մասը կենտրոնացրած է Ջէյհան-տայի դիրքում, որ օգ. 19-ի առաւօտեան ենթարկուել էր յարձակման: Կուրի հետևանքը անյայտ է: Ճապոնացիների կորուստները՝ սպանուած և վիրաւոր միասին՝ կազմում են 25,000 հոգի: Կուրոկիի զօրքերը չափազանց յոգնած և ուժասպառ են: Տայցղըիխէ գետը դուրս է եկել ափերից: Կուրոկին հնարաւորութիւն չունի շարունակելու առաջխաղացութիւն դէպի Խէյհանտայ, որտեղից թնդանօթները կարող են իշխել երկաթուղու վրայ: Օգոստոսի 19-ին Լեաօեանի մօտ կուրի ժամանակ ռուսները հրաշալի յամառութեամբ պաշտպանում էին դիրքերը, որոնք շատ լաւ պաշտպանուած են զանազան լրացուցիչ ամրութիւններով, իսկ այդ ամրութիւնները դարձնում են այդ դիրքերը համարեա անմատչելի: Ռուսները չեն բաւականանում միայն պաշտպանողական դիրք բռնելով. օգոստոսի 17-ին նըրանք քաջաբար յարձակուեցին Օկուի բանակի աջ բաղկի վրայ Սուտանի մօտ: Յարձակումը յետ մղուեց մեծ կորուստներով: Օգոստոսի 21-ին ճապոնական I բանակի գլխաւոր բանակատեղից հաղորդում են, որ ճապոնական զօրքերը դիրք են բռնել Լեաօեանի առաջը. հիւսիսարևելքում և հարաւարևմուտքում տեղի է ունենում թնդանօթային սաստիկ կռիւ. քաղաքը

և գետի վրայ եղած մթերանոցներն այրւում են: Քաղաքի միւս կողմում երևում են դէպի հիւսիս ուղևորուող գնացքներ: Ռուսներն իրանց ձեռում են պահում այն ճանապարհները, որոնք տանում են դէպի գետը, նոյնպէս և երկաթուղու գիծը: Թշնամին մեծամեծ ոյժեր ունի. տեղի է ունենում յուսահատական կռիւ. տեսարանը հրաշալի է»:

Գինեբալ Կուրոպատկին կանխատեսելով հիւսիսից կտրուելու վտանգը մեծ ջանք էր գործ դնում կանգնեցնելու Կուրոկիի առաջխաղացումը դէպի երկաթուղու գիծը, Տայցզլիխէի աջ ափով:

Օգոստոսի 20-ին, գեներ. Սախարովի խփած հեռագրից իմանում ենք որ գեներ. Օրլովը, որին յանձնուած էր ճապոնական զորքի այդ մասի դէմ գործելը, վիրաւորուելով ստիպուած էր յետ նահանջել: Օգնութեան հասան սիբիրեան առաջին կորպուսի գնդերը գեն. Շտակելբերգի հրամանատարութեամբ: Այնուհետև գործերի դրութեան մասին որոշ տեղեկութիւն է տալիս գեն. Կուրոպատկինի հեռագիրը օգոստոսի 21-ից. «Գիշերը լոյս այսօր թշնամին յարձակւած վերսկսեց և գրաւեց մեր բռնած դիրքերի մեծ մասը: Այդ դիրքերը բռնող մեր զորքերը յետ նահանջեցին դէպի վերջապահ դիրքը Սըկվանտունի մօտ, Զխանստան-Շիչենսկը գիւղերի գծի վրայ, Լեաօեանի Սըկվանտունի տարածութեան կիսում: Գիշերը լոյս այսօր առաջին սիբիրեան կորպուսը, վերջին 5 օրում ծանր կորուսաներ կրելով և գերազանց ուժերի շրջապատուելուց վտանգուած, յետ նահանջեց մի քանի վերստ արևմտեան ուղղութեամբ: Այդ պայմաններում ես հրամայեցի մաքրել Լեաօեանը և հեռանալ դէպի հիւսիս»:

Տօկիօ (Րէյտէր). օգոստոսի 22-ին ճապոնացիները գրաւեցին Լեաօեան, առաւօտեան ժամի 9-ին:

Ծովային բեմի վրայ ևս անցած ամսում տեղի ունեցան նշանաւոր փոփոխութիւններ: Պորտ-Արտուրի պաշարումը ցամաքի կողմից օրէցօր սերտ էր դառնում, ճապոնացիները մէկը միւսի յետևից գրաւում էին շրջապատող բլուրներն ու ամրութիւնները: Սակայն դեռ մինչև յուլիսի 23-ը Պորտ-Արտուրը հնարաւորութիւն ունէր, թէև մեծ դժուարութիւններով, պահպանել իր կապը ուսսաց ցամաքային զորքի հետ. այդ երևում է նրանից որ Лейтенантъ Бураковъ ականանաւը Նիւէթուանից կարողացաւ վերադառնալ իր մեկնած տեղը, Պորտ-Արտուր: Դրանից մի քանի օր առաջ, յուլիսի 19-ին, ուսսաց նաւատորմը դուրս եկաւ նաւահանգստից և կրկին վերադարձաւ իր տեղը: Սա-

կայն յուլիսի 27-ից յետոյ, երբ ճապոնացիները գրաւեցին մի քանի ամրութիւններ, աւելի ևս վտանգաւոր դարձաւ ոռոսաց նաւատորմի գրութիւնը ներքին նաւահանգիստներում, որովհետեւ տիրելով դրսի ամրութիւններին յուլիսի 25-ից ըսկսած գէներալ Նոգին չորս օր անընդհատ ռմբակոծում էր ոռոսաց նաւատորմը ցամաքից և նոյն օրերի ընթացքում ծովի կողմից էլ Տոգոն էր ռմբակոծում Պորտ-Արտուրը կէտ նպատակ դրած նաւահանգիստը: Թէ որքան առատ էր թափուող ռումբերի քանակութիւնը այդ երևում է նրանից որ միայն Ретвизанъ-ին կալաւ 17 հատ:

Այդ պայմաններում կոնտր-ադմիրալ Վիտգեֆտին այլ ելք չէր մտնում քան դուրս գալ ծովը և ճեղքելով Տոգոի ռազմանաւերի շարքը սլանալ դէպի Վլադիվոստոկ ու միանալ այնտեղից նրան ընդ առաջ լողացող յաժանաւերի հետ: Ռուսաց նաւատորմը փորձեց իրագործել այդ խիզախ ծրագիրը. յուլիսի 28-ին առաւօտեան ժամը 7-ին նա դուրս եկաւ ունենալով իր կազմի մէջ 16 նաւ. 6 զրահակիր, 4 յաժանաւ, 5 ականանաւ և 1 հիւանդանոցանաւ (Монголия):

Պորտ-Արտուրի նաւտահանգստում մնացին լիասուած Баянъ յաժանաւը, բոլոր թնգանօթանաւերը (канонерки) և ականանաւերի մեծ մասը, որոնք փոքրիշատէ լիասուած լինելով՝ անկարող էին անցնել Արտուրի և Վլադիվոստոկի մէջ ընկած մօտ 1100 մղոն տարածութիւնը:

Ռուսաց նաւատորմի դուրս գալու բոլէին հորիզոնի վրայ երևում էին ճապոնական 11 յաժանաւ և 17 ականանաւ, որոնք գնացին միանալու Տոգոի նաւատորմի մնացած մասի հետ: Ռուսաց նաւատորմը բռնեց հարաւային ուղղութիւն: Խուան-չին-տաօ կղզուց 10 մղոն դէպի արևմուտք կէսօրին վրայ հասաւ Տոգոն և շրջապատեց ոռոսաց տորմիդը: Կոնտր-ադմիրալ Վիտգեֆտին աջողուեց ճեղքել ճապոնական նաւերի գիծը և սլանալ Շանտունգ հրուանդանի ուղղութեամբ: Հալածելով փախչողներին՝ չորս ժամից յետոյ վրայ հասաւ Տոգոն, և սկսուեց ծովային տհեղ ճակատամարտը Շանտունգի հրուանդանից 20 մղոն դէպի հիւսիս: Ծապոնացիները իրանց կրակը կենտրոնացրին Цесаревичъ-ի վրայ, որի վրայ բարձրացած էր Վիտգեֆտի դրօշակը: Ծանր լիասուեց այդ զրահակիրը և նրա վրայ հերոսական մահով պատկեց իր կեանքը պորտ-արտուրեան նաւատորմի առաջնորդը: Նրա տեղը գրաւեց իշխան Ուխտոմսկիյ: Գիշերային մութը օգնեց ոռոսներին. նաւատորմի մի մասը ցրուեց դէսուդէն, իսկ մեծ մասը վերադարձաւ Պորտ-Արտուր:

Цесаревичъ գր. Безшумный և Безстрашный ականանաւ-

ւերի հետ, ապաստան գտաւ Կիաօ-չաօի ծոցում զերմանական Յզան-տառ նաւահանգստում, Новикъ-ը գնաց դէպի Վլադիվոստոկ՝ կտրելով խաղաղ Ովկիանոսի ջրերը, Рѣшительный ականանաւը ապաստան գտաւ Չիֆուում, և ընկաւ ճապոնացիների ձեռքը, Аскольдъ-ը և Грозно ականանաւը հասան Շանխայ, Бурный ճակատամարտի տեղում պայթեցրուեց իր նաւաստիներէ կողմից, Диана օգոստոսի 8-ին հասաւ Սայգոն:

Այսպէս ուրեմն միայն Новикъ-ին աջողուեց մասամբ իրազործել կ.-աղմ. Վիտգեֆտի ծրագիրը. մասամբ ենք ասում, որովհետեւ նրան թէ՛ և աջողուեց հասնել Սախալինի ափերին, սակայն Կորսակովեան պահակաւորի մօտ, Անիվա ծոցում ճապոնական Tsuchima և Chitose նաւերը վրայ հասան և տեղնուտեղը կործանեցին նրան:

Նոյնպէս անաջող էր Վլադիվոստոկեան նաւատորմի փորձը՝ միանալ Պորտ-Արտուրեան էսկադրայի հետ: Օգոստոսի 1-ին Վլադիվոստոկեան նաւատորմը տաք կռիւ ունեցաւ Կամիմուրայի նաւատորմի հետ Կորէեան նեղուցում, Փուզանի մօտ: Ռուսաց յաժանաւորից Рюрикъ-ը այնքան վնասուեց այդ կռուում որ անկարող եղաւ շարունակել նահանջը և տեղնուտեղը ջրասուզուեց: Ծովակալ Բեզորբազովը վնասուած Громобой-ի և Россия-ի հետ կարողացաւ խոյս տալ Կամիմուրայից և հասնել Վլադիվոստոկ:

Յուլիսի 28-ին և օգոստոսի 1-ին տեղի ունեցած ծովային ճակամարտերի հետեանքը այն է, որ ռուսաց նաւատորմը խաղաղ Ովկիանոսում այլևս անկարող է գեր կատարել, մինչև որ օգնութեան չհասնի Բալտիկեան էսկադրան:

Մերձաւոր Արեւելքում անցքերը այնպիսի արագութեամբ չեն հետեւում իրար, ինչպէս Հեռաւոր Արեւելքում:

Հեռագիրը հաղորդեց որ նախագահ Լիւրէն յուլիսի 16-ին ընդունել է հայոց կաթողիկոսի կողմից ուղարկուած պատուիրակութիւնը, որ դարձրել է ֆրանսիական հանրապետութեան նախագահի ուղարկութիւնը հայ ազգաբնակչութեան վիճակի վրայ թիւրքիայում. պատուիրակութիւնը կազմուած է Սարաճեան և Այվատեան արքեպիսկոպոսներից: Լրագրները հաղորդում են որ վեհափառ կաթողիկոսը պատուիրել է յիշեալ եկեղեցականներին այցելել նաեւ Լոնդոնի, Վիեննայի, Բերլինի, Հռոմի և Ուաշինգտոնի արքունիքները և ինքը ազերսագրով դիմել է ռուսաց Կայսրին, խնդրելով թիթեակցնել թիւրքահայերի անտանելի վիճակը: Առայժմ եւրոպական դիպլոմատիան դեռ ևս ոչ մի վճռական քայլ չէ արել թիւրքահայերի դրութիւնը

բարուոքելու գործում. Թիւրքիան շարունակում է կոտորել հայերին. Բիթլիսում և Մուշում հրդեհուած և կողոպտուած են հայերի տներն ու խանութները, գաւառներում շարունակւում է ջարդը. Պոլսում բանտարկուեցին 400 հոգի. բանտարկութիւններ են տեղի ունեցել Տրապիզոն, Կարին, Վան և այլ տեղերում: Այդ պայմաններում մարդ չի կարող արդարացի չգտնել գերմանական մի թերթի հետեւեալ պեսսիմիստական խորհրդածութիւնները.

Berliner Tageblatt իր առաջնորդող յօդուածում ասում է. «Դատելով նախընթաց տարիների փորձով՝ երոպական զիպլոմատիան որոշել է հայերին թողնել իրանց ճակատագրին: Եթէ Հայաստանում կատարուած խժգժութիւնների հարիւրերորդ մասը կատարուէր մի երկրում, ուր գոյութիւն ունեն երոպական շահեր, վաղուց ամեն բան կարգի բերուած կը լինէր, իսկ այնտեղ, ուր չկան երոպական շահեր, զիպլոմատիայի խիզճը շատ առաձգական է»:

Լ. Ս.

Յգ. 23

ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բագմալէպ», օգոստոս. — Պլա-
գիտտի մի ծանր մեղադրանք ենք
գտնում վենետիկեան հայ ամսագրի
այս համարում ուղղուած նոյն լիւրի
աշխատակից Բ. Խալաթեանի դէմ:
Առաջ ենք բերում այդ ցատկի փա-
տի վերաբերեալ յօդուածից կտորներ.

«... Տոյց տալու համար թէ որչափ
խտրուած են իրենք (Միլիթարեանք)
Բ. Խալաթեանի հմտութեան մասին և
անոր բանասիրական հրատարակու-
թիւններէն, հարկ կը համարիմ ծա-
նուցանել թէ՛ անոր «Արտաքսի պատ-
մադիրը Հայաստանի մասին» գրու-
թեան Ա. մասն ուր 1903-ի սկզբէն
սկսելով (թիւ 1, 2, 4, 6, 8—9) տար-
ւոյս յուն.— փետ.—ի թիւերով վերջ
գտած է՝ լոկ քարգմանուրիւն մ'ի
այժմ Կ. Պոլսոյ մէջ ապրող տարթոր
Մորթմանի հօր՝ ծանօթ արեւելագէտ,
հայագէտ և սեպագրագէտ տարթոր
Մորթմանայ՝ գերմաներէն լեզուաւ
հրատարակած մի գործէն՝ Ա. մասին,
որեւ ի հայ թարգմանեալ հրատարա-
կեալ է Կարապետ Իւթիւճեանի կողմա-
նէ նախ իր «Մասին»-ի 1874 տար-
ւոյ 1542, 43, 45, 47, 48 և 50
թիւերուն մէջ ու ապա մասնաւոր
տետրակաւ ալ հրատարակած է կտր-
ծեմ սա խորագրով. «Հատածք սլաւո-
մութեան Հայոց քաղեալը յԱրաբացի
պատմադրացի ի ձեռն Տորթոր Մարթ-
մանայ արեւելագէտի»: Այդ յօդուածի
զրիթէ կէսն Հայաստանի աշխարհա-
գրութիւնն է քաղուած Ինճիճեանի և
Հ. Ալիշանի գործերէ, ինչպէս և ինք
կը խոստովանի, իսկ միւս մասն Մորթ-
մանայ գործոյն առաջին մասն կը
ներկայացնէ, որ Ա. Բելագորի արտր

պատմէն քաղուած է: Տխր Բ. Խա-
լաթեանց եւտե-ի մասին հաւատարիմ
թարգմանիչն է եղած Մորթմանայ,
սակայն ծանօթութիւններու բաւական
ճարպիկութեամբ ընդլայնած, համա-
ռօտած ու փոփոխած է ըսողարկելու
համար իր աղբիւրն, և այնպէս մը
ձեւացուցած է թէ՛ ինք իսկ քաղած է
Արաբ պատմագրերէն, զորք որ Հալիտի
կրնար ընել անշուշտ քանի որ ինք
տեղեակ չէ արարերէնի»:

Սկսնակ Բանասէր

Այս աստիճան յախուռն ու վճռա-
կան մի մեղադրանքի հանդէպ ցան-
կալի էր լսել մեղադրուող Բ. Խալա-
թեանցին: Պաղիտար գողութիւննե-
րից վատագոյնն է և կրկնակ ստորա-
ցույլիչ, բանի որ կառարւում է այն
մարդկանց ձեռքով, սրտնր փոշուած
են գեղեցիկն ու բարին իրազօրծելու
կեանքի մէջ: Ահա թէ ինչու մենք
անկեղծօրէն ցանկանում ենք, որ Բ.
Խալաթեան կարողանայ հրատարակով
արդարանալ և հասարակական խղճին
զոհացումն տալ:

«Հանդէպ Ամսօրեայ», յուլիս. —
Վիեննայի Միլիթարեանների օրդա-
նում գտնում ենք համառօտ կենսա-
գրութիւնը մի նշանաւոր հայ բժշկի՝
Պետրոս Հեքմեթեան անունով, որ ապ-
րել և զարծել է Թրիեստ քաղաքում
18-դ դարի վերջին և 19-ի սկզբնե-
րին: Իր գաւազներէն կրտսերը Փրան-
ցիսկոս Հեքմեթեան նշանաւոր պաշ-
տօններ է վարել Թրիեստում, եղել է
քաղաքագետ և փոխ-գահերկց երեւո-
փոխանական ժողովի: Քաղաքը ի պա-
տիւ նրան արձան է կանգնացրել, նրա

լուսանկարով դարգարուած նամակա-
կարտեր է տպել տուել, սընց վրայ
լտալերէն գրուած է «Փրանցիոկոս
Հերմէթ. ծնեալ ի 6 նոյեմբերի 1811
ամի, վախճանեալ ի 16 փետրուարի
1883 ամի, պատուակալ քաղաքացի,
փոխ-դահերէց Թրիեստի երեսփոխա-
նական խորհուրդին, աննըկուն պաշտ-
պան Թրիեստի իրաւունց և քաղաքա-
ցեաց»:

Առաջ բերելով այս տեղեկութիւն-
ները՝ Վիեննայի հայ թերթը շարու-
նակում է.

«Ո՞ր հայն է որ կրնայ անտարբեր
մնալ այս տողերուն և իր աչքերէն
տըցունքներ չը հոսեցնի, մտածելով
որ դեռ շատ հայեր այսպէս՝ օտարնե-
րու ծառին առատ ջուր տուած են, օ-
տարներու պարտէջը շքեղացուցած են,
հայրենին միշտ աւերակ թողլով»:

Մեր կարծիքով ոչ սղալու և ոչ
արցունք թափելու հարկ կայ. երբ
հայրենի երկրում քաղաքակրթական
մեծ գործին ծառայելու հնարաւորու-
թիւն չկայ, միայն ուրախանալ կարե-
լի է, որ հայ մարդը՝ որ և նա ընկ-
նելու լինի շնորհիւ իր ցեղական ճա-
կատագրի՝ անպատճառ լայանի է
զառնում որպէս քաղաքակրթական
տարր, յարում է նոր միջավայրի ա-
մենահամակրելի, ամենալուստար հո-
ռանքներին, հօգուտէս օժանդակում է
իր նոր հայրենիքի բարոյական և
նիւթական բարգաւաճման: Իր ցեղի
հոգու մէջ քնած քաղաքակրթական
ոյժը այսպիսով մի փայլուն վկայու-
թիւն, անհերքելի ապացոյց է տալիս
օտար երկրի տակ: Արցունքի արժա-
նի են այն պայմանները, որոնք սալ-
պում են հային խնդնել իր ծննդա-
վայրը, բայց պարծենալ միայն կարե-
լի է, որ նա այնուամենայնիւ չի կոր-
չում քաղաքակրթութեան համար: Ոչ-
ոք չի կարող պնդել, թէ հայր առտն-
ձին սիրով է թողնում իր հայրենի
հողը «օտարներու ծառին առատ
ջուր տուած, օտարներու պարտէջը
շքեղացուցած» լինելու համար: Պատ-
մական ճակատագիրը իր մասնակի

արտայայտութիւններով յաճախ հեշ-
տութեամբ կարող է թիւրիմացութեան
մէջ ձգել ցեղական յատկանիշները
գնահատելիս: Անհատները կարող են
լաւ զգալ իրանց օտարի դռներում,
բայց հայ ցեղը միշտ մղկտաւով, սքը-
տի կիզիչ մորմուրով է թողել իր հոգն
ու ջուրը: Ըստ թերութիւններ ունինք,
բայց այս առաքինութիւնն էլ մերն է:

Վիեննայի յարգարժան Միւլթա-
րեանները հետամուտ են եղել տեղե-
կութիւններ առնել նաև Հերմէթեան
ընտանիքի մնացորդների վրայ, որոնք
այժմ ապրում են Թրիեստում:

Նամակներով դիմումներ են եղել
այդ ընտանիքներին տեղեկութիւններ
առնելու նրանց մեծ հօր մասին,

«... բայց զգալատար իրենց
լուսթեամբը զմեզ պատուեցին, շարու-
րակում է «Հանդէս Ամսօրեայ», ու-
նոնցմէ մէկը միայն այնպիսի պա-
տասխան մը ձգեց, որով յայտնի եղաւ
թէ չեն ուզեր յայտնել իրենց հայկա-
կան ծագումը և ամօթ իսկ կը համա-
րին իրանց գիտնալը»:

«Է՛հ, որի՞ հոգ. ամօթը իրենց,
բաւ է, որ պատմութիւնը ցայց կու
տայ մեզ իրենց հայկական ծագումը և
մենք ալ կը կարգանք իրանց այսօր՝
անգամ մը ես հառաչանօր կրկնելով
երեքկնելով մեր առականգիր Պարտի-
զակցի Վահան վարդապետին այն նը-
շանաւոր խօսքը թէ՛

«Հայը՝ մարդ բլաւու է իր ցե-
ղը յիշելու,

Մարդը հայ բլաւու է իր ցեղը
մոռնալու»:

Եւ այսպէս Միւլթարեան հայրերը
մի ալնիւ հռոնդով, որ պատիւ է բն-
քում իրանց հռչակաւոր ուխտին, աշ-
խատում են արտասահմանում սփռած
հայութեան մեծ ու փոքր բնկորներին
մէջ պահպանել տղային նշոյլը և մա-
րդ շունչը բորբոքել, բարձրացնել: Եւ
վրդովում են, որ Թրիեստում ապրող
հայ մարդու երրորդ սերունդը հրա-
ժարում է իր ծագումից: Սակայն
շատ էլ զարմանալի չէ, որ օտար մի-
ջավայրում ընկած նորեկ տարբը են-

թարկում է սոսիմիլացիայի: Ինչ-քան պետք է վրդովուն ու ցաւն Մը-խիթարեան հայրերը, եթէ նրանց ա-սենք, որ հայրենի երկրում, անյեղի հաբուստ յիշատակարաններ կողքին սպրդող երեկուայ զիւզացի հայը քա-ղաք ընկնելով և հարստանալով՝ յաճախ աշխատում է մոռացութեան տալ իր ծագումը, թօթափելով վրայից՝ որքան հնարաւոր է՝ արտաքին նշանները, ինչ-պէս՝ անունը, լեզուն, նիստուկայը, և սուանձին դիտաւրեակ գոյն տալ իր անհատական, հասարակական յարաբե-րութիւններին: Հայ անուններ ու ազ-գանուններ գիտենք մինչև այն սստի-ճան աղաւաղում, որ ոչ մի կերպով նրանց ծագումը զանել հնարաւոր չէ: Իրանց հոգիների պատկերն է այն: Հայ ցեղի պատմական ճակատագիրը ծանր է եղել. վարմանալի չէ, որ նրա տակ ծալում են շատ մէջքեր:

«Արևելեան Մամուլ», յունիս.

— Իդմիրի հայ շարաթաթեթը իր աշխատակիցների թւում մի երդիծա-րան սրամիտ գրիչ ունի, պ. Ալֆիար: Այս տնգամ նա զծագրել է պոլսեցի հայ վարժապետի տիպը, որ ծիծաղա-շարժ լինելուց աւելի տրուր մտքերի առիթ է տալիս.

«Քրիստոսի աշակերտները՝ Պոլսոյ վարժապետներէն աւելի ստակ կը շա-հէին նոյնիսկ այն ատեններն երբ ե-րեք հաւ ձուկ ստեղծ համար հինգ հագար հողի մէկտեղ սեղան կը նըս-տէին:

Ամուսկանը չորս հարիւր զրուշ ըլ-լալուն պէս՝ ահնոյ գործածել կսկսի Պոլսեցի վարժապետը:

Վարժապետներուն համար այն է հողարարձուն ինչ որ է Պիդմարք Փրտնոսցիի մը համար. դգալ մը ջուրի մէջ կը խզեն:

Վարժապետին սփռածն է լոյս, կերածը բոյս, սիրածը կոյս և գրամա-զլուլը յոյս:

Ուրան փնտռէ ևս խախտոյս,
Բաղդը աշնան կռտայ խոյս:

Իր ամբողջ խէշան է ձեռք մը նոր

հողուտ, մետաքոէ հովանոց մը և արծաթ ժամացոյցին ոսկի շղթայ մը:
Այս փափաքով կը մեռնի:

Վարժապետին էն մեծ արգուզարզն է կօշիկին ներկը:

Կնկան մը հետ խօսած ժամա-նակին կոս կարմիր կը կտրին:

Վարժապետի հետ թողիթ խաղա-ցած սննք: Հինգ հողար քուհեով պէզիկի բարրի մը սովորաբար 25 վայրկեան կը աւել. իսկ վարժապետի հետ 2 ժամ և 34 վայրկեան:

Պիրակի օրերը անպատճառ եկեղե-ցի կերթայ... Թաղական խորհրդա-բանէն ներս ակնորկ մը նետելու հա-մար:

Ալեծածան քալումք մը ունին որ միմիայն իրենց յատուկ է:

Փողկապը շարունակ օձիքէն վեր կը մազկի:

Փրանսերէնի դասեր կու տայ և զաղղիացիի մը հետ տաճկերէն կը խօ-սի:

Իրեն համար Վերթօք հիւսիս ոտա-նաւոր շինող Աստուած մըն է:

Վարժապետը կառք նստելու հա-մար պէտք է որ Թաղին մէջ հարուս-տի մը յուզարկաւորութիւնը տեղի ունե-նայ:

Հիմայ չեմ գիտեր, բայց իմ ժա-մանակս վարժապետ չկար որուն ոտ-քերը... պերճախօսութիւն շունենային:

Երուսաղեմ վարժարաններու տըխ-մար աշակերտները՝ ուղղային վարժա-րաններու մէջ վարժապետ կըլլան:

Փրկիչը իրենց ասպարէզին *Hôte* *Terminus*-ն է:

Չատակեր կըլլան, բայց րիշով կապ-րին:

Աշակերար «միսիւ» կրտէ իրեն, Թաղական «պարոն», տնտիւր «պա-տուկի» և զորանչը «Ֆէնտի»:

«REVUE», 15 Août.— «Դէպի համաշխարհային համաձայնութիւնը» վերնագրի տակ առաջ է բերում պար-բերաբար այն բոլոր փաստերը, որոնք խաղաղութեան և միջազգային համա-

ձայնութեան էվոլյուցիան է ցոյց տալիս:

«Ջարունակելով «խաղաղութեան առաքեալի» իր բարեբար դերը, առում է «*Ревор*»-ն, եղտարդ VII-ը կարողացաւ անշուշտ համոզել իր կայսերական քննորդուն Կիլում, և Լանդոնում ստորագրուեց մի համաձայնութիւն, որի պիտաւոր կէտերը նման են ուրիշ ազգերի հետ Անգլիայի կայսրցած համաձայնութեան: Երկու երկրներին մասնաւոր ընդհանուր վատասեութեամբ վերաբերուեց այս իրաւարանական հաշտութեան: Թագինք ժողովալ լրագրողներն և խաղաղութեամբ սպասենք առաջին անհամաձայնութեանը, երբ նա կը ծագի:

«Աւելացնենք, որ մեր նշանաւոր աշխատակից Գեոտուրնէլ դը-Վոնստունը Կիլում լինելով այդ ժամանակ՝ անգլիական թաղաւորի միջոցով ներկայացաւ զերմանական կայսրին: Ուրիշ թերթեր հասկացնում են, որ Գեոտուրնէլի ներկայութիւնը ցոյց է տալիս նկատի առնուած հնարաւորութիւնը ֆրանս-գերմանական համաձայնութեան:

«Ձվեղ-Նորվեգիայի հետ ստորագրուած նոր համաձայնութեամբ վերջի է հասնում այն երկրներին թիւր, որոնք համաձայնել են Փրանսիայի հետ Լազէի իրաւարարական միջնորդ դատարանին դիմել վէճերի համար: Այս երկրներն են՝ Նոլանդիա, Գանիմարք, Իտալիա, Անգլիա և Իտալիա:

«Այսօր միջնորդ դատարանի իրաւարարութիւնը — ստորաբաժանաբար տակաւին նեղ սահմաններում — տուրածում է Եւրոպայի ամբողջ արեւմտարի և հիւսիսի վրայ: Միացեալ-Նահանգների նախագահի ընտրութիւնը անմիջապէս յետոյ, եթէ Բուլգարիա վերընտրուի, վեց ամսում ամերիկական մեծ հանրապետութիւնը կը կայացնի նման համաձայնութիւններ. նրա օրինակին կը հետեւն Ամերիկայի հարաւի և կենտրոնի բոլոր պետութիւնները: Եւրամտեան Ովկիանոսը այն ժամանակ արժանի կը լինի կո-

չուել՝ «Խաղաղ Ովկիանոս»: Արդարեւ նրա թողած բոլոր երկրները կը լինեն «արդարադատութեան ազգերի» երկրներ:

«Աւելացնենք նոյնպէս, որ Ձվեյցորիայի Գաշնակցական Խորհուրդը նորերս յանձնարարել է իր նախագահ Կոմտեսին բանակցութեան մէջ մըլտնել բոլոր երկրներին հետ մշտական համաձայնութիւն կայացնելու համար միջնորդ դատարանով:

«Յոյց տանք բարի հետեւնքները ազգերի համաձայնութեան այս մեծ գաղափարի: Դանուրի գետաբերանում աղօտ չըջագծերով կղզիներ կան, որոնք Բումինիայի և Բուլգարիայի վէճի առարկան են եղել միշտ: Այսուհետեւ այս փոքրիկ անհամաձայնութիւնը պէտք է լուծի բարեկամաբար մի յանձնաժողով: Վերջապէս յայտնի է նոյնպէս, որ զոյգութիւն ունի «Դանուրի միջագոյնի մի յանձնաժողով»:

«Շալուի գետաբերանում Կանտաու կղզու տիրապետութիւնը վէճի առարկայ է կորէացիներին և չինացիներին մէջ. այժմ իմանում ենք, որ ճապոնիան ընտրուած է միջնորդ դատարար. Գերուն (Հար. Ամերիկ.) վերջնականապէս համաձայնել է Բուլգարիայի հետ միջնորդ դատարանով լուծելու իրանց սահմանային հարցերը: Փրանսիական և պորտուգալական յանձնախմբերը կարողացել են խաղաղութեամբ լուծել Սենեզալի և Գուինէի սահմանի վէճը:

«Վերջապէս հրապարակ հանենք մի փաստ, որ ուրիշ ժամանակներում կատարուէր կոխ առաջ բերել «Նենգ Արթոնի» և մեր երկրի (Փրանսիայի) մէջ: Փրանսիական պրօշակն իրաւունք ունի՝ արդեօք ծածանել Մասկատում՝ Պարուկական Երոցում: Այս հարցը անշուշտ առանձին կարեւորութիւն չունի. մենք ոչ մի շահ չունինք այս երկրում, որ Անգլիական Հնդկաստանի ազդեցութեան շրջանումն է գտնուում:

«Յայց այլ ժամանակներում այն պատրուակով, թէ մի շէշ լոմով համաձայնութիւն է ստորագրուել Փրանսիայի և աեղացի որեւէ փոքրիկ իշխա-

նի մէջ, մենք մեզ կը համարէինք վերաւորուած, և մի արիւնստ ընդհարում առաջ կը գար:

«Բախտաւորապէս այս փոքրիկ հարցը շուտով պիտի ենթարկուի Լաճէի միջնորդ դատարանին: Ճնորհակալ լինենք անգլիական կառավարութեան իր այս զիջումի համար: Այսպիսով այս «սրտազին համերաշխութեան» ոգին վստահութիւն է ներշնչում բոլոր քաղաքակիրթ ազգերին: «Մեր բանուորները փոխադարձ այցելութեան գնալով Անգլիայի իրանց ընկերակիցներին, սրտազին ընդունելութիւն զըտան յորդ մերի և Էդուարդ VԱ թագաւորի մօտ: Եւ ի՞նչ նշանակալից են մերի խօսքերի վերջը:

«Ասացէք ձեր բարեկամներին, որ մեզ հաճելի է տեսնել Փրանսիացիներին մեզ մօտ, որ մենք կը ջանիկ ենք լսել աւելի յաճախ քան առաջ Փրանսիական լեզուն մեր փողոցներում, որ բարեկամական զգացմունքով լի մեր սրտերը բաց են ձեր համարադարացիներին առաջ»:

«*Revue*» բաղմամբիւ այլ փաստեր է բերում՝ ցոյց տալով, թէ ինչ հսկայական քայլեր է անում խաղաղութեան զտագիտըրը, որ տարաբախտաբար անկարող եղաւ արգելելու այդ շտեմուած արինհեղութիւնը մանջութեան դաշտերում:

Սակայն քանի որ այդ համաձայնութիւնը կը ծառայի միմիայն աւելի կամ պակաս երջանիկ ազգերի բարե-

կեցութեանը, քանի խաղաղութեան ունունից խօսող քաղաքակիրթ համարուած ժողովուրդները միայն իրանց մասին կը մտածեն՝ մոռացութեան տուով իրապէս դժբախտ ու տառապող փոքրիկ ազգերին – ինչպէս թիւրքական բեթիմի քրիստոնեայ զոհերն են, այդ բոլոր բարձրագոյ համաձայնութիւնները շատ բիշ արժէք ունին: Վհատեցուցիչ, փառխեցիական մի յետ մղող բան կայ այդ բոլոր խաղաղասիրական ցոյցերի մէջ այն ժամանակ, երբ թույլեք հեծեծանքով ու արցունքով խեղդում են իրանց արեան մէջ: Եւ քաղաքակրթութիւն, և՛ մարդասիրութիւն, և՛ համաշխարհային կոթայրութիւն շարունակում են միայն հեղնակալ ժպիտ յարուցանել և՛ նրանց շրթունքներին, որոնք տառապում են, և՛ նրանց, որոնք արին–արցունք են քամել տալիս:

Ինչպէս որ մի հատիկ անհատի կըրած անարգարութիւնը բաւական է մեռցնելու հաւատը դէպի որեւէ թէկուզ բաղաքակիրթ երկրի արգաքաղատութիւնը, նոյնպէս մի հատիկ ազգի կըրած մարտիրոսութիւնը բաւական է, որ կասկածի ենթարկուի քաղաքակիրթ համարուած ազգերի արդարագոտութեան և մարդասիրութեան զգացմունքի անկեղծութիւնը:

Լացողները բռուր չեն ուզում, այլ խնամոտ ձեռք, որ նրանց արցունքը սրբի:

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մաս-մաս վճարող բաժանորդներից մի քանիսը կարծել են, որ եթէ իրանք վճարել են 5 րուբլի, պէտք է ստանան իլէս տարի «Մուրճ»-ի համարները, այսինքն 6 №. մինչդեռ մեր յայտարարութիւնից պարզ է, որ կէս տարուայ «Մուրճի» բաժանորդացիներն է 6 րուբլի և ոչ 5 ռ., իսկ մաս-մաս վճարող բաժանորդները համարում են տարեկան բաժանորդներ որոշ պայմաններով. մաս-մաս վճարող բաժանորդներից 90 հոգի ցարդ չեն կատարել այդ պայմանները. այդ անճշտապահութիւնից փաստում է խմբագրութիւնս, պէտք է այդ ի նկատի ունենան...

Վ Ր Ի Պ Ա Կ

Այս №-ում			
Ծրեա	տող	սխալ	ուղիղ
39	3 հ. ...	այնքան սողացինք, որ սովեցինք:	... սողալով հասանք մի սովածի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ԿՈՒՍԿԵՆՆ և Լ. ՍԵՐԳՍԵՆՆ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)
Համառոտ հայերէն-ռուսերէն բառգրքով
Գինն է 70 Կ.

(246 էրես)

Դիմել թիֆլիս՝ «Գուտաենրերգ» և «Կենտրոնական», իսկ Բա-
ղու՝ Սամսոն Յարութիւնեանի և «Сотрудник» գրականա-
տաներին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ 2 ՀԱՏՈՐԸ

Արժէ 3 ռ., փառակազմ՝ 10 ռ.

Դիմել՝ Մոսկուա, տիկին Փանանեանին (Сухаре-
вская площ., собо. д.)

Նոր-Նախիջևան՝ տիկին Պատկանեանին:

L A R E V U E

(Ancienne „Revue des Revues“)

Abonnement

Etranger (Union postale) 28 fr. par an, le prix du numéro séparé
à l'Etranger. 1 fr. 50.

Directeur-Redacteur en Chef:

Jean Finot

Administration et Redaction: 12, Avenue de l'Opéra.

Paris

3—2

Ժամանակագրորդութեան համալսարանի Վ. Սպեցիալիստի
հրատարակչութիւն՝ Վ. Քանգանան

	Երես
16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	150
17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ	155
18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	156
19. ՅԱԻՆԼՈՒԱԾ. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱՋԻ ԲԱՐԱՅԻ ԱՐ- ԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ. Կիանքից, թարգմ. անգլ. Մ. Կարսպեան. 161—192	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարն, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՛ քննարկը:

2. Ձընդունաւ մեծ յօդուածները պահոււմ են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացոււմ են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձընուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարոււմ են անվճարիլ:

4. Խմբագրութիւնն իրան է վերադառնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուշէի» համարը շտապուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յոջարդ համարի լսյա աւանելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկին նամակագրոշմ կամ պատասխին բլանկ:

7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփոխումը պէտք է ոտացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 20-ից ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՅԵՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԵԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1904 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան IV տարի)

Խմբագրութեանն և աշխատակիցներին նոյն կազմով:

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսաստանում՝ տարեկան 10 ռ.	Արաստանում՝ 12 ռ.	(32 Ֆ.)
կէս տարին 6 »	» 7 »	(18 Ֆ.)
1 ամսուան 1 »	» 1 » 20կ.	(3 1/2 Ֆ.)

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԳՈՒՆԵՈՒՄ Է.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձաղճավաձեան փողոց, տ. № 16):
Կաշտուրեան ալ սեղերից պէտք է ղիմել՝ Тифлисъ, въ редакцію
журнала „МУРՃ“.

Արաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճ»-ին կարելի է գրուել նաև.

Թիֆլիսում—«Գոտտներից» գրախճառանոցում:

Քաղում—«Сотрудники» գրախճառանոցում:

Մոսկուայում—տ.Վ. Փանանևանի մօտ (Сухарева площадь, с.д.):

Երևանում—«Արարատ» գրախանութում:

Արաստանի բաժանարդները կարող են ղիմել՝

Թիֆլիսում—Հայոց դպրոցների տեսուչ պ. Լեան Բարայանին:

Եկեղեցուում—դոկտոր Գ. Փաշայան-Խանին (Ալեքսանդրիա):

Ծանօթութիւն. Բաժանարդադինը կարելի է վճարել նաև մաս-մաս.
սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.—կամ՝ սկզբում 5 ռ. և
յուլիսի 1-ին 5 ռուբլի:

ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ընդունում է ամեն լիզուով: Ցայտարարու-
թիւնների համար վճարում են—1 երես ըսնող յայտարարութեան համար 15 ռ.,
1/2 եր.—8 ռ., 1/4 եր.—4 ռ., առաւտեղ (կորպ.)—40 կ.:

Ձեռագիրները, նամակները և ծրարները պէտք է ուղղել
խմբագրութեան, ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: